



Վ Ի Զ Ա Կ Ա Յ Ո Յ Ց

Ե Ի

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

1949
ՀԵՐԱՅԻ

281.6

Ա-65



Ա-65

28.6 (09)

48

Վ Ի Ճ Ա Կ Ա Ց Ո Յ Ց

Ե Ի

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

1948

Կազմեց

ԱՐՏԻՆ ՔԷՆՅ՝ ԱՇՃՆԱՆ


Հրատարակութիւն

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ

630 Second Ave., New York 16, N. Y.

1949

A II
54346





65391-67

Տպագրութիւն

Ա. Յ. ԼԵՅԼԿԵԱՆ


142 East 32 St., New York, N.Y.



ՆՈՐԻՆ Ս. ՕՇՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԵՂՈՐԳ Զ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԱՅԵԱՆ

Առաջնորդ Ամերիկայի Հայոց



Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ամերիկահայոց Առաջնորդարանի հաստատման յիսուներորդ տարեդարձին հաղակցութեամբ կը հրատարակուի այս հատորը :

Գրքին պատրաստութեան ձևոնարկը սկսաւ 1948 Մայիսի սկիզբը, երբ հարցարաններ զրկուեցան Առաջնորդարանի բոլոր թեմերուն, տեղեկութեանց եւ լուսանկարներու խնդրանքով :

Ներկայ հատորին բովանդակութիւնը Առաջնորդարանի եւ համայնքներու պատմութիւնը կը հասցնէ 1948 տարուան վերջը : Ներկայ տարուան մէջ ցարդ պատահած կարեւոր եղելութիւններ յիշուած են տեղ տեղ լուսանցքի մէջ :

Համայնքներու դասաւորման համար հետեւած ենք անուններու անդլերէն արձարէտի կարգին :

ԿԱԶՄՈՂ ՎԻՃԱԿԱՅՈՅՅԻՍ

1 Յուլիս 1949

Գ Ն Ա Ն Ա Տ Ա Ն Ք



Այս գրքի հրատարակման զործին իրենց օժանդակութիւնը բերած են շատեր, զրաւոր թէ բերանացի տեղեկութիւններ հաղորդելով, լուսանկարներ հայթայթելով, կամ զրաւոր ազդեցիկներ արամազբերով: Կ'ուզենք այստեղ յիշել զանոնք յանուանէ՛ր ըստբերն յայտնելով Հնորհակալութիւն:

Տխար Հմայեակ Հազէշեան, Արժ. Տ. Յարութիւն Ա. Քհնյ. Թուժայեան, Արժ. Տ. Շահէ Քհնյ. Այթուհեան (Պաւսոն): Տխար Վարդան Ստամպոլեան (Պրինցօրք): Պատ. Հոգարարձութիւն Եիֆաիոյի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ: Տիկին Նուէր Շահառեան (Նիւ եորք): Պատ. Հոգարարձութիւն Տիբրոյքի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ և. Հոգ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան: Արժ. Տ. Վարդան Քհնյ. Մկրեան (Եվլընսքըն): Տխար ձորճ Նորսիկեան (Հարքֆրըս): Տխար Վահագն Պօղոսեան, Տխար Եղիա Մոսէսեան (Հէյվըրհիլ): Տխար Մէրայէլ Նորգրայեան և. Տիբրայու Սարգիս Սարկաւոյ Կառնեան (Լոլէյ): Տիկին Եւնիկ Գարեգեան (Մոնքրէպ): Տխար Վ. Ա. Չօրգոճեան (Նուարք): Արժ. Տ. Առնակ Քհնյ. Գասպարեան (Նիւ Պրիքքըն): Պատ. Հոգարարձութիւն Նիւ եորքի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ: Հոգ. Տ. Եղիշ Վրդ. Սիմոնեան (Նիւ եորք): Տխար Գարեգին Սարգիսեան (Նիպարա Յոզզ): Պատ. Հոգարարձութիւն Փէրըրսքընի Ս. Ղևոնդեանց եկեղեցւոյ: Պատ. Հոգարարձութիւն Ուէպ Բիլատէյփիայի Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցւոյ: Տխար Տիգրան Պօյաճեան, Հոգ. Տ. Թորգոճ Վրդ. Մանուկեան, Օր. Ազատի Պօրնաղեան և. Տխար Յովհ. Զաքարեան (Ֆիլաուէյփիա): Արժ. Տ. Վահան Քհնյ. ճէլալեան, Տխար Նիկողոս Խաճաճեան (Փրաւիտէնս): Պատ. Հոգարարձութիւն Ռէյսիլի Ս. Մեսրոպ եկեղեցւոյ և. Տխար Թորոս Մասազճեան: Պատ. Հոգարարձութիւն Սէնք Գէրրիլլըի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ՝ և. Տեարք Արշակ Գրիգորեան, Մկրտիչ Գրիգորեան ու Տիկ. Սրբուհի Խարեան: Հոգ. Տ. Սուրբա Արեւոյ Գարֆայեան (Սաուր Միլոֆի): Տխար Յակոբ Սուին (Փարոնքո): Տիկ. Արիս. Մոսէսեան և. Հոգ. Տ. Բարդէն Վրդ. Վարժապետեան (Թրոյ): Արժ. Տ. Խարէն Քհնյ. Մոսիկեան (Եւմիլլըն Սիքի): Գեր. Տ. Յովսէփ Եսս. Կարապետեան (Ուոքըրսոն): Արժ. Տ. Յակոբ Քհնյ. Միսեան (Ուալըր): Տխար Վահան Քահուրի, Տխար Մարտիրոս Սարգիսեան (Նիւ եորք): Պատուարժան անդամք Ազգ. Կեդր. Վարչութեան: Տխար Հայկ Գալուզեան և. Տխար Տատուր Տատուրեան (Նիւ եորք): Օր. Թէրի Հալպուրեան և. Օր. Մարիամ Շարաքեան (Նիւ եորք):

Պատշաճ կը համարենք յիշել այստեղ թէ Լոլէյի և Ռէյսիլի Հոգարարձութիւնները եղան տաճիկներ մեր հաղորանին պատասխանելու և պահանջուած լուսանկարները հասցնելու գործին մէջ, յարգելով նշանակուած ժամկէտը՝ 31 Մայիս 1948:

Հարկ կը գրանք մասնաւորաբար յիշատակել անունը Արժ. Տ. Յովհաննէս Քհնյ. Գալուզեանին (հանդուցեալ Տովի. Լորէնսի Ս. Խաչ եկեղեցւոյ) որ խղճամխ հոգածութեամբ պատասխանեց մեր հարցարանին:

Շնորհակալութիւն Տխար Փոլ Չափաթեանին և. Edison Photo-Engraving Co. իր գործակիցներուն, որոնք սիրալոյսով շինեցին և նուիրեցին այս գրքի գրեթէ ըստը վիէյքնէրը:

Նմանազն Շնորհակալութիւն Տխար Հրանդ Քիւրթեանին (Eagle Photo-Engraving Co.) որ նուիրեց հինգ փէյթիներ, ինչպէս նաև United Photo-Engraving Co. ին որ նուիրեց երկու փէյթիներ:

Atlantic, Majestic, Colonial, Tri-Art, Western և Art-Lay Ֆոթո-էնկ-րէյվինկի ընկերութիւններն և. սպասակար եղած են փէյթիներ յարգարելով: Շնորհակալութիւն ըստը ըն:

//
//

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ԱԿՆԱՐԿ ՄԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

	Էջ
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՍԿՋՐՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ	17
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՈՂՈՒՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ (1888-1898)	18
ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՅ (1898-1948)	
1. Տ. Յովսէփ Եպս. Սարաճեան (1898-1906)	21
2. Տեղապահուրիւն (1906 Հոկտ. - 1908 Օգոստոս)։— Տ. Եզնիկ Արք. Ապահունիի կարգադրուած Առաջնորդուրիւնը (1908 Սեպտ. - Հոկտ.)։— Խոզովեալ Շրջան ու կարգադրուրիւն Մայր Աթոռի կազմէ (1908 Նոյ. - 1913 Յուլիս)	24
3. Տ. Արսէն Ծ. վրդ. վեհաւնի (1913 Սեպտ. - 1917 Նոյ.)	26
4. Տեղապահ Տ. Շահէ Ծ. վրդ. Գառպարեան (1917-1920)։— Հայրապետական Լիազօր Տ. Խորէն Եպս. Մուրադբէկեան (1920)։— Տեղապահ Տ. Բաքզէն Եպս. Կիլիկեան (1920-1921)	30
5. Տ. Տիրայր Արք. Յովհաննէսեան (1921 Մարտ - 1928 Սեպտ.)	33
6. Տեղապահուրիւն (1928 Հոկտ. - 1931 Մայիս)	36
7. Տ. Ղեւոնդ Արք. Գուրեան (1931 Մայիս - 1933 Գեկտ.)	37
8. Տեղապահուրիւն։— Սաստ Մայր Աթոռէն։— Ժամանում Մայր Աթոռի Լիազօր Պատուիրակի։— Առաջնորդական Ընտրուրիւն (1933 Գեկտ. - 1939 Յունիս)	42
9. Տ. Գարեգին Արք. Յովսէփեանց (1939 Յունիս - 1944 Նոյեմբեր)	45
10. Տ. Տիրան Եպս. Ներսիսեան (1944 Նոյեմբերէն սկսեալ)	47
ԱՂԻԻՐՆԵՐ	51
ԳԱԽԱԶԱՆԱԳԻՐԻՔ ԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՅ	52

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

(Շարունակութիւն)

ԱՄԵՐԻԿԱԷԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

ՆԵՐԿԱՅ ՊԱՏԿԵՐԸ

	Էջ
Սահման.— Ազգ. կեդր. վարչութիւն.— Թեմական կազմակերպութիւն	55
Առաջնորդարանի Պաշտօնէութիւն.— Պաշտօնաբերք	58
Նպաստ Մայր Աքուի	59
Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը	60
Կեդր. ուսումնական տարիուրդ	64
Մայր եկեղեցւոյ եւ Ազգային Տան Շինութեան Յանձնախումբ	67
Ամերիկայի Հայաստանեայց եկեղեցւոյ երիտասարդաց կազմակերպութիւն (A.C.Y.O.A.)	70
Երեսփոխանական ժողով Ամերիկահայոց Առաջնորդական վիճակի	72
Գաս Հոգեւորականաց Ամերիկահայոց Արեւելեան Թեմի Առաջնորդութեան	74

ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԵՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցի. Պինկհէմքըն	79
Ս. Երրորդութիւն եկեղեցի. Պոսթոն	81
Ս. Համբարձում եկեղեցի. Պրինփորք	94
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի. Շիֆակօ	100
Քլիվլենտի Համայնք	106
Ս. Յովի. Մկրտիչ եկեղեցի. Տիքրոյք	107
Ս. Յակոբ եկեղեցի, Էվլնոքըն	115
Հեմիլթընի Համայնք	121
Հարքֆըրտի Համայնք	122
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Հէյվըրսիլ	126
Ս. Խաչ եկեղեցի. Լորէնս	128
Ս. Վարդանանց եկեղեցի, Լովէլ	135
Մայէմի Համայնք, Ֆլորիստ	144

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

(Շարունակությամբ)

էջ

Մանրբեալի Համայնք	145
Նուարֆի Համայնք	147
Ս. Յարութիւն եկեղեցի. Նիւ Պրիքըն	150
Նիւ Եորֆ	156
Նիւ Եորֆի Հայուքիւնը	159
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի. Նիւ Եորֆ	162
Ս. Խաչ եկեղեցի. Նիւ Եորֆ	169
Նիակարա Ֆոլգի Համայնք	180
Ս. Ղեւոնդեանց եկեղեցի, Փէրքըսըն	183
Ֆիլատելֆիա, Փէնսիլվէնիա	187
Ֆիլատելֆիայի Հայ Գաղութը	188
Ս. Սահակ – Ս. Մեսրոպ եկեղեցի. Ֆիլատելֆիա	189
Ս. Նքորդուքիւն եկեղեցի. Ֆիլատելֆիա	195
Արքոց Թարգմանչաց եկեղեցի. Փրաւիտէնս	203
Ս. Մեսրոպ եկեղեցի. Քէյսին	215
Րիչմոնտի Համայնք	226
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, Սէնթ Գէրբինգ	228
Ս. Յարութիւն եկեղեցի, Սաութ Միլուոֆի	234
Սիլվախիլի Համայնք	243
Թորոնթոյի Համայնք	244
Ս. Պետրոս եկեղեցի. Թրոյ	246
Ս. Խաչ եկեղեցի, Եունիւն Սիբի	253
Ուաշինկթընի Համայնք	261
Ս. Յակոբ եկեղեցի, Ուոքըրքաուն	263
Ուոֆէլքընի Համայնք	271
Ս. Յովի-Մկրտիչ եկեղեցի, Ուէսթ Ալիս	272
Ուէսթ Փուլմընի Համայնք	276
Ս. Փրկիչ եկեղեցի. Ուաթը	277

—

—

—

—

ԱԿՆԱՐԿ ՄԸ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ



ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներ զազթոյ անճառ Հայերու սահմիրան կը ճանչցուի Պուլսեցի կաշառուր Ոսկանկանը, որ 1834-ին կուգայ Նիւ Եորք իրբևս ուսանող* 16 տարեկանին: Քրժմով կը սկսի շարքը Պուլսեցի Հայ ուսանողներու սրտնք նախ պատահարաբ, ճեպոյճեակ ճամբեմատարար աւելի մեծ թիւերով կուգան այս երկիրը, ուսում ստանալու եւ Պուլս վերադառնալու մտադրութեամբ: Փրինսթընի, Նիւ Եորքի, Եկլէի եւ Կոնստանդնուպոլսի մասնաւոր դաստիարակներու ճեմարաններուն մէջ ստանեակ մը Հայ ուսանողներ որչ ասեան մը ուսման ճեպեակ եւ նախազգ պարս քառասունական, յիսունական ու վաթսուհական թուականներուն: 1870-էն վերջ զատուայի ու Կիլիկիայի ուսանողներ կու կուգան, եւ ստատուարանութեան զատ ըզկական ու զիտական ճիւղերու ալ կը սկսին ճեպեակ, մինչեւ անդամ Ուրտանին նահանգին մէջ: Այս երկրորդ շրջանի յայտնի Հայ ուսանողներէն է Այնթապցի մեծամտն փրոֆէսէօր Ալեքսանն Պլեզնեան՝ ուսած Եկլէ՝ 1872-1874-ուրէն մըն է Հայկտի մէջ ներկայիս վաւերական ճամբարի տիրացած Տօքթ. Ասատուր Ալրուսեան որ 1885-ին Նիւ Եորքի Գոլրմտիա Համալսարանի բժշկական ընթացքը կ'ուարտէ:

Ուսանողներու ճեպ գրեթէ միամամանակ, յիսունական թուականներէն սկսեալ այս երկիրը կեամ եւ Պուլսեցի թէ զատուայի Հայ երիտասարդներ, արճեատ սորվելու կամ ուրիշ յանդուղն ճեպարկներու մէջ բախա ու զրամ սրտնելու մշտաբով: Արտախաններէն է Եոպկապցի Ռուբէն Միլիանեան որ 1867-ին կուգայ Նիւ Եորք. ասեան մը վերջ թաղաքի կեանքէն ճանձրացած կ'ուգուորի երկրին ներսերը, կը ճաննի Սոյթ Լէյք Սիթի ուր կը ծառայէ Մարմաններու զլխատարին: Կը ջանայ սոր-

վել Նոպադուրմութեան արդիական մեթոտներ: 1875-ին Այտահօ նահանգին մէջ թոյլտուար է: Ապա սակեկոյի արկածանդիր կեանք կը վարէ ու աւելի քան 18.000 տուարի ճարտարութեան մը կը զիղէ: Կը զնէ կուուած ու ճրկեճով զայն կարսընցընել վերջ, կ'անցնի Նէպտատ ուր վայրի գամէլ ու ճի լոնելով կը զրադի: Կը զնէ արմաթի ճանք ու ատարի մը ճեպ մտուանալով կը զրադի շարքեղէնի արտադրութեամբ:


Մինչեւ 1867 Ամերիկա կեամ ու մեծ մտամբ կա վերադարձած եւ շուրջ 60 Հայեր: Ասանցմէ մի քանին իրբ բօխէ կամ զինուոր ծառայած եւ Ամերիկեան լանակին մէջ Բաղաքացիական Պատերազմի շրջանին:

Մինչեւ 1880 կը շարունակուի անճառ Հայ երիտասարդներու այս տեսակ ժամանակուոր զազթականութիւնը զկտի Ամերիկա: Բաղաքական մեծամտնութիւնը իր պանդխտութիւնը կ'անցնէ Նիւ Եորք թաղաքին մէջ, որ թէ՛ ուսման, թէ՛ առևտուարի եւ թէ՛ արճեստներու մեծագոյն կեդրոն գտրձած էր արդէն շուրջ կէս դարէ ի վեր:

1880-էն վերջ զկտի Ամերիկա Հայ զազթականութեան նկարագիրը նոր երանդ մը կը ստանայ: Թրքաճառայտանի մէջ Համեթեան վարչութիւնը ճեպոյճեակ ծառայուն կը զարձնէ զատուի Հայոց ճանդէկ ճաղամանքի ու ճարտահարութեանց ծըրադիրը: Ազրուատ ճարկու ճամբար զատուէն շատ մը անդրադէտ երիտասարդներ Պուլս կը լեցուին: Ամանք աւելի խրատ՝ ճամբայ կ'Լլեն զկտի Ամերիկա: ճեպոյճեակ Նիւ Եորքէն զուրս ճայկական փոքր ըլլններ կը կազմուին Փրա-

*Սուլրան Համիտ գահ կը բարձրանայ 1876-ին: Երկու տարի վերջ կը ծագի Ռուս-թրքական պատերազմը. որուն կը յայտրդէ Անատուլի սովը:

*Տես էջ 159:



ի խաչնոսի, Պոստոնի, Ուսարի եւ Ֆրէշ-նոյի ու մօտակայ ասաններուն մէջ: Եկ-ուորները՝ մեծ մասամբ իջարբերողն ու Տիգրանակերտէն, կ'ընդգրկեն զործաւորի դասն ու սրամաշտօք կեանքը, ապրելով խմբովին աննախանձելի պայմաններու տակ, հայրենիքի ու ընտանեաց կարօտը իրենց հոգիին մէջ:

1888-ին երբ ազգային զործիչ Մ. Փոքր-

բուզալեան կ'այցելէ Ուսար — այն օրերուն Ամերիկայի ամենէն հայաշատ կեդրոնը, Ամերիկահայ գաղութը կը հաշուէր իր մէջ ընդամէնը 1200 անձ, մեծ մասամբ ամուրի: Այդ օրերուն անհաստատի կը թուէր անուշտ որ վաթսուն տարիէն այս երկրին մէջ Հայոց թիւը պիտի բազմապատկուէր մօտ 200 անգամ ու ստանար մնայուն նկարագիր:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԵՒ ՂՈՎՈՒՈՒԹԵԱՆ ԾՐՁԱՆ

(1888—1898)

Միացեալ Նահանգաց մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմնութիւնն պարագաները տարօրինակ են:՝ Ուսարի պանդուխտ Հայերը՝ կրօնական անուղի ծարաւ զործաւորներ՝ առ ի շղոյէ Հայաստանեայց Եկեղեցիի կամ հոգևորականի, կը ըստիպուին յաճախել Բողոքական Ժողովարան մը ու մտիկ ընել Հայ Բողոքականի մը քարոզութեան: Ատեն մը վերջ այս քարոզչը անվախկանկատ ելոյթը կ'ունենայ պաշտամունքի տան անարգական ակնարկներ ընելու Հայ Եկեղեցւոյ մասին, որուն վրայ իր ունեղիթներու ըստուարաւոյն մասը իրը զատիկ այդ եկեղեցիին կը խրաչի ու կը զարդի յաճախելէ Ժողովարան, 1888-ին:

Նայն օրերուն Միքոյի ֆորթուզական՝ զործիչ ու հրատարակազիր, Եւրոպայէն կ'այցելէ Ուսարի Հայոց ու բանաստեղծութեան մը ընթացքին կը զգացնէ սեփական Հայ Եկեղեցիի ու զպրօցի անհրաժեշտութիւնը: Կը ստեղծէ խանապաւանութիւն: Վարդիկ պարութիւնն ղլխարտ որ վէճերը զործի կը ձեռնարկեն, նախ ու առաջ հայրենիքէն Հայ հոգևորական մը բերել տալու համար:

Ամերիկայի հոգին վրայ առաջին անգամ ոտք դնող Հայ հոգևորականը կը լինի քառասնամեայ Տ. ՅՈՎԱՒԷՓ Մ. ՎՐԴ.

ՍԱՐԱՃԵԱՆ, սան Երուսաղէմի Ժառանգաւորացին, զրկուած Պաւլոյ Հայ Պատրիարքարանին կազմէ: Վարդապետը կուզար — Ժամանակով 1889 Յուլիան — իրը այցելու հոգևոր հովիւ Ուսարի եւ արեւելեան միւս քաղաքներու Հայութեան: Առաջին պատարազը կը մատուցանէ 1889 Յուլիան 28-ին, Ուսարի մէջ: Կը կազմէ հոգարարձութիւն՝ սեփական Եկեղեցի մը ունենալու զործը յառաջ տանելու համար: Կ'այցելէ Պոսթոն, Փրաւիտնոս, Նիւ Եորք, հոգևոր միթիարութիւն մասնակարարելով այս քաղաքներու: Հայոց իր մատուցած պատարազներով եւ կատարած խորհուրդներով: Տարի մը շանցած, Ուսարի մէջ Հայկական Եկեղեցի մը կատուցանելու զործը կը սկսի ու կ'ատարի վեց ամիսէն: Ամերիկահայոց անդրանիկ Եկեղեցին կ'օծուի 1891 Յունուար 18-ին, կաշուելով Ս. Փրիկիչ:

Ուսարի Ս. Փրիկիչ Եկեղեցւոյ շինութեան ծախքերուն կը մասնակցին մեծ ու պղտիկ 25 Ամերիկեան քաղաքներու Հայեր: Այս քաղաքներու մեծաւոյն մասը Նիւ Ինկլէնտէն (Մէսէչուսէց, Բօս Այլընտ եւ Նիւ Հէմպշըր նահանգներ)։ մնացեալները՝ Նիւ Եորք, Նիւ Ճըրզի եւ Փէնսիլվէնիա նահանգներէն: Նիւթական առուակութեամբ առաջին կարգի կուզան այդ ցանկին մէջ Ուսարէն յետոյ՝ Նիւ Եորք (Ն. Ե.), Պոստոն (Մէս.), Ուէսթ Հոլօքըն (Նիւ Ճըրզի) եւ Փրաւիտնոս

*Մանրամասնութիւնները տեսնել Ուսարի Ս. Փրիկիչ Եկեղեցւոյ յաճախմէջ:

(Բօս Ալլընս): Մի քանի տասնեակ սարկիներու անջարկանքէ վերջ, յիշեալ շորս հայաշատ կեդրոններն իրենց հերթին կ'ունենան սեփական եկեղեցիներ: Իսկ Ուստրի եկեղեցւոյն գրամով օդնորներու ցանկի մնացեալ անուններէն այսօր սեփական եկեղեցի ունին հետեւեալները.— Ֆիլասէլֆիա (Փէնսիլվանիա), Լաբէնս (Մէս.), Լովէլ (Մէս.), Թրայ (Նիւ. Եորք) եւ Ռոսթըրֆտուն (Մէս.):

Տ. Յովսէփ Ն. Վրդ. Մարտնեան այցելու հովիտի իր գմուար պաշտօնը համբարսթեամբ ու կորովով կը շարունակէ շորս աարի ու 1893-ին հրամարկով կը վերադառնայ Հայքեկեցի:

Ուստրի եկեղեցւոյ հոգարարձուծիները իւր հովիտի մը համար գիմուս կ'ընէ Կ. Պոլսոյ Հայ Պատրիարքարանին, որ այս անգամ կը գրեկ Տիպրոսեկեցիքը: ՄԱՂԱՔԻԱ Ն. ՎՐԴ. ՏԵՐՈՒՆԵԱՆԵՐ: Յիշեալը Ուստր կը հասնի 1894 Մարտին ու գործի կը ձեռնարկէ: Սակայն կարճ ատենէն իր գէմ գմուսութիւն կը սկսի ծաւալել, որով 1896 Օգոստոսին կը հրամարի ու 1897 Յունիսին՝ իր յաջորդին ժամանումէն վերջ, կը մեկնի Ս. Էջմիածին: Յաջորդ աարին՝ Մարտնեան եւ Տէրունեան վարդապետները, Ամերիկահայոց անդրանիկ ու երկրորդ այցելու հովիտները, միասին եպիսկոպոսական օմուս կը ստանան Տ. Մկրտիչ Թրիմեան կաթողիկոսէն:

Իրնչ այդ՝ Թրբոհայաստանի գաստներուն մէջ 1895-ի համայնական ջարդերէն վերապրածներ խոշոր թիւերով ու ընտանիօք կը սկսին խուժել Միացեալ Նահանգներ: Գաղթականներուն հետ կուգան նաև մի քանի Հայ հոգևորականներ 1896-1897 շրջանին, ինչպէս Տ. Վահրամ Քիւնյ. Մարտիան (Ուէսթ Հոյզըրն, Նիւ ճըրջը), Տ. Ստեփան Քիւնյ. Տէր Ստեփանեան (Լովէլ-Լօրէնս, Մէս.), Տ. Եսայ Վրդ. Մարգարեան (Մանչեսթըր, Նիւ Հէմքըր), Տ. Վաղիմալ Վրդ. Սիսակեան (Փրաւիտէնս, Բօս Ալլընս): Աւելի կանուխ՝ 1894-ին, իր գաւիտն մօտ ապրելու համար Ֆրէզնօ եկած էր Տ. Ահարոն Վրդ. Մեյլոնեան:

Յիշեալներէն Տ. Վաղիմալ Ն. Վրդ. Սիսակեանի հետ 1897 Մայիսին Ամերիկա

կը ժամանէ Արմաշի Դպրեվանքի անդրանիկ սաներէն Տ. ՄԱՃԹՈՅ ՎՐԴ. ՓԱՓԱՉԵԱՆ, որ Մայր Աթոռի հետադրական հրահանգով Ամերիկահայոց հովիտ նահապետ էր Ռուսանիոյ Ռուսճուղ քաղաքը ապաստանած միջոցին: *

ՊԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՅ ԽՈՒՈՒՐԵԱՆ ԽՈՂԸ 1889-ԷՆ Ի ՎԵՐ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՔ Կ. ՊՈԼՍՅ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՆԵՐԻԱՆ, յՈՒՈՆ ԽՐԱՆԱՆՈՒՐԵԱՆ ՍԱԿ ԷՒՆ ԿԱՆԵ ԵՐՈՒՍԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒՐԵՆԵՐԸ (ԱՆՂԻԱ, ՖՐԱՆՍԱ, ՊԵՆՆՍԻԼՎԱ, ԱՆՏՐԻԱ, ՌՈՒՄԻՆԻԱ, ՊԻՆՆԻՍԻԱ): 1897-Ի ՀԱՄԻՆԵԱՆ ԶԱՊԿԵՐՈՒ ՎԱՂՈՐՂԱՅԻՆ, ԵՐՔ ՎՊԱՐԻԱՐԿԱՆ ՎԱՆՈՍՈՆ ԿԸ ՍԱՄԱՆՈՒՄԸ ՄՊԱՍԻԱ ԱՐԿ. ՕՐՄԱՆԵԱՆ, ԹՈՒՐԿ ԱՐՄԻՆԻՔԸ ԱՆԿԷ ԿԸ ՍԿԱՆԱՅԷ ՈՐ ԿՆՈՒՄ ԲԱՆԵՑՆԷ ԵՐՈՒՍԱՅԻ ՀԱՅ ԿԵՂՈՐՈՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ յԵՂԱՓՈՍԿԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ. ԹՈՒՐԿԻՈՅ ՄԷՋ ԱՆՈՆԵՑ ԱՂԵՑՈՒՐ ԽՈՒՈՆ ԽՍԱՓԱՆԵՆՈՒ ԽԱՄԱՐ: «ՕՐՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԻՆ ԱՆԿԻՆԱՐՈՒՔԻՄՈՆԸ ԳԻՄԱԿ՝ ԶԱՆՍԵՑ ՄԻՇԱ ԽՐԱՄԷ: ԽԵՐԱԿՆԵՂ ԱՅՂԱՅԻՍ ԽԱՆՏԵՆԱՆՈՒՐ ԽԻՆ ՄԸ... ՄԻ ԱՆԳԱՄ ԸՆՊ ՄԻՇԱ ԳՈՐԾԸ ՎՐԱՅԷՆ ԿՆՈՒՅՈՒ ԵՍ ԱՍՏԱՍՍԱՆԱՆՈՒՐ ԵՆԷՆ ԿԵՐԾ ՄՆԱՅՈՒ ԽԱՄԱՐ՝ ՍԿԱՍ ՎԱՆԱՍԽԱՆԻ ԻՒՒ ԻՆԿՆ ԹՈՒՐԿԻՈՅ ՊԱՏՐԻԱՐԿ ԸՂԱՅՈՒՄ՝ ՍՐԱՍԱՍԽԱՆԻ ՎՐԱՅ ԿԵՐԳՈՐԾԻՅՈՒ ԵՍ ԱՂԵՅՈՒ ՄԻՋՈՆԵՐ ՀՈՒՆԵՐ: ԸՍՏԱՅՈՒ ԱՂ ԿԱՆԵՍԱԾ ԵՍ ԿԵՐԻՄԵԱՆ ԿԱՐՈՂԻՍՈՒՍ ԽԱՂԱՐԱԾ ԷՐ. ԻՒՒ ՈՐԿԱՍ ԿԱՄԻՆՆԵ ՎԵՐՋԻ ԱՍԵՆԵՐ ԵՐՈՒՍԱՅԻ ԵՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿՈՐ ԳԱՂՈՒՐԵՆՈՒՆ ԽՈՂԵՐԸ Կ. ՊՈԼՍՅ ԱՐՈՒՆ ԿԱՅՈՒՄ ԵՍ, ԱՍԿԱՅԻՆ ՊԱՍԽԱՆԿԱՆ ԵՍ ԱՍԾԱՄԱՅ ԱՂԾ ԷՐ, ԵՐՔ ԳՈՐԾԸ ԿԱՐԻՆՈՒՐ ԽԻՆ ԱՂ ՀՈՒՆԵՐ: ԲԱՅԵ ԲԱՆԻ ՈՐ ԳԱՂՈՒՐԵՆԵՐ ԱՆՈՒՄ ԵՆ. ԵՍ ԵՐՈՒՍԱՅ ՈՒ ԱՄԵՐԻԿԱ ԱՐԱՆՏԻՆԵ ԱՐԱՋԵՆՈՂՈՒՐ ԽԻՆԵՐ ԸՂԱՅՈՒ ԿԱՐԻՆՈՒՐ ԽԻՆ ԱՂ ԸՍՏԱՅԱԾ ԵՆ, ԱՂ ԵՍ ՄԱՅԵ ԱՐՈՒՆ ԿԸ ՎԱՍԿԱՆԻ ԱՆՈՆԵՑ ԽՈՂԸ ՍԱՄԱՆԵՆԻ, ԳԻ ԻՒՐ (ՕՐՄԱՆԵԱՆԻ, Ն. Կ.) ԱՐՈՒՆԻՆ ԽՐԱՆԱՆՈՒՐ ԽԻՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԵՐԿԻՐԵՆՈՒ ՍԱՄԱՆԱՓԱՎԱԿՈՒՄ Է. ԵՍ ԱՆԿԷ ԳՈՐԾԱ ՅԿՐՏԱՐ ՕՐԻՆԱՆՈՒՐԱՎԵ ԽՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԱԾԵՂ: ԽՐԻՄԵԱՆ ԿԱՐՈՂԻՍՈՒ ԱՆԿԱԿԱՐԱՂ ԽԱՆՏԵՑԱՍ ԱՂ ԱՐԱՋԱՐԿՈՒՐԵԱՆ ԵՍ ԽԱՂՈՅ ԵՐՈՒՍԱՅԻ ԵՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԱՋԵՆՈՂՈՒՐ ԽԻՆԵՐԸ ԿՈՒՐԱԳՈՐԾԵՑ, ԵՍ ՕՐՄԱՆԵԱՆ ԱՂԵՍ ԱԳԱՍ ՄՆԱՅ ԵՐՈՒՍԱՅԻ ԵՍ ԱՄԵՆ-

Տ. Մաշթոց Վրդ. Փափաղանի հոգևոր հովուութեան շրջանը կը տեսէ մէկ տարիէն քիչ մը աւելի (1897 Մայիս - 1898 Յուլիս)։ Իր երկու նախորդներէն տարբեր կացութեան մը մէջ կը գտնուի այս անկործ ու երեսասարդ կղերականը, նախ անոր համար որ մեծ թաւով Հայ դպրոցականներու ղեկի Ամերիկա խոստումի օրերուն կը հանդիպէր իր պաշտօնավարութիւնը. երկրորդ՝ ամբողջ Ամերիկայի մէջ այդ օրերուն կար միայն մէկ Հայկական եկեղեցի (Ուտոր), բայց կային վեց Հայ հոգևորականներ։ Մաշթոց անկորդ կը լինի իր իրատեսութիւնը ընդունելի ընել միւս հոգևորականներէն սժանց։

Իրր առաջին փորձ թեմական կազմակերպութեան, հետաքրքրական է 1897 Դեկտ. 1-ին Մաշթոց և Վաղինակ վարդապետներու միասնաբար հրատարակած շրջարբերակնը, որու մէջ Ամերիկահայութիւնը եկեղեցական տեսակէտէն շարք շրջանակի կը բաժնուի.—

1. Մէսէշուսէց 'նահանգ (ամենէն հասշատ կեզրոնը)' յանձնուած Տ. Մաշթոց Վարդապետի։
2. Բօտ Այլէնտ 'նահանգ' յանձնուած Տ. Վաղինակ Վարդապետի։
3. Շիքակօ (նոր կազմուած կեզրոն

րիկայի գործերուն եւ արժուամբերուն եւ կուսակցութեանց վրայ հակակէիդ գործածելէ կամ պատասխանատուութիւն ունենայէ»։ (Ազգապատում Գ. սիւնակի 5103-5104)։

մը Միջին Արեւմուտքի մէջ)՝ յանձնուած Տ. Խոյ Վարդապետի։

4. Ֆրէդլիօ (Գալիֆօրնիա)՝ յանձնուած Տ. Ահարան Վարդապետի։

Նիւ Եօրքի Հայոց հոյր այս շրջարբերականին մէջ վերապահուած է Մաշթոց և Վաղինակ վարդապետներուն սրնոց թեմերը իրարու կից ևն արգէն։ Խօսք չկայ Թրոյի և Ֆրիստէյֆիլայի հոգևոր տեսչութեան մասին։

Այս շրջարբերակնը կը հրատարակուի յայտնի կերպով ի հեճուկս Խոյ Վարդապետի, որ մօտ վեց ամիսէ ի վեր հովիւ ընտրուած էր Պոսթնի Հայոց կողմէ։ Պոսթնի Ուտորի շատ մօտ ու նոյն Մէսէշուսէց նահանգին մէջ է։ Տ. Խոյ Վարդապետը Շիքակոյի նման հեռուօր տեղ մը գրկելու սրշում անցնելով, շրջարբերականի հեղինակներէն Տ. Մաշթոց Վրդ. կ'ուղչր պարզապէս իւրացնել անոր թեմը։ Խոյ Վարդապետ կը մերժէ հետանալ Պոսթնէն. վէճեր ու պայքարներ կը ծայրին, որոնց երեսէն կը առեժէ Պոսթնի Հայութիւնը երբ քաղաքի եւ պրիկիպոսականաց Անիթ փոլ եկեղեցւոյ հովիւը կը փակէ իր եկեղեցւոյ մաստունի գօտը Հայոց սոջէ, զանոնք գրկելով կիրակնօրեայ պաշտամունք ունենալու կարելիութենէն։

1898 Ապրիլին Տ. Խոյ Վարդապետ կը նշանակուի Նիւ Եօրքի Հայոց հովիւ, իսկ նոյն տարուան Յուլիսին Տ. Մաշթոց Վարդապետ կը հրաժարի Ուտորի հովուութենէն, ու այդու ձևնթափ կը մնայ Ամերիկահայոց հովուութեան անուանական պաշտօնէն։

1888-էն 1898, Ամերիկահայ գաղութին թիւը հարաքէն բարձրացած էր 15.000-ի։



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆՅՈՒ

(1898-1948)

1. Տ. ՅՈՎԱԿԻՓ ԵՊՍ. ՍԱՐԱՃԵԱՆ

(1898-1906)

Տ. Մաշկոյ վարդապետի հրատարակած «Մարտի 1898 Յուլիանի գումարում» հրատարակչին ժողովի մը մէջ կ'արտէզ դարձեալ Ամերիկահայոց հոփուսթեան հրատարակ Ս. Փրկիչ եկեղեցւոյ հիմնադրելը՝ Տ. Յովակիմի եպս. Սարաճեան:

Յրիմեան Հայրիկ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կանգաւով մը կը գրէ Տ. Յովակիմի եպիսկոպոսը Ամերիկա: Նորընձայ կղիսկոպոսը իր ճամբուն վրայ կը հանդիպի Եւրոպայի Հայկական կեդրոնները ուր հանդանակութիւններ կը կատարէ Ուսարի Ս. Փրկիչ եկեղեցւոյ պարտուց բարձման համար: Կը հասնի Նիւ Եորք 1898 Հոկտ. 7ին եւ կը պատարազէ Հոկտեմբեր 16ին: այս առթիւ Տ. Յովակիմի վարդապետ կը կարգայ Հայրապետական կոնգրէսը, որուն մէջ Յրիմեան Հայրիկ Ամերիկահայութիւնը կը յորդորէ ստրուներով: «Ապա սերմն եւ գոյ, տարազիր Հայ Ժողովուրդը Ամերիկայի, լսի՛ր քո քաջ հոփուի ձայնը, հետեւի՛ր նորա առաջնորդը քայլերին, կատարի՛ր նորա բարի կամքը եւ պահի՛ր նորա խրատը:» Հոկտեմբեր 23-ին կը հասնի Ուսար, ուր կը դիմաւորուի մեծ շարքով. տեղական թերթեր կը հրատարակեն իր նկարը եւ սիւնակներ կը յատկացնեն իրեն եւ մեր եկեղեցւոյ մասին:

Տ. Յովակիմի եպս. Սարաճեան իր առաջնորդ կը գործէ մինչեւ 1906 Սեպտեմբեր: Ութ տարիներու պաշտօնավարութիւնը՝ շնայած իր զէժ յարուցումը պատն հակառակութեանց ու այլազան ար-

դիւքներու, արդիւնաւոր շրջան մը կը լինի Ամերիկահայոց համար առ հասարակ եկեղեցական տեսակէտէն: Ինք է որ կ'օժէ Յրկիչոյի Հայոց եկեղեցին 1900 Հոկտ. 14ին, ինչպէս նաեւ ձեռնաու կը լինի Ուէսթ Հոյօգրնի Հայոց սեփական եկեղեցիի շինութեան գործը յաջողակաւ համար: Վերջինիս հիմնադրելէ օրհնութիւնը կը կատարէ իր առաջնորդութենէ հրատարակէն Երկու շաբաթ վերջ 1906 Սեպտ. 16-ին, իսկ օծումը՝ 1907 Յունուարին, կոչելով զայն Ս. Խաչ: 1910 Սեպտեմբերի կ'օժէ Գոյիֆօրնիայի մէջ Պատուիրի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցին: Այս կերպով Տ. Յովակիմի եպիսկոպոս հիմնած ու նուիրողործած կը լինի Ամերիկահայոց առաջին, Երկրորդ, Երրորդ ու չորրորդ եկեղեցիները քան տարիներու շրջանի մը ընթացքին (Ուսար՝ 1891, Յրկիչո՛ւն՝ 1900, Ուէսթ Հոյօգրնի՛ 1907, Պատուիրի՛ 1910):

1899 Հոկտ. 14-ին Տ. Յովակիմի եպս. Սարաճեան կը կատարէ Ամերիկահայոց մէջ՝ տեղի ունեցող առաջին քահանայական ձեռնադրութիւնը՝ յանձին Բողոքական բարոյիչ կարապետ Մարդուկէտեանի. որ կը ստանայ Ղեւոնդ վարդապետ անունը:

Ամերիկահայ հոգեւորականներու առաջին համալուսարկ տեղի կ'ունենայ Ուսարի մէջ 1901 Յունիս 17-18, նախաձեռնութեամբ Տ. Յովակիմի եպիսկոպոսի: Կը մասնակցին Տ. Սահակ վրդ. Նազարեկեան, Տ. Արսէն վրդ. Վեհուհի, Տ. Մաքրոյ վրդ. փափագեան, Տ. Ղեւոնդ



Տ. ՅՈՎԱԿԻ ԵՊՍ. ՍԱՐԱՃՆԷՆ
Հիմնադիր Ռեսորի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ (1889)
Անդրանիկ Առաջնորդ (1898-1906)

վրդ. Մարդուկեւեան եւ Ուրարակիր փառանակ Աղամեան:՝ Ժողովականները յոտնկայս կ'ունենդրեն Վեհափառ Հայրապետի 1898-ին Տ. Յովսէփ Եպիսկոպոսին յանձնած կոնզակի ընթերցման: Օրակարգի նիւթ կը լինի Ամերիկայի թեմերուն համար ընծայացուներ պատրաստելու անհրաժեշտութիւնը: Ասկէ դատ ժողովը կը պատրաստէ Ամերիկահայոց սահմանադրութեան մը նախագիծը:

Ամերիկահայոց անդրանիկ Երեսօրթանական ժողովը կը գումարուի Ուստր' 1902 Յունիս 12-ին եւ կը խմբադրէ թեմին Սահմանադրութիւնը: Վեհափառ Հայրապետը նոյն տարուան Սեպտ. 6-ին գրած կոնզակով կը վաւերացնէ Ամերիկահայոց այս աստօջին սահմանադրութիւնը:

Հողեւորականաց Երկրորդ ժողովը կը գումարուի Տ. Յովսէփ Եպիսկոպոսի նախագահութեամբ 1904 Մայիս 23-ին: Իրր արդիւնք այս ժողովին կաղ վրդ. Մարգարեան կը գրկուի իր կարգէն յոտի վարուց պատճառաւ: Իսկ Վեհեպիսկոպոսի Մխիթարեան միաբանութեան Տ. Պողոս վրդ. Գափրաբեանի գիմուսը Հայաստանեայց Եկեղեցւոյ ծոց գտնուելու մասին նկատի կ'առնուի ու վերջնական վճիռը կը ձրդուի Վեհափառ Հայրապետին: Ամենայն

Հայոց Կաթողիկոսը կուտայ իր հաւանութիւն ու Տ. Պողոս վրդ. կը կարգուի Ուստրի հովիւ:

Երեսօրթանական Երկրորդ ժողովը կը հրաւիրուի Տ. Յովսէփ Եպիսկոպոսի կողմէ ու կը գումարուի Ուստր 1906 Սեպտեմբեր 2-ին՝ նախագահութեամբ հովիւ Տ. Պողոս վրդ. Գափթեանեանի ու ատենապետութեամբ Փ. Աղամեանի: Առաջնորդը կը բացակայի, հրաժարականը մատուցած ըլլալով: Ժողովը թեր ու զէմ արտայայտութիւններ կ'ունենայ Առաջնորդի ութ տարուան զործունէութեան մասին, սակայն ի վերջոյ կը հաւանի ընդունիլ անոր հրաժարականը: Կ'որոշուի Վեհափառ Հայրապետէն ետանուէլ ցանկ խնդրել ստանջորդական ընտրութիւն կատարելու համար. ժողովը փախար կը յայտնէ որ ցանկին մէջ գրուի Տ. Եգնիկ Արք. Ապստանի անունը:

Տ. Յովսէփ Եպիսկոպոս իր հրաժարումէն ետք հինգ տարի ետ կը զործէ Ամերիկայի մէջ: Նախ մէկ ու կէս տարի կը հովուէ Ուէնթ Հոյօքընի Ս. Խաչ Եկեղեցին սրան հիմնադիրը կը լինի, ապա Ֆրէզնոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցին՝ 1908 Ապրիլէն մինչեւ 1911 Մայիս: Այս միջոցին կ'օժէ Ֆրանսիայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին՝ 1910 Ապրիլ 17-ին:

1911-ին՝ Վանի Հայոց խնդրանքին վերայ Տ. Յովսէփ Արքեպիսկոպոս Սարահանեան յանձն կ'առնէ Թողու Գալիֆորնիայի արևուտ ու հանդատաւէտ շրջանը ու կը մեկնի Վան՝ այնտեղի առաջնորդական տեղապահութիւնը ստանձնելու: Կը վարձանի Վանի մէջ 1913 Հոկտ. 15-ին:

*Տ. վաղիմակ վրդ. Սիսակեան վախճանած է Փրակիտեմի մէջ 1899 Յուլիսին: Տ. Սահակ վրդ. Նազարեթեան ցախկին Մխիթարեան մըն է որ Հայ Եկեղեցւոյ գիրքը կը վերադառնայ 1901-ին:



2. ՏԵՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ (1906 Հոկտ. - 1908 Օգոստոս) — Տ. ԵՂՆԻԿ ԱՐՔ. ԱՊԱՀՈՒՆԻԻ ԿԱՐՃԱՏՏԵԼԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ (1908 Մեյտ. - Հոկտ.) — ԽՈՌՎԵԱԼ ՇՐՋԱՆ ՈՒ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԱՌՈՒԻ ԿՈՂՄԷ (1908 Նոյ. - 1913 Յուլիս)

Տ. Յովսէփ Եպ. Սարաճևանի առաջնորդութենէ հրաժարելէն վերջ, մինչև նոր առաջնորդի ընտրութիւն կատարուիլը Ուսարի մէջ միաժամանակ հովուութեան և. տեղապահութեան պաշտօն կը վարէ Տ. Պօղոս վրդ. Գափրանեան: 1907 Մայիս 30-ին Ուսարի մէջ կը զամարտի Ամերիկահայոց Երբայր Երևախոսանական ժողովր, նախապահութեամբ հրաժարեալ առաջնորդ Տ. Յովսէփ Եպիսկոպոսի և. առնապետութեամբ փանակ Ազաթեանի: Միաժամանակամբ առաջնորդ կ'ընտրուի Տ. ԵՂՆԻԿ ԱՐՔ. ԱՊԱՀՈՒՆԻ, որ կարճ ատեն մը Տիգրանակերտի առաջնորդութիւն վարելէ և. ք հանչուած էր Պոլիս, իսկ այս միջոցին կը զանուէր Ա. Էջմիածին: Նորընտիր առաջնորդին ուղևորութիւնը կը ձգուի, ճանապարհածախի առաքման մասին Ամերիկահայոց ցոյց տուած անհապառնակ և. զանգարութեան պատճառաւ:*

*Մինչ այս 1907-ի ամբան Նիւ Եորքի մէջ Հայ մարդասպանի մը ձեռնոյ գնդակահար կը սպաննուի յայտնի մեծահարուստ Յովհաննէս Թալեանեան: Տ. Յովսէփ Եպ. Սարաճևան զգալով որ այս ունիքը կուսակցական շարժառիթ էր բխելը, ե. գիտակ քէ իր ձեռնադրած Տ. Ղեւոնդ վրդ. Մարդուկէսեանը (այն ատեն Նիւ Եորքի հովիւ) բարոյանուէր յարած էր խնդրոյ առարկայ կուսակցութեան, Ա. մեմայն Հայոց Հայրապետէն կը խնդրէ անոր մասին կարգալուծութեան հրաման: Երիմեան Հայրիկ՝ Օգոստ. 3 բուսակիր հեռագրով կ'արձակէ Մարդուկէսեանի

Իր ընտրութենէն տարի մը ու Երբայր ժողովր 1908 Օգոստոս 21-ին Տ. Եպ. Նիկ Արք. Ապահոսնի կը հասնի Նիւ Եորք, ուրկէ անմիջապէս կը մեկնի Ուսար: Հոն իրեն կարելի չըլլար Երևախոսանական ժողով զամարել, հասուածամտով սպառչիննրու մեքենայութեան պատճառաւ: Սեպտ. 7-ին կը պատարագէ Ռէնսի Հոյօգրնի Ս. Խաչ Եկեղեցիին մէջ: Նոյն Երևախոս. Եորքի Բարնէկի Հոլին մէջ Թիւրքիոյ Սահմանադրութեան հաշակուրան ստի սարքուած հանդէսի մը կը խօսի. Թուրքիոյ վեհապետին արևաշատութեան համար իր ըրած մտղխանքերը կը զիմաստուին հանդիսականներու սուրբներով: Սեպտ. 27-ին կը հրամարի առաջնորդական պաշտօնէն ու Հոկտ. 25-ին Ամերիկայէն կը վերադառնայ Պոլիս:

Տեղապահի պաշտօնը կը ջանայ շարունակել Տ. Պօղոս վրդ. Գափրանեան: Սակայն կարճ ատենէն Ուսարի Եկեղեցին կը մերթէ ճանչնայ զինք իրը տեղապահ: 1910-ին Ռէնսի Հոյօգրն զամարուած Ամերիկահայոց Չորրորդ Երևախոսանական ժողովին մէջ կարգ մը թեմեր այ կը միա-

կարգալուծութեան վնիւրը, ու ասիկա ձեռնադրարի վեհին կատարած վերջին գործերէն մին կը լինի. իր վախճանումէն շուրջ երկու ամիս առաջ: Մարդուկէսեան բանտի կը ծառայէ երկու տարի, մեծահարուստ Մ. Գարակէօգեանէն սպառնալիք դրամ սպաննեցած ըլլալով. բանտէն Ելլիէլ ետք 1914-ին Ս. Էջմիածին երբայրով կը յաջողի ներուս ձեռն ձգել, ու կը վերադառնայ Ամերիկա:

նան Սուսրի եւ նոյնպէս կը մերժեն Տանշ-
նալ Տ. Պօղոս Վրդ. Գոմֆիթանեանի աւե-
զապահանութիւնը: Վերջինս կը յամարի իր
խոսվարար բնթացքին մէջ, ու ժամանակի
մը համար Ամերիկայի Առաջնորդութիւնն
ու Էկեղեցական Կեանքը կը մտանուի ին
կարգութեան:

1911-ի սկիզբը Ամերիկա Կայցել Տ.
Մուշեղ Արք. Սերսրեան, որ Փետր. 26-ին
գումարուած Երեւոյնական ժողովին
կողմէ Կ'ընտրուի առաջնորդ, սակայն ինք
կը մերժէ այդ պաշտօնը: Ամերիկահայ
Էկեղեցական Կեանքը անփոփոխակ
աս-
տիճանի մը հասած էր. հակամարտ հա-
զարարձութիւններ, անկարգապահ հա-
ժիրներ, հայրապետական հրահանգներու
անաստաց կղերականներ — ինչպէս կար-
գալոյժ Ղեւսնդ Մարգուկէսեան եւ կա-

խակայեայ Մատթէոս Գհնյ. Մանիկեան
— Ամերիկահայոց նորարարող եկեղե-
ցին կազմալուծման կը մօտեցնէին:

Իրաց այս կացութեան հետզհետէ վատ-
թարանալը գիտելով, Մայր Աթոռը
1913-ին կը հրահանգէ Եւրոպայի Հա-
յոց Առաջնորդ Տ. Գեորգ Արք. Իւրիւ-
նեանին մէկնել Ամերիկա ու կարգադրել
առաջնորդական խնդիրը: Լիպզը Պատ-
տիրակ Տ. Գեորգ Արքեպիսկոպոս 1913
Յուլիսի վերջերք ժամանելով, Սեպտեմ-
բերին Սուսրի մէջ իր նախապահանգեալ
գումարել կուտայ գաղութին վեցերորդ
Երեւոյնական ժողովը, որ կը կա-
տարուի առաջնորդական ընտրութիւն
յանձին Տ. Արսէն Մ. Վրդ. Վեհուհի:
Վեհ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոս Սուրէն-
եան այս ընտրութիւնը կը վաւերացնէ
1913 Նոյ. 14-ին գրած կտնդակով:



(1913 Սեպտ. - 1917 Նոյ.)

Տ. Արսէն Ծ. Վրգ. Վեհունի տառա- նորգական պաշտօնի կը ձեռնարկէ կազմակերպական տեսակէտէն զրեթէ քառասային վիճակ ներկայացնող Ամերիկահայ Եկեղեցւոյ մէջ՝ 1913 Աւարտմանը: Ուստի տառաջնորդարանի գանձարկը իբրէն կը յանձնուի բարձրօրին գատարկ: Առաջնորդարանը զուրկ է զիւանէ, քարտուղարէ, մարդահամարի արձանագրութիւններէ, կնիքէ, հովիւներու և հոգարարձուութեանց հասցէներէ: Նախագէս գումարուած ժողովներու արձանագրութեանց մասեան զոյուրիւն չունի, ոչ ալ դատարարուած ևն 1889-էն ի վեր ստացուած թղթակցութիւնները: Այս բոլորին հետ մէկտեղ, զազուրի մէկ ծայրէն միւսը տիրող անկարգապահութիւնն ու անիշխանական ոգին առաւել զժուար կացութիւն մը կը ստեղծեն նորընտիր տառաջնորդին համար:

Տ. Արսէն Ծ. Վրգ. կրթովի կերպով զործի կը լծուի: Նախ՝ միջնա իր ընտրութեան վաւերացուիլը Մայր Աթոռէն, ընթացիկ զործերը կատարելով հանդերձ, Առաջնորդարանին մէջ 25 տարեէ ի վեր զիդուած թղթակցութիւնները կը ջանայ կարելի եղածին չափ կարգի դնել: Իր պաշտօնավարութեան առաջին տարին կեդրոնական Վարչութիւնը կ'ունենայ 4 նիստ, իսկ Կրօնական Ժողովը՝ 3 նիստ: Նոյն տարեւերջինն Տ. Արսէն Ծ. Վրգ. հովուական այցելութիւն կուտայ Ուստի անմիջական շրջականերէն զտա, Ուէսթ Զօլօքըն, Նիւ Եորք, Ֆիլադելֆիա, Փրատիան, Պասթն, Թրոյ, Սիքսթիզ, Մրէզնո, Եղեմ, Լօս Անճէլէս, Շիքսօ, Հարթֆըրտ, Նիւ Պրիքն, Լօրէնս, Լօվէլ ու Նէշուէ: Նոյն միջոցին Հարուստին Ամերիկայի Հայոց հոգեւոր անշուրթիւնն ալ Ուստի առաջնորդարանին վրա-

տահուած ըլլալով, անոնց հետ թղթակցութեամբ կը յարաբերի:

Յիշեալ վայրեր կատարուած այցելութիւնները առ հասարակ հոգեւոր միութարութեան ընդթ ունենալով հանդերձ ու աւելի՛ լուսական ատենէ ի վեր խառտած կարգը վերահաստատուե նպատակն ալ ունին: Այսպէս՝ Նիւ Եորքի մէջ իր հովիւ զործող Տ. Մաթէոս Քհնյ. Մանիկեանի ըմբոստութիւնը Հայրապետական Լիազօրին ու Առաջնորդարանին գէտ, Փոստըրի մէջ կարգապարկ Ղեւոնդ Մարգուկէսեանի սպօրինի քարոզչութեան թիւնները և կեկեցիցի պատակտելը, Լօս Անճէլէսի մէջ Տ. Սահակ Վրգ. Նաղարէթեանի թէ՛ աշխարհական և թէ՛ ծիսական երկակենցադութենէն ծաղած երկպառակութիւնը («Ռուսահայոց» ու «Թրքքահայոց» անջատ եկեղեցիներ կը կազմելին համայնքին մէջ), կնճխներ ևն ուրոնց հարթուրը կը հետապնդէ Առաջնորդ Տ. Արսէն Ծ. Վրգ. և կարեւոր շարժով կը յաջողի: Կը հանդարտեցնէ Նիւ Եորքի Հայ գաղութը, վերահաստատելով անոր ու Առաջնորդարանի յարաբերութիւնները: Փոստըրի մէջ Մարգուկէսեանին զբարուր խոստում կը ստանայ որ ան իր սանձգութիւնները պիտի զարկեցնէ ու յարմար առիթով պիտի երթայ Ս. Էջմիածին: Լօս Անճէլէսի մէջ կը միացնէ երկու եկեղեցիները ու կը հնարանեցնէ Սահակ Վրգ. Նաղարէթեանը: Այս բոլոր անկարգութեանց ուղղակի կամ անուղղակի պատճառ հանդիսացող Պօղոս Վրգ. Գաֆթանեանն քանիցս կը պահանջէ յանձնել անոր մօտ պահուած պաշտօնական գրութիւնները, տամարներն ու Առաջնորդարանի գոյքերը: Պօղոս Վրգ. Գաֆթանեանի անուստումին վրայ, Վեհափոս Հայրապետէն եկած 1914 Յուլիս

30 թուակիր կոնդակով Հայ եկեղեցականաց շարքին վտարուած կը յայտարարուին ան:

1914 տարուան ընթացքին Ամերիկահայ Հոգևորականներու շարքին վրայ կ'աւելինան հետեւեալները.—

1. Տ. վաղարշակ Մ. վրդ. Արեակունի (Տովիւ Փրատխէնի):

2. Տ. վահրամ վրդ. Նազարէրեան (առժամեայ Հովիւ Ուտարի եւ փոխանորդ առաջնորդի):

3. Տ. Ծաիկ: Մ. վրդ. Գասպարեան (ուսանող ու առժամեայ Հովիւ Լարէնի):

4. Տ. Տիրայր Մ. վրդ. Մարգարեան (Տովիւ Ուէսթ Հոօքընի):

5. Տ. Պետրոս Քինյ. վարդապետ (առժամեայ Հովիւ Յիլատէլիայի):

Եիշակները աւելցնելով այդ շրջանին Միացեալ Նահանգաց մէջ զործող մաստաւ հոգևորականներուն վրայ, կ'ունենանք 15 հոգիէ բաղկացած կղերականաց զաս մը, ուր միայն մէկ կղերականաց կայ՝ Տ. Մուշեղ Արք. Սերոբեան, որ կը զործէ իրր հովիւ Պոսթանի եւ առնւապետ Կեղր. վարչութեան: Մուշեղ Արք. նոյն տարին (1914) կ'օժէ Փրատխէնի Հայաց դեօժ փոտաւոր եկեղեցին, կոչելով զայն յանուն Սրբոց Թարգմանչաց:

Առաջնորդարանի անուսիւն անփոփոխակի վիճակը բարւոքելու համար, Կեղրոնական վարչութիւնը իր առաջին նիստին մէջ 13 թիմերու վրայ կը բաշխէ 1700 տուրի հասնող զուժար մը իրր թեմական տուրք: Այս զուժարէն 633 տուրք միայն կը դանձուի:*

1914 Նոյեմբեր 26-27՝ Առաջնորդ Տ. Արսէն Մ. վրդ. վեհաճիճի նախաջահութեամբ կը զուժարուի Երեսփոխանական Ժողով Ուտարի մէջ: 14 թիմերէ կը մասնակցին Տ հոգևորական ու 22 աշխարհա-

կան Երեսփոխաններ: ** Առաջնորդը կ'ընէ իր մէկ տարուան զործուէութեան տեղեկատուութիւնը, որուն վրայ կ'աւելցնէ մի քանի առաջարկներ.—

ա) Ամերիկահայ եկեղեցական կազմակերպութիւնը ճանչցնել տեղական կառավարութեան՝ իրր կազմակերպուած մարմին (corporation) եւ Սահմանադրութիւնը ներկայացնել տեղական կառավարութեան:

բ) Ունենալ Առաջնորդարանի յատուկ պաշտօնատուն մը իր զինանով եւ քարտուղարով, ու վարչութեան խորհրդաւնեակով:

գ) Ունենալ առ նուազն Երկու շրջիկ քարոզիչներ:

դ) Առաջնորդարանի անուսիւն յատուկ ապահով հասոյթներ հաստատել:

ե) Ընդհանուր մարդահամար պատրաստել:

զ) Պարտաւորցնել Հովիւներն ու Հոգարարաւթիւնները, որպէսզի Առաջնորդարանի հրահանգներուն հնազանդին եւ եղած յանձնարարութեանց փութով պատասխանեն:

է) Ունենալ թերթ մը Առաջնորդարանի իրրեւ օրկան:

Կեղրոնական վարչութեան տեղեկագիրէն քաղուած յատկանշական կէտ մըն է Օղոտտոս ամսուն վեհ. Հայրապետէն ըստացուած Կոնդակը, որով հրահանգ կուտայ Ամերիկահայ զազութին մէջ շարժում ստեղծել, զաղթականները հայրենիք վերադարձնելու եւ հայրենիքի ժողովուրդին անտեսական վիճակը բարւոքելու միջոցներ ձեռք առնելու վերարկումար: Համա-Եւրոպական պատերազմի պայթումը անդործադրելի կը դարձնէ այս հրահանգը. բաց առի այդ միջոցին արդէն իսկ վեց հայկական եկեղեցիներ շինուած էին Ամերիկայի հողին վրայ, ու եօթներորդի մըն ալ (Լավէլ) հիմերը ձրգուած:

Երեսփոխանական այս Ժողովին մէջ Նիւ Եորքի Երեսփոխան Գ. Երկանեան

* Համեմատարար ամենէն պարտաճանաչը կը ներկայանայ Ֆրեզմոն, որ իր բաժինէն (150 տուրք) կը վճարէ 100: Նիւ Եորքը 350 տուրքէն միայն 50 կը վճարէ: Իսկ Շիքակոյի 100 տուրքին առջեւ քաց գիծ մը:

** Ուէւայ. Հոօքմընի Երեսփոխաններէն Տիար Հայկ Սմալբեան այժմ Էւս՝ 35 տարի ետք Երեսփոխան է Եւոնիքն Սիւրիի Ս. Լուս Նիկողեցու:

կ'առաջարկէ Ամերիկահայոց Առաջնորդարանը Նիւ Եորք փոխադրել, լայց այս առաջարկը մեծամասնութեամբ կը մերժուի:

Իսկ Սահմանադրութեան վերաբնութիւն մը անհրաժեշտ տեսնելով, ժողովը երեք հոդինոց յանձնարարութիւն մը կ'ընտրէ որպէսզի քննէ Սահմանադրութեան մասին հոգարարութեանց զիտողութիւնները եւ զանոնք վերջնական ձեւի մը վերածնելով կեդր. վարչութեան հետ, զրկէ վեհ. Հայրապետին:

Ժողովը կ'որոշէ որ Առաջնորդարանը պաշտօնապէս զործակցի Հայ Ազգային Պաշտպանութեան Մարմնին, նկատի ունենալով Հայկական Տոմարամբ:

Հայութեան մեծ տաղնապը սկսած էր Թրքահայաստանի մէջ: 1915-ի տեղահանութեանց արձագանքը կը հասնի Ամերիկա, ու 1916 Յունուար 1 թուականը պաշտօնադիր մը կուզայ Մայր Աթոռի զեւանէն՝ Հայ բազմաթիւ թուակցութեանց միջեւ համերաշխութեան պէտքի մասին:

1916 Հոկտ. 29-էն 31 Տ. Արսէն Ծ. Վրդ. կը գումարէ իր շքանի երկրորդ երեսփոխանական ժողովը, միակ օրակարգով մը որ է Հայրապետական Գիւտանի պաշտօնազրին նկատարութիւն: Ժողովը կը զեւանէ որ առաջնորդը Ջուզեպէ զործադրել 1914-ի երեսփոխանական ժողովին որոշումը՝ բոտ որուն Հայ եկեղեցին Ամերիկայի մէջ Ազգային Պաշտպանութեան Միութեան հետ պիտի գործակցէր, Հայկական դատը Դաշնակիցներու ուշադրութեան յանձնելու համար: Ամերիկահայ թերթերու մէջ կը սկսին լուրեր հրատարակուիլ առաջնորդի հրամարումի մասին, սակայն, Տ. Արսէն Ծ. Վրդ. կը խոստովանուի անոնց չար լիճակնայն յայտարարութիւն մը ընելէ:

Յաջորդ երեսփոխանական ժողովը՝ միւսին օրակարգով իրը շարունակութիւն նախորդին, կը գումարուի Ուստը 1917 Փետրուար 18-ին: 19 թմերէ կը մասնակցին 56 երեսփոխաններ: «Համերաշխութեան խնդիր»ի նկատարման համար եղած դիմարանութեանց ընթացքին, Պատանի երեսփոխանը կ'առաջարկէ «Առաջնորդի պաշտօնավարութեան եւ անձին

զէմ եղած զրաւոր եւ բերանացի բողոքներուն նկատարութիւնը իրրեւ օրակարգի խնդիր քուէարկել եւ հարցապնդում ուղղել Առաջնորդին»: 21-ի զէմ 23 քուէով կ'ընդունուի այս առաջարկը երկար վիճարանութենէ վերջ: Առաջնորդ Տ. Արսէն Ծ. Վրդ. վեհաձեռն կը մեկնի ժողովարանէն ու իրեն կը հետեւի համարիտ երեսփոխաններու մեծկակ խումբ մը: Ասկայն ժողովը շարունակել կարենալու տեսակէն թուարար թուով մեծամասնութիւն մը (29 անձ) կը մտայ ու առաջնորդին զէմ ինն զլիւլ բազմազան ամբաստանութեանց շարք մը նկատի առնելէ վերջ 27 քուէով կ'որոշէ որ ան պաշտօնէ զազրեցուի: Ամբաստանութեանց զլիտարներն այն են թէ Առաջնորդը «սահմանադրական սկզբունքներու հակասակ» անօրինութիւններ բրած է, հաշիւ եւ տեղեկագիրը ներկայացնելէ խուսափած է, զանուս բրած է» երեսփոխանական նախորդ ժողովներուն որոշումներն ու յանձնարարութիւնները՝ Ազգային Պաշտպանութեան Միութեան հետ զործակցելու* եւ Սահմանադրութիւնը վերաբնելու մասին:

Ժողովը պաշտօն կուտայ կեդրոնական վարչութեան՝ երկու շարաթէն տեղապահ մը բնաբել. իսկ եթէ առիտ չկարենայ ընել, երեսփոխանական ժողովի զեւանը պէտք է զիմէ Տ. Վարդան Ծ. Վրդ. Գաապարեանին, իսկ ասոր մերժումին վրայ՝ Գեոր. Տ. Բարգէն Եպս. Կիւլէսէրեանին, որ այդ օրերուն Գալփօրնիտայ կը գտնուէր:

Տ. Բարգէն Եպս. Կիւլէսէրեան զժողովարանութեամբ կ'ընդունի տեղապահութիւնը՝ իրը «խղճի եւ կուտար պարտք»: Մինչ այդ՝ «զաղարկեալ» Տ. Արսէն Ծ. Վրդ. առարկելով հանդերձ թէ ինք հրամարական մտաուեցած է վեհախոս Հայրապետին չուրք առաջնորդարանը յանձնել պաշտօնի կոչումը իշխանութեան,

*Տ. Արսէն Ծ. Վրդ. վեհաձեռնի կեցուածքը այս մասին այն եղած է որ Ամերիկայի Հայ Բաղաճական մարմինները պէտք է գործակցին Հայ եկեղեցիին, եւ ոչ թէ վերջինս անոնց հովանաւորեալն ու կամակատարը լինի:

մինչև որ Մայր Աթոսէն ստանայ իր հր-
րածարականին ընդունուելուն լուրը: Ա-
սաջնորդարանի դուռը կղղած՝ Ուսարի
մօտերը աղարակ մը կը գնէ ու կը քաշ-
ուի հոն երկու վարդապետներու հետ: Միւս
կողմէն սահայն կը ջանայ կրօ-
նական ժողով կազմել շրջաբերականներ
հանելով:

Երեսփոխանական ժողովի գիւտեր տե-
ղեկապէր մը կը գրէի Մայր Աթոս այս
իրադարձութեանց մասին, ինչպէս նաեւ
կը հետադրէ Տ. Բարդէն Եպիսկոպոսի
տեղապահութեան պաշտօն ստանձնելու
մասին:

Տ. Բարդէն Եպս. սնկարդութեանց
վերջ գնելու մտքով կը հրատարակէ եր-
կու շրջաբերականներ, ու կեղբոնական
Վարչութիւն եւ ըստ օրինի Տեղապահ
ընտրելու համար Երեսփոխանական ժո-
ղովը ի նիստ կը հրաւիրէ 1917 Յուլիս
29-ին: Ժողովը կը դաժարուի Ուսար՝
52 երեսփոխաններէն 34-ին ներկայու-

թեամբ: Կ'ընտրուի կեղբոնական Վար-
չութիւն մը, ինչպէս նաեւ Հաշտարար
Յանձնախումբ մը: Վերջնայ գործը պի-
տի ըլլար բացակայ երեսփոխաններուն
հետ բանակցելով զանոնք համոզել փե-
տրուարին դաժարուած ու «հերձուած» էն
վերջ շարունակուած ժողովի օրինաւո-
րութեան մասին: Այս ժողովին մէջ է որ
կ'որոշուի յանձնարարել նորընտիր կեղ-
բոնական Վարչութեան կազմել Ուսում-
նական Խորհուրդ մը՝ Ամբրիկայի մէջ
Հայ մանուկներու ազգային դաստիարա-
կութեան գործը միօրինակ գրութեան մը
մէջ ուղղելու համար:

Այս ժողովին մէջ Տ. Բարդէն Եպս. կիւ-
րսէրեան իր գործը աւարտած համարե-
լով, կը հրաժարի: Նորընտիր կեղբ-
վարչութեան խնդրանքին վրայ կը հա-
ւանի ստան մը «վասն Տեղապահի» վա-
րել գործերը, մինչև որ տեղապահ կ'ըն-
տրուի Պոսթոնի հովիւ Տ. Շահէ Թ. Վրդ.
Գասպարեան:



4. ՏԵՂԱՊԱՀ Տ. ՇԱՀԷ Ծ. ՎՐԳ. ԳԱՍՊԱՐԵԱՆ (1917-1920) —
 ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՕՐ Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԻԿԵԱՆ
 (1920) — ՏԵՂԱՊԱՀ Տ. ԲԱԲԳԷՆ ԵՊՍ. ԿԻՆԻԼԷՍԷՐԵԱՆ (1920-
 1921)

Ռուսիայ մէջ ծագած յեղափոխութիւնը
 ևւ. Հայաստանի մէջ պատերազմական կա-
 ցութիւնը պատճառ կը լինին որ Մայր Ա-
 թոսի Նա թղթատարական ու. Նուարա-
 կան Հայրազակցութիւնը զժուարանայ ու
 զանդադի: Ս. էջմիածնէն 3 նոյ. 1917
 թուականը պաշտօնազիր մը՝ ուղղուած Ա-
 սաջնորդական Տեղապահ Տ. Բարզէն Ե-
 պիսկոպոսին (Տ. Շահէ Ծ. Վրգ.ի տեղա-
 պահ ընտրուելուն զեռ տեղեակ չէ Մայր
 Աթոսը), վերջնայ ձևաքը կը հասնի 1918
 Ապրիլ 9-ին միայն: Այս պաշտօնազիրով՝
 զոր ստորագրած է Մայր Աթոսի զիւա-
 նապետ Տ. Տիրայր եպիսկոպոս, կը հաս-
 տատուի Տ. Բարզէն Եպիսկոպոսի տեղա-
 պահութիւնը, հրաման կը արուի նոր Ա-
 սաջնորդի ընտրութեան ձևանարկի փո-
 թով,* ևւ. սաաջնորդի Տ. Արսէն Ծ.
 Վրգ.ին (որուն հրամարականը ընդուն-
 ւած է Վ.Է. Հայրապետէն) որ յանձնէ
 իր մօտ պահուած սաաջնորդական սակն
 տեսակ զոյք ևւ. հաշիւ: Ասանձին պաշ-
 տօնազիրով մըն ալ հաղորդուած է Տ.
 Արսէն Ծ. Վրգ.ին թէ Ամենայն Հայոց
 Հայրապետը հաստատած է Տ. Բարզէն
 Եպա.ին տեղապահութիւնը ևւ. կը պատ-
 տիրէ անոր՝ Տեղապահին յանձնել ինչ որ
 կը պատկանի Ասաջնորդարանին:

1918 Ապրիլ 7-8 երեսփոխանական Ժո-
 դովը կը զուամարուի Ուստը, նախագա-
 հութեամբ Ասաջնորդական Տեղապահ Տ.
 Շահէ Ծ. Վրգ. Գապարեանի: Ժողովին
 ներկայ կ'ըլլան 34 երեսփոխաններ, որոնք
 կարգին նաև Տ. Բարզէն Եպա. Կիււլէ-
 սէրեան: Այս Ժողովին մէջ նկատի կ'աու-

նըրի Ասամանադրութեան վերաքննութիւ-
 նը. կը չնջուի եկեղեցւոյ անդամակցու-
 թեան ևւ. ընտրութեանց մասնակցելու հա-
 մար պահանջուած երկու տղարի տար-
 քը: Անոր տեղ ժողովը կը հաստատէ խոս-
 տատով երաշխաւորուած տարեկան կա-
 մասոր նուիրատուութիւնը: Հայ կանանց
 ևւ. իրաւունք կը արուի եկեղեցւոյ վար-
 շական զործերուն մէջ 21 տարեկանէն վեր
 ընտրող ևւ. ընտրելի ըլլալու: Ժողովը
 նկատի կ'աանէ նաև Գալիֆորնիայ չըր-
 ջանի Հայոց ստանձին սաաջնորդական
 թեմ կազմելու ինչըրանքը զոր մասու-
 ցած էին Ամենայն Հայոց Հայրապետին,
 ևւ. համամիտ կ'ըլլայ ստանձին սաաջ-
 նորդութեան մը կազմուելուն: Նոր իրն-
 դիրներէն յատկանշական է երկուս պարտց
 զատերու. օրինաւորութեան հարցը. այս
 մասին ժողովը կ'որոշէ որ երկուս եր-
 գեցողութիւնը չխափանուի, քանի որ ա-
 սիկա հակառակ չէ Հայաստանեայ եկե-
 ղեցւոյ սկիին:

Հրամարեալ ու զաղարեալ սաաջնորդ
 Տ. Արսէն Ծ. Վրգ. Վ.Է.ունի, շանսալով
 Մայր Աթոսէն իրեն ուղղուած հրահան-
 դին Ասաջնորդարանի զոյքերու յանձնու-
 մի մասին՝ Կեղը. Վարչութիւնը կ'որոշէ
 զայն զաղբեցնել Ամերիկահայ թեմերու
 մէջ իրը հողերական պաշտօնաւարելէ:
 1918 Հոկտեմբերին Տ. Արսէն Ծ. Վրգ.
 կը փորձէ անջատ երեսփոխանական Ժո-
 դով մը զուամարել սալ Փրաւիտէնի մէջ՝
 սնոր յանձնելու համար իր պահած զոյ-
 քերն ու հաշիւները: Ժողովը կը զուամար-
 ուի Հոկտ. 20-ին. չունենալով հանդերձ
 համայնական նկարագիր, կ'ընտրէ երեք
 ներկայացուցիչներ որոնք Հայ եկեղեց-
 ւոյ կազմէ պիտի մասնակցէին Հայ Ազգա-

* «Ընտրութեան ցանկին մէջ չմուծելով
 կիլիկիոյ վաճախաներին»:

յին Մխուժեան: Վերջինս կը մերժէ զանոնք, չիբենք բնարոյ ժողովը օրինաւոր ճանչնալով:

1918-ին Տ. Բարդէն Եպիսկոպոս միակ շայ Եպիսկոպոսն է Ամերիկա դանուս: Իր թելադրութիւններով թեւ ու թիկունք կը կանգնի Տեղապահ Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանին: Կը սկսի հրատարակել Տաւրոս շարաթաթերթը, ճոխ բովանդակութեամբ: Կը նախադահ խնամակալութեան մը սրուն նպատակն է միջոցներ ստեղծել Ամերիկայի մէջ ուսեալ երեսասարդ շայ եկեղեցականներ պատրաստելու համար: 1919 Յուլիս 18-ին Սասորի մէջ քահանայ կը ձեռնադրէ Տ. Արիկ Ծոցիկեանը, որ աւելի քան տաս տարի կը հովուէ Ս. Փրկիչ եկեղեցին:

Զինացազարի ու խաղաղութեան հռչակումով՝ Մայր Աթոռը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ Ամերիկահայոց Ա-

ռաջնորդութեան թնջուկը հարթելու համար իրը լիազօր կը զբէէ Տ. Խորէն Եպսկոպոսարեղեանը, որ կը հասնի 1920 Մայիսին* Նոյն տարուան Յուլիսին Սասորի մէջ դումարել կուտայ երեսօթանական ժողով մը, որ կ'ընտրուի նոր Կեդրոնական Վարչութիւն մը, և Առաջնորդ մը յանձին Ս. Էջմիածնի միտրան Տ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆԻ: Մինչև նորընտիր Առաջնորդին ժամանումը, պրծերուն ընթացք աւելու համար Լիազօր Պատուիրակին թելադրութեամբ Կեդր. Վարչութիւնը տեղապահ կ'ընտրէ Տ. Բարդէն Եպսկոպոսարեղեան Ամերիկայէն Մայր Աթոս կը վերադառնայ Օգոստոս 10-ին՝ 1920:

*Մինչ այդ՝ Տ. Արսէն Ծ. Վրդ. Վեհուցի հեռացած է Ամերիկայէն:





Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Առաջնորդ 1921-1928

5. Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔ. Տ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

(1921 Մարտ – 1928 Սեպտ.)

Նորընտիր առաջնորդ Տ. Տիրայր Արք. Տ. Յովհաննէսեան իր ընտրութենէն ծառայելու ամիս վերջ Ս. Էջմիածնէն Ուսար կը ժամանէ 1921 Մարտ 7-ին, ու անմիջապէս կը ձեռնարկէ գործի: Առաջին ասթիւ կ'աչցել է Նիւ Ինկլէնտի ու Նիւ Եորքի գլխաւոր Հայ կեդրոնները, թէ՛ հոգևոր միութարութիւն ընծայելու եւ թէ՛ փոխադարձ ծանօթացում հաստատելու համար: Տ. Տիրայր Արք. ի պաշտօնավարութեան սկիզբը կը գուցադիպի անպիսի շրջանի մը, երբ գէպի Ամերիկայ Հայոց գաղթը մեծ համեմատութիւն ոտայած էր: Մեծ Եղեռնէն վերադարձողներ, ընտանիքի աչք թէ՛ որը՝ ձեւով մը իրենք զիրենք ապահովութեան ու առատութեան այս երկիրը նետելու ճար կը փնտռէին ու կը գտնէին:

Տ. Տիրայր Արք. ի նախադասութեամբ գումարած առաջին Երեւոյնի ժողովը տեղի կ'ունենայ 1921 Օգոստ. 21-ին Ուսարի մէջ: Ներկայ կ'ըլլան 15 թեմերէ 44 երևութիւններ (9 հոգևորական ու 35 աշխարհական): Կեդր. Վարչութեան տեղեկագրէն կը յայտնուին Առաջնորդարանի նիւթական մաստկարարութեան համար կատարուած աշխատանքները: Մարտ 29-ին Նիւ Եորքի մէջ ժողովով նշանակուած է Առաջնորդարանի Պաշտօնութեան Յանձնախումբ մը՝ բաղկացած Պատրիկ Կիւլպէնիսեմէ, Արեակ Գարսիլեօզեանէ եւ Տոբ. Ք. Յովսէփեանէ:

Երեւոյնի ժողովը բաւերու երկու երբորդի մեծամասնութեամբ կ'արտահայտուի Առաջնորդարանը փոխադրել Պոսթոն (որչումը գործադրել կարելի կ'ըլլայ երկու տարի վերջ միայն): Առաջնորդարանի տարեկան պիւտճէ կը քուէարկուի 15.000 տարբ, որուն 9.700-ը դա-

յացնելու համար 21 թեմերու վրայ — 4 Գալիֆորնիայէն — կը կատարուի թեմական տարբի բաշխում: առաւելագոյն բաժինը կը յատկացուի առաջնորդանիսարըլլովի Պոսթոնին՝ 2,000 տարբ: Նոր կաղմուելիք Կեդրոնական Վարչութեան աշխարհական անդամները պիտի կազմեն Տնտեսական Խորհուրդը, իսկ հոգևորական անդամները՝ Կրօնական ժողովը: Երեւոյնի ժողովը կը յանձնարարէ որ նոր Վարչութիւնը չորս ամիսէն լրացնէ Սահմանադրութեան վերաբնութեան տարիներով ձգձգուած գործը:

Տ. Տիրայր Արք. առաջնորդի իր պաշտօնը կը շարունակէ մինչև 1928 Օգոստոս, երբ կը հրաժարի, բոլորելի վերջ եօթն ու կէս տարուան շրջան մը:

Տ. Տիրայր Արք. ի առաջնորդութեան շրջանին Ամերիկահայ գաղթականութեան ծառայն ու թափը կը հասնի իր գաղաթնակէտին, ի վերջոյ գրեթէ կտուրով ներգաղթի («գոթայի») օրէնքներու սեղմումին պատճառու: Ամերիկահայոց Առաջնորդութեան թեմական Երեւոյնի ժողովը Միացեալ Նահանգաց Հայերէն գաղ, Գանատայի, Մեքսիկայի եւ Հարաւային Ամերիկայի Հայութիւնը: Հետըզհետէ կը դնուին կամ կը շինուին եկեղեցիներ Լոս Անճէլէսի, Պոսթոնի, Ծիֆթսի, Բէյքիլի, Սաութ Միլուօքիի, Նիւ Պրիմերի, Թրոյի, Ֆիլատէլֆիայի եւ Սէյնթ Գէորգի մէջ, ու բոլորին ալ օժտմը կը կատարէ Տ. Տիրայր Արք.: Կը սկսին կաղմուիլ Եկեղեցեացի Հայուհեաց Միութիւններ, Երեսասարգական կաղմուելիքութիւններ եւ Կրթական կաղմուելիքներ: Առաջնորդարանը կը փոխադրուի Ուսարէն Պոսթոն՝ 1923-ին, ուրկէ 1927 Մայիսին գումարուած Երեւոյնի ժողովի որոշումով երկու ամիս ետք կը

փոխադրուի նիւ Եօրք (156 Ֆեֆթ Էլվը-
նիւ)։ Առաջնորդարանը կ'օժտուի զիւս-
նով ու բարտուգարով. սակայն նիւթական
կացութիւնը միշտ կը մնայ խախտւած ևւ
տեւական մաստանջութեան տտիթ կը
հանդիսանայ։*

Առաջնորդութեան այս եօթնամեայ շրբ-
ջանին՝ Մայր Աթոռոյ որոշմամբ մեր եւ-
կեղեցւոյ համար նշանակալից նորու-
թիւններ կ'իւրացուին։ Այսպէս՝ նոր
Տոմարով ընթանալու գրութիւնը կ'ըն-
դունուի 1923 Գեկտ. 4-ին, նոյն օրը հա-
մարելով Գեկտ. 17։ Միեւնոյն ատեն Հայ-
բապետական կոնդակով կ'արտօնուի Հայ
Եկեղեցիներու մէջ Նքզիսնիկ ևւ դաւանակի
նուազուելը սրբապետ կրօնքարութեանց
պահուն։ Նոյն տարին է որ Հայրապե-
տական որոշումով միքաւար ազգակաւն-
ներու ամուսնութեանց պարագային ս-
րենակցական աստիճանի արգելքը հին-
զերօրջ պարտէն կ'իջնէ շրբօրջի. կ'ար-
տօնուի նաև այլիացեալ քահանայիւր
վերամուսնութիւնը (1923)։ Գեկ. Տ. Տի-
բայր Արք.ի անձնական շիւտմանով բա-
րեկամական կապերը կը զօրանան մեր ևւ
Ամերիկայի Եպիսկոպոսական Եկեղեցիե-
րու միջև։

1927 Մարտ 6-ին Գեկ. Տ. Տիբայր Արք.
Ֆելատէջիթիայի թեմին համար քահանայ
կը ձեւանարէ Պետրոս Թորոսեանը, կոչե-
լով զայն Տ. Արսէն։ Յիշեալը զարգայման
տէր ևւ լաւ երաժշտազու եղած է. ծա-
նօթ է իրբ հեղինակ «Աստուածային Պա-
տարակամատոյց»ի։ Տ. Խաչիկ Բիւնյ.
Գուրգեան ևւս իր ձեւանադրութիւնը ստա-
ցած է Առաջնորդ Տ. Տիբայր Արք.էն՝
1922-ին, իրբ հովիւ Տիթրոյթի։

Առաջնորդ Տ. Տիբայր Արք.ի թեկա-
դրութեամբ կ'որոշուի Ամերիկայի մէջ
հաստատել Հայ Երաժշտական զպրօց,
զպրապետներ պատրաստելու համար։
Կ'որոշուի հաստատել նաև վանատուն մը
իր ընծայարանի բաժնով։ Սակայն նիւ-

թական միջոցներու պակասը պատճառ կը
լինի այս կարեւոր որոշումներու չգոր-
ծադրուելուն։

Տ. Տիբայր Արք.ի առաջնորդութեան
վերջին տարեշրջանին՝ Ամենայն Հայոց
Կաթողիկոսի 1927 Նոյ. 28 թուակիր կոն-
դակով կը հրահանուի Գալիֆորնիոյ
թեմին անջնաո կաղմակերպումը։ Նոր
թեմի ընտրեալ առաջնորդ Տ. Գարեգին
Եպս. Խաչատուրեան Եւրօպայէն իր պաշ-
տօնատեղին զալու աթիււ նիւ Եօրքի Ա-
ռաջնորդարանին մէջ կ'ընդունուի պատ-
շած մեծարանքով (8 Մայիս 1928)։ Այդ
աթիււ հաստտիք կը տրուի թէ բաժ-
նըւած ըլլալով հանդերձ՝ Գալիֆորնիան
համազօրծակցական կաղերով հազօրջ
պիտի մնայ Ամերիկայի Առաջնորդարանին
հետ։ Տ. Գարեգին Եպս. Գալիֆորնիա
շեմկնած, միջնօրջի զեր կը կատարէ Ա-
ռաջնորդարանի ևւ Պոսթօնի Հողարար-
մութեան միջև (վերջինս նոր տարիէն
ի վեր իր յարարբութիւնները խղած ըլ-
լալով Առաջնորդարանին հետ)։

Տ. Տիբայր Արք.ի պաշտօնավարութեան
ընթացքին բուական ժամանակ ու շունչ
սպասող խնդիր մը եղած է ռաբբական
վէճ քարի վրայ պատարաչ մատուցանե-
լու մասին հայրապետական արգելքի մը
զոյսութիւնը կամ ոչ։ Վեհ. Հայրապետը
վերջապէս կոնդակով մը կը հրահանոյ
Եկեղեցւոյ կարգերուն մէջ վտօմխտութիւն
շմտցնել։

Առաջնորդարանի նիւթական կացու-
թիւնը 1928-ին հասած կը լինի վատթար
աստիճանի մը։ Առաջնորդարանը այդ
թուականին մօտ 12,000 տոլար պարտք
ունի (9,875-ը Ս. Առաջնորդին), իսկ թե-
մերէն չզանձուած տուրքերու զումարբ
կը հասնի 22,000 տոլարի։ Վերջինի մե-
ծաղոյն մասը անյանձնելի։

Տ. Տիբայր Արք. իր հրաժարականը կը
մատուցանի Կեղր. Վարչութեան, 1928
Օգոստ. 14-ին զրուած կարծ ու սիրալիբ
նամակով մը։ Հոկտ. 7-Տ զումարբուած եւ-
րեւփոխանական ժողովին մէջ՝ ուրկէ կը
բացակայէր Առաջնորդը, զաղտնի քու-
արկութեամբ հրաժարականը կ'ընդուն-
ուի 38 ձայնով 22-ի զէմ։ Այս մասին հե-
տեւեալ բանածելը կ'իրարցուի մեծա-
մասնութեան կողմէ։—

*Ասկէ հասկնալի է քէ ինչու անհնար
կ'ըլլայ գործադրել 1926 Յուլիսին Կեղր-
վարչութեան անցուցած մէկ որոշումը,
ըստ որու Առաջնորդարանը պիտի հրա-
տարակէր իր պաշտօնաքերքը՝ «Հայաս-
տանեայց Եկեղեցի» անունով։

«Երեսփոխանական ժողովը նկատի ունենալով Նորին Սրբազնութեան՝ Տ. Տիրայր Արժեպիսկոսոսի հրամարականը Ամերիկայի Թեմին առաջնորդական պատենէն եւ խորապէս գնահատելով եօրը տարիներու ընթացքին անոր քաջամտ ջանքերը եւ աշխատութիւնները յօգուտ Հայ Եկեղեցւոյ զօրացման եւ պայծառացման՝ ցաւ ի սիրտ ընդ առաջ կ'երթայ Նորին Սրբազնութեան փափաքին ընդունելով անոր հրամարականը. յայտնելով իր շնորհակալութիւնները անոր մտուցած ծառայութեանց համար»:

Տ. Տիրայր Արք. Ի պաշտօնավարութեան փակումին՝ Ամերիկայի զոյգ տասնոր-

դութեանց մէջ զոյգութիւն ունէին 19 սեփական Հայ Եկեղեցիներ, որոնցմէ 10 Հատը հիմնուած էին Տ. Տիրայր Արք. Ի տաղանորդութեան ժամանակաշրջանին: Օրուան զինեբով, այս 19 կալուածներուն արժէքը կը գնահատուէր 864,000 ստրար (Գալիֆորնիա՝ 157,000, Արեւելեան Թեմ՝ 707,000): Միւսնայն տունն՝ Միսսիսիպի Նահանգաց ու. Հարաւային Ամերիկայի մէջ պաշտօնավարող Հայ հովիտներու թիւը՝ 6: Բացի Գալիֆորնիայէն միւս թեմերու մէջ զործող հոգարարձութեանց թիւն էր 46 (Միսսիսիպի Նահանգներ՝ 36, Գանատա՝ 5, Մեքսիկա 1, Գուպա՝ 1, Հարաւային Ամերիկա՝ 3):



6. ՏԵՂԱՊԱՀՈՒԹԻՒՆ

(1928 Հոկտ. - 1931 Մայիս)

Առաջնորդ Տ. Տիրայր Արք.ի հրամարում էն վերջ, Կեդրոնական Վարչութիւնը նկատի ունենալով նոր ընտրութիւք տեղապահին համար երեսփոխանական ժողովին կողմէ նշանակուած ասրիթոսակին ժողքը դումարը (1000 տար), չի համարձակիր ընտրելաց ցանկին մէջ գնել բարձրաստիճան եկեղեցականներու աւուաներ, այլ կը սահմանափակուի քահանայ թեկնածուներով, որոնցմէ կ'ընտրուի Տ. Սիրովրէ Աւագ Քեմյ. ներսպալուհ՝ 1928 Հոկտ. 17-ի նիստին մէջ:

Վարչութիւնը պարբերաբար վճարումներ կ'ընէ հրամարեալ առաջնորդ Տ. Տիրայր Արք.ին անոր յետնեալ թուակին ի հաշիւ: Վեհ. Կաթողիկոսը հաստատելով հանդերձ տեղապահին պաշտոնը (Փետր. 10, 1929), երեսփոխանական ժողովին սպառնալ կոնդակով մը կը հրահանուի նոր առաջնորդի ընտրութիւնը փութացնել: Սակայն վերահաս տիպիլեքը* և կարգ մը ուրիշ նկատումներ պատճառ կ'ըլլան որ աւանայ ընտրութիւնը երկու տարի, մինչև 1931 Փետր. 1 երբ կը դումարուի երեսփոխանական ժողով:

Տ. Սերովրէ Քահանայ տեղապահութիւնը կը վարէ մինչև իր վախճանումը՝ 1930 Յուլիս: Նորընտիր տեղապահը կը

լինի Տ. Զարուքիւն Աւագ Քեմյ. Սարգիսեան, որ կը պաշտոնավարէ 1930 Օգոստոսէն մինչև Դեկտեմբեր՝ երբ կը հիանդանայ:

Տեղապահութեան երկու տարուան այս շրջանին՝ Կեդր. Վարչութեան նիստերուն մեծ մասը կը յատկացուի թեմական եկեղեցիներու (մասնաւորաբար փրատեղիներ և Եւսեփին Սիթիի) մէջ պատահած անկարգապահութեանց և վէճերու նկատմամբ: Որոշ ջանք կ'ըլլայ նաև Առաջնորդարանի նիստական անփութանակ կապութիւնը բարուարելու, դիմելով հանդարտեալութեանց ձեւին:

Նախկին առաջնորդի հրամարականը ընդունող երեսփոխանական ժողովի գումարում էն ի վեր տեղի քան երկու տարի անցնելէ վերջ, ժողովրդական խաւերու մէջ ծառայ դասած ընդհանուր դիզասութեան իրը հետեանք վերջապէս կը գումարուի նոր երեսփոխանական ժողով մը 1931 Փետր. 1-ին՝ նախապահութեամբ Տ. Նշան Քահ. Գաբրիելանի, զրազելու համար առաջնորդի ընտրութեամբ: Ժողովականներէն մաս մը — գրեթէ կէսը — կ'ուզէ յետաձգել ընտրութիւնը, աւարկելով որ «Կեդրոնական Վարչութեան սրնտուկը ներկայիս ի վիճակի չէ նոր ծախսերու ատկապէս»: Առաջարկը կը մերժուի և անմիջապէս կը ձեռնարկուի ընտրութեան: Եւսեփին ցանկէն (Տ. Գաբրիելեան, Տ. Երեսնդ Եպիսկոպոս Փէրատճեան, Տ. Ղեւոնդ Եպո. Գուրեան) 37 բուկով կ'ընտրուի Մանչէսթրի Հայոց Հովի. Տ. Ղեւոնդ Եպո. Գուրեան: Մինչև նորընտիր առաջնորդի ժամանումը՝ Կեդր. Վարչութիւնը իր նիստերը կը դումարէ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Կարապետեանի ատկապէս:

* Հակառակ երկրին տնտեսական անձուկ պայմաններուն, այս քրչանին սեփական եկեղեցիներու գնման կամ շինութեան գործը մեր քիմերուն մէջ կը շարունակուի անխափան: Այսպէս՝ Նիւ Եորքի մէջ Ս. Խաչ եկեղեցին կը գնուի 1929-ին: Պիկնիէմբըն և Սեմյո Վեքրինգ իրենց եկեղեցիներու օժուրը կը ստանալըմբն 1930-ին: Ուրբըրքաուելի մէջ շինութեան, իսկ Պրինսիօրքի մէջ գնման գործը կը հետապնդուի ու կ'աւարտի 1931-ին:

7. Տ. ՂԵՒՈՆԻ ԱՐԲ. ԴՈՒՐԵԱՆ

(1931 Մայիս – 1933 Դեկտ.)

Իր ընտրութենէն մի քանի ամիս վերջ, Առաջնորդ Տ. Ղեւոնդ եպս. Դուբեան կը ժամանէ Նիւ Եորք 1931 Մայիս 28-ին ու զիմաստրուելով հակայ բազմութենէ մը, կը կատարէ իր անդամնիկ գոհարանական մազթանքը Նիւ Եորքի 27-րդ Փոպոյի Ս. Գր. Լուսասորիչ Եկեղեցւոյ մէջ:

Դուբեան Սրբազան եղած էր Օրմանեան Պատրիարքի օրով զիւանապետ, ապա Պատրիարքական Փոխանորդ Կ. Պոլսոյ մէջ, աւելի ետք Առաջնորդ Կաթինի եւ Չմիւսնիոյ Հայոց՝ ամենապատուով ու տաղանազարի ժամանակներու մէջ, ու ի վերջոյ հոգիւ Մանչեսթրի Հայոց ութ տարիէ ի վեր: Ին անվհատ աշխատասիրութեան սպիով, առաջին օրէն կը ձեռնարկէ Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցին զօրացնելու եւ պայծառացնելու գծաւոր զործին: Մտա երեք տարիէ ի վեր անկ քաջ ընդմէ, լծացման ու թրմբութեան զիմոյ Եկեղեցական կեանքը նոր թափ կը սկսի ստնել այս թեմին մէջ իր ձեռնարկացութեամբ: Կը կանոնաւորէ Առաջնորդարանի գիւտնր. կը հաստատէ Հոգևոր Խորհուրդ՝ կրօնական զործեսրու յանձանձման համար. Ուսումնական Խորհուրդ՝ նոր սերունդի հայեցի գաստիարակութեան վերհակդրութեան համար, եւ Տնտեսական Խորհուրդ՝ Առաջնորդարանի մատակարարութեան եւ ազգային մարմիններու գրամական զործանունութեանց հակակշիռի համար: Իր անձին հմայքով կը յաջողի գտնել նուիրատուներ, որոնք Առաջնորդարանը ազգային արժանապատուութեան համապատասխան կը կահաւորեն:*

Դուբեան Սրբազանի օրով կը խմբադրուին կրթական եւ կազմական ծրա-

զերները, Եկեղեցասէր սիկնանց միութեանց եւ զպրաց դասերու կանոնադրները, ինչպէս նաև հովիտներու եւ հոգարարձութեանց իրաւասութիւնները ճշգրտոյ հրահանգները:

Պաշտօնի ձեռնարկած շարաթն իսկ՝ Դուբեան Սրբազան կը սկսի թեմական այցելութեանց երկար ու յոյնեցուցիչ շարքը՝ վիճակային կացութեան եւ կարիքներու ուսումնասիրութեան համար: Անխաբ շիման մէջ կը մտնէ մեր ժողովուրդի բարբ խաւերուն հետ, եւ կարծատեննէ կը ստեղծէ անսովոր խանդավասութիւն: Այս այցելութեանց ստիթնելով տեղական Ամերիկացի պաշտօնատարներու հետ իր ունեցած տեսակցութիւններն ու ստացած սիրալիք ընդունելութիւնները արձագանգ կը գտնեն Ամերիկեան լրագրիներու մէջ եւ հզարատութեամբ կը լցնեն զազութահայութեան սիրտը:

Դուբեան Սրբազանի անդամնիկ այցելութիւնը Նիւ Եորքէն դուբ, կը վիճակի Պրիմիտիթի փոքրիկ գաղութին (14 Յունիս, 1931) ու նոյն ստիթի իր ձեռքով կը կատարուի տեղոյն Ս. Համբարձման Եկեղեցւոյ օծումը: Չորս ամիս ետք՝ կը գումարուի իր նախադասութեամբ Երեսփոխանական Ժողով Նիւ Եորքի 27-րդ Փոպոյի Ս. Գր. Լուսասորիչ Եկեղեցւոյ մէջ: Առաջնորդը հանդիսաւոր ուխտը կ'ընէ Ս. Խորանին սաջեւ, ի ներկայութեան 52 երեսփոխաններու եւ ժողովրդական խոտն բազմութեան: Այս Երեսփոխանական Ժողովը մէկէն է Ամերիկահայոց պատմութեան մէջ այն հազուադէպ ժողովներէն, որ նուազագոյն վիճարանութեամբ երեսփոխանները միտմայն շնորհակալութիւն եւ գնահատանք կը յայտնեն թէ Ա-

* Տեաքք Ա. Նապիլ եւ Հ. Գալուզնեան:



Տ. ԳԵՆՈՆԻ ԱՐԲ. ԳՈՒՐԵԱՆ

Առաջնորդ 1931-1933

ուճնորդի՝ թէ կեղբոնական վարչութեան գործունէութեան անկեղծագործ մասին:

Այս ժողովէն վերջ ևս Գուրեան Սըրբազան կը շարունակէ իր շինարար գործունէութիւնը: Յատուկ ուշադրութիւն կը դարձնէ Ամերիկահայ գլխորդներու գորացման և. իր Զանգերուն շնորհիւ անոնց թիւը մինչև 1933 տարին կը բարձրանայ 70-ի, մօտ 5,000 աշակերտներով և 100 ուսուցիչներով (Հիւս. Ամերիկա՝ 47 դրոյրաց, Գանատա՝ 7, իսկ Հարաւային Ամերիկա՝ 16): Իր հոլանդական ստարկայ կը լինի նաև կեկեղեցւոյ բեմը, հրահանգելով քահանաները այդ մասին: Եկեղեցւոյ երկեցողութիւնները կը պայմանաւորուին, կ'աճի թիւը դպիրներու և սարգրակիրներու, որոնք իրմէ անձամբ կը ստանան իրենց նախնական պաշտօններուն օրհնարակութիւնը:

Այս ընթացքով հանդերձ, Առաջնորդը բախար շունչները դադարեցնելով իր անհատական շնորհիւ իրեն համակիր ու գործիկ գարձնելու: Իր ընտրութիւնը կարելի չէր եղած միաձայնութեամբ կատարել, 1931 փետրուարի երեսփոխանական ժողովին մէջ: 14 երեսփոխաններու փոքրամասնութիւն մը քուէարկութեան մէջ հակառակած էր իր ընտրութեան: Առաջին շարքին իսկ՝ իր ժամանումէն աւելի քան երեք ամիս առաջ, հակառակորդ փոքրամասնութեան խօսակի «Հայրենիք» օրաթերթը նորընտիր Առաջնորդի մասին կը հրատարակէր վարկարկիչ թղթակցութիւն մը: Գուրեան եպիսկոպոսի անվերապահ յարումը Խորհրդային Հայաստանի գանձուղ Ս. Էջմիածնի հոգևոր իշխանութեան զիւր չէր եկած վերոյիշեալ օրաթերթի ներկայացուցած Հայ քաղաքական կուսակցութեան որ կեկեղեցին կը նկատէր քաղաքական գործունէութեան միջոց և ազդակ տաուելարար:

Առաջնորդ Տ. Ղևնդոց Գուրեան եպոսիւր պաշտօնավարութիւնը տարի մը չբարձրած, ինքզինք կը գտնէ անհարկուած կուսակցութեան կողմէ շղթայաղքածուած հալածանքի մը: Առաջնորդին ղեմ պոսթիւումի պատահալոյն առիթ կը նկատուի 1932-ի Ապրիլ 24-ի Սպարտակ միջադէպը: Առաջնորդը յատուկ շրջաբերականով յանձնարարած էր ընտրել հովիւներուն մե-

ծաշուք հանդիսութեամբ Ապրիլ 24-ին ընտրել կեկեղեցիներուն մէջ հոգևհանդըստեան պաշտօն կատարել. նոյն շրջաբերականով կ'արդիւնէր հովիւներուն ներկայ գտնուիլ կեկեղեցիներէ դուրս կատարուած պաշտանդաններու, այն պատճառով որ Մայր Աթոռի հովանաւոր Խորհրդային եւրոպի առիթ կը ծառայեցուէին այդ հանդէսները, մեր քաղաքական կուսակցութիւններէն մէկուն կողմէ: Այս շրջաբերականը հիմնուած էր Մայր Աթոռէն նախապէս գրկուած կոնպակի մը ուղտին վրայ, ըստ որում կ'արդիւնէր կեկեղեցականներու հակա-Հայաստանեան հասարակութիւնը մասնակցութիւնը: Միջադէպը կը պատահէր այսպէս. Ապրիլ 24-ի նախօրեակին Առաջնորդ Գուրեան եպոս. կը գտնուի Գանատա, իր ընթացիկ հովուական այցելութիւնը տալու առիթով. իմանալով թէ Նիւ Եորքի պահանջներն նախապահելու հրաւիրուած է Տ. Տիբայր Աբր. (նախկին առաջնորդ), հեռադրուանոր կը տեղեկացնէ շրջաբերականին մէջ հրահանգուած արդէրը նախապահելու և մասնակցելու մասին:

Տ. Տիբայր եպոս. կը համակերպի նախապահելու արդէրին, սակայն ներկայ կը գտնուի ինքնուրոյն առարկայ սղահանդէսին: Առաջնորդի հակառակորդ փոքրամասնութեան օրկան «Հայրենիք» առիթը հասած կը համարէ Գուրեան եպիսկոպոսի ղեմ քանալու բուռն պայքարը: յայն կը ներկայացնէ իր Թուրքերու և Պոլսեւիկներու բարեկամ:

Նոյն տարին՝ աճան, Պոլսեւիկներու թոյլտուութեան շնորհիւ է որ կարելի կը լինի գումարել Ս. Էջմիածնի Ազգային-Եկեղեցական Համաժողովը 72 պատգամաւորներով (7-ը արտասահմանէն), և ընտրել Հայ Եկեղեցւոյ կաթողիկոսութեան թափուր քաթոլիկ պահակալը՝ յանձին Տ. Տ. Խորէն Աբբ. Մուրադբեկեանի: Ամերիկահայոց պատգամաւոր Տիբայր Հայի Սմարտեան Համալուսարի մասին տեղեկագիր մը կը կարգայ Ազգային Երեսփոխանական ժողովին մէջ (1933 Յունուար 21, դումարուած ի Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցի, Նիւ Եորք 27-րդ Փոռոց) և նորընտիր Ղևնդոց Հայապե-

տին օրհնութիւնները կը հազարդէ ժողովին: Այս ժողովին աստեալայութեան մէջ տեղեկագիրներու ընթերցումը ցոյց կուտայ թէ Գորեան եպիսկոպոսի պաշտօնավարութեան մէջ ու կէս տարուան կարճ շրջանին մէջ աստիճան մը բարեկարուած է Առաջնորդարանի անուստեան կայութիւնը (թէ և պարտքը կը մնար 3,630 տարբի շուրջ), յատկաբար թիւներ կատարուած են եկեղեցաշինութեան (Վօրէնս, Ուտթրթասն), նոր հոգարարձուութեանց կազմութեան (Ուաշինկիթըն, Հուայթնայիլ, Հարթթրթու, Բիշմըտ, Նիսիարա Ֆօլց, Վրէկիլն, Մէսիս), Հայ պարօններու կազմակերպման և նոր ստեղծմանը: Կանոնադրութեան աշխատանքներուն մէջ: Միեւնոյն ատեն գիտելի կը տրուի հոգիներու զգալի պահապար և շատ մը եկեղեցիներու շէնքի պարտքին ստացումը: Այս ժողովին մէջ է որ Առաջնորդի հակաաղօրդ փոքրամասնութիւնը Ազգային Սպարտի միջակայի մասին վիճարանութիւններ կ'արծարծէ և է վերջոյ Ազգային կեդրոնական վարչութեան զորոնեկութեան հանդէպ կ'առաջարկէ անվստահութեան բրուէ, ինչ որ կուտայ 3-ի զմ 2 համեմատութեամբ արդիւնք, է նպաստ վարչութեան:

1933 տարուան մնացեալ մասը Ամերիկահայոց համար կը լինի շարտարտիկ տարի մը: Ծիբախի մէջ կազմակերպուած Համաշխարհային Յուրահանգէսին Հայերն ալ կ'ունենան իրենց օրը, Յուլիս 1-ին: Այդ առթիւ կարմիր, կապոյտ, նարնջագոյն դրօշակին պարբրիլը Հայոց կողմէ, ամիսներ անոպ վէճերէ ետք անպատեհ նկատուած էր Հայկական Օրուան Գործադիր Յանձնախումբին կողմէ, ու նախօրք համաձայնութիւն զոյացած էր զանէ չդարձել Յուրահանգէսին օրը, հակամարտ հասանքներու միջև: Բախումքի առիթ չտար: Գորեան եպոս Ծիբախի Հայ եկեղեցոյ Հոգարարձութեան կողմէ հրաւիրուած պատարագելու, այս առթիւ Հայկական Օրուան հանգիստութեանց նախադասելու և ս հրուէր կը ստանայ: Արուեստահանգէսի սրահը մտնելուն, կը զանէ ևսագոյն զրօշը բեմին վրայ, փոքրամասնութեան մը կողմ

մէ գիտմամբ այնուպ հաստատուած: Ներկաներու ստուար մեծամասնութիւնը զայրոյթով լեցուած, կը պարտասուել եղբարասպան բախումքի մը, երբ Առաջնորդը հարկ կը տեսնէ յարգուել ևսագոյնը իրենց կուսակցութեան զրօշ համարող զանազանական վարիչները սրվէպի վերցնել ատն ևսագոյնը, ըստ նախապէս ընդունուած կարգադրութեան: Առաջնորդին կողմ անլսելի կը մնայ, բուէարկութիւն կը կատարուի զրօշակի պարզուելու մասին ներկաներու կամքը ստուգելու: Համար, և մեծամասնութեամբ կ'որոշուի վար առնել ևսագոյնը: Կը յաջորդէ ազմուկ, իրարոնցում և ստեղծանական միջամտութիւն: Փոքրամասնութիւնը ինքիքը անարկուած կը զգայ և բացէն սպառնալիք կը տեղացնէ Առաջնորդ Սրբապանի հասցէին, զայն համարելով մեղաւորից Արուեստահանգէսի Գործադիր Յանձնախումբին: Յաջորդող ամիսներուն, փոքրեր կ'ըլլան Առաջնորդը խոշտանգելու (ինչպէս Առաքի զանասահանգէսին առթիւ): Իր կեանքին հանդէպ սպառնալիքն զգուշուար, Առաջնորդը կը հարկադրուի հակիչներու պաշտպանութեամբ կատարել իր համարողութիւնները:

Եսագոյնի խնդրին առթիւ յարուցուած ազմուկը անդրապարձ կ'ունենայ արտասահմանի հայաշատ կեդրոններուն մէջ և սեղի կուտայ ազգ ընդհարումներու: Ամերիկահայոց Առաջնորդութեան Ազգային կեդրոնական վարչութիւնը կը պատահալի, զանազանական անդամներու յարուցում զմտարութեանց պատճառաւ: Ասոր իրը հեանանք Ազգային իշխանութեան հեղինակութիւնը հեղահեղ կը սկարտնայ և թմական եկեղեցիներու մէջ անկարգապահութեան զլուքերու շարտը կը սկսի:*

Վրայ կը հասնի Սեպտ. 2-ին Նիւ Եարքի Ս. Գր. Լուսաւորիէ եկեղեցոյ սրահին մէջ զամարուելիք երեսփոխանական

*Պուէնու Ալբէսի, Նորթ Ֆիլատելփիլանի, Նիւ Եարքի 27-րդ փողոցի եկեղեցոյ, Նիւ Պրիքքնի, Պրուէլիմի և Հէմիլքքնի (Գանատա) իողարարձութիւնները կը պառակտին:

ժողովրդ, որուն Առաջնորդը չի կրնար նախադասել հիանդուի վեհանախագահը: Առաջին նիստը կը բացուի նախադասութեամբ Տ. Յովսէփի եպս. Կարապետեանի:

Նախորդ ամիսներու միջոցակներն ու լրացրական բուն պայտարները այս ժողովին չարձ ստեղծած բլլարով բացատրիկ հետաքրքրութեան, ընդդիմողի կողմերու համակիր բացմութիւններ կը հետևին ժողովի բացման նախնական աշխատանքներուն, յաճախ ընելով համակրանքի կամ զգուհասութեան արձագանք տրասյուսութիւններ: Ժողովը հանդարտ պայմաններու մէջ շարունակել կարենաւ ի համար, կողմերու հասանութեամբ նախադասը կ'որոշէ յաջորդ նիստը գումարելի գումարի: Գողարի միջոցին սակայն, կը կատարուին մեքենայութիւններ, և Եկեղեցւոյ Հոգարարութիւնը կը մերժէ Եկեղեցւոյ տաճարը որոմագրելի գումարի նիստի գումարման համար: Ժողովուրդի անօրինակ բացմութեան մը գիւրտութիւն կը արուի ստաճին նիստի որոմը լեցնելով, ժողովին շարունակութեամբ հան լսելու ակնկարութեամբ: Երեսունէ աւելի երեսփոխաններ, ընդլրացած ժողովը գումարի գումարելու որոման շարգուելն, խնդրողիբով կը գիմեն Առաջնորդին և անկէ արտանութեան կը ստանան երեսփոխանական ժողովը շարունակել Հօթէլ Մարթինիբի մէջ: Այս ժողովին մասնակցիլ շին հասանիք 27-րդ փողոցի Եկեղեցիին մէջ ժողովը շարունակուի: Առաջնորդին գրասար յանձնարարութեամբ Տ. Մամբրէ Ծ. վրդ. Գալփայեան կը նախադասէ Հօթէլ Մարթինիբի մէջ գումարուող ժողովին, որուն կը մասնակցին 23 նախիկն և 27 նորընտիր վաւարացեալ երեսփոխաններ: Այսպէս՝ միւսնոյն պահուն (Սեպտ. 3), Ամերիկահայոց առաջնորդութեան անունով երես. երեսփոխանական ժողովներ կը գումարուին Նի. Եսրբի մէջ. երկուքին

ալ նախադասող հոգեւորականները կը կարգան հիւանդ Առաջնորդ Հօր բացման հար. մինչ մէկուն մէջ այս հար խանդավառ ծարահարութիւններով կը դասասուի, միւսին մէջ երկարածից յարձակմանց ու ջննդատութեանց ստիժ կուտայ: Ամերիկահայ գողութի զարդ շրոմուած հերձուածը սկիզբ կ'ստնէ այս տիրահոշակ ժողովներուն մէջ:

Մայր Աթոսայ վեհապառ Կաթողիկոսը՝ Տ. Տ. Խորէն Ա. Հայրապետ, և Գերբային Հոգեւոր Խորհուրդը յաջորդական պաշտօնակրներու մէջ (Օգոստ. 23 և 24, 25, 1933) կը հաստատեն Առաջնորդ Տ. Գեղեցի Գարեանի Շիբաղի Յուրահանգէսին մէջ բնած ընթացքին սկիզբ. օգոստիս և օրինակամ ըլլալը: Այնպէս որ Սեպտ. 3-ին Նի. Եսրբի 27-րդ փողոցի Եկեղեցւոյ որոմին մէջ գումարց երեսփոխանական ժողով գումարելու յամասող փոքրամասնութեան վերջնական յայտարարութիւնը, ըստ որում ԱՀ ձայնով Առաջնորդ Գարեան կը գողըցուէր իր պաշտօնէն, պիտի մերժուէր Մայր Աթոսի կողմէ:

Հեղահակ սուր հանդամանք ստացող պայտարներուն և բանկած կիրքերուն ծայրակար կը լինի Առաջնորդ Գարեան Սրբապետի սղանութիւնը Գեղա. 24-ի սասուտուն, Նի. Եսրբի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, Պատարայի սկիզբը՝ «Հրաշափառ» թափօրի ընթացքին: Ամբողջ Հայութիւնը ծանօթ է այս զտմենելի սճիբին մանրամասնութիւններուն և անոր հետեանք և զող երկողատակութեան: Հայ մարդասպաններու գանակով նահատակուող Գեղեցի Արքեպիսկոպոսի մահացումով, Ամերիկահայութիւնը ոչ միայն կը կորարնցնէր կրթովի ու գործունէայ տասնորդ մը, այլ և կը վարկարեկուէր մասնաորարար սեղացի սղարանակչութեան և սու հասարակ ամբողջ քողարակիբ մարդկութեան աշքերուն առջև:



Առաջնորդ Դուրեան Արքեպիսկոպոսի սպանութեան զրեթէ վաղորդայնին, Կեղարոնական Վարչութիւնը միտձայնութեամբ տեղապահ կ'ընարէ Տ. Մամբրէ Ծ. Վրդ. Գալփաեանը: Փսթորկայսյ ժամանակամիջոց մը կը հետևէր Առաջնորդի սպանութեան, Երբ Ամերիկահայութեան մէջ ոչ միայն Հոգարարձութիւններ, միութիւններ ու Համայնքներ կը պառակտէին, այլ մինչև անպամ միւսնոյն բնտանիքի անդամներ: Այս պառակտումէն զերծ չմնաց նաև Ամերիկահայ Հոգևորական դասը. խումբ մը քահանաներ և սխրահալի Ղևնդ Մարդուկեան Վարդապետ կը յարին 27-րդ Փողոցի Եկեղեցւոյ մէջ դումարուած Երեսփոխանական Ժողովին ու կ'իւրացընեն անոր բանաձևած ըմբոստ դիրքն ու քաղաքականութիւնը: Այս անկողնապահ Հոգևորականներուն ուղղուած ազդարարութիւնները Կեղր. Վարչութեան ու տեղապահին կողմէ՝ կը մնան անլսելի, այն աստիճան որ Մայր Աթոռի վեհ. Հայրապետը անոնցմէ երկուքին՝ Ղևնդ Վրդ. Մարդուկեանին և Նշան Քհնյ. Փարիզեանի զէմ կ'արձակէ կարգալուծութեան հրաման, իսկ ուրիշ եօթ քահանաներ ալ կը կախալայտին՝ ապալտարելու պատենութեան ընծայմամբ: Վեհափառ Հայրապետը պաշտօնադիրով մը արդէն յայտարարած էր թէ Մայր Աթոռի Գերադոյն Հոգևոր Խորհուրդը ապօրինի կը ճանչնայ Նիւ Եորքի 27-րդ Փողոցի Եկեղեցւոյ ներքնաբարձի մէջ փոքրամասնութեան դումարած Ժողովը, ինչպէս նաև նոյն փոքրամասնութեան Առաջնորդի զէմ ստած պաշտօնանկութեան որոշումը: Նոր կոնդակով մը կ'արդա-

րարուի ըմբոստ փոքրամասնութեան՝ լուծել իրենց հակառահմանադրական «Երեսփոխանական Ժողովը» և ճանչնալ Հայրապետահաստատ տեղապահ Մամբրէ Ծ. Վրդ. Գալփաեանը և անոր նախագահութեամբ զործող Կեղրական Վարչութիւնը:

Ըմբոստ փոքրամասնութիւնը կը յամարուի իր զիրքին վրայ և Ամերիկայի Հայ Եկեղեցին երկար տարիներու համար կը զրկէ միասնականութեան բարեբէն: Մինչ այդ՝ Կեղր. Վարչութիւնը կը կազմէ Արհիպիսկոպոս Ղիւնդ Դուրեան Յանձնախումբ մը որ 15 ամիսներու զործուհկութեամբ (մինչև Մարտ 1935) կը հետապնդէ Դուրեան Արքեպիսկոպոսի սպանիչները դատական իշխանութեանց միջոցաւ դատապարտել տալու զործը: Կը հրատարակէ 4 պրակներ՝ Պատմութեան Համար ընդհանուր միջնադրով որ Դուրեանի զէմ հալածանքին յաջորդական փութրը կը պարզեն, և հատոր մը՝ Ազգադաւ Եղեռնը և Դատապարտութիւնը:

Նահատակ Դուրեան Արքեպիսկոպոսի յուզարիտարութիւնը տեղի կ'ունենայ Նիւ Եորքի Եպիսկոպոսականաց Սէնթ Ճեյմ Տիը Տիվայն Հալայ մայր Եկեղեցին մէջ, ուր հաւաքուած բազմահազար Հայեր արցունքներով ու հեկեկանքներով կը հետևին Հոյեհանդատեան Ս. Պատարապին, օծման ու դամբանականին: Եպիսկոպոսական Եկեղեցւոյ աստիճանաւոր Հոգևորական Պիլըփ Մէննիկ կը խօսի կարճ բայց սպառօրիչ դամբանական մը, յայտնելով իր Եկեղեցին ցաւակցութիւնը: Նահատակ Առաջնորդին մարմինը կը պահուի ստամարտը Գլընզլիփ զերեզմանատան մէջ, մինչև որ 1938 Նոյեմբե-

րին կը փոխադրուի Ս. Խաչ Եկեղեցին, յառկապէս շինուած դամբարանի մը մէջ թաղուելու:

Տեղապահ Մամբէլ Մ. Վրդ. Երեսփոխանական Ժողովը գումարել էի տար 1934-ի աշնան, նկատի առնելով Մայր Աթոռի կողմէ կրօնական յետաձգուած իրենդրանք մը, մինչև Հայրապետական Նուիրակի ժամանումը: Գեղ. Տ. Գարեգին Արք. Յովսէփիանց՝ Ամերիկա կը հասնի 1936-ի գարնան եւ նոյն տարւան Հովանաբերին գումարել կուտայ անգապահութեան շարժանի առաջին Երեսփոխանական Ժողովը: Այդ ժողովին մէջ (Ս. Խաչ Եկեղեցի, Նիւ Եորք) կ'ընէ զեկուցում մը միասնականութեանը վերահաստատելու պայմաններուն եւ կերպիւրուն մասին. ժողովականներուն դատադատութեամբ կ'իւրացուի սա եղբակցութիւնը թէ կանխահաս է միասնականութեան համար փորձերը քննել, քանի որ բաժանեալ փոքրամասնութիւնը կը յամտի իր քաղաքականութեան մէջ: Այս մասին կը հետադրուի Ս. Էջմիածին:


(Հետաքրքրութեան համար կ'արժէ յիշել որ ներկայիս Նիւ Եորքի մէջ Մայր Եկեղեցւոյ եւ Ազգային Տան մը շինութեան գաղափարը կը ծաղի 1937-ին, Նոստաակ Դուբանն Արքեպիսկոպոսի Ծիրերմի Եանձնախումբին թէրազուրկութեամբ):

1938-ի Ակոս. Յ-1-ի Երեսփոխանական Ժողովը, նախադահութեամբ անգապահ Տ. Մամբէլ Եպո. Գալֆայեանի, կը ձեռնարկէ առաջնորդական ընտրութեան եւ քուէներու բացարձակ մեծամասնութեամբ կ'ընտրէ Հայրապետական Նուիրակ Գեղ. Տ. Գարեգին Արք. Եովսէփիանցը: Մայր

Աթոռի Վեհ. Հայրապետը նոյն տարւան Ազգելին վարձանամ էր: Գերազօրն Հոգևոր Խորհուրդը ինդրուած վաւերացումը կը զանայ տալ, եւ քանիցս հեռագրաւ կը հրահանգէ ընտրեալ առաջնորդին վերադառնալ Ս. Էջմիածին Փարբլի ճամբով: Եթէ ամուսան սպասուէ վերջ, Երեսփոխանական Ժողովը Նիւ Եորքի Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ կը գումարէ բացարկ կը խնդրէ Մայր Աթոռէն զէթ ժամանակաւարագէս վաւերացնել Տ. Գարեգին Արք. Սաաջնորդական ընտրութիւնը: Ի վերջոյ, նոյն տարւան Եանիսին կը ստացուի Հայրապետական Տեղակալ Տ. Գեղարք Արք. Զէօրէֆնանի Մայիս 5 թուականը պաշտօնակիւրը, որով կը հաստատուի կատարուած առաջնորդական ընտրութիւնը եւ կ'ընէ բարեմայթութիւններ Ամերիկահայ ժողովուրդին ուղղուած:

Տեղապահութեան աւելի քան հինգ տարիներու ընթացքին՝ Առաջնորդարանի անուսական կացութիւնը կը մնայ զրեթէ անփոփոխ: Աւելի քան տաս տարի է վեր յաջորդարար փոխանցուող պարտքի գումարը կը մնայ զրեթէ միշտ նոյնը՝ շուրջ 5,000 տուլար: Այս շրջանին է նաեւ որ՝ 1938-ին Հարաւային Ամերիկայի թեմերը (կեղրոն՝ Պուկրոս Այրէս) կը կազմեն ուրոյն առաջնորդական միճակ, Մայր Աթոռէն հոն զրկուած յատուկ կաթողիկոսական Նուիրակի ջանքով: Միևնոյն տարին մեր միճակի առաջնորդական քառասնամեակին աթիւ կը սարքուին մի քանի հանդիսութիւններ եւ վերջ մ'ըլլայ ի նպաստ Առաջնորդարանի հանդանդութիւն կատարելու:





Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԺ. ՅՈՎՍԷՓԵԱՆՅ

Առաջնորդ 1939-1944

9. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐԳ. ՅՈՎԱԿԻՓԵԱՆՑ

(1939 Յունիս - 1944 Նոյեմբեր)

Իր ընտրութենէն ու իրը Առաջնորդ Տատատուէրէն շատ տաջ անձնդիր նը-
տիրմամբ ու ողաշատ արդիւնքներով
Ամերիկահայութեան սիրելի զարձամ՝
Գե. Տ. Գարեգին Արք. Յովակիմեանց և-
անդային կը ձեռնարկէ իր պաշտօնին
1939 Յունիս 13-ին, երբ Կեղք. Վարչու-
թեան նիստին կը կանչուի ու Մայր Ա-
թոռի պաշտօնադրին համաձայն յաթոս
կը հրահրուի Տեղապահ Տ. Սիւն Վրդ.
Մանուկի անի կողմէ :

Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս-
տի սուսջին զարժեքէն մին կը լինի Տատ-
տուէլ Հայաստանեայց Եկեղեցիի պաշ-
տօնաթիւրքը Առաջնորդարանի: Ան կը վե-
րածէ Առաջնորդարանը գրեթէ սխտա-
վայրի մը, անոր շուրջը բուրբելով Ամե-
րիկահայ գործընկերու մեծապոյն թիւ մը :
Իր պարբերական այցելութիւններով կը
քաջաւերէ թեմական համայնքները և ա-
նոնց զործօն մարմինները, ու Հնարհեալ
կը յաջողի այրել տալ Քրոյի, Պինկհէմ-
թընի, Պրիմօրթի, Պոսթնի, Լաօլէի և
Ուոթլըթթանի եկեղեցիներուն պարտա-
մուրհակները: Իր ձեռքով կ'օժուին նորթ
Յիլաթէֆիայի, Ռեյսթ Ալիսի և Երի.
Պրիթընի եկեղեցիները: Կը նորոգուին և
կը բարեկարգուին Փրայմէնսի, Պոսթո-
նի և Փէթլըբընի եկեղեցիները: Այս բո-
լորը Եթէ մէկ կողմէն պատեհողմի սու-
թով Ամերիկայի մէջ յատաճ եկամտնա-
տեան լու պայմաններու կը վերադըր-
ուին, միւս կողմէ և առաւել չափով իր
անխնայ քաջալերութեան ու ստեղծած
խանդավառութեան արդիւնքն են: Նահա-
տակ Ղևանդ Գուրեան Արքեպիսկոպոսի
չբմարարին հայկական սծով զարգացրու-
թիւնը կը կատարուի Առաջնորդ Գարե-
գին Արքեպիսկոպոսի ցուցմունքով: Ինք
էր որ նախ քան ընտրութիւնը 1937-ին

կ'օժէ նահատակ Առաջնորդին սպանման
վայր Ս. Խաչ Եկեղեցին:

Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի անուան
Հեա միշտ կապուած պիտի մնայ Առաջ-
նորդարանի Օժակակ Միւրքեան Երմ-
նումը 1940-ին: Այս իմաստուն քայլով
Առաջնորդը կ'ապահովէ Առաջնորդարա-
նի նիւթական մտտակարարութեան մնա-
յուն նպատակը մարմին մը: Առաջնոր-
դարանի համբաւուր ու երկարամեայ
պարտքը գրեթէ ամբողջութեամբ կը
բառնայ: Կը վերականգնէ Ուսումնական
Խորհուրդը, կը նշանակէ այցելու հովի-
նը և Եկեղեցականաց Համալուսմարը
կը վերածէ Երեպիտանական Ժողովին
համընթաց ժողովի մը:

Համապայլին բնայթ սնեցող իր զոր-
ծունէութեանց մէջ նշանակելի են մեր
թեմերուն մէջ ՃԼՈՒՍԱՆՈՐԾԻ ԼՈՒՄԱՅԺ
տարբի հաստատումը, իրը նպատակ Մայր
Աթոռի: Համաշխարհային Բ. Պատերազ-
մի չըջանին կը կազմակերպէ Հայկական
Յանձնախումբ մը, որ մէկ տարուան ըն-
թացքին 120,000 տարը հանդանակած է
կարմիր Բանակի Հայ դիտուորներու և
պատերազմէ ազէտեալ ազգակիցներու
համար: Նմանապէս Սասունցի Դաւիթ
Հրասայրերու Զօրասիւնին համար հան-
դանակած է աւելի քան 85,000 տարը,
անձամբ նախապահելով և ստեղծարար-
ութեամբ մղում տալով ձեռնարկներուն:
Իրը գեղարուեստի և մշակոյթի սերա-
հար հմուտ մտաւորական և գիտնական,
մեծ վայր տուած է իր հովանաւորած հայ-
կական գեղարուեստական ձեռնարկնե-
րուն և համապայլին ստեղծարարու-
թեանց:

1943-ի Մայիսին Անթիլիասի կաթողի-
կոսական Աթոռի Համալուսմարին մէջ

Գեր. Տ. Գարեգին Արք. Յովնակեանց կ'ընտրուի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ թաղուր մնացած գահին: Ձկարենալով իսկոյն մեկնել, նոյն տարուան Սեպտեմբերին իր դամարել տուած երեւոթախանական ժողովին մէջ ընտրել կուտայ իր յաջորդը, որ կը լինի Լուստունի Հայոց Հովիւր՝ Հոգ. Տ. Տիրան վրդ. Ներսոյեան: Ետքնոյր Առաջնորդը պատերազմի յատաչացուցած զմուարութեանց պատճառաւ հազիւ տարի մը վերջ կարող կ'ըլլայ նաւ գտնելու եւ Նիւ Եորք կը հասնի 1944 Նոյեմբեր 6-ին: Տ. Գա-

րեգին Արքեպիսկոպոս յաջորդ Կիրակին իսկ, նորքնոյր Առաջնորդի անդրանիկ պատարտոյի մատուցումէն վերջ անոր եւերկու եւս երիտասարդ հոգեւորականներու (Տ. Սինն եւ Տ. Չոյն վարդապետներ) կը շնորհէ Մայրագոյն վարդապետութեան Աստիճան: 1945-ի Յունուարին կը մեկնի Ամերիկայէն, ստանձնելու իր աւելի բարձր ու պատասխանատու պաշտօնը իրր Կիլիկիոյ Կաթողիկոս:

Ամերիկահայութիւնը երախտապիտութեամբ ու պարճանքով կը յիշէ իր Առաջնորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը:



(1944 Նոյեմբերիէն Սկսեալ)

Նորընտիր առաջնորդի պաշտօնավարութեան առաջին տարին լեցուն կ'ըլլայ մէկէ աւելի նորութիւններով որոնք նշանակալից են թէ՛ ընդհանուր Հայութեան և թէ՛ Ամերիկահայոց սեռակէտէն: Նախկին Առաջնորդ Գեր. Տ. Գարեգին Սրբազան Արքեպիսկոպոս 1945-ի Յունուարին կը մեկնի Լիբանան, ստանձնելու համար Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պաշտօնը որուն ընտրութեամբ էր աւելի քան մէկ ու կէս տարի առաջ: Մինչ այդ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին կը հասնի հրահանգ՝ նոյն տարուան դարձնալեւրջին Ազգային-Եկեղեցական Ժողով զուամբելու մասին և կը ինդուի ընտրել թեմական պատգամաւորներ: Փետրուարին կը զուարճուի Երեսփոխանական Ժողով և կ'ընտրուին Երկու հոգեւորական և Երեք աշխարհական պատգամաւորներ, բացի Առաջնորդ Հորմէն, որ իր պաշտօնին հանգամանքով պիտի մասնակցէր Համադուարին: Երեսփոխանական Ժողովը կը որոշէ ինդրանք մատուցանել ընտրուելիք Հայրապետին՝ որպէսզի հաճի եպիսկոպոս օժել Ամերիկահայոց Առաջնորդը: Պատգամաւորներէն ոմանք աւողջական և այլ պատճառներով անկարող կը լինին մեկնելու, որով 1945-ի Մայիսին չօգնանալով մեկնողները կը լինին Առաջնորդ Տ. Տիրան Ծ. Վրդ., Տ. Միոն Ծ. Վրդ. Մանուկեան, Տեառք Հայկ Գալուպեան և Ճէյմս Չանդակեան: Երեսփոխանական Ժողովը կը կատարուի ընտրութիւնն ու օժուած Վեհապետ Տ. Տ. Գէորդ Զ. Կաթողիկոսի, որ իր Եպիսկոպոսական անդրանիկ ձեռնադրութիւնը կը կատարէ 10 թեմա-ծուներու խումբի մը վրայ, որուն մէջ կ'ըլլան Ամերիկահայոց Առաջնորդը և Տ. Միոն Ծ. Վրդ. Մանուկեան:

1945-ի Հոկտեմբերին Տ. Տիրան Եպս.

Ներսոյեան կը վերադառնայ Նիւ Եորք: Մի քանի ամիսներու ընթացքին՝ Համալսարանին Բ. Պատերազմը վերջացած էր թէ՛ Գերմանիոյ և թէ՛ Ճափոնի անձնատուութեամբ: Պաղատութիւնը վերակերտելու օրերն են և Հայրենակարօտ Հայութիւնը իր աչքերը կը դարձնէ դէպի Հայաստան ու Ս. Էջմիածին: 1945-ի Դեկտեմբերին կը յայտարարուի Սփիւռքէն դէպի Պորտուգալի Հայաստան Ներդադրելու արտուած որոշումը: Այս առթիւ Վեհապետ Հայրապետը Կոնդակու կը հրահանգէ անկախ սկսուելիք Հայրենահասարակ վերջին: Դրամական զոհողութեանց մեծագոյն բաժինը ինչպիսիք Ամերիկահայոց վրայ, Հ. Բ. Ը. Միութեան կողմէ կը հովանաւորուի առաջին միլիոն տուարի հանդանակութիւնը, և Առաջնորդարանը իր մասնակցութիւնը կը բերէ: Ամերիկահայ Թեմի բարեփոխեալ Սահմանադրութիւնը կը վաւերացուի նորընտիր Կաթողիկոս Վեհ. Տ. Տ. Գէորդ Զ. ի կողմէ և 1946-ին ապագրուելով գործարութեան կը դրուի:

Տ. Տիրան Առաջնորդ Սրբազան իր պատմութեամբ թեմական չորս տարիներու ընթացքին հետապնդած է հետեւեալ գործերը:

1. Նիւ Եորքի մէջ Մայր Եկեղեցիի և Ազգային Տաճար Երկուքիւնը: Ասոր գաղափարը նախորդ առաջնորդի օրով յղացուած՝ գործնական գեանի վրայ կը զըրուի երբ 1946-ին կը կազմուի Կերտնակական Յանձնաժողովը իր յարակից յանձնախումբերով: Կը ստացուին դրամական նուէրներու խոստումներ, 1947-ի գարնան Նիւ Եորքի մէջ կը կատարուի տունէ տուն հանդանակութիւնը: Այս ձեռնարկներու հասոյթը ցարկ ապահոված է 235 հազար տուար, որ յատկացուած է գեներալ



Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍՈՓՆԵԱՆ

Ներկայ Առաջնորդ

լու յարմար հոյժք՝ կատարելիք չկե-
 քին համար: Այս հոյք վերջերս գնում
 է, ու կը բաղկանայ մի քանի պարտք գե-
 տինները և տասն է մը: Հանդանակութիւ-
 նը պիտի շարունակուի թեմական եկեղե-
 ցիներուն մէջ:

2. Հոգևոր Պատեօնէս Իրինը Զօրա-
 ցընկու Գործը: Կարճատիւր Առաջնորդը
 նկատելով որ շատ մը թեմեր անհովի-
 են, և սմանք ալ իրենց ընդարձակութեան
 բերումով պէտք ունին պնական հովի-
 ներու, Զանոցած է հոգևոր պաշտանէս-
 ական թիւր յարմարեցնել մասնաւոր ե-
 րիտասարդ սեփերով և երբ տարւան
 ընթացքին յաջողած է թեմական եկեղե-
 ցիներուն մէջ գործի լծել տասնմէկ հոգե-
 ւորականներ (հինգը՝ վարդապետ, վեցը՝
 քահանայ) բոլորն ալ արտասահմանէն
 (Պաղեստին, Արիւրա, Կիպրոս, Պուրչա-
 րիս, Անգլիա): Ասանցմէ հինգը իբր ասո-
 սածարանութեան ստանդը Ամերիկա
 գալէ վերջ՝ ձեռնադրութիւն ստացած են
 Առաջնորդ Հօր ձեռքով 1948-ի ընթացքին:
 Ասանդներու թիւը վեց է. անոնց ճա-
 նապարհամարտն ու կրթաթոշակները, այլ
 ծախքերու կարգին, հոյզալ յանձն ատած
 է երեք տարւան չըջանի մը համար Տիթ-
 րոյթի երեւոխոսան ՏԻԱՐ Ա.Լ.ԵՄ. ՄԱՆՈՒԿ-
 ԻԱՆ: Հոգևորականներու, պահուող հե-
 սու է զարմանաւոր լլլալէ, քանի որ անց-
 նոյ չորս տարիներու ընթացքին այս վի-
 ճակի հոգևորականներէն պակասած են
 հինգ հաս (մէկը վախճանած, չորսը փո-
 խաղրուած այլուր). այնպէս որ Առաջ-
 նորդարներ կը հետամի նոր ուժեր հաս-
 ցընէրու:

3. Ամերիկայի մէջ ճնամ ու կրքուած
 Հայ երկսիտ երիտասարդութեան կազմա-
 կերպումը եւ պակասումը Հայ եկեղեց-
 ւոյ իովանիին տակ: Ամերիկահայ դադու-
 թին երկրորդ սերունդը, ինչպէս նաև
 մտակ ստեղծ երրորդ սերունդը շատերու
 ստահապառնակ տարակալ են: Զանոք
 իբր Հայ մեծցիներն ու կազմակերպիչը ա-
 մէն Ամերիկահայ ծնողքի կարողութեան
 սահմաններուն մէջ չէ. ոչ ալ Հայ քա-
 զաքական կուսակցութիւնները կրնան յա-
 տակնի թէլ գտած են յատկոյն կերպը այլ
 խնդրի յոժման: Անցնող քառորդ դարու
 ընթացքին տեղ տեղ սկսած էին կազմուիլ


երիտասարդական միութիւններ այս կամ
 այն սեռի համար, զանազան անուններով:
 Այս միութիւններու կանոնադիր-ծրադիր-
 ները տեղական հանդամներ ունէին և ի-
 րենց տեսականութիւնը տեղական ուժե-
 րու և միջոցներու սահմանէն կախում
 ունէր. շատեր կարճ ժամանակ վերջ դադ-
 րած էին գործել: Առաջնորդ Տ. Տիրան
 եպոս կը ձեռնարկէ համայնական նկա-
 րագիր ստեղծող երիտասարդական կազ-
 մակերպութիւն մը հաստատելու, և այս
 մասին խորհրդակցական ժողով մը գո-
 մարկ կուսայ 1946-ի Յունուարին Փրա-
 յիսէնի մէջ: Մեծ մասամբ անդլիախոս
 երիտասարդներու այդ ժողովին մէջ է որ
 կը պատրաստուի նախադիւր Ամերիկայի
 Հայ եկեղեցւոյ երիտասարդաց կազմա-
 կերպութեան (Էյ. Մի. Ուսյ. Օ. Էյ.)
 Սահմանադրութեան: Ազգային Կեդրոնա-
 կան Վարչութեան կողմէ ընտելէ և
 սրբադրուելէ վերջ, Կազմակերպութիւնը
 իր անդրանիկ Պատգամաւորական Ժողով-
 քին մէջ (Նորթ Ֆիլադելֆիա 1947 Մա-
 յիս) կը վաւերացնէ Սահմանադրութիւնը
 և կ'ընտրէ իր Կեդրոնական Խորհուրդը:
 Երկրորդ Պատգամաւորական Ժողովին
 (Գումարուած Տիթրոյթ 1948 Մայիս)
 մասնաձեւերու թիւը հասած կը լինի
 22-ի, իսկ անդամներու ընդհանուր թիւը
 925-ի:

4. Միասնակաճեւրեան Խնդիրը: 1933-ի
 Երեւոխոսանական Ժողովին առթիւ դո-
 յացած պատահումը և Առաջնորդ Դուր-
 կան Սրբազանի սպանութեամբ բացուած
 խրամտըր բուժելու մտքով բանակցու-
 թիւններ սկսած են կատարուիլ 1945-ին՝
 Մայր Աթոռի մէջ գումարուած Ազգային-
 երեւոխոսանական Ժողովին տուաջ: Այդ
 բանակցութիւնները Կեդրոնական Վար-
 չութեան և բաժանեալ հաստատի ներ-
 կայացուցիչներուն միջև շարունակու-
 ցան Հայրապետի ընտրութենէն վերջ՝ իր
 թիւրբանքով, մինչև այն կէտը երբ
 1947-ի ամբար բաժանեալ հաստատը
 լուծեալ յայտարարեց իր երեւոխոսանա-
 կան Ժողովը և Առաջնորդարանին են-
 թարկուելու տրամադիր դառնուցաւ:
 Թրոյթի մէջ 1947 Հսկումներին գումար-
 ուած երեւոխոսանական Ժողովը զանազան
 նիստի մէջ երկտորէն նկատի առաւ այս

հարցը եւ որոշեց հաղորդել բաժանեալ հաստատման թէ՛ վեհ. Հայրապետի Կոնգակի ողիին համաձայն պարտատ է մխանականութիւնը վերահաստատել: Գժրախոտարար բաժանեալ կողմը յանձն չառաւ իրմէ՛ պահանջուած կարգ մը զիջումներ ընել եւ այս փշոտ հարցին լուծումը վիժած է առ այժմ:

Առաջնորդ Հօր հետապնդած զործերէն են նաև Ամերիկայի մէջ Հայ Աստուա-

ճարանական ճեմարանի մը հաստատումը, Հոգևորականաց Օգնութեան Ֆոնտի հաստատումը եւ Հայրենագարձ Համբարձում Չորաբեանի մանուկները Հոսմէական հաստատութիւններէ աղատելու եւ իրենց ծնողաց վերագարձնելու զործը: Այս բոլոր զործունէութեանց մէջ Առաջնորդին կ'աջակցի Ազգային Կեդրոնական Վարչութիւնը իր ստեղծած ենթա-ժողովներով միասին:




Ա Ղ Ի Ի Բ Ն Ե Ր

1. Ամերիկահայ Տարեցույցը (Ա. Տարի 1912) :
2. Ատենադրութիւն Ամերիկահայոց երեւոյթաբանական ժողովոյ (1914) :
3. Ատենադրութիւնք Երեւոյթաբանական ժողովոյ Լերք շրջաններուն՝
Ա.— 1917 փետր. 18,
Բ.— 1917 Յունիս 29,
Գ.— 1918 Ապրիլ 7-8 :
4. Տարսոս, ազատ Հայաթերթ (1918) :
5. Ատենադրութիւն Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովոյ (Օգոստ. 21, 1921) :
6. Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովի Ատենադրութիւններ (15-16 Մայիս 1927) :
7. Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովի Ատենադրութիւններ (7-8 Հոկտեմբեր 1928) :
8. Ատենադրութիւնք Ազգ. Կեդր. Վարչութեան նիստերու 1928-1930 (Զեռազիր) :
9. Ատենադրութիւն Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովին (1931. Հոկտ. 10-11) :
10. Ատենադրութիւն Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովին (1933, Յունուար 21-22) :
11. Ատենադրութիւն Ամերիկայի Հայոց երեւոյթաբանական ժողովին (1933 Սեպտ. 2-3, Ա. Նիստ՝ Ս. Լուսա-
- ւորիչ Եկեղեցւոյ Սրահին մէջ, Բ. Նիստ՝ Հօթէլ Մարթինիքի սրահին մէջ) :*
12. Պատմութեան Համար (1934) Պրակտ 2 և 3 :
13. Ազգազու. եղևնը և Դաստադարաբանութիւնը (1935) :
14. Ատենադրութիւն Ամերիկահայ Ազգային երեւոյթաբանական ժողովներու (Հոկտ. 10-11, 1936. Մայիս 1-2, 1937, Սեպտեմբեր 3-4, 1938, Ապրիլ 16, 1939) :
15. Յուշամտտեան Յուրկինական Յիսնամեայ Տօնակատարութեան Սր. Փրկիչ Եկեղեցւոյ Ուսարի (1890-1941) :
16. Տ. Գորեղին Ս. Աբրեղս. Յովնկիւնեան (հրատարակուած 1943, Յուրկինական Կեդրոնական Յանձնաժողովի կողմէ) :
17. Արձանադրութիւն Հայոց. Եկեղեցւոյ Տարեկան երեւոյթաբանական ժողովոյ (1946 Հոկտ. 12 և 13) :
18. Հայաստանեայց Եկեղեցի (1945-1948) :

*Բաժանակալ հատուածը հրատարակած է նոյն անունով պրակ մը, 1933 Սեպտ. 2-3-4 քուակախով. ժողովը զուարթուած է Ս. Լուսաւորիչ «Մայր» Եկեղեցւոյ սրահին մէջ :

ԳԱԽԱԶԱՆԱԳԻՐՔ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱԶԱՅՈՑ



1. **Տ. ՅՈՎՍԷՓ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԱՃԵԱՆ**
1898 Հոկտ. – 1906 Մեպտ. (Հրատարած)
2. **Տ. ԵԶՆԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՀՈՒՆԻ**
1908 Մեպտ. – Հոկտ. (Հրատարած)
3. **Տ. ԱՐՍԷՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՎԵՀՈՒՆԻ**
1913 Մեպտ. — 1917 Նոյ. (Հրատարած)
4. **Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ**
1921 Մարտ – 1928 Մեպտ. (Հրատարած)
5. **Տ. ՂԵՒՈՆԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈՒՐԵԱՆ**
1931 Մայիս – 1933 Դեկտ. 24 (Նահատակուած)
6. **Տ. ՏԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ**
1939 Յունիս – 1944 Նոյ. (Ընտրուած
Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ)
7. **Տ. ՏԻՐԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԵԱՆ**
1944 Նոյ. –

//
..
//

ԱՄԵՐԻԿԱԶԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՆԵՐԿԱՅ ՊԱՏԿԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԿԵՐԸ

ՍԱՀՄԱՆ

Ամերիկահայոց առաջնորդական վիճակը իր մէջ կ'ընդգրկէ Միացեալ Նահանգաց (բացի Գալիֆորնիայէն) եւ Գանատայի Հայ Թեմերը,* Բիւռլ 37: Առաջնորդանիստ քաղաքն է 1928-էն ի վեր Նիւ

*Մեքսիկոյի եւ Գուայայի սակաւաբիւ չայերն ալ տեսակաւորէն կապուած են այս վիճակին:

ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Առաջնորդը կը զործէ Ազգ. Երեսփոխանական Ժողովի կողմէ ընտրուած Կեդրոնական Վարչութեան Հետ: Վարչութիւնը կ'ունենայ Հորս Հողերուական եւ Հինգ աշխարհական անդամներ, բացի Առաջնորդէն, որ նախադահն է: Բնականոն կերպով, Վարչութիւնը ամիսն անգամ մը ժողով կը դումարէ, եւ իր մէկ տարուան զործունէութեան տեղեկատուութիւնը կ'ընէ Երեսփոխանական Ժողովին:

Ազգային Կեդրոնական Վարչութեան կազմը 1947-1949 ճետեւեալն է:

Գեր. Տ. Տիրան Եպս. Ներսոյեան՝ Գալիսագահ

ԹԵՄԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Կազմակերպուած համայնքներու թիւն է 37: Ասոնցմէ 23-ը ունին սեպհական եկեղեցիներ որոնցմէ եւ ոչ մէկը կալուածական սպարոք ունի: Գործոն Հողերուականներու թիւն է 21: Ահաւաստի վիճակիս 37 Թեմերու ցանկը.

1. Binghamton, N. Y., 12 Corbett Ave.
- Ս. Գ. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ:

Եորք: Առաջնորդն է Գերապատիւ Տ. Տիրան Եպս. Ներսոյեան (ընտրուած Սեպտ. 1943, զործի ձեռնարկած Նոյ. 1944):

Ամերիկահայոց առաջնորդական վիճակը իր զործունէութիւնները կը վարէ համաձայն նորագոյն Սահմանադրութեան, որ վաւերացուած է Վեհ. Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսի կողմէ 1946 Մարտին, եւ որ կը ջնջէ իրմէ առաջ զոյուեթիւն ունեցող Սահմանադրութիւնները:

Հոգ. Տ. Եղիշէ Վրդ. Սիմոնեան՝ ատենապետ

Տիրար Տիրոսի Սմարտեան՝ փոխ ատենապետ

Տիրար Պետրոս Պոնտացի՝ ատենադպիր
Տիրար Աւետիս Կէլճիքեան՝ զանձապահ
Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան՝ խորհրդական


Արթ. Տ. Յարութիւն Գհնյ. Թումայեան՝ խորհրդական

Արթ. Տ. Վահան Գհնյ. Ճէլալեան՝ խորհրդական

Տիրար Գրիգոր Ա. Սրկ. Գալուստեան՝ խորհրդական

Տիրար Պետրոս Հազարապետեան՝ խորհրդական

2. Boston, Mass., 397 Shawmut Ave.
Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ.— Հովիւ՝ Տ. Յարութիւն Ա. Գհնյ. Թումայեան. Օգնական՝ Տ. Շահէ Գհնյ. Ալթունեան:
3. Bridgeport, Conn., 1241 Barnum Ave.
Ս. ՀԱՄԲԱՐՁՈՒՄ:
4. Chicago, Ill., 1000 N. Hoynes Ave.
Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ.— Հովիւ՝ Տ. Վահրամ Մ. Վրդ. Նազարէթեան:



ԱԳԳԱՅԻՆ ԿԵԳՐ ՎԱՐՉՈՒԹԻՆ

Վերի շարք՝ Արմ. Տ. Վանան Բենյ. ձեյլայեան, Հոգ. Տ. Եղիշե վրդ. Սիմոնեան՝
 ատենապետ, Տ. Յարութիւն Ա. Գինյ. Թումաշեան: Միջին շարք՝ Տիար Պետրոս Պոն-
 տաջի՝ ատենադպիր, Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան, Տիար Տիգրան Սմաթեան:
 Վարի շարք՝ Տեարժ Աւետիս Կելնիքեան, Գրիգոր Դալուստեան, Պետրոս Հազարա-
 պետեան:

5. Cleveland, Ohio
Հասցե Հոգարարձօթեան՝
Dick Garabedian, 1141 Superior
Ave.
6. Detroit, Mich., 1335 Oakman
Blvd.
Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻԶ.— Հովիւ՝ Տ.
Սրնն Եղս. Մանուկեան: Օղտական՝
Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան:
7. Evanston, Ill., 816 Clark St.
Ս. ՅԱՅՈՒՔ.— Հովիւ՝ Տ. Վարդան
ՔՏԵՅ. ՄԿՐԵԱՆ:
8. Hamilton, Ontario, Canada
Հասցե Եկեղեցական Յանձնարարձօթի՝
Hagop Mooradian, 91 Haddon
St., N. Westdale, Hamilton
9. Hartford, Conn.
Հասցե Հոգարարձօթեան՝
George Norsigian, 539 Maple
Ave.
Հովիւ՝ Տ. Անանի ՔՏԵՅ. Գասար-
եան:
10. Haverhill, Mass., Main St.
Ս. ԳՐ. ԼՈՒՍՒԵՆՆԻՐԻԶ.— Աժժ. Հո-
ղի՝ Տ. Հմայեակ Վրդ. Ինթոյեան:
11. Lawrence, Mass., 54 E. Haverhill
Street
Ս. ԽԱԶ.— Աժժ. Հովիւ՝ Տ. Հմայեակ
Վրդ. Ինթոյեան:
12. Lowell, Mass., 60 Lawrence St.
Ս. ՎԱՐԳՄԱՆՆԵՅ.— Հովիւ՝ Տ. Կա-
րէն ՔՏԵՅ. Կասնեան:
13. Miami, Fla.
Հասցե Եկեղեցական Յանձնարարձօթի՝
M. Der Sahakian, 3910 Kumquat
Ave.
14. Montreal, Quebec, Canada
Հասցե Եկեղեցական Յանձնարարձօթի՝
Dicran Karibian, 5849 Park Ave.
15. Newark, N. J.
Հասցե Հոգարարձօթեան՝
V. Chorbajian, 144 Main St., East
Orange, N. J.
Հովիւ՝ Տ. Շնորհք Վրդ. Գալուստ-
եան:
16. New Britain, Conn., 11 Erwin
Place
Ս. ՅԱՐՈՒԹԻԻՆ.— Հովիւ՝ Տ. Աս-
նակ ՔՏԵՅ. Գասարեան:
17. New York, N. Y., 336 W. 20th St.
Ս. ԳՐ. ԼՈՒՍՒԵՆՆԻՐԻԶ.— Հովիւ՝ Տ.
Վրթանէս Ա. ՔՏԵՅ. Փախուցեան:
18. New York, N. Y., 580 W. 187th St.
Ս. ԽԱԶ.— Հովիւ՝ Տ. Եղիշ Վրդ.
Սրմանեան: Օղտական՝ Տ. Արաքն
ՔՏԵՅ. ԱՇՏԱՆ:
19. Niagara Falls, N. Y.
Հասցե Հոգարարձօթեան՝
Kerrigan Sarkissian, 211 Tenth
Street
20. Paterson, N. J., 135-51 Bloom-
field Ave.
Ս. ՂԵՒՈՒԴԵԱՆՅ.— Հովիւ՝ Տ.
Շնորհք Վրդ. Գալուստեան:
21. Philadelphia, Pa., Susquehanna
Ave. & Marshall St.
Ս. ԵՐՐՈՐԴՆՈՒԹԻԻՆ.— Հովիւ՝ Տ.
Թորոս Վրդ. Մանուկեան:
22. Philadelphia, Pa., 6006 Walnut
Street
Ս. ՍԱՀԱԿ-Ս.ՄԵՍՐՈՊ.— Հովիւ՝ Տ.
Մեղրոս Վրդ. Աշմէրճեան:
23. Providence, R. I., 70 Jefferson St.
Ս. ԹԱՐԳՄԱՆՆԵՅ.— Աժժ. Հովիւ՝
Տ. Վահան ՔՏԵՅ. Ճէլաղեան:
24. Racine, Wis., 1326 State St.
Ս. ՄԵՍՐՈՊ:
25. Richmond, Va.
Հասցե Հոգարարձօթեան՝
K. Krikorian, 3019 Dill Ave.
26. Saint Catherines, Ontario, Ca.,
Carlton St.
Ս. ԳՐ. ԼՈՒՍՒԵՆՆԻՐԻԶ:
27. South Milwaukee, Wis., 909
Michigan Ave.
Ս. ՅԱՐՈՒԹԻԻՆ.— Հովիւ՝ Տ. Սու-
բիաս Վրդ. Գալֆայեան:
28. Syracuse, N. Y.
Հասցե Հոգարարձօթեան՝
V. Aghababian, 401 Hawley Ave.

- | | |
|---|---|
| <p>29. Toronto, Ontario, Canada
 <i>Հասցէ Հոգարարձուփեան՝</i>
 Hagop Sween, 31 Howard St.</p> <p>30. Troy, N. Y., Fifth Ave. & Jacob Street
 <i>Ս. ՊԵՏՐՈՍ.— Հովիւ՝ Տ. Բարդէն Վրդ. Վարժապետեան:</i></p> <p>31. Union City, N. J., New York Ave. & 27th St.
 <i>Ս. ԽԱԶ.— Հովիւ՝ Տ. Խորէն ԲՅՆՅ. Մամիկոնեան:</i></p> <p>32. Washington, D. C.
 <i>Հասցէ Հոգարարձուփեան՝</i>
 K. Khosroffian, 4712 Piney Branch Rd., N. W.</p> <p>33. Watertown, Mass., 467 Mt.</p> | <p>Auburn St.
 <i>Ս. ՅԱԿՈՒԲ.— Հովիւ՝ Տ. Յովսէփ Եղս. Կարապետեան:</i></p> <p>34. Waukegan, Ill.
 <i>Հասցէ Եկեղեցական Յանձնախումբի՝</i>
 Avedis Kzirian, 309 S. Sheridan Road</p> <p>35. West Allis, Wis., 6228 W. Washington St.
 <i>Ս. ՅՈՎԷ. ՄԿՐՏԻԶ.— Հովիւ՝ Տ. քիաս Վրդ. Գալֆայեան:</i></p> <p>36. West Pullman, Ill.
 <i>Հասցէ Եկեղեցական Յանձնախումբի՝</i>
 A. Nigoghosian, 11914 Lowe Ave.</p> <p>37. Worcester, Mass., 65 Laurel St.
 <i>Ս. ՓՐԿԻԶ.— Հովիւ՝ Տ. Յակոբ ԲՅՆՅ. Մխճեան:</i></p> |
|---|---|

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՏՈՆԵՆԻԹԻՒՆ

Առաջնորդարանի բարտուղարն է Տիար վահան Բաշուցի. որ կը պաշտօնավարէ 1934-էն ի վեր: Օր. Մարիամ Շալափեան զբաղուհի պաշտօնի կոչուած է 1945-էն ի վեր: Առաջնորդարանի նախկին բարտուղարներն են Եղած Տիար Պատրիկ Ալէլեան (1922-1925), Տ. Աթիկ ԲՅՆՅ. Ծոցիկեան (1926), Տիար Տիրան Բաշալեան (1927-1928), Տիար Հայկ Խօճատարեան (1928-1932), Տ. Եղիշէ Վրդ. Սիմոնեան (1933):

ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ

Առաջնորդարանի պաշտօնաթիւրքն է «Հայաստանեայց Եկեղեցի» ամսաթիւրքը, որ ներկայիս կը հրատարակուի 32 էջով, բացի Հոկտեմբերի թիւէն որ կրկին ծաւալով լոյս կը տեսնէ: Հիմնուած է նախկին առաջնորդ Գեոր. Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ և խրմբադրութեամբ՝ 1939-ին: Խմբադրական մարմինն մաս կազմած են Տիկ. Արքաբի



ՏԻԱՐ ՎԱՀԱՆ ԲԱՅՈՒՆԻ Բարտուղար Առաջնորդարանի

Սիմոնեան, Տեարք Սարգիս Ծոցիկեան և Գր. Հ. Գալուստեան, Տ. Զօսն Վրդ. Մանուկեան (1943-1946), Անդրանիկ Աշճեան և Միկայ Գաղղարեան սարկաւազներ

(1947), Տ. Իսահակ Վրդ. Ղազարեան (1948 Յունվ.-Մարտ): Մայիսէն մինչև Դեկտեմբեր հսկած է Պ. Մարտիրոս Սարգիսեան: Այժմ կը խմբադրէ՝ Հոլլ. Տ. Ծնորճ Վրդ. Գալուստեան: Պատասխանաւ խմբադիրն է Առաջնորդ Հայրը: Թերթի բաժնեգիրն է 3 տարբ, իսկ բաժանորդներու թիւը 800:

ՆՊԱՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

1947-ի Ազգային-Եկեղեցական Համագումարի մէջ արուած խոստման համաձայն մեր թեմը էջմիածնի նորարաց ձեռնարանին մէջ 10 սաներու նիւթական հոլատարութիւնը ստանձնած է, իւրաքան-

չիրին տարեկան ծախքը հաշուելով 500 տարբ:

Ասիկ զսա՝ մեր համայնքներու ընդհանուր Եկամուաներուն հարիւրին հինգ տոկոսը կը համարուի Ս. էջմիածնի Լուսնայի սակ: Արտասահմանի թեմերուն հրահանգը ամ է Մայր Աթոռոյ պատկան գումարները փոխադրել մեր Առաջնորդութան: Այս հրահանգը առայժմ միայն Գուրգիթորնիոյ թեմը կը պատրել: Գոյացած գումարներով՝ ըստ ՎԵՏ. Հայրապետի խնդրանքին դիտուած են վանքի և ձեռնարանին համար պիտանացու սուրկաներ 31,835 տարբ արժէքով և գրկուած են Երեք առաջումներով (1947 նոյ., Դեկտ., և 1948 Փետր.), ընդամէնը 342 սնտուկ:



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻԻՆԸ

Հիմնուած 1940 Մարտ 13-ին՝ նախկին ստաջնորդ Գեորգ Տ. Գաբրիելի Արք. Յովսէփիանի ջանքերով, Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը կը թեւակախէ իր զոյւթեան իններորդ տարին: Ութ տարիներու այս կարճ ժամանակամիջոցին՝ այս միութիւնը յոյժ կարեւոր դորձ կատարած է Առաջնորդարանի տնտեսական վիճակի կարգաւորութեան տեսակէտով զայն ազատելով պարտքերէ: Ասկէ զատ եղած է բարոյական ուժ և ազդակ՝ մեր բարեպաշտ ժողովուրդը աւելի սերտորէն համախմբելով Առաջնորդարանի և սնոր եկեղեցական ու ազգային դորձունելութեան շուրջ:

Օժանդակ Միութիւնը ստանձնած է հանդանակելու ազգային-եկեղեցական ներառատուբերը: Այս դորձը Նիւ Եորքի մէջ կը կատարէ Կեդրոնական Մարմինը, իսկ համայնքներուն մէջ՝ տեղական մասնաճիւղերը: Միութիւնը կը կազմակերպէ նաև տարեկան մշակութային ձեռնարկներ և հասարայթներ: Ասանց սնոր զոյւցացած նիւթական օդնութեան՝ կարելի չէ հաստատակշտել Առաջնորդարանի տարեկան պիտանքն:

Կեդրոնի Մարմինը (Նիւ Եորք) կանոնաւոր աշխատանք կը կատարէ և տարուէ տարի աւելի մեծ արդիւնքներ ձեռք կը բերէ: Մասնաճիւղերէն քիչեր միայն աշխոյժ են: Նիւ Եորքի մէջ կան թաղային յանձնաժողովներ որոնցմէ Պրուբլին և Փարէսթ Հիլզ բաւական դորձօն են:

Կեդրոնի Մարմինը իր նիւտերը կանոնաւորաբար կը զուտարէ Առաջնորդ Սերբրայան Հօր նախապահութեամբ:

Մասնաճիւղեր կը դանուին հետեւեալ քաղաքներուն մէջ.— Շիքաքօ, Ուոթեր-թաւան, Ուտտըր, Բէյսիւն, Թրոյ, Եւսնիլեն Միթի, Սաութ Միլուուորի, Բալչեսթըր, Սիբրայիլ, Տիթթրայթ:

Առաջնորդարանի Օժանդակ Միութեան

անդրանիկ կազմը Տ. Գաբրիելի Սերբրայանի հրաւիրմամբ կը բաղկանայ Նիւ Եորքի Ս. Խաչ և Ս. Լուսաւորիչ եկեղեցիներու հոգաբարձութեանց և եկեղեցասէր Տիկնանց Միութիւններու ներկայացուցիչներէն, յանձինս հետեւեալներուն.— Տիկնայթ՝ Աղանի Նիկողոսեան, Ջարուհի Գալեմ-Ֆարեան, Աստղիկ Իգնատիոսեան, Սարինիկ Ուրեան, Ջարուհի Պահլէնեան, Կառաբիլէ Տաուրեան, Լիւսի Բէօլէեան, Օր. Վարդուհի Ժամկոչեան և Տեաք՝ Լեւոն Արսլանեան, Եղիա Մարքանեան, Յարութիւն Հազարեան և Արմէն Բոցիկեան:

Օժանդակ Միութեան զեղարուեստական ձեռնարկներուն մէջ առաջինն է եղած 1941 Հոկտեմբեր ամսու վերջին Կիրակիի սարբուս կրթչտական ցերեկոյթ մը՝ Նիւ Եորքի Pythian Temple-ի սրահին մէջ: Մասնակցող արուեստագէտներն էին՝ Երզանան-Թալութակահար Տիրան Ալեքանեան, համարաւոր թէնոր Արման Թոզաքեան և սիրուած երգչուհի Մառի Արագեան (սօփրանօ):

Երկրորդ ձեռնարկն ալ եղած է նուազահանգէս մը նոյն սրահին մէջ, 1942 Հոկտ. 18-ին: Մասնակցողներն եղած են՝ Տիկիկն Ռոզ Գուլարեան (քոնթրապթօ), Երզանան-Թալութակահար Տիրան Ալեքանեան և Երզանան-գալանակահար Ալան Յովիանեան:

1943 Հոկտ. 24-ին նոյն սրահին մէջ տեղի կ'ունենար Միութեան երրորդ տարեկան նուազահանգէսը, մասնակցութեամբ Տիկիկն Սիրուն Մանլըքեանի (մէյն-սօփրանօ, Գալիֆորնիայէն մասնաւորապէս հրաւիրուած), զաջնակահար Օր. Մարթ Անլմեանի և Լուսթակահար Օր. Անահիտ Անլմեանի:

Երրորդ տարուան ձեռնարկի յաջողութենէն քաջալերուած, Միութիւնը 1944 Հոկտեմբեր 29-ին City College Audi-

torium-ին մէջ կը յանդգնի բեմադրել Յովհ. Թումանյանի «Անուշ»՝ Տիգրան Սիրամուտ Գազուրնի կարող ղեկավարութեամբ և 150-ի մօտ անձնուր մասնակցութեամբ: Իրենց մասնակցութիւնը կը բերեն Նե. Եսբէրի Ս. Խաչ և Ս. Լուսաւորեչ, ու Եւանդըն Սիթիի Ս. Խաչ Եղեղեցիներու և Երզնասուրբը: Նուազատու մը կը ղեկավարէ Դանիէլ Սապահ-Գիւլեան: Գլխաւոր ղեկավարները կը լինին Օր. Նորմա Գազանեան, Մարտիրոս Բեօեեան, Պարգև վարդանեան, Էտուրն Ալվերեան: Պարբեր կ'իրադրուեն Սեպ Սիւնիի թատերադերձ խումբը և Հայ Ազգային պարախումբը: «Անուշ»-ի բեմադրութիւնը այնպիսի անհախճեց խանդավառութիւն կը ստեղծէ մերձակայ և Հեռուոր Հայ գաղութներու մէջ որ Օժանդակ Միութիւնը կը պարտաւորուի կրկին բեմադրել զայն ղեկավարներու նոյն կազմով:

Միութեան հինգերորդ տարեկան ձեռնարկը կ'ըլլայ զարմեալ նուազանդէս մը՝ 1945 Նոյեմբեր 4-ին, Hunter College Auditorium-ի մէջ, կը մասնակցին Երզնուհի Ռոզ Զուլայեան, Տիրան Տիգրան (Պարթիթոն) և Օր. Ալիս Սիրանի (զանազանաբար): Երզնուներուն զանազակով կ'ընկերակցի Տիգրան Պ. Սուրբեան:

Միութեան տարեկան ձեռնարկուն մէջ յիշատակելի թուական մը պիտի մնայ Հոկտ. 20, 1946-ը Երբ ան Երկար աշխատանքներէ վերջ բեմադրեց «Էջմիածին» սրբազան ողբերգութիւնը, որ զորքն է Լոնտոնարակի ծանօթ բանաստեղծ և նրկարիչ Զապէլ Պոյանեանի: Երաժշտական շափի ղեկավարն էր յայտնի Երզնանու զանազանար Ալան Յովհաննէս: Թատրոն ղեկավարէր բեմադրիչն ու ղեկավարը՝ Օր. Սիրիան Գառապեան և Երզնասուրբը ղեկավար՝ Յիօրէն Մարտիրոսեան: Գլխաւոր ղեկավարներն ու մենկերգիչներն էին՝ Ռօզ Միրեան, Էտուրն Արքարեան, Տիրան Տիգրան, Լեւոն Զարիզ, Արաք Միլզոնեան, Արաք Գալայեան, Էտուրն Ալվերեան, Սիլվիա Թաւրիզեան, և Արմէն Պապաեան:

1947 տարուան ձեռնարկը (Հոկտեմ-

բեր 19) տեղի ունեցաւ Hunter College Auditorium-ի մէջ՝ Երաժշտական ու պարային զմով: Մասնակցողներն էին՝ Հայ Երաժշտական Միութիւնը՝ յայտնի և ժողովրդական Երաժշտադէս Զարուրիւն Սամուէլեանի ղեկավարութեամբ, Սեպ Սիւնի և Իր թատերապարի (պալէ) խումբը, Կրէնի Մուրառուփ և Իր պարի խումբը, Ինչպէս նաև յայտնի տաղանդաւոր զանազանաբար Օր. Լուիզ Ոսկերեան և Ծանօթ Երզնուհի՝ Յակոբ Ասատուրեան և Մարտիրոս Բեօեեան: Երզնուներուն զանազակով ղեկավարեցաւ Օր. Արմիլէ Պաղտասարեան:

Եղիշէ Քինյ. Գալչընեան, որուն պաշտօնաւարութիւնը կարճատեւ կ'աւելնէ: Անկէ վերջ հրաւիրուած է Գալիֆորնիայէն Տ. Վահան Քինյ. Կիւլապեան 1925-ի սկիզբը: Տէր Հօր պաշտօնաւարութիւնը կը տեւէ մինչեւ 1938: Քսանական թուականներու սկիզբը Շիքախոյի Հայրութեան թիւը բարձրացած է. միեւնոյն տակն շրջապայ քաղաքներու Հայրութիւնն ալ կ'աճի, այն աստիճան որ անոնք անջատ Համայնք կը կազմեն եւ կ'ունենան իրենց սեփական եկեղեցիներն ու հովիւները, ինչպէս Բէյսին եւ Սառի Միլուսքի: Շիքախոյի մէջ ալ զգալի կը դառնայ եկեղեցի մը ունենալու անհրաժեշտ

առիթունը: Համայնքի բարերար Տիար Սամուէլ Տօնեանի ջորհու եւ Տ. Վահան Քինյ. Կիւլապեանի ու հոգարարձուքեան ջանքով 1925 Սեպտեմբերին կը դնուի Լուսնաբան եկեղեցի մը, որ կը վերածուի Հայաստանեայց Եկեղեցիի ձեւին, ու տարի մը վերջ վահապ կերպով կ'օծուի Առաջնորդ Տ. Տիրայր Արք. Տէր Յովհաննէսեանի ձեռամբ, կոչուելով Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի:

Տ. Վահան Քինյ. Կիւլապեան 1938-ին պաշտօնով կը փոխադրուի Թրոյ, ու Շիքախոյի Համայնքին իրը հովիւ կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի Տ. Ղեւոնդ Արեղայ Արապեան, որուն պաշտօնաւարութիւնը կարճ կը լինի: Իրեն կը յաջորդէ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միտանութեան Տ. Զգօն վրդ. Յակոբեան, որ կը



Ս. ԳՐ. ԼՈՒՍ. ԵԿԵՂԵՅԻՈՅ ԽՈՐԱՆՔ



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆ

Նստած՝ Տիար Խ. ձերանկան՝ ատենադեմ, Հովիւր. Տեաբ՛ Մայ՛ Բուրատան՛ փոխ ատենադպիր, Հ. Տիկէրեան՛ կանգնած՝ Տեաբ՛ Խ. Եղոյեան՛ ատենադպիր, Վ. Միխայէլեան՛ Գորաց վարիչ, Մ. Մանուէլեան՛ Երեսփոխան և գանձապահ, Յ. Թաքոյեան՛ Երեսփոխան և փոխ ատենադեմ, Գ. Նազիւան՛ Խառնակալ :

Հովուէ 1939—1941 : 1943—ին դարձեալ Հովուութեան պաշտօնին կը հրաւիրուի Տ. Վահրամ Մ. Վրդ. Նազարէթեան, որ կը պաշտօնավարէ ցարկ :



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՆԿՈՒՊԱՀ ՄԱՐՄԻՆ

Տիար Հայկ Խոսարեան, Տ. Վահրամ Մ. Վրդ. Նազարէրեան՛ հովիւ, Տեաբ՛ Հանի Տիկէրեան, Յովի. Թաքոյեան :

Ներկայիս Շէքակոյի Հայութիւնը կը հաշուուի մօտ երեք հարար : Եկեղեցին ունի մօտ 200 անդամ : 1947—ի ձմրան հրդեհի մը հետեանքով եկեղեցին կրտսին կոյրի, սակայն շտրհիւ Հովուին, հոգարարձութեան ու համայնքի ձրկերան, կը վերանորոգուի աւելի շքեղ և ներկայանալի վիճակով : Մասնաւորարար խորանը այս առթիւ կը հայացուի : Վերնատանով միասին եկեղեցին կըրնայ 500 հաւատացեալի բուել : Իսկ եկեղեցւոյ սրահին մէջ 400 հոգի կընան ասանց խճուղումի ճաշկերտսթի հասիլ : Հրդեհէն վերջ սրահին խոհանոցը բոլորովին արգիտական սարքաւորումով նո-



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԳԻՉՆԵՐ

Ա. ԵԱՐՔ՝ ՏԻԱՐ ՏՈՒՔ. Լ. ԿԻՆՈՒՅԵՐԿԱՆ,
 ՀՈՎԻՆ. ՏԻԱՐ Բ. ԹԱՐՍՅԱՆ: Բ. ԵԱՐՔ՝
 ՏԻԱՐՔ Կ. ԳՈՂՅԱՆ ԵՎ Վ. ՄԻՔԱՅԵՐԿԱՆ:

րողուած է: Սրահին կից կայ ե-
 րեք սենեակնոց բնակարան մը ե-
 կեղեցոյ տնտեսին համար: Եկե-
 ղեցոյ շէնքին կալուածաթուղթը
 արձանագրուած է բարեբար Սա-
 մուէլ Տօնեանի անուան, սակայն
 հրկիզման աւթիւ կատարուած
 նորոգումէն վերջ, ներկայ Առաջ-
 նորդ Տիրան Եպս. Ներսայեան
 սեղուցն վրայ խոստում առած է
 բարեբարին դուռակէն եւ աւանդա-
 պահ մարմինէն որ յարմար ստե-
 նին կալուածաթուղթը պիտի փո-



ՇՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՎ ԳՊՐԱՅ ԴԱՍՈՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՔՈՁԱՐ Վ. ՄԻՔԱՅԵՐԿԱՆ՝ ատենուպետ (Ա. ԵԱՐՔ՝ ձախէն երրորդ)



ԵԿԵՂԵՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐ. ԲԱԺՆԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

'Ետամ' Տիկ. Մ. Եայլահան' փոխ առեմապետ, Հովիւր, Տիկնայ ֓. Խոսարեան' առեմապետ, Մ. Գարրինեան: Կամգամ' Տիկնայ Ե. Ապուզէրեան' առեմապետ, Է. Թարոյեան' գամձապետ, Ե. Արամեան' փոխ առեմապետ, Յ. Չինգործեան:

խոնցուի Առաջնորդարանի կողմէ Ամերիկահայ ընտանեկան եկեղեցիներու համար նշանակուելիք կարուստնոց առանցապահ մարմինին:

Եկեղեցւոյ Հայ վարժարանը կը յաճախեն երեսուն աշակերտներ: Կը գաստանդէ Տիկ. Ա. Յարութիւնեան: Կայ նաեւ կիրակնօրեայ դպրոց՝ երեք ուսուցչուհիներով:

Առաջնորդարանի Օժանդակ Միութիւնը զօրաւոր մասնաճիւղ մը ունի Շիրակոյի մէջ որ նախ Եսրբի կեդրոնական Մարմինէն ետք ամենէն զօրծօնն է: Վարչութեան

անդամներն են՝ Տիկնայք Մ. Խանձեան (առեմապետ), Կ. Կարպեան (փոխ-առեմապետ), Մ. Պէրպէրեան (առեմապետ), Հ. Զօրեան (փոխ-առեմապետ), Շ. Թադեան (գամձապետ), Զ. Ամատունի (հաշուակալ), Վ. Քոջուրեան, Կ. Փոլատեան, Ա. Մանուկեան, Է. Թաթոյեան, Վ. Վարդապետեան (խորհրդակցաններ):

Եկեղեցւոյ Տիկնայ Միութիւնը ունի երեք բաժանումներ, ըստ թաղամասերու:



ԵԿԵՂԵՑԱՍԱՆԻ ՏԻԿԵԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՈՒԼՍԹԻ ԲԱԺՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Անդամներն են Տիկնայ Բ. Բալոյանի՝ առեկապետ, Վ. Գուզարիանի՝ առեկապելր, Ն. Գորեցեանի՝ զանապսի, Վ. Նախապետեանի՝ փոխ առեկապետ, Մ. Տառեանի՝ փոխ առեկապելր, Մ. Բալոյան, Մ. Գարրինեան:



ԵԿԵՂԵՑԱՍԱՆԻ ՏԻԿԵԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՍՈՒԹԻ ԲԱԺՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տիկնայ Մ. Մինասեանի՝ առեկապետ, Օ. Կոփոյանի՝ առեկապելր, Հովիւր, Տիկնայ Ն. Աւագեանի՝ փոխ առեկապետ, Ռ. Գերսակեանի՝ Բացակայ՝ Տիկնայ Ա. Զաւագեանի՝ զանապսի, Բ. Պոյանեանի՝ փոխ առեկապելր, Ա. Արքահամեան:




ՔԼԻՎԼԷՆՏԻ ՆԱՄԱՅՆՔ

Իրի Լիճին հարուային եղերքը նաւահանդիսա մըն է Քլիվլէնտ, Միացեալ Նահանգաց վեցերորդ մեծագոյն քաղաքը, մօտ 900,000 բնակչութեամբ: Նիւ Եորքէն 623 մղոն արեւմուտք: Կը կոչուի «Անտատաքաղաք», իր ծառաւէտ փողոցներուն համար: Ունի հանրային դպրոցներու սթանճիլի դրութիւն մը: Բարեօրրական և ուղղիչ հաստատութիւնները բազմաթիւ են: Աշխարհի ամենամեծ շուկան է ամուխի և երկաթի հանածոներու: Քաղաքին մէջ կը շինուին ինքնաշարժի մասեր, և երկաթէ ու պողպատէ այլ և այլ գործիքներ, ինչպէս կարի մեքենայ, տոպոգրական մամուլ, երկրագործական գործիքներ, և այլն: Քլիվլէնտ քաղաք եղած է 1836-ին, երբ միայն մի քանի հազար բնակիչ ունէր:

1911-ին այստեղ հաստատուած Հայեր ստալին անդամ կազմակերպուած են իրր համայնք: Ներ-

կայիս հազարէն քիչ մը աւելի թըւալ Հայեր կ'ապրին այս քաղաքին մէջ ու կը գրաւին զանազան գործերով: Մեծ մասը Մալաթիացի, Գարաբէօյցի և Կեսարացի են: Տակաւին չեն կրցած սեփական եկեղեցի մը ունենալ, հակասակ իրենց փափաքին: Քսանական թուականներուն ունեցած են սոսմակայ հովիւներ:



ԵՐԵՍՓՈՒՅԱՆ
Տիար Կիւրապի Կիւրպէնկեան

Ունի Հոգարարձութիւն, որու ներկայ կազմի անդամներն են՝ Տեարք Տիգրան Կարապետեան (ատենապետ), Խոսրով Ոսկերիչեան (ատենադպիր), Յարութիւն Զէքէմեան, Գրիգոր Խարապետեան, Մինաս Կէվճէեան, Էլիաս Միթարեան (խորհրդականներ):

Յեկեղեցւոյ Երիտասարդաց Միութեան մասնաճիւղը բաւական գործունեայ է: Գլխաց զասը կազմըւած է իր նախաձեռնութեամբ:

Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻԶ ԵԿԵՂԵՑԻ, ՏԻԹՐՈՅԹ


Միացեալ Նահանգաց չորրորդ մեծադոսին քաղաքն է Տիթրոյթ, մօտ 1 միլիոն եւ 700,000 բնակչութեամբ: Նիւ Եորքէն 631 մղոն հեռու է, դէպի արեւմուտք-հիւսիս, ինքնաշարժի ճամբով: Հիմնուած է 1701-ին, Պրանսացիներու կողմէ: Կէս դար վերջ Բրիտանացիք կը զբաւեն, ու քաղաքը երկար ժամանակ անոնց ազդեցութեան տակ կ'զած է:

1805-ին քաղաքին բարձր տունները մէկ բացասութեամբ հրդեհի կեր կ'ըլլան: Քաղաքը կը վերաշինուի յայն փոստայններով ու սրահատներով, եւ ընդարձակ փարէկերով: Առկէ կէս դար ասով քաղաքը միլիոն բնակիչ ունէր: Իր արագ աճումը կը սրբաբաժնաւորուեալուեալու հակայ կեդրոնի մը վերածուելուն: Անուանի է իրբեւ փոխադրական միջոցներու արտադրութեան կեդրոն: Տիթրոյթի մէջ կը շինուին շագկառեր, փահաններ, ինքնաշարժ կառքեր, նաեւ ու սաւառանկներ:

Տիթրոյթ Ամերիկայի հայաշատ կեդրոններէն մէկն է ներկայիս, 15,000 Հայերով, որոնք ընդհանրապէս կ'զած են Քոլէճն, Աերաստիոյէն, Կեսարիայէն, Թարբերզէն, Եօզղատէն եւ Պոլսոյ շրջաններէն: Կան որոշ թիւով Վասպուրականցիներ եւ Տարոնցիներ եւս: Գաղութը սկսած է կազմուել 1909-1910, իսկ աստիջին հոգարարձութիւնը կազմուած է՝ 1912-ին: Երեք տարիէ ի վեր Տիթրոյթ աւելի կ'արեւոր նշանակութիւն մը ըստացած է իրբեւ Միջին Արեւմուտեան թեմերու աստիջնորդական փոխանորդի կեդրոն: 1915-էն 1918 ալ պաշտօնը վարած է Գեորգ Ս. Սիրն Եպս. Մանուկեան:

Տիթրոյթի Հայերը իրենց սեփական եկեղեցին ունեցած են 1931ին: Եկեղեցին շինուած է 14,000 տար

յար ծախքով ու ներկայ գինով կ'արժէ 50,000 տոյար: Շինութեան նախաձեռնողները կ'զած են հետեւեալները, որոնք կ'ազմած են «Եկեղեցաշինաց Յանձնախումբ»ը. — Տեարք Բժիշկ Միլիան Տէյլր-մէննեան (ատենապետ), Կիրակոս Արոզեան (փոխ-ատենապետ), Կարապետ Մարտիրոսեան (ատենապետ), Եալի Յ. Կանոնեան (գանձապետ), Գեորգ Սողիկեան (հաշուապետ), Կարապետ Ա. Անեմեան, Բժիշկ Կարապետ Աքրարեան, Պետրոս Մանուկեան, Սողոմոն Ռուսեան, Արմենակ Սուլբանեան, Սիրուն Տէպլեան: Այս յանձնախումբին օժանդակ կ'զած են Հոգարարձութիւնը, Եկեղեցասէր Տիկնանց Միւլթիւնը, «Կամիատա» Երզնաստեմբը եւ Օրիորդաց Միւլթիւնը:



Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻԶ ԵԿԵՂԵՅԻ
ՏԻՐՐՈՅԹ

Եկեղեցւոյ շինութեան գործին կապակցարար կազմուած է Պարտուց Բարձման Յանձնախումբ մը, բ ա ղ կ ա ղ ո ճ չ հ ա լ ա լ ա ղ ի ի ղ ն. Տեաք Թորոս Եսայեան (տառա-

պետ), Աղեքսանդր Ճեմալ (փոխ-տառնապետ), Միքեան Թովմասեան (տառնադպիր), Օննիկ Թապիպեան (գանձապահ), Աետիս Տարբեան, Մկրտիչ Շեֆերեան, Հանի Փիլիպոսեան, Վահրամ Գալապպեան, Սարգիս Արքիմեան:

Եկեղեցւոյ փառաշուք օծումը կատարած է Առաջնորդ Գեոր. Տ. Ղեւոնդ Սրբազան Գուրեան 1931 Նոյ. 22-ին: Կոչուած է յանուն Ս. Յովհ. Մկրտիչի: Ունի 80 սաք երկաջնք եւ 50 սաք բաջնք, ու կրնայ նստեցնել 400 հոգի:

Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցին ներկայիս ունի 450 գործոն անդամ:



Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻԶ ԵԿԵՂԵՅԻՈՅ ԽՈՐԱՆՆԸ



ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՐԱՀ. ՏԻՓՐՈՅԹ

Տիֆրոյթի զապութը նախածնու-
նաձ է ազգօգուտ գործերու եւ յա-
ջողութեամբ ի զլուխ հանաձ է
զանոնք: Յիշենք հայրենազարձի
ի նորաստ կատարուաձ հանգանա-
կութիւնը, որուն Տիֆրոյթ մաս-
նակցաձ է 200,000 տալարով: Իսկ
1947-ին յաջողաձ է աւարտել շի-
նոթիւնը Մշակութային Տան մը,
որ արժաձ է 200,000 տալար: Ար-
զիական ոձով պատկանելի այս
չէնքը կը ծառայէ իբր հայկական
հանգչաներու եւ համաժողովնե-
րու վաչը, իսկ Մնունգի եւ Չատ-
կի աթիւ Տիֆրոյթի Հայութիւ-
նը բողմարութը կը լեցնէ զայն,
Ս. Պատարազի մատուցման մաս-
նակցելու: Կ'արժէ յիշել թէ 1948
Մայիս 28-30, Ամերիկայի Հայ Ե-
կեղեցոյ Երիտասարդաց Կողմա-
կերպութիւնը իր Բ. Տարեկան Հա-
մադումարը ունեցաւ այս նորա-
կառոյց սրահին մէջ, նախազա-
հաթեամբ Առաջնորդ Տ. Տիրան
Եպիսկոպոսի:

Տիֆրոյթի եկեղեցին, հողալէ

զատ հոյիւին ապրուստը, երեք
տարի շարունակ ստանձնաձ է նա-
եւ առաջնորդական փոխանորդի
ապրուստի մեծագոյն մասին հա-
թալթումը:

Տիֆրոյթի երեպիտիաններէն
Տիար Ալեք Մանուկեան եւ իր ազ-
նիւ տիկինը՝ Մառի Մանուկեան
սիրալոձար ստանձնաձ են վեց
Հայ երիտասարդներու առուա-
ծարանական ուսման ծախքը:

Հասեւեարները եղաձ են Տիֆ-
րոյթի Հայոց հողեւոր հովիւնե-
րը.—

Հոգ. Տ. Սահակ Ծ. Վրդ. Նազա-
րէքեան 1913-1922

Արժ. Տ. Պետրոս Բինյ. Մամբրէ-
եան 1922-1932

Արժ. Տ. Խաչիկ Բինյ. Գոռուգեան
1922-1924

Գեր. Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նա-
զարէքեան 1924-1928

Արժ. Տ. Աքիկ Բինյ. Մոցիկեան
1930-1934

Հոգ. Տ. Վարդան Ծ. Վրդ. Գա-
պարեան 1934-1937

Արժ. Տ. վահան Բեհյ. ձեյալեան
1937-1941

Արժ. Տ. Ներսէս Բեհյ. Օսեան
1941-1947

Վերջինս կը հրատարի 1947 աշ-
նան: 1948 Ձատիկէն ի վեր Հոգ.
Տ. Խահակ վրդ. Ղազարեան կը
պաշտօնավարէ իրր օգնական
հոգիւ: Ներկայիս հոգիւն է Գեոր.
Տ. Սիոն եպս. Մանուկեան:

Դպրաց Դասը, որ կազմուած է
1921-ին, իր կանոնաւոր ձևը կը
ստանայ 1927-ին: Կը կրէ «Կոմի-
տաս Երզնասումբը» անունը, և
ներկայիս Ամերիկահայոց զօրա-

ւորացոյն զպրաց զասերէն մին է:
Ունի 50 անդամ՝ 30-ը աղջիկ, 20-ը
մանչ: Կան հինգ ուրարակիրներ,
իսկ գպրապետը՝ Պրն. Յարու-
թիւն Էփրեյան, աւագ սարկաւազի
կարգ ունի: Այս Երզնասումբը
կուտայ իր տարեկան համերգը և
կը սարքէ պարար ու պարահան-
դէս:

Եկեղեցւոյ Երիտասարդաց Մի-
ութիւնը նոր կազմակերպուած
մարմին մըն է: Ունի մօտ 40 ան-
դամ: Այս տարւան տարեկան
Համաժողովին իրր հիւրընկալ
մասնաճիւղ, Տիթրոյթի Երիտա-



ԵՐԵՍՈՒՆԻԱՆՆԵՐ

Նստած՝ Տիար Ալեք Մանուկեան, Գեոր. Տ. Սիոն եպս. Մանուկեան, Տիար Օննիկ
Թապիպեան: Կանգնած՝ Տիար վահրամ Պոյանեան, Տ. Խահակ վրդ. Ղազարեան՝ օգ-
նական հոգիւ: Կը բացակայի՝ Տիար Երուանդ Պանտուրեան:



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ 1948 ՏԱՐՆԵՐՁԱՆԻ

Նստած՝ Տիար վահրամ Պոյանեան՝ գանձապահ, Տ. Խահակ վրդ., Գեոր. Տ. Սիոն Եսլիակոյրս, Տիար Գևորգ Մանուկեան՝ ատենապետ, Սիմոն Մոզեան՝ ատենադպիր: Կանգնած՝ Տիար Էլարապետ Միխայելեան. Խահակ Գուլումենեան, Եղուարդ Սարգիսեան, Յարուսիկ Գարամանեան: Կր բացակային՝ Յ. Գալպենեան, Գ. Պէլլէրեան, Վ. Բաբելեան, Գ. Բիւրէնեան:

սարգսյր մեծ տղաւորութիւն գործած է զբոսկիներուն շրջայ իր հիանալի սպասարկութեամբ ևւ Համաժողովին յարապիրը գործադրելու մէջ ցոյց աււած ճաշակովի ու կանոնաւորութեամբը:

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը, որ կազմուած է 1921-ին, այժմ կը գործէ երկու մասնաճիւղերով.— Երէցներ ևւ Երիտասարդներ: Ունի տարեկան 2,500 տոլար եկամուտ ևւ 1,000 տոլար ծախք: Կը կատարէ զանազան բա-

րենդատակ գործեր, ինչպէս զըզբոսներու նիւթական օգնութիւն, հիւանդներու այց ևւ նպաստ, Ա. Մինդեան ևւ Ս. Զատիկի տօներու ասթիւ մասնաւորարար Ամերիկեան Կարմիր Սաչի նիւթական օգնութիւն. Եկեղեցւոյ զգեստներու ևւ ձեռագործներու հայթայթում. տղքատաց օգնութիւն. պողպարի ևւ ալլ ձեռնարկներու սարքում: Կ'արժէ յիշել թէ Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը եկեղեցւոյ համար զնած է մէկ լաք հոդ:

Տիթրոյթի եկեղեցին սննդի և սուսման հարկուրդ մը, որ ինտամակայութիւնն է Հայ գաղթըցին: Տ. Վասան Քհնյ. Ճէլաբեան իր հոյսուսթեան շրջանին հաստատած է գաղթըցը 1938-ին, որ և սեւած է շարս տարի: Վերարացուած է 1946-ին, Տ. Սիւն Եպր. Մանուկեանի ջանքերով և այժմ սննդի 60 աշակերտ, մեծ թէլ փոքր: Ուսուցչուհի է Տիկին Ռերեկա Յակոբեան: Շարսթը հինգ օր մէկն Երեկոյ 2 ժամ տեսող զոս կ'ուսանողէ տիկինը:

Գեր. Տ. Սիւն Եպր. ջանքերով հաստատուած է Եկեղեցւոյ կիրակօրեայ դպրոցը 1947-ին: Ունի 150 աշակերտ, որոնց կ'ուսուցանեն ինն օրիտըղներ և Երեք պարտններ: Դասուսանողութիւնները տեղի կ'ունենան Մշակութային Տան մէջ, ժամը 10:30-12:30: Տարեկան 200 տարբ Եկամուտ սննդի և 500 տարբ ծախք: Բացը կը զոցուի Ուսումնական Խորհուրդի, Հ.Բ.Բ.Մ.ի, Հոգարարձութեան և Եկեղեցւոյ օժանդակ միւս մարմիններու նպաստներով:



ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՏԻՓՐՈՅԹԻ ԵՐԵՅ ԲԱՃԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Աննա Եղորդեան, Զապէլ Եսայեան՝ առեմապետ, Հովիւ, Տիկնայ Թագուի Մանուկեան՝ պատուոյ առեմապետ, Լուսամին Գազանեան՝ առեմապետ, Կանգնած՝ Տիկնայ Գոհար Տեռէեան՝ փոխ առեմապետ, Սրբոսի Միխայէլեան, Արաբի Գարամանեան՝ գանձապետ, Նոյեմզար Վարդուկեան, Մարքա Գասպարեան: Կը բացակայի՝ Տիկ. Վ. Շաիրասանեան:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Նստած՝ Տիար Եղ. Սարգսեան, Տիկ. Փ. Նալբանա. Գեր. Տ. Սիոն Եպիսկոպոս, Օր. Ն. Համբիկեան. Տիար Հ. Համբիկեան: Կանգնած՝ Օր. Ա. Ճինկոզեան, Տիար Դա-
նիէլ Շահան, Օր. Տ. Ճինկոզեան: Կր ղացակային՝ Յ. Էմիլեան, Յ. Ստեփանեան, Ռ.
Պէլլերեան, Հ. Բարսեանկեան:



ՆՐԻՏԱՍԱՐԳ ԵԿԵՂԵՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկեայ Լիւսի Իգմիրեան, Մէրի Թումանեան, Հովիւ, Տիկեայ Ազնէս
Եղուպեան, Վիքրորիա Զամանկեան: Կանգնած՝ Տիկեայ Եմիլի Ժամկոչեան, Թա-
սուհի Հանոյեան, Ռիթա Եղուպեան, Սէրա փապուլեան, Ռօզ Եսայեան:



ԴՊՐԱՅ ԴԱՍ

Տիր. Յարութիւն Արկ. Էփեփան՝ Դպրապետ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՊՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ, ԷՎԸՆՍՏՈՆ

Գեղեցիկ ու համեմատաբար նոր քաղաք մըն է Էվընսթըն, Միչիկըն Լենին եզերքը: Հարաւն կից է Շիքագոյի, որմէ կը բաժնուի փոքրցով մը: Ունի մօտ 70,000 բնակիչ: Քաղաքը կազմուած է նորթուէնթըն համայնաբանին շուրջ:


Երեսուէն տարիէ ի վեր Հայեր գտնուած են Էվընսթընի մէջ: Ներկայիս մօտ 300 է մերազնէից թիւը այտակ. զազուեթին անդամները կուզան ընդհանրապէս Կեսարիոյ շրջափաներէն, Այնթապէն եւ Սեբաստիայէն:

Իբր եկեղեցական ուրոյն համայնք, նորերէն է Էվընսթընի մեր համայնքը: Քաջաքին ու շրջակայքի Հայ Ժողովուրդը Էվընսթընի մէջ եկեղեցի մը ունենալու պէտքը ներկայացուցած է Ամերիկայի նախկին Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Յովսէփիեանին, որուն արտօնութեամբ ձեւնարկած է իբր ատանձին համայնք կազմակերպուելու եւ սեփական եկեղեցի մը գնելու գործին:

Ամբողջ Ժողովուրդին նուիրատուութիւններով հաւաքաբար կը հողացուի ծախքը եւ 1914-ի Յունուտարին կը գնուի Լուտերական եկեղեցիի շէնք մը \$,750 տուարի: Շէնքի ներսի դին հայկական ձեւի վերածելու մտքով, խորանի, զըրքերու եւ այլ ատարկաներու համար որոշ ծախքեր կ'ըլլան: Կալ-

ուածը ներկայի գիներով կ'արժէ տասն հազար տուար:

Եկեղեցւոյ օծումը կատարած է Ամերիկահայոց Առաջնորդ Գեորգ Տ. Տիրան Եպս. (այն ատեն Ծայրագոյն Վարդապետ) 26 Փետրուար 1915-ին եւ կոչած է եկեղեցին Ս. Յակոբ, յանուն եկեղեցւոյ



Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ
ԷՎԸՆՍՏՈՆ



Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐԱՆԸ

կնքահայր Պրն. Վարդան Վարդապետանի հանդուցեալ հօր: Ծէնքին մէջ եկեղեցին ու փոքր սրահը իրարու յարակից են, ունենալով միայն մէկ արտաքին դուռ:

Հովիւի բնակութեան յատուկ յարկարաժին մը կայ շէնքին կըռնակը: Բուն եկեղեցին 50 սոք երկայնք եւ 35 սոք լայնք ունի եւ կը նստեցնէ 120 հօգի:

Եկեղեցին ունի մօտ 120 զործօն անդամներ: Առաջին հոգարարձուծիւնը կազմուած է եկեղեցւոյ օծումէն անմիջապէս վերջ, 1 Մարտ 1945-ին:

Այս տարուան հոգարարձուծիւնը բախտաւոր եղած է օժտելով եկեղեցին իր անդրանիկ հովիւով՝ յանձին Տ. Վարդան Բենյ. Մկրտեանի, որ իբրեւ աստուածարանութեան ուսանող 1947 Փետրուա-

րին մօտձ էր եկեղեցւոյ մօտիկ Սիպրբի Ուէսթըրն Ճեմարանը, սարկաւապի հանդամանքով: Առաջին օրէն կարապետ Սրկ. Մկրտեան լծուեցաւ համայնքի հօգիւոր եւ կրթական ծառայութեան զործին, ու կարճ ատենէն հոգարարձուծիւնը զիմեկով թեմիս Առաջնորդ Հօր, ինդրեց որ քահանայ ձեռնադրէ զայն Ս. Յակոր Եկեղեցիին համար: Չեանդարութեան փտաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Փետր. 28-29, 1948: Շարաթ երեկոյ կոչման կարգը կատարուեցաւ Ս. Յակոր Եկեղեցւոյ մէջ, իսկ Կիրակի օր, ասուար թիւով ներկաներու եւ այցելուներու տեղ տալու մօտք, Առաջնորդական Պատարապն ու օժման արարողութիւնը կատարուեցաւ քաղաքի Եպիսկոպոսական խոչար մէկ եկեղեցիին մէջ: Երաւուրակի պաշտօն կատարեց Միջին Արեւմրտեան Թեմի առաջնորդական փոխանորդ Գեոր. Տ. Սիւն Եպս. Մանուկեան: Սպասարկեցին Շիրակոյի հովիւ Տ. Վահրամ Մ. Վրյ. եւ Ուխտաբանընի հովիւ Տ. Սուբիաս Աբեղայ, ինչպէս նաև նորընծային ընկերները, չորս ասուպ սարկաւապներ՝ հեռաւոր քաղաքներէ եկած:

Ս. Յակոր Եկեղեցին տարեկան Երեսփոխանական Ժողովին կը զըկէ Երկու երեսփոխաններ: Այս տարուաններն են Տեարք Օննիկ Նորհատ եւ Տիկին Մ. Կէտիկեան:

Եկեղեցին կիրակնօրեայ դպրոց ունենալ սկսած է երկու տարիէ ի վեր միայն: 1946-1947 սկզբնական շրջանը եղած է 15-16 աշակերտ-

ներով, որոնց դասաւանդած են Տիկնայք Արաքսի Միւնստան և Ֆլորէնս Քեաշեան : Իսկ այս երկրորդ տարին աշակերտութեան թիւը բարձրացած է 35-ի, ու կազմուած են չորս դասարաններ : Ուսուցչուհիները կ'ըզած են Վլըրնիւիա Նշիկեան, Պէաքրիս Կէտիկեան, Մարքա Իփինեան և Մէրինին Քէի-եայեան : Վերջին զանի մը ամիսներուն մեծապէս օգնած է ուսուցչուհիներուն կրէցկին Եւզին Մըկըրեան որ այս երկրին մէջ ծնած ու դաստիարակուած կրիտասարգուէի մըն է : Դասաւանդութիւն-



ԵՐԻՏ. ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՏԵԿՆԱՆՑ
ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տիկ. Նունէ Քէիեայեան՝ փոխ ատենապետ, Հովիւ, Տիկնայք Ռոգ Կէրկէրեան՝ ատենապետ, Քրիստին Նորիտա՝ քղրակցութեան քարտուղար : Կը բացակային՝ Տիկնայք Մէրլըն վարդան՝ ատենադպիր, Լուսիլ Նազարեան՝ գանձապահ :



ԵՐԵՍՓՈՒՍԱՆ
Տիար Օննիկ Նորիտա

ները միշտ տեղի ունեցած են Կիրակի առաւօտ ժամը 11.15-12.30 : Երկու տարուան մէջ զպրօցին և կամուտը կ'ըզած է ընդամէնը 60 տարբ, որուն 25 տարբը միայն ծախուած է ցարդ, նկատի ունենալով որ Երիտասարդ Եկեղեցասէր Տիկնանց Միւլթիւնը յանձն առած է ծախքին մեծ բաժինը հոգալ :

Եկեղեցւոյ կայկական դպրոցը բացած է հովիւը 1947 Փետրուարին, երբ նոր ժամանած էր ու սարկուապ էր ըլի : Ծարաթը կրկու պահ, ինք մինակը դասաւանդած է 20 աշակերտներուն, որոնք բաժնուած են երկու դասարանի : Երկրորդ զպրօցական տարին (1947-1948) աշակերտներու թիւին յաւելումով դասարանները բաժ-



ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ 1948 ՏԱՐԵՇՐԱՆԻ

Ա. շարք՝ Տեառն վահան Պելոյանի՝ տնտեսագիտ., Նեան Զերմեզյանի՝ ատենապետ, Տ. վարդան Քեյ. Մկրտչանի՝ հովիւ, Տեառն Հայկ Քեյ. Վանյանի՝ գանձապետ, Սարգիս Նազարեանի՝ Բ. շարք՝ Տեառն Գառնիկ Միմասեանի՝ փոխ գանձապետ, Արցաք Օմարեանի՝ փոխ տնտեսագիտ., Յովակիմ Էփեյան, Արմէն Մուրատեանի՝ Կը բացակայի՝ Տեառն վարդան վարդանեանի՝ փոխ տնտեսագիտ.:

նը.ած են երեքը, և ստան մը ըստ նախորդին շարունակելէ վերջ, կարապետ Սրկ. Մկրտչան իրը սուտըիչ իրեն օգնական կ'ունենայ Տեառն Արմէն Մուրատեանը և Տիկ. Հայկանոյշ Պարոնեանը: Դպրոցը ցարդ ընաւ Եկամուտ չէ ունեցած. սուտըիչները ստանց նիւթական վարձաարութեան, սիրտ յօժար յատկացուցած են իրենց Ժամանակը Հայ մանուկներուն հայերէն սորվեցնելու: Դասուղրքերու ծախքը հոգացած են Հոգարարձութիւնը և Եկեղեցատէր Տիկնանց Միութիւնը:

Վերջինս կողմուած է սուտըին հոգարարձութեան հետ զուգընթացարար, 1945 Մարտին: Բանի մը ամիսներ ետք, անդլխախօսուելու զխրութիւն տալու նոգատակով կողմուած է Երիտասարդ Եկեղեցատէր Տիկնանց Միութիւնը: Երէց Տիկնանցը Միութիւնը տարեկան Եկամուտ ունի մօտ 300 տուրք. կ'օգնէ հոգարարձութեան, և կը նայի հայկական դպրոցի ծախքերուն: Իսկ Երիտասարդ Եկեղեցատէր Տիկնանց Միութիւնը նոյնպէս Եկեղեցույ պէտքերուն օգնութեան իր զործին

հետ Կիրակնօրեայ դպրոցին ծախքը հոգալ իր վրայ առած է :

Եկեղեցատէր Տիկնանց զոյգ Մուրիւններն ալ իրենց ջանքը չեն խնայեր եկեղեցւոյ եկամուտ ապահովելու տեսակէտէն . մին՝ ճաշկերոյթներ եւ դաշտահանդէսներ սարքելով, իսկ միւսը՝ պարահանդէս եւ ուրիշ ձեռնարկներ ընելով :

Ս. Յակոբ Եկեղեցւոյ Դպրաց Դասը կազմուած է 1945 Փետրը-

ուարին եւ ունի 25 անդամներ, որոնցմէ 9 արական եւ 16 իգական սեռէ : Պատարազի երգեցողութենէն դատ երբեմն կը ջանան պատրաստուիլ Արեւազալի երգեցողութեանց եւ կը փորձեն առաւօտեան ժամերգութեան կարգ մը երգերը, ինչպէս «Առաւօտ լուսոյ» : Դըպրապետն է Օր. Արաքսի Բէաշեան որ չորս տարիէ ի վեր դպրապետութեան պաշտօն կը վարէ : Դըպրաց Դատը վերջերս կազմած է իր



ԵՎԸՎԵՑԱՍԼԻՐ ՏԻԿՆԱՆՅ ՄՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Եարբ՝ Տիկ. Մարի Կեւիկեան՝ երեսփոխան եւ տաննապետ, Հովիւ, Տիկ. Ալիս Բարսեղեան՝ քոյրակցութեան Ժարտուղար : Բ. Եարբ՝ Տիկնայք Ազնիւ Յատկալուրեան՝ ատենադպիր, Եղիաարէր Գայլեմեան, Ալիս Համբարեան, Վերմին Գայանեան՝ զանձապահ : Կը բացակայի՝ Տիկ. Լուսի Իսպիրեան՝ փոյս ատենապետ :

վարչութիւնը և մեծ խանդավառութիւն ցոյց կուտայ սորվելու մեր Երգեցողութիւնները: Գովիլի ջանք մը կայ Օր. Արաքսի Բէշաշեանի ղեկավարութեան տակ թիւով բազմանալու և խումբին բազմաձայն երգեցողութիւնը օժտելու կատարելութեամբ:

Երիտասարդաց Կազմակերպութիւնը ունի 26 զործօն անդամներ, որոնցմէ 7-ը արական ու 19 իգական սեռէ: Հայ եկեղեցին ճանշնալ, իրենք զիրենք անոր մէջ ըզրգալ և անոր օգնել իրենց պար-

տականութիւնը բաժնի յառաջ կը բերեն զործունէութիւն մը զլիստւորարար սարքելով դաշտաճանդէսներ, պարահանդէսներ և դասախօսութիւններ: Տարեկան կ'ունենան մօտ 200 տարբար եկամուտ և մօտ 100 տարբար ծախք: Պէտք է լիշէլ որ ուրախալի խանդավառութիւն մը ցոյց կուտան այս երիտասարդները եկեղեցւոյ հանդէպ և մեծ կորով ու ջանք ի յայտ կը բերեն թիւով աւելնալու, զօրանալու և աւելի ուժգին զործունէութեամբ մը ծաղկելու:



ՀԱՅՑ. ԵՎԸՑ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. շարք՝ Տիպր Պարբեւ Բէլլիկ՝ առեկապետ, Հովիւ: Բ. շարք՝ Օրիորդներ Լուսի Գուրնալեան՝ գունձապահ, Եորմա Գաֆէսեան՝ թղթակցութեան Բարտուղար, Մանուէակ Ասլանեան՝ առեկապայիր, Ալիս Օմարբեան՝ փոխ առեկապետ:



ՀԷՄԻԼԹՐՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Գանատայի գլխաւոր քաղաքներէն մէկն է Հէմիլթըն, Օնթարիօ Լիճին արեւմտեան ծայրը գեղեցիկ գիւղի մը վրայ շինուած: Հիմնուած է 1778-ին, ու քաղաքի վերածուած 1833-ին. ներկայիս ունի 170,000 բնակիչ: Կը կոչուի Գանատայի Պըրմինկ-իէմը: Զուրի ուժը կ'օգտագործուի ելեկարականութիւն արտադրելու, ու քաղաքը այս տեսակէտով տալիսն է Գանատայի մէջ: Կ'արտադրէ երկրապորձական գործիքներ և. հիսուսածեղէններ: Պտուղի արտադրութեան շրջանի մը մէջ կը զտուի և ունի նշանաւոր բացօթեայ շուկայ մը: Հէմիլթըն ճօխ է հանրային հաստատութիւններով. ունի համալսարան, զուլճներ և բազմաթիւ զպրօցներ, բոլորն ալ գեղեցիկ շէնքերու մէջ տեղաւորուած:

Հէմիլթընի մէջ Հայեր սկսած են հաստատուիլ 1900-ական թըւականներէն: Ներկայիս այստեղ կ'ապրին շուրջ 300 Հայեր, որոնք ՔՏ առ հարիւր Քղեցի են: Մեծամասնութիւնը գործաւոր է:

Հէմիլթընի Հայերը չունին եկեղեցի: Առաջնորդարանի կողմէ ճանչցուած է Եկեղեցական Յանձնախումբ մը, որ բաղկացած է հետեւեալներէն —

Տեառք Յակոբ Մուրատեան (ատենապետ), Աւետիս Օգանեան (ատենադպիր), Երուանդ Մուրատեան (գանձապահ), Ա. Ալեքսանեան, Յ. Սողիկեան, Մ. Խաւոյեան, Վ. Էլոյեան:

Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոս Հէմիլթընի Հայոց այցելած է 1947 Նոյեմբերին:

ՀԱՐԹՖԵՐՐՏԻ ՀԱՄԱՅՆՔ

Քրեկիրքի նահանգի մայրաքաղաքն է Հարթֆորթ, նրա Եսթեյն 100 մզոն հիսուսի արևելք: 170,000 բնակչութեամբ, զեղեցիկ քաղաք մըն է պատմական յիշատակարաններով: Տոնի 28 հանրային պարազգներ և ճարտարապետական տեսակէտով զեղակերտ շէքեր: Միացեալ Նահանգաց ամենահին լրագիրը կը հրատարակուի Հարթֆորթի մէջ:

Քաղաքին զլիսուսը գրադուժը սպահովագրութիւնն է: 44 գանձան սպահովագրական բնկերութիւններ կան քաղաքին մէջ գործող: Հարթֆորթի մէջ կը շինուին փոքր հրազէններ և գրամեքենաներ:

Քաղաքը հաստատած են Հոյանապիներ աւելի քան երեք դար առաջ: Կարճ տակնէն Պոսթոնի շրջանէն Անգլիացիներ կուզան ու կը տիրուեան: Հարթֆորթս սոնի Կաթնայի և Բոյսքահան սէմինէրներ: Մենդալայնն է «Թովմտո սորօր անտիր» գրքի հեղինակին:

Հարթֆորթի մէջ Հայեր հաստատուած են առաջին անգամ 1884-ին: Առաջին հոգարարձութիւնը կազմուած է 1897-ին: Համեմատարար հին այս գաղութը ներկայիս փոքր թիւ մը կը ներկայանէ՝ մօտ 500, և շունենալով եկեղեցւոյ շէք իր կրօնական կեանքին համար կ'օգտուի մօտակայ նրա Պրիթին քաղաքի Հայ եկեղեցիէն: Հարթֆորթի Հայերը եկած են Խարրերզէն, Հիւսէյնիէն և Սերասախալէն: 1917-ին Զօրավար Անդրանիկ կ'այցելէ Հարթֆորթս: Նայն տարին քսան Հարթֆորթացի Հայեր իրր կամուտը կը մեկնին սարմաճակատ ու կը միանան Կիլիկիոյ ազատագրման լէգէոնին:



ԵՐԵՎԱՆԻ
Տիար Յովհաննէս Յովհաննէսեան



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տիար Արամ Հեֆիմյան՝ ատենապետ, Տ. Առնակ Գինյ. Գասպարյան՝ հովիտ, Տիար Տիգ Գևորգյան՝ գամձապահ: Կանգնած՝ Տիար Զեյրըտ Գեորգյան, Չարլզ Պաղտիկյան, Ջորջ Նորսիկյան՝ ատենադպիր:

*Եկեղեցական ա ե ս ա կ է ա ս ղ
Հարթֆրբրտի Համայնքին զործոն
անդամները 35 անձ են ներկայիս:*

Հարթֆրբրտի եկեղեցապետ Տիկ-
նանց Միստրիսը կազմուած է
1935-ին: Տարեկան միջին հաշուով
350 աղայր եկամուտ կ'ունենայ:
Իր զործունէութեան մաս կը կազ-

*մեն ծնունդի եւ Համբարձման առ-
թիւ հաւաքոյթ սարքել, եւ ճաշ-
կերոյթներու աթիւ սպասարկու-
թիւն:*

Հարթֆրբրտի Համայնքը ունի
փոքր զոլրաց խումբ մը, որ պա-
տահական պատարագներու առ-
թիւ կ'երդէ եւ կամ Նիւ Պրիթլնի

Եկեղեցին Երթալով աշտուկի խումբին Երգեցողութեան կը մասնակցի :

Եկեղեցասէր Երիտասարդաց կազմակերպութիւնը ունի 25 անդամ (11 ժանջ, 14 աղջիկ) : Կ'անենայ ընկերային հաւաքովներ, գաշտահանդէսներ, ծովագնացութիւն և լսարանական երեկոյթներ : Տարեկան մօտ 400 աղբար և կամուս կ'ապահովէ :

Հարթֆրատի Հայերը իրր այցելու հովուած են Նիւ Պրիթլնի հովիտները : Այսպէս Տ. Խորէն Քինյ. Մամիկոնեան, 1935-1936 : Տ. Մեսրոպ Վրդ. Սէմէրճեան, 1940-1942 : Տ. Մկրտիչ Քինյ. Մինասեան, 1943 : Տ. Առնակ Քինյ. Գասպարեան, 1948 Յունիսէն շարեւալ :

Հարթֆրատի Հայերը փափաք ունին սեփական Եկեղեցի մը շինելու կամ գնելու :



ԵԿԵՂԵՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ



ԵԿԵՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

'Նստած' Տիկնայք Մ. փոլոսեան՝ ատենադպիր, Գ. Նորսիկեան՝ գանձապահ : Կանգնած՝ Տիկնայք Կ. Հիւրեան՝ փոխ ատենապետ, Յ. Յովհաննէսեան՝ ատենապետ :

'Նստած' Օր. Լիւսի Գեորգեան՝ ատենադպիր, Հովիւ, Օր. Ելիզապէր Քէֆեան՝ ատենապետ : Կանգնած՝ Տեսլք Գալիք Ղազարեան՝ գանձապահ, Զարկ Պաղտիկեան՝ փոխ ատենապետ :



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Եղուարդ Պաղտիկեան՝ դպրապետ (նստած ձախ ծայր) : Գեորգ Գեորգեան՝ սեզանի
 ուսատարիչ (նստած ձախէն երրորդ) :



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻ, ՀԷՅՎԸՐԶԻԼ

Պատիսնէն 33 ժոյն հրօսիս, նիւ Հէմփշըր Նոհանդին սահմանամերձ, փոքր քաղաք մըն է Հէյլթընի 50,000 բնակչութեամբ: Քաղաքը հիմնուած է 1640-ին Անգլիացի հոգևորականէ մը, որ իր մայր երկրի ծննդավայրին անունը սուած է նորահաստատ աստին: Քաղաքի պատմութեան մէջ կը յիշուին դրացի Հնդիկ ցեղերու յաճախակի յարձակումները սկզբնական շրջանին, 1873-ի եւ 1882-ի հրդեհները, ինչպէս նաև 1936-ի հեղեղը:


Երեք դարէ ի վեր Հէյլթընի եղած է խաղախորհուրթեան արհեստի կեդրոն: Այժմ անուանի է իր արտադրող արտնջ եւ մանուանդ կանանց կօշիկներու:

Քաղաքի Հայ գաղութը սկսած է կազմուիլ 1890-ին: Աստճին հոգարարձութիւնը կազմուած է 1923-ին: Ներկայիս մօտ 700 Հա-

յեր կան Հէյլթընի մէջ, որոնք մեծ մասամբ Սարբերդ քաղաքէն կամ չըջականերէն են: Հայերը կը դրացին ընդհանրապէս գործաւորութեամբ. կան սրտչ թուով կօշիկի գործատէրեր եւ խանութպաններ:

Սեփական եկեղեցի ունենալու գործին նախաձեռնող եղած է 30 արդալիններու խումբ մը: (Անուններ չկան մեր արտադրութեան ներքեւ): Եկեղեցին գնուած է 1943-ին, 5,500 տարրի. ներքին մասը հայկական սճի յարմարչներու համար ծախսուած է 10,000 տարր: Ներկայ գներով չէնքը կ'արժէ 50,000 տարր: Նախանձելի գիրքի մը վրայ կը կանդնի, երկու լայն ծառուղիներու անկիւնը: Մեծութիւնը՝ 60 սաք երկայնք եւ 40 սաք լայնք:

Եկեղեցւոյ օծումը կատարած է



Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻ
ՀԷՅՎԸՐԶԻԼ

Առաջնորդ Գեր․ Տ․ Տիրան Եպս․
Ներսիսյան, 1945 Դեկտ․ 23-ին :


Եկեղեցին ունի 100-ի մօտ տրատու անդամներ : Ներկայ տարուան հոգարարձական կազմին անդամներն են . Տեաբք Աւետիս Զաղացպանեան (առեւնապետ), Լեւոն Գաւապրեան (առեւնադպիր), Կարապետ Սրապեան (գանձադատ), Յարէր Ահարոնեան, Սարգիս Դաւիթեան, Կարապետ Փօլեան, Գրիգոր Թարանեան :

Եկեղեցին մնայուն հովիւ բնաւ չէ ունեցած մինչև վերջերս : Մօտակայ կաթիլ և Լորէնս քաղաքներու հովիւներ պարբերական այցելութեամբ կրօնական կեանքը վաս պահած են զարդ : 1948 Ապրիլէն ի վեր աստամեայ հովիւն է Տ․ Հմայեակ Վրդ․ Ինքոյեան :

Եկեղեցին ունի Տիկնանց Միութիւն մը, կազմուած 1939-ին : Իսկ Դպրոց Դասը կազմուած է 1940-ին Տիար վահագն Պօղոսեանի գրգրատեղաութեամբ : Ներկայիս ունի 4 մանչ ու 20 աղջիկ անդամներ . այժմու դպրատեղան է աստամարար Լորէնսի Եկեղեցւոյ դպրատեղա Տիար Փօլ Յակոբեան :

Կիրակոսեանց դպրոց չունի թէև և, սակայն յաստիկայ տարուան համար ծրագիր կայ բանալու :

Տաս տարի է ի վեր հայերէնի դասաւանդութիւնները դադարած մնալէ ետք, այժմ վերսկսած են աստամեայ հովիւին ջանքերով : 60



ԵՐԵՍՓՈՒՆԱՆ
Տիար Եղիա Մոսիսեան

Երկուս աշակերտներ հայերէնի կ'ուսանին Հայր Ինթոյեանէն :

Եկեղեցւոյ Երիտասարդաց Միութիւնը կազմուած է 1947-ի աշնան, Առաջնորդ Տիրան Սրբապանի կազմէ տրուած գասախօսութեան մը առիթով : Ունի մօտ 35 երկուս անդամներ : Վարչութիւնը ամիսն անդամ մը կանոնաւորարար ժողով կ'ունենայ : Միութիւնը կը ջանայ օգտակար ըլլալ Եկեղեցին, տարուան ընթացքին տարբերով մի քանի ձեռնարկներ և ջանալով զուրս մնացող երիտասարդները կապել Եկեղեցիին :


Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻ, ԼՈՐԷՆՍ

Պատճենէն 25 մզան հիւսիս արեւմուտք վազր յաղաք մըն է Լորէնս: Բնակչութիւնը 20-ական թուականներուն աւելի էր քան այժմ. ներկայիս մօտ \$5,000 է: Քաղաքը նշանաւոր է իր բրդեղէն կերպասներու արտադրութեան կեդրոն. բնակչութեան մէկ երրորդը այս գործին մէջ կ'աշխատի:

Քաղաքը հիմնած են Պատճենցի ստեւարականներ:

Առաջին Հայր սր Լորէնս դադթած է, եղած է Հիւսէյնիկցի Սիւննի Արջիկեանը 1883-ին: Յաջորդը՝ Թովմաս Համբարձումեան (Խարբերդի շրջանէն) 1894-ին: 1900-ին առաջին անգամ բլրայով չորս Հայ բնասանիք կուզան հաստատուիլ քաղաքին մէջ: 1908-ին գաղթողներու թիւը գրաւիօրէն կը

բազմանայ. բնդհանրապէս ամուրիներ են եկողները, որոնք անձանօթ այս երկրին լեզուին ու բարբերուն, հետու իրենց հայրենիքէն ու սիրելիներէն, կտտարեալ պանդուխտի կեանք մը կը վարեն: Անչաք յարկերու եւ նեղ սենեակներու մէջ խճողուած, իրենք գիրենք գրկելով խնայողութեամբ կ'ապրին, իրենց հետաւոր ծնողաց կամ հարազատներուն նիւթապէս օգնել կարենալու համար: Այդ շրջանին Լորէնսի եւ շրջականերու Հայութիւնը կը հաշուուի 1600-էն աւելի:



Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻ, ԼՈՐԷՆՍ

Ներկայիս (համաձայն վերջերս հանդուպեալ հովիւին՝ Տ. Յովհ. Քհնյ. Գափուզճեանի կտտարած մարդահամարին) Լորէնսի Հայոց թիւն է 887, որուն 221-ը երկսես երիտասարդութիւն եւ 91-ը մանուկ: Լորէնսի Հայութիւնը կուգայ Խարբերդէն, Չմշկածաղէն, Չնքուզն եւ Արարկիրէն:

Կրօնական տեսակէտով Լորէնսի Հայութիւնը կանուխէն Զանա-



Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՅՒՌՈՅ ԽՈՐԱՆՔ

ցած է վառ պահել իր հասարակական շատ ու չ կրցած է ունենալ սեփական եկեղեցի: Սկզբնական շրջանին, այցելու հոգևորականներու շնորհիւ կրօնական պաշտամունք կը կատարուի Ամերիկեան փոքր մատուռի մը մէջ, իսկ աւելի վերջ Եգիպտոսական Grace Church-ի մէջ:

Աեփական եկեղեցի ունենալու գաղափարը յգաչոյցներ կը նկատուին Լորէնսի ազգայիններէն Տեարք Յովսէփ Զարիփեան, Մարտիրոս Խեղիլիեան, Շմաւոն Մինասեան, Ազար Ազարեան: Առաջադրուած զմասար գործը ի պրոխ հանելու համար 1930-ին գաղութին անդամական ժողովը յուշար-

կութեամբ կ'ընտրէ 18 անձէ բաղկացած շինութեան յանձնարումը մը, որու բուն ջանքերով եկեղեցիին կարևոր մասը կը շինուի մի քանի տարիէն: Իսկ 1933-ին՝ յաջորդարար բնարուած անդամներու աջակցան աշխատութեան շնորհիւ ոչ միայն շինութեան գործը կ'ամբողջանայ, այլ նաև կարելի կ'ըլլայ շինքին պարտամուրհակը աչքել:

Լորէնսի Ս. Յոսէ Եկեղեցին շինուած է 1931 թուականին: Շէնքին ճակատի յայտնութիւնն է 50 սաք, իսկ խորութիւնը 98 սաք: Կրնայ նստեցնել 300 հաստացեալներ: Շինութեան ծախք եղած է 62,000 տար, իսկ ներկայ արժէքը կը

գնահատուի 100,000 տարբար: Վերջերս Լեկզեցույ շէնքը անձրեւի և ձիւնի դէմ պաշտպանելու համար կարևոր նարպարիւններ կատարուած են: Շէնքին սպահազարդութիւնը բարձրացած է:

Լեկզեցույ հիմնուէն և վէժ քարին օժուժը կատարած է Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Ղեւոնդ Արքայան Գուրեան 1931-ին: Օժուժը կատարած է Ամերիկահայոց յաջորդ Առաջնորդը Տ. Գարեգին

Արք. Յովսէփեան 1936 Յունիս 21-ին: Իսկ աւագ սեղանին քովը՝ ախ, վերջին շինուած Երկու փոքր խորաններու օժուժը կատարած է Ամերիկայի այժմուս Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկ. Ներսիսեան 1946 Նոյեմբեր 24-ին: Այս խորաններու շինութեան և պատկերապարզման գործին մէջ կարևոր դեր ունեցած է վերջին հովիւր՝ Տ. Յովի. Քիւնյ. Գալուզեան:

Ներկայիս Լեկզեցույ գործն



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

'Նստած' Տեարք Խաչատուր Նանարեան, Պետրոս Պապիլեան՝ առեւապետ, Խանգուցեալ Խովիւ Տ. Յովիաննէս Քիւնյ. Գալուզեան, Տեարք Պետրոս Ազնոյեան՝ առեւապետ, Մուսէղ Յակոբեան՝ փոխ առեւապետ: Կանգնած՝ Տեարք Կարապետ Պետրասեան՝ գանձապահ, Անդրանիկ Կիրակոսեան, Փոյ Պօղոսեան:

անդամներուն թիւը 65 է : Գաղութին առաջին հոգաբարձութիւնը կազմուած է սակէ աւելի քան ջրասաուն տարի առաջ, սակայն ահունները կորսուած են արձանագրութեանց չզոյսութեան պատճառաւ :

Լորէնսի Հայոց մէջ պաշտօնագրաց հոգևորականներու ցանկին է հետեւեալը.—

1. Տ. Արսէն Մ. վրդ վեհունի (1905-1907)
2. Տ. Սահակ վրդ. Սարգիսեան (վեց տիւս, 1915)
3. Տ. Եղիշէ Ա. Քինյ. Գալչընեան (1915-1917), *Լորէնս* և *Լորէնս* :
4. Տ. Եղիազար Քինյ. Աշնեան (1917-1920)
5. Տ. Խորէն վրդ. Լազարեան (1921-1923)
6. Տ. Եղիա Քինյ. Մ'սիքարեան (1923-1925), *Լորէնս* և *Լորէնս*
7. Տ. Եղիշէ Քինյ. Գասպարեան (1925-1928)
8. Տ. Ղեւոնդ վրդ. Մարգուկեան (1929-1932)
9. Տ. Արիկ Ա. Քինյ. Մոյսիկեան (1934-1937)
10. Տ. Արսէն Քինյ. Թորոսեան (1938-1939)
11. Տ. Խորէն Քինյ. Մամիկոնեան (1939-1942)



ՆՐԵՍՓՈՒՆԸ

Տիար Պետրոս Պապիկեան

12. Տ. Ղեւոնդ վրդ. Արապեան (1942-1944)
13. Տ. Յովհ. Քինյ. Գավուզեան (1944-1948)

Եկեղեցւոյ կիրակնօրեայ զըպրոցը *հիմնուած է 1938-ին* : Ուսուցչութիւնը կազմ են՝ Օր. Անահիտ Նաճարեան, Տիկ. Զարուհի Սերվերեան, Տիկ. Աղաւնի Յովսէփեան, Օր. Վերոնիքա Բիրբրսըն, Տիկ. Հովսիսիմէ Բարունակեան, և Օրիորդներ Անահիտ Նիկողոսեան, Պերուհի Զազըրեան, Արմինէ Զընկըրեան և Պերուհի Պապիկեան : *Դաստանդութիւն տեղի կ'ունենայ ժամը 10-էն 11 : Հուսկ յետոյ աշակերտութիւնը ուսուցչութիւնը առաջնորդութեամբ վարի սրահէն կ'ելլէ և կեղեցի և կ'ունկնդրէ Ս. Պատարագի Երգեցողութեան, մինչև ա-*

ւարտամբ: Ներկայիս աշակերտներու թիւը միայն 20 է: Գոյրոջին ծախքերը կը հոգացուին աշակերտներու նուէրներով:

Ս. Խաչ Եկեղեցւոյ հայկական վարժարանը հաստատուած է 1916-ին, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան ջանքերով: Առաջին սուսցիչը եղած է հովիւ Տ. Եղիշէ Ա. Քինյ. Գալչրնեան: Հետագային սուսցչութիւնը բրած են Տիկնայք վերոնիքա Մուրատեան, Արշալոյս Նուրիկեան, Աղանի Քանարեան, Սիրվարդ Միհրանեան, Արշալոյս Թազուրեան, Լ. Տ. Արսէն Քինյ. Թորոսեան: Ներկայիս կը պաշտօնավարէ Տիկ. Հերսիլ Բարդամեան: Դաստանդութիւնը տեղի կ'ունենան Դշ. օր ժամը 4-6,



ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նոսած՝ Տիկ. Մարգրիտ Կէլնիւմեան՝ զանձապահ, Հանգուցեալ Հովիւը, Տիկ. Պատախան Սրբմայեան՝ ատենադպիր: Կանգնած՝ Տիկնայք Մէրի Թումայեան՝ ատենապետ, Ազաւէի Գազանեան, Մարիցա Յակոբեան:



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիար Փօյ Յակոբեան՝ ղարապետ (նոսած, աջէն երրորդ)

և Ետրաթ որ ժամը 11-1 : Խնամակար թեան ջանքերով աշակերտութեան թիւը սակ մի քանի տարի աստժ բարձրացած է 40-ի, իսկ ներկայիս 25 է : Վարժարանին տարեկան ծախքն է 400 տարար, որուն մէկ մասը հոգաբարձութիւնը կը հայթայթէ :

Եկեղեցաւէր Տիկնաց Միւրիւնը կազմուած է 1916-ին, 21 տիկնիներու անդամացութեամբ : Ներկայիս ունի 65 անդամ : Իր տարեկան ձեռնարկներուն միջոցաւ կ'ապահովէ մատուցելու հինգ հարիւր տողարի եկամուտ մը, և նրաթագէս կ'օժանդակէ եկեղեց-

ւոյն սեւէ կարեւոր կարիքի մը պարագային :


Ս. Խաչ Եկեղեցւոյ Դպրաց Դասը կազմուած է 1915 թուականին : Ներկայիս իր անդամներուն թիւը՝ երկու սեւէ՝ սասնհինգ է բացի արարակիւրներէ : Դպիրները ճշգրտաճօրէն ամէն Կիրակի ներկայ կ'ըլլան Ս. Պատարագի արարացութեան :

Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց նորակազմ Միութիւնը քսան երկու անդամներ ունի երկսեռ : Եկեղեցւոյ վարի սրահին մէջ երկու շարքին անդամ մը իրենց ժողովը կ'ունենան, ու երբեմն այ-



Եկեղ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

'Նոսամ' Օրիորդներ Կոյաի Իգուսեան՝ գանձագահ, Ալիս Մարախրոսեան, Մէրի Ագարեան՝ տաննապետ, Հուլիա Պերպէրեան, Էլիզ Ազնոյեան : Կանգնած՝ Տեառն Չարլզ Սիրմայեան, Միլուս Գազանեան՝ տաննապետ, Ճէմ Պերպէրեան, Արաաշ Զիլինկիրեան :



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԱՀ. ԼՈՐԷՆՍ

գային, եկեղեցական և ասպջապահական նիւթերու շուրջ դասաթասութիւններ: Վերջերս երկատարդները իրենց սարքած մէկ ձեռնարկին հասոյթով հողացած են եկեղեցւոյ բեմի, գասի և ասկանի անոցի գորգերուն ծախքը: Երբատարդաց Միւթիւնը կեր-

պով մը յաջորդն է 1928-ին կազմուած Օրիորդաց Միւթիւն, որ շորս ասրուան բնթացքին ունեցած է մեղուաջան աշխատանք, տարով ներկայացումներ և հանդէսներ: Օրիորդներու Միւթիւն ջանքերու շնորհիւ շինուած է եկեղեցւոյ զանգակատանը:



Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, ԼՈՎԷԼ

«Ամերիկայի Մանչեսթր»-ը հաշուող Լովել շաղաքը Պասթանկն մոտ 30 մղոն հիստիս արևմտաք հըր գանտիս: Ունի 100.000 բնակիչ: Քաղաքը իր անունը կ'աննկ ալի մարզէն սը 1814-ին աշտակը բամպակը կըրպատ շինող ստաջին գործարանը հաստատակ: Գեակրու և. ջրանցքներու ցանցի մը գրայ շինուած է, և սնի հիստամեղէնի բնդարձակ գործարաններ: Կին գործատուներու թիւը նկատելիսըն բարձր է:

Անհատ Հայերու Լովել այցելութեան թուականը կը յիշուի 1875-ը, սակայն մնայուն բնակութիւն հաստատող Հայեր կը սկսին զալ 1885-էն վերջ: Ներկայիս Լովելի Հայերը 746 անձ կը հաշուուին, համաձայն 1948-ի Մայիսին պատրաստուած մարդահամարի մը Գաղութին մեծագոյն ստիտը Սարբերդէն և. շրջակայ զիւզերէն կուգան. կան նաև Չմչկածագէն, Մարտիկայէն, Սերաստիայէն, Շտպին Գարահիսարէն, Մեծկերտէն և. Վանէն եկածներ, փոքր թիւով:

1890-էն սկսեալ, Լովել իր մէջ կազմուող գանազան Հայ քաղաքական և. կրթական կազմակերպութիւններով և. Ազգաստիւնամ Ընկերութեամբ կը գառնայ կարճ առևնէն Ամերիկահայաց գործօն գաղութներէն մէկը: Լովելի Հայութիւնը իր թիւին համեմատաբար բրած է խոշոր նիւթական գոհոլութիւններ. սղպային մատու-

րականներ գինք անուանած ևն «փոքր բայց քաջ Հայ զաղութը»:

1910-ին բուակոն թիւով Հայ կազմակերպութիւններ կան Լովելի մէջ գործող: Քաղաքական ու բարեսիրական մարմիններու կողքին, խումբ մը անձնուէր ուսուցիչներ ալը թուականին հայերէն գասաւանդութիւն կ'ընեն Հայ ճաշարաններու սրահներուն մէջ: Ստկայն հոգեւոր անունը ստանալու համար չկայ Հայ եկեղեցի կամ եկեղեցական: Այդ պակասը զգալով է սը խումբ մը Հայ աիկիւններ 1910-ին հիմը կը դնեն Լովելի Տիւնաց Եկեղեցասիրաց Միութեան: Հիմնադիրներէն մի քանի բախտաւորներ կ'ալըին ցայտօր: Այս միութիւնը նպատակ կը սրոչէ սեփական Հայ եկեղեցիի մը շինութիւնը. կազմակերպեալ ջանքով աիկիւնները կ'արթնցնեն Լովելի Հայութիւնը, կը ստեղծեն Եկեղեցաշինաց Յանձնախումբ մը, որուն կ'օժանդակեն կամաւոր աշխատ-



Ս. ՎԱՐԳՈՒՆԱՆՅ ԵԿԵՂԵՑԻ
ԼՈՎԷԼ

անքաղ և նիւթական խոշոր գուհուգութեամբ: 1913-ի ձմեռը հրատարակային հասարայթի մը մէջ հանդանակութեան կը ձեռնարկին և կ'ընտրեն հանդանակիչ յանձնախումբ մը, որ շարունակ կրամ հասարէլ մ'ընչէ. բաւարար գումար մը գրայանայ:

Եկեղեցաշինաց Յանձնախումբը, որու անդամները համեաւ մարդիկ են, բնաանեաց արբուսաթի հոյունեցոյ և շէնք շինել տարու տեսակէտէն անփորձ, յոտարթիչ պայմաններու տակ կը շարունակեն իրենց ստանձնած պատասխանատաթիւնը, մ'ընչէ. որ շէնքը պատրաստ կ'ըլլայ 1916-ին: Գա-



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՊՐՈՂ ԷԻՄՆԱԳԻՐՆԵՐ

Տեաթ Մերոյի Գագանեան, Նագար Մրաւեղեան, Տոնապետ Գագանեան:

յութի անդամներէն շատեր իրենց բարոկներով կը մասնակցին շէնքի կառուցման: Շինութեան ծախքերու հաշուեկշիւէն ջաջելով, կատանք հետեւեալ թիւերը: Լուվկի գաղութէն հանդանակում՝ 5,765.90 տուրք. գուրսի գաղութներէն՝ 221 տուրք. գրամատունէն փոխառութիւն՝ 4,500 տուրք: Ընդհանուր ծախքը կ'ըլլայ 10,453.35 տուրք: Շէնքը ներկայ գիներով կ'արժէ 25,000 տուրք:

Նորաշէն եկեղեցւոյ օծումը կը կատարուի 1916 Ապրիլին, որ շարագէտ թուական մըն էր մայր ներկրի Հայութեան համար: Լուվկիցի մ'ընչ մէկ կողմէն սոթթափայր մը կը կանգնէին իրենց համար դեռ ևս օտար այս ներկրին մէջ, մ'ըստ կողմէն իրենց հետաւոր

հարազատներու եւ արդարիչներու նահապտակումին համ տարազբովեան գոյժը կ'իմանային: Քիչ չանցած, նոյն մարդիկը սրտնք իբնց ձեռքերով քար ու շագան կըրեցին եկեղեցոյ պատերը բարձրացնելու համար, կը մեկնին սուգմաճակատ իրը կամուսնը կուսելու համար Թրք-Գերման բարբարոսներու գէժ:

Լովէյի եկեղեցին օժայր կ'ըլլայ Մուշեղ Արք. Սերոբեան, կնքահայրութեամբ Տիար Ասատուր Պապիկեանի: Կը կոչուի Ս. Վարդանանց եկեղեցի: Երկաշին է 92

տար, իսկ լաշինքը 31 տար: 250 անձ նստեցնելու չափ տեղ ունի:

Եկեղեցոյ շինութեան ծախքերուն համնելու համար կատարուած փոխառութիւնը մզձաւանջի մը պէս տիրած է Լովէյի Հայոց վրայ, մինչեւ որ զազութին եւ քոյր զազութներու մասնակցութեամբ վերջնականապէս կը հասուցուի այլ պարտք եւ 1942-ին կը հրկեցուի պարտամուրհակը: Հոս կ'արժէ յիշել անունները եկեղեցուշինաց Յանձնախումբի 5 անդամներուն, սրտնցմէ երեքը կ'ազդին ալժմ. —





ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՐՁԱՆԻ

Նստած՝ Տիար Միխայել Նորդրացեան՝ ատենադատ, Տիր. Սարգիս Սրկ. Կտանեան (այժմ Տէր Կարէն Քինյ.) հովիւ, Տիար Մերկեր Ահարոնեան: Կանգնած՝ Տեարք Աղամ Սարգիսեան, Ասատուր Անդոյեան, Ազատ Ճգնուորեան, Միլոսա Պօղոսեան: Կը բացակայի՝ Տիար Նեան Պերպատեան:

Տեարք՝ Մարկոս Տէր Մանուէլեան (ատենադատ եւ հաշուապահ, մեկտած)՝ Նազար Մուշեղեան (գանձապահ), Մկրտիչ Գազանեան (խորհրդական), Տօնապետ Գազանեան (խորհրդական), Մարկոս Պարսաւեան (խորհրդական, մեկտած):

Մինչեւ 1930 Լովէլի թեմը իր մէջ կը համընթաց մտասկայ Լորէնս, Հէյլըն՝ Նիւյորքի քաղաքներու, ինչպէս նաեւ Մէյն նահանգի Փորթլենտ քաղաքի Հայ դպրութիւնները: 1931-ին Ատաշնոր-

դարանի կարգադրութեամբ յիշեալ համայնքները մաս կը կազմեն Լորէնսի թեմին, երբ վերջինս կ'անհնայ իր սեփական եկեղեցիքը: Այժմ Լովէլի եկեղեցւոյն ենթաթեմերն են Նիւ Հէմքըր Նահանգի Քանքըրտ, Մէնչըսթըր եւ Նէշուէ քաղաքներու փոքրաթիւ Հայ համայնքները, ինչպէս նաեւ Սէյլըմ-Փիլպատի եւ Նորթ-էնտափըր ատաններու Հայութիւնը:

Ս. Վարդանանց եկեղեցւոյ դործօն անդամներու թիւը ներկայիս 50 է:

Եկեղեցւոյ ներկայ հովիւն է Տ. Կարէն Քինյ. Կառնեան, որ իր ձեռնադրութիւնը ստացաւ Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոսէն 1948 Դեկտ. 19-ին: Տ. Կարէն նախապէս մօտ տարի մը որպէս Սարգիս Սարկաւազ հովուած էր այս եկեղեցին: Տէր հայրը կը շարունակէ իր ուսումը Քէմպրիճի Եպիսկոպոսական ձեռնարանին մէջ:

Լովէլի նախկին Հայ հոգեւորականներու ցանկն է հետևեալը.—

Տ. Յակոբ Քինյ. Բարեշանեան (1916)

Տ. Դաւիթ Քինյ. Աւետիսեան (1917-1919)

Տ. Եղիազար Քինյ. Աշնեան (1920)

Տ. Յակոբ Վրդ. Միսիրարեան (1921-1923)



ԵԿԵՂ.Յ. ՏԻՎՈՒՆՅ ՎԱՐՉՈՒԹԻՎԻՆ

Նստած՝ Տիկնայլ Պէտի Կլարեդեան, Ալլանի Մանոյեան: Կանգնած՝ Տիկնայլ Եղիաբէր Շապոյեան, Վերմին Սարգիսեան, Ալլանի Մարգարեան:



ԵՐԵՍՓՈՆԱՆ

Տիար Միգայել Նորդրացեան

Տ. Խորէն Վրդ. Լազարեան (1923-1924)

Տ. Գաբրիէլ Քինյ. Խաչատուրեան (1924-1926)

Տ. Եղիշէ Քինյ. Գասպարեան (1926-1929)

Տ. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեան՝ Լորէնս և Լովէլ (1930-1931)

Տ. Յուսիկ Քինյ. Նալսնիբեան (1931-1933)

Տ. Արիկ Քինյ. Ծոցիկեան՝ Լորէնս և Լովէլ (1934-1936)

Տ. Պետրոս Քինյ. Վարդանեան (1937)

Տ. Խորէն Քինյ. Մամիկոնեան՝ Լորէնս և Լովէլ (1938-1939)



ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ՏԻՎՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԳԻՐՆԵՐ

Նստած՝ Տիկնայ Բարիամ Կարապետյան, Ալիսաբեթ Ասատուրյան, Եւա Դարբինյան : Կանգնած՝ Տիկնայ ֆիլիմիցա Գազանյան, Մարիամ Գազանյան :

Տ. Մաաբէոս Քիւնյ. Հէֆիմեան
(1939-1941)

Տ. Խորէն Քիւնյ. Մամիկոնեան
(1942-1943)

Տ. Մաաբէոս Քիւնյ. Հէֆիմեան
(1944-1947)

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը, ինչպէս յիշեցինք կազմուած է 1910-ին : Ներկայիս տակաւին կ'ապրին ալ ստաջին շրջանի անդամներէն ոմանք, որանք իրենց

կրտսեր քոյրերու կողքին՝ քաջութեան օրինակ կը հանդիսանան : Ներկայ զործօն անդամներու թիւը յիստն է : Միութեան եկամուտը կուգայ իր տարեաւորքերէն և մասնակի ձեռնարկներէն . կ'օժանդակէ հոգաբարձութեան և ստանձնած է հարկական զարրցի նիւթական մատակարարութիւնը :

Եկեղեցւոյ Գաղարց Գաղը կազմուած է շէնքի օժման տարին՝ 1916-ին, խումբ մը երկուսու երկ-

պատարդներու ինքնարեր փափաքով: Շարափական վճարման գրութիւն մը սրղեղրելով, կը հրաւիրեն Փրօֆ. Գալփայեանը, որ խումբը կը կազմակերպէ և անոր կը սորվեցնէ Ս. Պատարագի Երգեցողութիւնը, իր Եղանակով: Տարիներ յետոյ՝ 1930-ին կը հրաւիրուի Երաժշտագէտ Արուանձանցը որ Գպրաց Գառը կը վարձեցնէ Եկեղեցական պատարագի քառասան երգեցողութեան: Մեծ գեր ունի նաև Տիար Մերկեր Ահարոնեան որ 38 տարիէ ի վեր կը ծառայէ այս համայնքին մէջ իբր լուսարար, սարկաւազ, սոժամեայ զպրասկա և հագարարձու: Երկրայ Գպրաց Գառը ունի մօտ 15 անդամ, մեծ մասամբ սղջիկներ: Վերջերս նախաձեռնած ևս

Եկեղեցւոյ օրերնի զնման, որուն օժանդակեց Էվրենթրենէն Տիար Վարդան Վարդանեան 500 տարով:

Հայկական դպրոց կանուխն ունեցած է Լսվէլի Համայնքը, ինչպէս վերև յիշեցինք: Միայն 1947-ին է որ տարի մը փակ մնացած է: Ատեն մը աշակերտներու թիւը հասած է 65-ի, և պաշտօնավարած են վկայեալ վարժուհիներ Տիկնայք Արշալոյս Կարիկեան և Սիրվարդ Միհրանեան: Կ'արժէ յիշել Եկեղեցւոյ հայկական գրադարանը, որ Եկեղեցւոյ շինութեանն առջև սկսած է կազմուիլ և օտար շէնքերու մէջ տնտեսական թափասուելէ վերջ իր արժանաւոր



ԳՊՐԱՅ ԳԱՍ ԵՒ ՍԵՂԱՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՆԵՐ



ԵԿԵՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԻ

Նստողները՝ վարչության անդամներն են. ձախ ծայրը՝ Տիար Ժիրայր Ախարոն-
եան տնտեսն է Կիրակնորեայ դպրոցի : Բ. շարքի աջ ծայրը՝ Տիար Նեան Պերպետեան՝
անդամ է Խոզարարձուրեան :

*անկիւնը դառած է Եկեղեցւոյ ներ-
քաւի սրահին մէջ :*


*Եկեղեցւոյ Կիրակնորեայ դըպ-
րոցը, որ պահ մը ընդհատուած
էր, վերարացուած է 1947-ի աշ-
նան Տիար Ժիրայր Ախարոնեանի
ջանքերով : Աշակերտներուն թիւն
է մօտ 25 :*

*Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազ-
մակերպութիւնը հաստատուած է
1947-ին : Ունի մօտ երեսուն ան-
դամներ : Գործունէութիւնը կը
կառնուի ընկերային հասարակ-
ներ սարքելու, ինչպէս նաեւ դա-
սախօսական խորհուրդներ ղուգարե-
լու մէջ :*



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅ

Ուսուցչուհիներն են՝ Օր. Շնորհիկ Պերպատեան (Բ. շարքի ձախ ծայրը), Օր. Թագուհի Մանուկեան (Բ. շարքի աջ ծայրը), Օր. Եղիաթէր Գրիգորեան (Խոտի շարքի ձախ ծայրը), Տիկ. Անահիտ Տէփոյեան (Խոտի շարքի աջ ծայրը) :



ՄԱՅԷՄԻԻ ՀԱՄԱՅՆՔ, ՖԼՈՐԻՏԱ

1896-ին հիմնուած, Մայէմի ներկայիս հարաւային Ֆլորիտայի ոտտանն է 175,000 բնակչութեամբ: Կը կրէ «ժողական քաղաք» մակդիրը: Կլիման արեւազարձային ըլլալով, ձմրան շրջանին Գոնտատայէն եւ Միացեալ Նահանգաց ցարս մասերէն հազարաւորներ կուզան Մայէմի, վաչելիս: անոր տաք օդը եւ հասոյքի ու մարգարտղերու բազմազան յարմարութիւնները: Նշանաւոր է քաղաքին ծովեզերեայ լայն սրտատան որ 15 մղան կ'երկարի, արմաւենինրով զարդարուած: Նաւահանդիսար կը գործածուի արեւազարձային պատգիներու արտածման համար:

Մայէմիի մէջ կ'ապրին մօտ 100 Հայ ընտանիք: Աւելի քան քսան տարիէ ի վեր տեղւոյն Հայերը կրօնական կարիքներու համար միշտ գիծած են Եպիսկոպոսական Եկեղեցւոյն, որ սիրայօժար գոհացուցած է զիրենք: Այս տարի (1948) տեղւոյն ազգայիններէն Տիար Յ. Զազարեանի նախաձեռնութեամբ, Մայէմիի Հայ երեւելիներ հրաւիրելին Ամերիկահայոց Առաջնորդը՝ Տ. Տիրան Եպիսկոպոս, աչցելիլու եւ միտիմարելու տեղւոյն Հայ գաղութը: Արբազան Առաջնորդը բնկերակցութեամբ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեանի, Փետրուար 12-էն մինչեւ 20 գանուեցաւ Մայէմի, ուր համաձայն պատրաստուած յայտարարի, բրաւ գատախօսութիւններ, նախազահեց հաւաքութիւնրու, մատոյց Ս. Պատարազ եւ քարոյց, ու վերջապէս գումարեց խորհրդակցական ժողով մը, որու մէջ Մայէմիի Հայութիւնը իբր աստղնորդական թեմ կազմակերպելու

աստղին քայլը տնտեսցաւ: Աըբրազան Հայրը նշանակեց Հոգարածական Յանձնախումբ մը, բաղկացած հետեւեալներէն.—

- Տեաքք Սէմ Մոմենեան, Հէրի Զազարեան, Տոքք. Լուսինեան, Օ. Քիւլիսեան, Վ. Պալլզգեան, Մ. Տէր Սահակեան, Հ. Գրիգորեան, Տ. Խոյեան, Ս. Զարգեան եւ Տոքք. Տալման:

Նոյն ժողովին մէջ յայտնի կ'ըլլայ Մայէմիի Հայոց սեփական եկեղեցի ունենալու փափաքը: Անցնելով սրտչումի, տեղւոյն վրայ կը հանդանակուի 2,000 տալար: Կ'ըլլան կարելոր խոտտամներ. այսպէս՝ Տիար Պըրք յանձն կ'անձ հողալ հողին ծախքը: Տիկին Զազարեան կը խոտտանայ օրկըն մը: Տիար Ս. Եագուպեան՝ սկիհ մը: Ուրիշներ խոտտամ կ'ընեն կասուցուելիք շէնքի պատկերներուն, ելեկարական կազմածին, ներկին, մկրտութեան տապանին եւ խորանի մասին:

ՄՈՆԹՐԵԱԼԻ ՀԱՄԱՅՆՔ

Գանտտայի մեծացոյն քաղաքն է Մոնթրէալ, որ ունի մօտ մէկ միլիոն բնակիչ: Բնակչութեան երկու երրորդը ֆրանսախօս է, իսկ կրօնական տեսակետով՝ երեք քառորդը Հռոմէացուան:

Առաջին եւրօպացիներն որ այստեղ եկած է Ֆրանսացի մըն է ժող Գարթիէ անունով որ 1535-ին կը զտնէ այն կղզին որուն վրայ շինուած է այժմու Մոնթրէալը: Ասիկէ զար մը վերջ Հնդիկները զարժի բերելու համար Ֆրանսացի կրօնաւորներու առաքելութիւն մը կուգայ հաստատուիլ այստեղ. կայանը երկար տարիներ ենթակայ կ'ըլլայ Հնդիկ յարձակումներու: ԺԷ. դարու կիսուն քաղաքը կը զտնայ մուշտակի առեւտուրի եւ երկրախուզութեան կեդրոն: Քիչ ժամանակ վերջ կը զբաւուի Բրիտանացիներէն:

Քաղաքը արագ զարգացած կ'ունենայ ժՔ. դարուն, շուէնուել զիւսկն վերջ. Այնի՛ կը Լորէնս գետի միջոցաւ կը հազարավայրի ծովուն հետ եւ ներկայիս հսկայ նաւահանդիստ մը ունի, որ նուարկուիթեան յարժար է Ապրիլէն միջեւ. Գեկտեմբեր: Ասիկէ զատ ճորտարարուեստի մեծ կեդրոն է, ունենալով ծխախոտի, կօշիկի, թափու եւ կոստոյ երկաթեղէններու զօրժարաններ:

Մոնթրէալ ունի զեղեցիկ պատմական շէնքեր եւ կոթողներ ու 321 եկեղեցիներ: Մինչեւ 1943, հանրային կրթութիւնը կայացած է կրօնական իշխանութեանց ձեռքը:

Մոնթրէալի Հայ զապուլը ըսկրտած է կազմուիլ 1920-էն վերջ: Մեծ մասամբ Բալուէն եկած են սեպուոյն Հայերը. կան մի քանի Պալեստիններ, Քղեցիներ եւ Սարբերդցիներ: Բ. Համաշխարհային Պատերազմի շրջանին շատեր օգտուելով արուած գիրութիւնէն, զապխած են դէպի Միացեալ Նահանգներ. այժմ այդ շարժումը օրինական արգելքով զապրած է եւ 100-էն 125 անձ կը հաշուուին Մոնթրէալի Հայերը (չուրջ 20 ընտանիք): Մեծ մասամբ անհատական զօրժի տէր են, բանեցնելով ճաշարան կամ գոմարուցիչի խանութ. կան մի քանի զօրժի վաճառականներ:

Կրօնական կեանքի տեսակետով, Մոնթրէալի զապուլին ամենէն բախտաւոր շրջանը եղած է 1929-1940, երբ Տ. Զգօնի Բիմլյ. Չարխուէիան տարին երկու անգամ կ'այցելէր եւ կը պատարագէր: Տէր Զօր վախճանումէն վերջ, Հայ հոգեւորականներու այցելութիւնները կ'ըլլան պատահական. 1941-ին այցելած է Տ. Յովսէփ Եպս. Կարապետեան, իսկ 1948-ի Մայիսին Տ. Հմայեակ Վրդ. Ինքոյիան: Ժամապաշտութիւնը տեղի կ'ունենայ Անկլիկան եկեղեցիի մը մէջ: Առ ի չզոյէ Հայ հոգեւորականի, երբ կ'ունի կամ պատկի ասիթ ըլլայ, կը զիմեն Անկլիկան հոգեւորականի:

1948 Օգոստոս 9-ին Ամերիկա-Հայոց Առաջնորդ Գեր․ Տ․ Տիրան Եպո․ Եկրոսյանն խումբ մը հուղեւորականներով Մանթրէպէն անցնելու ասթիւ երկիւյ մը յառկացոյ տեղւոյն Հայ համայնքին։ Արձակուրդի շրջան ըլլալով, Մանթրէպէի Հայութեան միայն կէսը ներկայ էր հաւաքոյթին, որ Սրբազանը խօսեցաւ, Խաղաղական եւ Հանդատեան Ժամերգութիւնները կատարելէ վերջ։ Այս հաւաքոյթին մէջ է որ ընդհանուրի վաժառանգին վրայ Սրբազանը նշանակեց վեց հոգիներու Եկեղեցական Յանձնախումբ մը, որու անդամներն էլսան, Տեաքք Թորգոմ Ուլաւեան, Խաչիկ Շիրոյեան, Տիգրան Գարիպեան, Վահան Տիրատուրեան, Երուանդ Պաստրմաեան, եւ Գեորգ Պաուլեան։ Այս յանձնախումբը, որ հետագային վաւերացուցաւ Առաջնորդական Թեմի Կեդրոնական Վարչութեան կողմէ, կը ջանայ միջոցներ գտնել զազութիւն Եկեղեցական-ազգային կեանքը վաւ զարձնելու։

Այս յանձնախումբի կազմին կայ Տիկնանց Միութիւնը, որ կազմուած է 1930-ին, հայկական պարտքի մը հաստատման ասթիւ։ Դրպարոցը միջին հաշուով 15 աշակերտով տեւած է մինչեւ 1943։ Տիկնանց Միութեան Վարչութեան

չորս անդամներն են․ Տիկնայք Ենիկէ Գարիպեան (առեւտար), Խալուսի Հազարեան (առեւտար), Տիգրանուի Խոնոյեան (պանծագած), Ագիւլ Նիկողոսեան (խորհրդական)։

Գորաց Դասին մէջ կ'երգեն 14 երիտասարդներ, երկու սեւէն։ Զերեք պատարալի երգեցողութեան վարժեցնողն է Տիգր Խաչիկ Ստեփանեան, Պուլկարահայ մը։

Մանթրէպէի Հայութիւնը միշտ իր կարողութեան չափով մասնակցած է համազգային հանդանակութեանց, չնայած անոր որ Հ․ Բ․ Ը․ Միութեան մասնաճիւղ չկայ այստեղ։ Այլքսարհարէթի Սանճազի ալկտեալներուն (1938), Պէյրութի հիւղաւանի հրկիղեալներուն, վերջին պատերազմի ժամանակ Սովետ Բանակին մէջ կըլուտուող Հայ զինուորներուն ի նպաստ տուած է զուժարներ։ Տիգր Լ․ Զէլեան յանուն Բարեկարգմանին այցելած է Մանթրէպէ 1946-ին եւ հայրենապարծի ի նպաստ մէկ միլիոն տարրի հանդանակութեան բաժնեկից ըրած է տեղւոյն Հայ գաղութը։

Մանթրէպէի Հայ գաղութը համերաշխ կեանք մը ունի․ բնկերական հաւաքոյթներու ասթիւ բարբ իրարու քով կուզան իրբեւ մէկ ընտանիքի անդամներ։



ՆՈՒԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔ

Նիւ ճըրջի նահանգին ամենամեծ քաղաքն ու նաւահանգիստը՝ Նուարք Տ մզոն միտայն հետո է նիւ Եսրբ քաղաքի հարաւային ծայրէն: Ունի մօտ կէս միլիոն բնակիչ: Ամերիկայի առաջին օդակայաններէն մէկը Նուարքինն է, բացուած 1928-ին: Իր փողոցներէն Էրկուֆին (Պրօս Սթրիթ և Մարքէթ Սթրիթ) զիւրաբ կորած տեղը աշխարհի ամենարժուէկ երթուէկի կէտերէն մէկն է: Ունի 300 եկեղեցիներ և ժողովարաններ:

Կարևոր ճարտարաւեստական կեդրոն մըն է, և արտադրութիւնները բազմաճիւղ են: Գլխաւորներն են ներկ, ջնարակ, Լէկտրական դործիքներ, զարնջուր, հաց: Կարևոր փոխադրութեան կեդրոն մըն է Էրկաթուղիի, խճուղիի, օդի և ծախս:

Քաղաքը հաստատուած է 1666-ին, Քընէթիքըթէն հեռացող 30 Մաքրակրօններու կողմէ: Ասոնք շրջակայ հողերը (այժմ Էսէէս Քաունթի կոչուող շրջանը) ծախու կ'առնեն Հնդկիներէն, անոնց զէնք, ձի, զարնջուր և այլն ստալով: Քաղաքը կը կոչեն յանուն իրենց հօթիի ծննդավայրին սր Անգլիոյ Newark-on-Trent քաղաքն է եղած: 50 տարի շարունակ քաղաքը կը մնայ Մաքրակրօն և կը կառավարուի Մովսիսական օրէնքով: 1734-ին կը հաստատուի առաջին Եպիսկոպոսական Եկեղեցին (Ս. Երրորդութիւն): Նուարքի House of Prayer Եկեղեցւոյ անշարանին մէջ հողեւորական մը 1887-ին կը հարէ ճիւղն ֆիլմը, սր շարժանկարի գիւար կարելի կը դարձնէ:

Նուարքի մէջ Հայոց թիւը մօտ 800 է: Սերաստացի, Տըղթանակերտցի, Բալուցի և Խարբերդցի բնտանիքներ կը կազմեն Հայ զագուիքը մեծ մասամբ: Առաջին հոգարարձութիւնը կազմուած է 1926 Նոյեմբերին, հետեւեալ անգամներով. Տեալք Տիրան Քըրք (ատենապետ), Մարիուս Մօրուֆեան (ատենադպիր), Եդուարդ Մերայտարեան (դանձապահ), Տիգրան Բարումակեան (փոխ-ատենապետ), Լեւոն Պետիկեան, Տիմոքէոս Պալըգեան, Սուրէն Յակոբեան:

Եկեղեցական տեսակէտով, Նու-

արքի Հայեր միշտ առկախ են զած ևն մօտակայ թեմերու եկեղեցիներէն, անոնցմէ ստանալով հողեւորականներու պարբերական այցելութիւն: Յարզ չեն ունեցած սեփական Եկեղեցւոյ չէնք, թէեւ 4,500 տուրի ծախքով դնած են հող մը, վրան Եկեղեցի կառուցանելու մտօք: Հողին մեծութիւնն է 100×80 ոտք:

Այցելու կամ այլ հանդամանքով Նուարքի Հայոց մէջ պաշտօնավարող Եկեղեցականներէն կը յիշուին Տ. Մատթէոս Քինյ. Մաննիկեան (1931-1932). Տ. Զգօն Քինյ. Զարթուկեան, Տ. Արսէն



ՀՈԳԱՐԱՐԶՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ

Նստած՝ Տեաֆ Ոսկան Արամյան, ժողովի Պոլսոսեան՝ տանապետ, կարէն Պարճազեան՝ գանձապահ: Կանգնած՝ Տեաֆ Հան Մանուկեան, կաշիկ Զօրեան, Մարտիրոս Էմէէնեան, Յովսէփ Տէր Յովսէփեան:

Քինյ. Թորոսեան, Տ. Բնձակ Քինյ. Գազանեան (1936-1938). Տ. Մամբրէ Եպիսկ. Գալփայեան (1939-1940). Տ. վահան Քինյ. Ճէլայեան (1941-1945): Այցելած է Տ. կորէն Քինյ. Մամիլոնեան (1945-1946): Ներկայ հովիւն է Տ. Շնորհի վրդ. Գալուստեան, որ իր պաշտօնին ձեռնարկեց 1948 Նոյեմբերին:

Ներկայիս Էկեղեցականօրէն դարձն անդամներու թիւը մօտ 40 է:

Եկեղեցասէր Տիկնաց Միւռ-

ը իւր կազմուած է 1928-ին: Ներկայիս ունի տարեկան մօտ 500 տար Լկամուտ: Գործունէութեան գլխաւոր մասերն են հաստիարիկ ձեռնարկներու սարքում եւ համալսարանի կարեկից անդամներու աջակցութիւն: Կը մասնակցի արդար թիւրք հանդանակութեանց:

Նուարքի մէջ հայկական դպրաց դաս կազմուած է 1928-ին: Ներկայիս դպրաց դասը կը բաղկանայ 12 օրիորդներէ, որոնք ամիսն անդամ մը կուսնին Սիթիի Ս. Սաղ Եկեղեցու Գաղտապետ Տիար կոստով

Համաճեանի զեկախարութեամբ կ'երգեն Ս. Պատարազի երգերը: Երգեստնաճարն է Օր. Գոհարիկ Զատիկեան: Նախկին զպրասկաներ եղած են Տեարք Տիգրան Բարունակեան եւ Անուն Զերագեան:

Նուարքի Հայկական զպրօցը, որ 15 տարի տեւած է, վերջերս զպրօծ է զժրօխտարար:

Իպրօծը զուրկ է նաեւ Կիրակնօրեայ զպրօցէ եւ Եկեղեցասէր Երիտասարդաց Միութենէ:*

Վերջերս Նուարքի զպրօծը րախան ունեցաւ զնեղաւ եկեղեցւոյ շէնք մը, որոճով եւ յարակից րնակարանով: Կարուածը արժամ է 26,000 տարար:

*Նոր Խովիւին՝ Տ. Շնորհ վրդ. Գալուտեանի ջանով վերարացուած են Հայ Դպրոցն ու Կիրակնօրեան, 1949-ի զարեան: (Մ. Կ.)



ԵԿՂՅ. ՏԻԿՆԱՆՅ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Եւարդ Պատիւեանեան՝ առեկաղպիր, Հայկանոյ Զօրեան՝ առեկապիտ, Եւան Պարագեան՝ զանձապիտ: Կանգնած՝ Տիկնայ Սիրանոյ Կուրաչանեան, Մարի Կուրաչանեան:



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիար Խոսրով Համաճեան՝ Դպրապետ

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ, ՆԻՒ ՊՐԻԹԸՆ

Հարթֆլըրտէն 9 մզն հարաւ արեւմուտք, փոքր քաղաք մըն է Նիւ Պրիթըն, 70,000 բնակչութեամբ: Կարեւոր է իրր գանակեղչներու եւ աստղծաղարձական գործիքներու արտադրութեան կեդրոն:

Նիւ Պրիթընի մէջ Հայեր հաստատուել սկսած են 1895-ին: Առաջին հոգաբարձութիւնը կազմուած է 1900-ին: Ներկայիս մօտ 400 է քաղաքին Հայերուն թիւը. եկած են ընդհանրապէս Սարրերգի գաւառէն. կան որոշ թիւով Պարսկահայեր եւ Կիպրացիներ: Կը բզբաղին առ հասարակ գործաւորութեամբ: Քաղաքին փոքրութիւնը սրատաւ է որ տեղւոյն Հայերը իրարու մօտ բնակելով զիրար լաւ ճանչնան:


Ներկայիս Նիւ Պրիթընի մէջ կայ փոքր հայկական եկեղեցի մը, որ Հայոց կողմէ ծախու տանուէլ աստջ ժամանցի սրահ է եղած: Շէնքը կը գնուի 1940-ին 6,500 տաւարի եւ վրան կը ծախուի չուրջ 6,000 տաւար, եկեղեցիի յարմարցընելու համար: Ներկայ զինելով կ'արժէ 25,000 տաւար: Մեծութիւնը 80×40 սաք է եւ կը նստեցնէ 200 հոգի:

Եկեղեցւոյ օծումը կատարած է վիճակիս նախկին Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Յովսէփեան 1941 Մարտ 19-ին, կոչելով զայն Ս. Յարութիւն:



ԵՐԵՄՓՈՆԱՆ

Օր. Սառա Եագուպեան



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՅՈՅ ԽՈՐԱՆԸ

Եկեղեցին ունի համեմատաբար մեծ անդամութիւն, թուով 103: Համերաշխ սպիով իրր մէկ ընտանիք կը զարձեն եկեղեցւոյ պայծառութեան համար: Հոգարարձութիւնը վերջերս նորոգած ու բարեկարգած է եկեղեցւոյ ներքեւի սրահը: Կուսարով եւ աւարով պատած է եկեղեցւոյ կոնակը, իրր պաշտպանութիւն խոնաւութեան զէմ. այս վերջին աշխատանքը իրենց ձեռքերով կատարած են նախկին կամ ներկայ հոգարարձու Տեարք Յովհաննէս Պօղոսեան, Սարգիս Այգարիկեան եւ Եազուպ Եազուպեան: Հոգարարձութիւնը մտադիր է եկեղեցւոյ պատուհաններն ու ճակատն ալ նորոգել:

Եկեղեցւոյ Երեսփոխանն է Օր. Սառա Եազուպեան, որ միեւնոյն ատեն զպրտպետուհին է: Իր ջանքերուն շնորհիւ կազմուած է Դըպրայ Դասը 1939-ի Սեպտեմբերին. խումբը ներկայիս կը բաղկանայ 22 անդամներէ (9 տրական, 13 իգական):

Գաղութին հոգեւոր հովիւները եղած են. Տ. Գաբրիէլ Բիւնյ. Տէօվլէքեան, Տ. Ընձակ Բիւնյ. Գազանեան, Տ. Մեարոպ Բիւնյ. Տ. Յովհաննէսեան, Տ. Խորէն Բիւնյ. Մամիկոնեան (1935-1936), Տ. Մեարոպ Աբեղայ Սէմէրեան (1940-1942):

1948 Ապրիլ 4-ին Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Տիրան Եպս. Ներսիսյան Եկեղեցւոյ մէջ քահանայ ձեռնադրեց Տիր. Մինաս Սրկ. Գառպարեանը, զայն կոչելով Տէր Առնակ: Տէր Հայրը, որ ասուածարանական ուսանող է Նիւ Եորքի մէջ, տարիէ մ'ի վեր գրեթէ ամէն Կիրակի Նիւ Պրիթըն գալով բաց կը պահէր Եկեղեցին, կատարելով ժամերգութիւն եւ կրօնական ուսուցում: Անդամական Ժողովի փոփոքով 1948-ի ձմեռան ընթացքեւ Հովիւ Նիւ Պրիթընի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ: Չեւնայդութեան Հանդիսարար արարողութեան ներկայ էր մեծ բազմութիւն. կը մասնակցէին տեղացի թէ հիւր չորս տաղ սարկաւազներ, իսկ Հոգ. Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան կը կատարէր խորատիրակի պաշտօն: Երգեցողութիւնները ըրին Նիւ Պրիթընի եւ Հարթֆըրտի միացեալ պարայ խումբերը: Տ. Առնակ ամտանային սրճակարդի ամիսները անցուց իր հօտին մէջ. ծանօթանալով ընտանիքներուն եւ պարբերաբար գաստիօսելով Երիտասարդներուն:

Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Տիկնացի Միութիւնը կազմուած է 1914-ին, յաջորդելով սակէ Երկու տարի անաջ կազմուած Որբութեամբ Միութեան: Միութիւնն



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տիար Վեռնիկ Տ. Մարկոսեան՝ ատենակա, Տ. Առնակ Գեղեցի. Գառպարեան՝ հովիւ, Տիար Սարգիս Գրիգորեան: Կանգնած՝ Տեառ վարդան Ագարիկեան՝ փոխատենագալի, Յակոբ Եագուպեան՝ կառուարար, Ջորն Սիմոնեան՝ գանձագահ, Արտաէս Տ. Պաղտասարեան, Նիկողոս Մեծատուրեան՝ ատենադպիր:



ԵՎԼՅ. ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Լրաչուկի Պատրիկեան՝ ատենագիր. Սիրանյե Ագարիկեան՝ ատենագրու: Կանգնած՝ Տիկնայ Բարդուխի Եսայեան. Արմենուի Յակոբեան, Աննա Խաչուպեան՝ զանապստ:

Նոյ կը տանի Լայ զգրացի պէտքերուն և կը կազմակերպէ ճաշկերոյթներ: Տարեկան կ'ունենայ մօտ 250 աոյար Եկամուտ և 200 աոյար Երբ:

Լայկական դպրոցը հաստատուած է 1912-ին. տակն մը շարունակուած է օտար հաստատութեանց արամադրած սենեակներուն մէջ, Երեկոնները ժամը 6-7: Ամէն տարի շուրջ 20 աշակերտ կ'ունենայ. ներկայիս դաստանդութիւնները կ'ըլլան ԵՂ. օրեր՝ Երեկոյեան ժամը 6:30-8:00: Եկամուտ և ծախք չունի զգրացը, սրովհետև ուսուցիչները զբաժանան փարձատարութիւն չեն բտանար, և աշակերտները իրենք կը մատակարարեն իրենց զրկնական պիտոյքը:

Եկեղեցւոյ Կիրակնօրեայ զբոյրացը հաստատուած է 1932-ին և կը շարունակուի ցարդ: 1933-էն ի վեր վարիչ պատասխանատու և զամ է Տիկ. Արշալոյս Տ. Յուսիկեան: Ուսուցիչներն են՝ Օրիորդուհի Տիգրանուի Խաչայեան, Եղիաբէր Ագարիկեան, Անահիտ Պողոսեան և Տիար Լրաչ Մանուկեան: Գրացը հաստատուէն ի վեր ամէն տարի շուրջ 35-40 աշակերտ ունեցած է: Դասուանդութիւնները տեղի կ'ունենան տատատեան ժամը 11-11:30: Եկամուտի միակ պրիւրը աշակերտներուն կամաւոր նուէրներն են, որոնցմէ տարեկան կը գոյանայ շուրջ 75 աոյար: Այս գումարը կը յատկացուի զբքերու, Ծնունդին և ամառ արուած Երեկոյթներու, Զատիկին բաշխուող նուէրներու: Նախապէս այս բոլորին ծախքերը կը հոգային ուսուցիչները:

Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութիւնը հիմնուած է 1936-ին՝ տաջնորդական տեղապահ Մամբրէ Սրբազան Գալֆայեանի միջոցաւ, «Աստերք և Դրստերք Լայ. Եկեղեցւոյ» սնունով: Ներկայիս ունի 27 սնոցամ և հակասակ այս փոքր թուին, կը ներկայանայ իբր փիճակիս ամենէն Ետանդուն ու զբժուանայ Երիտասարդական Կազմակերպութիւններէն մին: Կը կազմակերպէ գտասխտասկան ժողովներ, շարժապակերի ցուցադրութիւն, պէյս պոյի և սաֆիլ պոյի մըրցումներ, պարահանդէսներ և ըզբօսապտոյաններ: Ունի իր կամուտ-



ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օր. Սիրանյե Աւետիսեան՝ քրքակցութեան Բարտուղար, Հովիւ, Օր. Պէլլըլի Օնանեան՝ փոխ առեւնապետ: Կանգնած՝ Տիար Հրաչ Ագարիկեան՝ առեւնապետ, Օր. Ռուք Մուսեղեան՝ առեւնադպիր, Տիար Հրաչ Մանուկեան՝ գանձապահ:

տիպ ամսաթերթը "The Illuminator" որ Նիւ Պրիթընէն ևւ Հարթֆըլըրէն գտնու ևւս ունի բարձրագոյն լինելը պարտաւորութիւն ընթերցողներ: Կը պատրաստուի չիւրտտիրել ժիւս թեմերու երկաստարդաց կազմակերպութեանց ներկայացուցիչները 1949ի

Սեպտեմբերին, երբ իրենց Երբոր: Տարեկան Համաժողովը զան զուժարել տպակ (Ա.ը Ֆիլատէլֆիա, Բ.ը Տիթթուլթ): Տարեկան և կամուար շուրջ 900 տուար է, իսկ ծախքը շուրջ 750 տուար:



ԳՊՐԱՅ ԴԱՍ

Օր. Ստատ Կաղապեան՝ Դպրատուն (Բ. շարք. ձախէն կրօսից)



Ն Ի Ի Ե Ո Ր Ք

ՔԱՂԱՒՔԸ.— Միացեալ Նահանգաց խոշորագոյն, և աշխարհի ամենէն բազմա-
մարդ քաղաքն է Նիւ Եորք, շինուած Հրտարն գետի բերանին վրայ: Քաղկացած է Հինգ
հսկայ թաղամասերէ. — Ա. Մէնհէյքըն, որ կողի մըն է Հրտարն, Հարլէմ, Իսթ գետե-
րէն և ծովէն շրջապատուած: Բ. Պրաւիս, որ Մէնհէյքընի հիւսիսն է, Հարլէմ գետով
բաժնուած անկէ: Գ. Բիչմընտ' Մէնհէյքընի հարաւը, ծովածոցով մը զատուած անկէ,
Սթէյթըն կողիին վրայ: Դ. Գուլիք և Ե. Պրուէլին, որոնք Մէնհէյքընի արեւելքն ու հա-
րաւ արեւելքն են, Իսթ գետով բաժնուած անկէ և կը զտնուին Լոնկ Այլէնտի արեւ-
մըտեան ծայրը:

Հինգ թաղամասեր կը ծածկեն 320 բնակչոսի մղոն տեղ և ունին մօտ 8 միլիոն
բնակիչ, Պրուէլին ըլլալով ամենէն բազմամարդը: Նիւ Եորքի բնակչութիւնը սակ
կըք գար առաջ հաղաբէն պահաս էր: Արագ աճումը թափ ստած է Ամերիկեան Յե-
ղափոխութեան շրջանին: 1871-ին բնակչութեան թիւը կը հասնի 1 միլիոնի, իսկ
1920-ին՝ 5,690,000-ի:

Վերայիշուել հինգ թաղամասերը 1898-ին իրարու միացան, կազմելու համար Մի-
ծաղոյն Նիւ Եորքը: Այս ասորի (1948) 50-րդ տարեկարծն է այդ միացման և առիթը
կը տանախմբուի բացասիկ տողանցքներով և շքեղօրէն ստորոտած ցուցահանդէսներով:

Նիւ Եորքի ներկայ բնակչութիւնը աշխարհի ցեղերէ և ազգութիւններէ կը բազ-
կանայ: Անսովոր բան չէ Նիւ Եորքի փողոցներու մայթերուն վրայ կամ հանրակառ-
քերուն մէջ ըսել անգլիերէնի կողքին իտալերէն, գերմաներէն, յունարէն, սպաներէն,
երբայեցերէն կամ չինարէն: Աշխարհի ամէն երկիր և լեզու իր ներկայացուցիչները
ունի այստեղ, մեծ կամ փոքր թուով: Քնակիչներէն երկու միլիոնը Հրեայ են, մէկ
միլիոնը Իտալացի, կէս միլիոնը Իրլանտացի, քառորդ միլիոնը Գերմանացի, նոյնքան
մը Փոթթորիքցի և կէս միլիոն սևամորթ: Վերջինները կեդրոնացած են Հարլէմ
կոչուած շրջանին մէջ՝ 116-րդ և 150-րդ փողոցներուն միջև: Հրեաներու մեծագոյն
մասը կը բնակի Պրուէլինի մէջ: Մէնհէյքընի հարաւ արեւելեան կողմը Չինացիներ ու-
նին իրենց յատուկ թաղը, որ ծանօթ է Չայնաթաուն անունով:

Նիւ Եորք չափ մը տեսակէաներով անմրցելի քաղաք ըլլալով, ևս ստաւել գար-
ձած է աշխարհի մայրաքաղաքը Բ. Համաշխարհային Պատերազմէն սողին, իբր մնա-
յուն կեդրոն Միացեալ Ազգերու կազմակերպութեան:

Նիւ Եորք գիթիտրի նաւահանդիստ մըն է, իր 2.000 նաւամատոյցներով որոնք
տարեկան մօտ 6.000 նաւ կ'ընդունեն: Տարին 120 միլիոն թրն սպրանք կը տեղափոխ-
ուի այս նաւամատոյցներու միջոցաւ:

Մէնճէթընի հարուստին ծայրը՝ Ուսլ Սիբրիթի չարջ հաստատում են աշխարհի մեծագոյն գրամատուները, սակարանները եւ տուեարական գրասենեակները: Ասոնց կը յաջորդեն, զկտի հիւսիս, խոշոր չուհաներն ու գործարանները: Բրդեղէնի, մետաքսեղէնի, մուշակահերու, կոշիկեղէններու չուհաներէն իւրարանջիւրք ունի իր սրջ չրջանը. նոյնպէս պտուղի, ձուկի, հաւիթի, սուրճի, թէյի եւ համեմներու չուհաները: Գոհարեղէններու չուհան կեդրոնացած է Ֆիթիթէ Էլբընիի եւ Պրոտուէյի վրայ: Իսկ թղթեղէնի գործատեղիներն ու խանութները ցրուած են ամէն կողմ, թէւս զլիսուար կեդրոնը կը գտնուի Նամակատան Շէնքի (34-րդ Փողոց) չրջանակին մէջ: Մեծագոյն վաճառատուները կը գտնուին 34-րդ Փողոցին վրայ եւ մօտակայքը. ասոնցմէ մին չարաթը 1 միլիոն սուրբ եկամտա կ'ունենայ:

Քաղաքը սկսած է գորդանալ Մէնճէթընի հարուստին ծայրէն զկտի հիւսիս: Միայն 150 տարուան կեանք ունեցող այս քաղաքը այժմ ունի աւելի քան 650,000 շէնքեր, որոնցմէ 4,300-ը տաս յարկանի կամ աւելի բարձր: Աշխարհի ամենէն հսկայ շէնքը՝ Էմփայր Սքէյր Պիլտիմիլը, Նիւ Եորքի 34-րդ Փողոցի եւ Ֆիթիթէ Էլբընիի անկիւնը կը բարձրանայ, 102 յարկով: Անոր գաղաթէն պայծառ օդով մը կարելի է մինչեւ 50 մղոն հեռուները տեսնել: Նիւ Եորքի պոզոտաներէն մին՝ Պրոտուէյը, 18 մղոն երկայնք ունի: Այս պոզոտային վրայ, 34-րդ Փողոցէն մինչեւ 59-րդ Փողոց, կեդրոնացած են քաղաքի մեծագոյն թատրանները, ճաշարաններն ու զուարճութեանց վայրերը:

Նիւ Եորք 1824-էն ի վեր Միացեալ Նահանգաց առջնահարց ճարտարաբուհատական քաղաքն է: Կարտայրէ հազուա, կաշեղէններ, խմբէջներ, ստեղծեղէն, գրքեր ու ապագրական նիւթեր, մետաղեայ գործիքներ, ներկեր, զեղեր, հիւսուածեղէն, թուղթ ու խուաքարս, կտաքեր, ապակեղէններ, Էն. Էն.:

Փոխադրութեան ամենի կեդրոն մըն է: Ունի եօթը կայարաններ երկաթուղիի: Երկու մեծ միջնադային օդակայաններ՝ Լա Կուարտիս (բացուած 1939) եւ Այարըուսայա (բացուած 1948): Թաղամասերու միջեւ երթեկեղը կը կատարուի ստորերկրէլայ կառախումբերով որոնք 1913-էն ի վեր սկսած են շինուիլ, տեղը բռնելով բարձրակի երկաթուղայովի կառախումբերուն: Այս վերջինները, որոնք ի սկզբան չուղի ուժով կը բռնէին, 1902-էն ի վեր երկկարականութեամբ կ'աշխատին: Ստորերկրեայ դնացիք գաղապարտմով, ինչպէս նաեւ պըսերու բաղմանաբով, հետաճեալ ջնջուած են այս բարձրակի երկաթուղիները, որոնք աղեղ կերպարանք մը կը հազցնէին պոզոտաներուն: Ասոնցմէ գատ, Նիւ Եորքի փողոցներն ու պոզոտաները սովորական օր մը լեցուն են բիւրասուր ինքնաշարժերով եւ փոխադրակառքերով: Ասոնց յառաջացուցած խճողումը կը մեղմանայ մարդատար կտաքերու յատուկ կողմնակի բարձրակի խճուղիներով, որ չարժումը մէկ ուղղութեամբ է եւ խաչաձևեղ ճամբաներ չկան: Կատերը կը գործածեն նաեւ Հըրաւըն եւ Լիւրնի թըրըրները, որոնք Հըրաւըն գետի ստեղէն Նիւ Եորքը կը կապեն Նիւ ձըրքի Նահանգին: 178-րդ Փողոցի վրայ, Մէնճէթըն Նիւ ձըրքի հետ կը կապուի համրասուր ձորճ Ուաշինկիթըն կամուրջով, որ բացուած է 1931-ին: Նշանաւոր են Մէնճէթընը Գուիլիքի եւ Պրուքլինի հետ կապող կամուրջները: Նորայոյն կամուրջն է Ռոյալյօրո կոչուածը, որ 1936-ին բացուած, ցոնց մըն է խումբ մը կամուրջներու որոնք Մէնճէթըն, Պրանքս եւ Գուիլիք երեք թաղամասերը իրարու կը կապեն:

Առողջապահական քառասուն զանազան բնակարաններ կան Նիւ Եորքի մէջ, որոնք կ'ոչենեն առողջապահական սպասարկութեան: Նիւ Եորքի 200 հիւանդանոցները կը պարունակեն 50,000 անկողին: Քաղաքը իր խմելիք ջուրը կը ստանայ Քէթսքիլ լեռներէն, հարիւր մղոն հիւսիս: Այլ տեղէն ջրմուղով կը բերուի ջուրը քաղաքին հիւսիսը գտնուող զտարան մը, ուրիկ կը բաշխուի թաղամասերուն, քորաշէն փապուղիի

Մը միջոցաւ: Նիւ Եորքի ջուրը համարուար է իր մաքրութեամբ և ակորմելի համով: Ջուրի սպառումը վերջերս շտապած բլրալով, Տէլէուէր գետէն ևս ջուր կ'առնուի:

Նիւ Եորք ունի մօտ 800 հանրային նախակրթարաններ և 80 բարձրագոյն դրոյ-րացներ, որոնք հազիւ հազ կը բուեն հեղհեղ ակուցող կրտսեր աշակերտութեան: Աստեցմէլ գատ ունի գովհնէր և համալսարաններ: Վերջիններէն անուանի են Գոլլըմպիա և Նիւ Եորք համալսարանները: Մասնաճիւղային դպրոցներէն յայտնի են General Theological Seminary (Եպիսկոպոսական), Union Theological Seminary (Երեցական), Հրէից Աստուածարանական ձեմարանը, բժշկական, իրաւարանական և դեղագործական ճիւղերը Գոլլըմպիայի և միւս համալսարաններուն մէջ: Մէնհէթընի մէջ կայ հօկայ հանրային մասնադպրան մը, որ 1911-ին շինուած է 9 միլիոն սպար ծախսով:

Ամերիկացի բանդակագործներէն շատեր որոշ մասնակ ապրած են Նիւ Եորքի մէջ, ու քաղաքի հանրային պարտէզներուն և հրապարակներուն վրայ կը տեսնուին անոնց դարձերէն սմանք: Նշանուար է Նիւ Եորքի նաւահանգիստին բերանը կանդնող Ակադամիան Արձան» որ Ֆրանսոսական սպիլին նուէրն է Ամերիկայի, իր անկախութեան հարելութեակին տալիւ:

Պէտք է յիշել նաև Պրանքի կենդանարանական Պարտէզը, ինչպէս նաև Բուստրանական Քանդարանը: Նիւ Եորք ունի 1,500 թատրոններ, որոնց խոշորագոյնն է Radio City Music Hall-ը որ 6:200 աթոս ունի:

Եկեղեցիներու թիւը 1,550-էն աւելի է: Աստեցմէլ 100-ը երեցական, 50-ը ժողովական և 200-ը Լուսերական են: Եպիսկոպոսական Եկեղեցիներէն նշանուար է St. John The Divine մայր Եկեղեցին: Միկրաչականները ունին 120 Եկեղեցի որոնց շատը սեւամորթներու կը ծառայեն: Հոսմէական Եկեղեցիներու թիւը 430 է. աստեցմէլ նշանուարագոյնն է St. Patricks մայր Եկեղեցին Ֆիլիթ Էլբրիտի վրայ: Աստեցմէլ դուրս կան բազմաթիւ Հրէական սինակոգներ:

Այս բուրէն ոչ մէկը կար 1626-ին, Երբ Հոլանտացի մը Մէնհէթըն կողին գնեց Հնդիկներէն, աւելով 24 տարար արժող հողուտակէն և գարդեղէն: Կողին վրայ ամբողջ մը կանդնելով, Հոլանտացին կը կոչէ վայրը New Amsterdam: 1664-ին Անգլիացիներ կը գրուեն և անուր կը փոխեն New York-ի: ԺԸ: դարուն քաղաքին բնակչութիւնը շարունակ պայթար կը մղէ Բրիտանացի կառավարիչներուն ղէմ: Յեղափոխութեան կռիւներուն կը մասնակցի բուսն կերպով: Հրդհ, հիւանդութիւն և ատաղակութիւն կը տարածուին քաղաքին մէջ այլ շրջանին: Անկախութեան հռչակումին, Նիւ Եորք կ'ըլլայ Երկրին մայրաքաղաքը 1789-1790: 1807-ին քաղաքն ունի արդէն 19 լրացիր, որոնցմէ 8-ը օրաթիւթ: Քաղաքապետարանի շէնքը կ'աւարտի 1812-ին: Քաղաքապետական Պատերազմին (1867) Նիւ Եորք կը մասնակցի 300 միլիոն սպարով և 80 հազար զինուորով: Այս դարու սիլիլները քաղաքին վարչութիւնը յաճախ կ'անցնի կաշառակեր ու անպարկէշտ քաղաքապետներու ձեռք. անոնց ղէմ պայթար մղած է հանդուցեղ նախագահ Ռուդֆէլթ: 1933-ին քաղաքապետ կ'ընտրուի La Guardia, որ իր ցոյց տուած արդիւնուար աշխատանքին համար կը վերընտրուի 1937-ին և 1941-ին: Ասոր վարչութեան ներքեւ քաղաքին փոխադրական զբութիւնը կը միաւորուի քաղաքապետութեան հակակշիւին տակ, կ'ամբողջանան Թրայպորո կամուրջն ու Լինքրն Թընըլը և կը սարքուի 1939-ի համաշխարհային Յուլցահանդէսը:

//
//

ՆԻՒ ԵՈՐՔԻ ԸՆՅՈՒԹԻՒՆԸ

Ներկայիս Նիւ Եորքի հինգ թաղամասերուն մէջ բնակող Հայոց թիւը կ'ենթադրուի 20-էն 30 հազար: Ասկէ ութսուն տարի առաջ ամբողջ Ամերիկահայաբնակը, որ կ'ապրէր Նիւ Եորքի ու ժողովայն քաղաքներու մէջ, կը հաշուուէր 60-էն 70 հոգի: Հայեր Ամերիկա մտնել ու երկրին մէջ ապրածուիլ սկսած են Նիւ Եորքի ճամբով:

Առաջին Հայը, որ եկած է Նիւ Եորք 1834-ին, Պոլսեցի պատանի մըն է Խաչատուր Ոսկանեան անունով որ կուգայ իրր ուսանող: Վեց տարի Նիւ Եորքի մէջ ուսանելէ ետք կը սերագտանայ Պոլիս, ուր կը գրազի յրազրութեամբ, բաւական տարիներ: 1854-ին գարձեալ կուգայ Նիւ Եորք, ու կ'աշխատի իրր թղթակից Նիւ Եորք Հէրըլտ թերթին, որուն մէջ կը քննայ մեր սոցր ծանօթացնել Ամերիկացիներուն: Միևնոյն տակն ծածկանունով յօդուածներ կը գրէի Պոլսոյ «Մասիս»ին, Ամերիկացիները ծանօթացնելով Հայերուն: Աշխատած է Նիւ Եորքի մարտատան մէջ. եղած է Գոլըմօլիս Համալսարանի գրադաս, թրքական հիւպատոս, ինչպէս նաև Նիւ Եորքի մամլոյ պետարին նախագահ: Կը մեռնի Նիւ Եորքի մէջ 1900-ին:

Նիւ Եորք եկող երկրորդ Հայը գարձեալ Պոլսեցի մըն է Թադէոսեան մականունով, որ իր հետ կը

բերէ ռահաք լոգուս շինելու արհեսար ու ստով կը գրազի Նիւ Եորքի մէջ:

1842-ին կուգայ Պոլսեցի Հայ Բողոքական Երիտասարդ մը՝ Յովհաննէս Տէր Սահակեան անունով, և կ'ուսանի Union Theological Seminary-ին մէջ:

1844-ին Նիւ Եորք կը տեսնենք Քրիստափոր Սեբոքեան անունով Պոլսեցի մը, որ կ'աշխատի իրր ախտապան, ու սղատ ժամերուն կ'օգնէ գեղադործի մը: Վերջինիս քով կ'ընէ գլուս մը, որ կը ծառայէ Ամերիկեան գրամանիչները ներկելու: Մենաշնորհը կը ծախէ կասալարութեան աժան զինով, և բժշկական ճիւղին տիրանալէ վերջ կը դառնայ Պոլսու:

Գրեթէ նոյն տարին Նիւ Եորք կուգայ Թասղեղցի Սարգիս Միլևանեան, որ Ամերիկուհի մը հետ ամուսնանալով կը բնակի Պրուքլին և կը գրազի գէպի Թուրքիս սոցրանք սրտածելու գործով:

1863-ին, բնասնեօք Ամերիկահաստատուելու մտքով կուգայ Պոլսեցի Միքայէլ Թովհանէլեան: Այդ տարին Նիւ Եորքի մէջ միայն 10 Հայ կայ եղեր. երեքը բժիշկ, մէկը գրաշար, մէկը առամնագործ: Մնացեալներուն գրադուսը յայտնի չէ: Տաս Հայերէն միայն մէկը կին է:

1870-ին երկու Հայեր շաքարի

գործարան մը կը բանան Պրուքլինի մէջ, բայց կը ձախողին: Նոյն տակն Մշեցի Հայ մը կապերափ գործարան մը կը բանեցնէ Նիւ Եորքի մէջ, և հետզհետէ Հայաստանէն հասնող պանդուխտներու համար իր գործատեղիին մի քանի սենեակները պանդոկի կը վերածէ: Այդ շրջանին հոգիւ 70 Հայեր կային ամբողջ Ամերիկայի մէջ:

Յիշուած անուններն ու թուականները ցոյց կուտան որ 1834-էն մինչև 1870 կամ 1875, Նիւ Եորք եկող Հայերը անհատ Պրուքլիններ են, որոնք կամ բարձր ուսում կը փնտտեն և կամ դրամ: 1875-էն վերջէ որ մեծ թուով Հայ գաղթականներ կը սկսին լիցուել Նիւ Եորք: Տ0-ական թուականներուն եկողներէն կարելի է յիշել Տոքր. Տառուրեանը որ մածունը կը ծառայէր Ամերիկացիներուն և կասափարութենէն մենաշնորհ կը ստանայ մածնաշինութեամբ գրադելու:

Նիւ Եորքի մէջ առաջին Հայ պատարապը մատուցուած է 1889 Սեպտ. 22-ին, Եպիսկոպոսականներու Կրէյտ Չորջ Եկեղեցիին մէջ: Պատարապէսն է եղած Ամերիկահայաց անդրանիկ հովիւ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարախեան, որ նոյն առթիւ կը կատարէ Նիւ Եորքի Հայոց համար առաջին մկրտութիւնը, յանձնու իլսիի, Մէրիի և Ֆլարէնսի որոնք այժիկներն են Գրիգոր Բարսեղեան անուն ազգայինին: Գիտելի է որ ասկէ 60 տարի առաջ արդէն իսկ օտար անուններ գործածելու ունակութիւնը մտած է նորեկ Հայոց մէջ:

1891-ին Հայոց սրտէ բարձու-թիւն մը պէտք է ենթադրել Նիւ Եորքի մէջ, քանի որ այդ թուականին քաղաքին մէջ կը սկսին հրատարակուիլ երկու Հայ պարբերաթիւեր՝ Արարատ և Հայք: Գարս վերջուսրութեան, Նիւ Եորքի մէջ կը սրաշտոնափարեն իբր այցելու կամ մնայուն հովիւ, Տ. Վահրամ Բեկ. Մարրեան, Տ. Խաղ Վարդապետ Մարգարեան: 1901-ին երբ Ամերիկահայ Եկեղեցին երեք տարիէ ի վեր առաջնորդական վիճակի վերածուած էր Խրիմեան Կաթողիկոսի անօրինութեամբ, առաջնորդանիսա Ուտար քաղաքին մէջ գումարուող առաջին Կրօնական Ժողովին Նիւ Եորքէն ներկայացուցիչ կ'երթայ Տ. Ասիակ Վրդ. Նազարէրեան:

1907-ին Նիւ Եորքի դրացի Ուէյթ Հօպօքընի (այժմ Եունիւն Սիթի) Հայութիւնը կ'ունենայ իր սեփական Եկեղեցին, մինչդեռ Նիւ Եորքցիներ վարձու սրահներու մէջ յատաջ կը տանին իրենց կրօնական պաշտամունքները: Այդ շրջանին կազմուած է արդէն Եկեղեցական գործերու հսկող հոգաբարձութիւն մը: Բուական տարիներ վերջ՝ 1918-ին, այդ հոգաբարձութեան ներկայացուցած համայնքը կը կազմակերպուի «Մ. Գր. Լուսասարիչ Եկեղեցի» անունով, թէև ասիական գործի սեփական Եկեղեցիէ. Նիւ Եորքի 17-րդ Փոպոցի վրայ վարձուած շէնքի մը մէջ կը մատուցուի պատարապ և կ'ըլլայ քարոզխօսութիւն: 1916-ին Նիւ Եորքի Հայոց քարոզիչ է Տ. Բարբէկեան Վիլիսիան:

Ա. Մեծ Պատերազմի գինացարարէն՝ վերջ թրքական տարազրու-
թեանէն ճողորմած Հայոց մեծ
խումբերը կը սկսին խուժել Ամե-
րիկա, ու կարեւոր մասամբ կը
հաստատուին Նիւ Եորք: Մինչեւ
այդ ատեն Նիւ Եորքի Հայոց բը-
նակութեան կեդրոն էր Մէնհէթը-
նի հարաւային մասը (Եունիըն
Սյուէրի շրջանակ) եւ Պրուքլինի
հիւսիս արեւմտեան մասը: Հե-
տըզհետէ կիսը Հայերը կը ցրուին
քաղաքին չորս գլխաւոր թաղա-
մասերուն ամէն կողմը. շատեր կը
հաստատուին Պրանքս, Գուելնդ եւ
Ուաշինկթըն Հայթիս (վերջինս ա-
պագայ ճորճ Ուաշինկթըն Կա-
մուրջի մօտերը): 17-րդ Փողոցի
կեկեղեցին անբաւարար է շատե-
րուն համար, որոնք ժամ մը կամ
աւելի պէտք է ճամբորդեն հոն
հասնելու համար: Թաղային հո-
գարարձութիւններ կը կազմուին,
թաղային կեկեղեցիներ ունենալու
համար. ստալինը կ'ըլլայ Պրուք-
լին որ սեփական կեկեղեցի կը պա-
հէ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Կարա-
պետեանի հովուութեամբ, 1930-ի
ատենները: Այս կեկեղեցին դըժ-
բախտաբար կը զաւրբի դորձելէ Տ.
Ղեւոնդ Գուրեան Արքայազան Ա-
ռաջնորդի սպանութենէն վերջ:
1929-ին Մէնհէթընի հիւսիսային
մասի (Ուաշինկթըն Հայթիս) Հա-
յութիւնը կը դնէ կեկեղեցի մը, որ
այսօր ծանօթ է Ս. Խաչ անունով:

Մինչ այդ Նիւ Եորք Պատմոնէն
կը խէ ատաջնորդանքսա կեդրոն
ըլլալու պատիւը 1927-ին: Նոյն
տարին է որ Տ. Տիրալար Արք. Յով-
հաննէսեանի ատաջնորդութեան օ-
րով, Առաջնորդարանը կը հաս-

տատուի Նիւ Եորքի Ֆիֆթհէ կղը-
նիսի վրայ գտնուող շէնքի մը (թիւ
156) երկու սենեակներուն մէջ:
Այդ երկու սենեակները վարձքով
գործածուած են մինչեւ 1947 Մա-
լիս, երբ շէնքին տէրերուն պա-
հանջքին վրայ, Առաջնորդարանը
կը ստիպուի փոխադրուել այլուր
եւ ամսամարտը կը տեղաւորուի
Եպիսկոպոսականաց Տ. Peter's Ե-
կեղեցւոյ պատկանող շէնքի մը
(20-րդ Փողոց) վերնաշարկը, եր-
կու մութ ու խոնար սենեակներու
մէջ, որոնք ամառը սաստիկ տաք
են ու ձմեռը ցուրտ: Վերջերս
գնուած է շէնք մը 2-րդ կ'վրնիւի
վրայ, ուր մօտ ատենէն պիտի փո-
խադրուի Առաջնորդարանը:*

Նիւ Եորքի մէջ ներկայիս կը
հրատարակուին մօտ կէս երկվեց-
եակ հայերէն թերթեր, ինչպէս Ա-
ռաջնորդարանի ամսաթերթ Հա-
յաստանեաց Եկեղեցին, Կոչնակ
շարթթաթերթը (48-րդ տարի),
Յուշարար (Հ. Բ. Ը. Միութեան
օրկան), Երիտասարդ Հայաստան
(Հնչակեան Կուսակցութեան Լ-
նօրեայ թերթ), Լրաբեր (Հայ Յա-
սաջլիմական Միութեան երկօր-
եայ թերթ), Նոր Գիր (Հայ դրա-
կան Լսամսեայ), ինչպէս նաեւ
երկու հայկական կեկեղեցիներու
լրատու թերթիկները:

Նիւ Եորքի մէջ է Հ. Բ. Ը.
Միութեան Կեդրոնական Գրասեն-
եակը, ինչպէս նաեւ գտնադան
հայրենակցական միութեանց կեդ-
րոնը:

*Փոխադրուելուը կատարուած է 1949
Յունիս 1-ին: (Ծ. Կ.)

Նիւ. Եորքի բազմաճաղար Հայութիւնը ներկայացուցիչներ ունի Թրքահայաստանի և Կիլիկիոյ բոլոր գաւառներէն, ինչպէս նաև արևելահայերէն: Ձրազու մներու տեսակէտով, Նիւ. Եորքի Հայերէն մեծ թիւ մը կը տեսնենք Փոքր Էնկլիշի վիկի գործին մէջ՝ սմանք գործատէր, շատեր գործաւոր: Ապա կուզան գորգի վաճառակա՛նութեամբ կամ մաքրութեամբ բոլորողներ: Քիչ չեն Հայ գերձակ-

ներ, արդու կիչներ և նորարարձատներ: Կան անչուշա տղատապարէզներու հետեւողներ, ինչպէս բժիշկ, ատամնարոյժ և իրատա՛րան: Պէտք է յիշել նաև զբաշարներն ու տղազբիչները:

Ամերիկահայաց Առաջնորդարանի Լեթակայ Երկու Եկեղեցիներ կան այժմ Նիւ. Եորքի մէջ, որոնց իւրաքանչիւրը ասանձին նկատի տանել կը սկսինք ստորև:

Ա.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ, ՆԻՒ ԵՈՐՔ

Երեսուն տարի է զեր այս ա՛նունով ծանօթ եկեղեցին շարունակութիւնն է զարուս սկիզբը ամբողջ Նիւ. Եորքի Հայութեան հոգևոր կեանք մտասկարբայ զբրութեան: Այցելու. քահանաներ (Ուէսթ Հոլոքընէն) Եղած են տակէ մօտ յիսուն տարի սուաջ Նիւ. Եորքի Հայոց ծիսական ու հոգևոր պէտքերուն հասնողները, գործածելով վարձու օտար եկեղեցիներ: 1903-ին կազմուած է սուաջին հոգարարձուէթիւն, և ստան մը վերջ Հայ համայնքը ձևա՛նարկած է զնկու. 27-րդ Փոզոցի

և 3-րդ Պոզոտայի վրայ զանուոյ շէնք մը, սակայն 1918-ին հոգարարձական ընտրութեանց ասթիւ. Երկրաստակաւորով, կազմեղն մին կը վարձէ 17-րդ Փոզոցի վրայ շէնք մը, պահելով Ս. Գր. Լուսաւորիչ անունը: Այս եկեղեցին նոյն շէնքին մէջ իր գործունէութիւնը կը շարունակէ մինչև 1925, Երբ 30-րդ Փոզոցի վրայ շէնք մը կը վարձուի, որ կը գործածուի մինչև 1946-ի աշունը: Մինչ այլ եկեղեցւոյ անդամներութիւր շատցած է ու անտակահ կացութիւնը բարւոքած: 30-րդ



Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՈՐԻԶ ԵԿԵԼԵՅՆՈՅ ԵՈՐԱՆԵՐ

Փողոցի շինքին տէրերը կը յայտնեն հողարարձութեան թէ շինքը ծախու է. կամ պէտք է դնել և կամ պարպել շինքը: Մերինները ձախարգ թիւրխմացութեանց հետեւանքով ձեռքէ կը հանեն շինքը դնելու պատահութիւնը ու կը ստիպուին զոյգերով հանդերձ հետանալ այդ տեղէն, 1946-ի Նոյեմբերին: Նոյն միջոցին հողարարձական ընտրութիւն կատարելը կը բախի զժառարութեանց, որով Այդպային կեղը. Վարչութիւնը կը նշանակէ սոժամեայ հողարարձութիւն մը՝ ստեղծագործութեամբ Տիտր Արամ Յարութիւնեանի: Այս կողմը զործի զլուխ կը մնայ 22 ամիս անընդհատ, և կը յաջողի անտուն ու անհովիւ եկեղեցին օժտել սոժամեայ տունով մը և մընայուն հովիւով մը:

Եկեղեցւոյ ներկայ սոժամեայ վայրն է 20-րդ Փողոցի վրայ և Ե-րդ ու Գ-րդ Պողոտաներու միջև. զանազակ Եպիսկոպոսական Ս. Պետրոս Եկեղեցւոյ կից սրահը: Պատշաճ կահուսրումէ և պատարակ սեղանի ու մկրտութեան տաղանի հաստատումէն վերջ, խորանին հանդիսաւոր օծումը կատարուեցաւ 1947 Սեպտ. 7-ին, ձեռամբ Առաջնորդ Տ. Տիրան Եպս. Ներսիսեանի, ու մասնակցութեամբ Տ. Տիրայր Արք. Ի ու Տ. Վրբանէս Բեհնյ. Փապիագեանի:

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեղեցին 1947 Սեպտեմբերէն ի վեր կը մընայ յիշեալ սրահին մէջ, վճարելով տարեկան 3,000 տուար վարձք, որուն մէկ մասը ստանձնած է Առաջնորդարանը, քանի որ

Վերջինս այ իր գրասենեակը փոխադրած է նույն սրահի վերի յարկը: Եկեղեցին մտադիր է գնել սեփական շէնք մը: Ներկայիս գործածուող սրահը կրնայ նստեցնել մօտ 500 հայր:

Ս. Գրիգոր Լուսուորիչ Եկեղեցու գործոն անդամներու թիւը ներկայիս մօտ 250 է: Ասանք ներկայացուցիչներն են Պրուքլինի, Գուինգի և միջին ու հարուստին Մէնձլթընի մէջ բնակող Հայաթեան:



ԵՐԵՍՓՈՆԱՆՆԵՐ

Ա. շարք՝ Տեառն Պետրոս Հագարապետեան, Նիկողոս Ամգարեան: Բ. շարք՝ Տեառն Արաւիք Քեօլեան, Տիգրան Տատուրեան, Գաբրիէլ Մահատեան:



ՀՈԳԱՐԱՐԶՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

'Նստած' Տեաք՝ վահան Զարիֆեան՝ փոխ ատենադպիր, Պետրոս Հազարապետեան՝ ատենապետ, Տ. վրբանէս Ա. Քինյ. փափագեան՝ հովիւ, Տեաք՝ Արմէն Յովասափեան՝ ատենադպիր, Ֆրէնկ Զօրեան: Կանգնած՝ Տեաք՝ Յակոբ Բաասիեան՝ փոխ ատենապետ, Հէրի Գոգուրեան, Արմենակ վարդեան՝ զանձապահ, Գուրգէն Կառարեան, Եղուարդ Պալպպեան:



ԵԿԵՂԵՅԱՍԷՐ ՏԻՆՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐԶՈՒԹԻՒՆ

'Նստած' Տիկնայ՝ վերջին Պէրպէրեան, Տիրուհի Նիկողոսեան՝ ատենապետ, Հովիւ, Տիկնայ՝ Տիգրանուհի վանցեան, Ալիս Քօրեան: Կանգնած՝ Օր. Պէարբիս փափագեան՝ փոխ ատենադպիր, Տիկնայ՝ Հելէն վեցիլիեան՝ զանձապահ, Պէարբիս Ալլալեան, վիլբորթա Խիւրհան՝ ատենադպիր, Հերանուս փափագեան՝ Խառնակալ, Երէցիկն Երանուհի փափագեան:



ԵՆԱՄԱԿԱՌՈՒԹԻՒՆ ԼՈՒՍԱՆՈՐՁԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐ

Նստած՝ Տիկնայ Երանի Պարսամբան, Մերի Շմաունեան՝ գանձապահ, Հովիւր, Տիկնայ վարդանոյ Ձէլէմեան, վարդանոյ Լուսիկեան՝ հաշուապ: Կանգնած՝ Տիար Սիմոն Շմաունեան՝ առեկապեա, Տիկ. Տիգրանուհի վանցեան, Օր. Պեարքիս Փախազեան՝ փոխ առեկապեա, Տիկ. Հոփոսիմէ Տէրտէրեան, Տիար Յովհաննէս Մանկասարեան՝ առեկապիւր: Կը բացակայի՝ Տիկ. Սրբուհի Ճանիկեան:

Եկեղեցաւեր Տիկնանց Միութիւնը հաստատուած է 1923-ին: Տարեկան մօտաւորապէս 1.000 տուրք եկամուտ կ'ունենայ իր սարքած պապարտի եւ ճաշկերոյթներով: Միութիւնը վերջերս յիսուսն քօղ նուիրած է եկեղեցիին, զպրուհիներու զործածութեան համար:

Եկեղեցւոյ գրասենակին մէջ, որ կից է սրահին, իբր քարտուղար կ'աշխատի Տիար Սարգիս Ծոցիկեան վաստակաւոր զրօրը: Տիար Ծոցիկեան կը խորազրէ եկեղեցւոյ պարբերական լրատու

պրակը՝ Լուսաւորիչ որ այս տարի կը բարբէ իր տասներորդ տարին:

Եկեղեցւոյ տոժամեայ կամ մրնայան հովիւները սկիզբէն ջայսօր եկած են բազմաթիւ. կարելի է յիշել Տ. Մատթէոս Ա. Քիւնյ. Հէֆիլեան (1923), Տ. Յարութիւն Ա. Քիւնյ. Սարգիսեան (1925-1928), Տ. Դերեմիլի վրդ. Փօլաւեան (1939), Տ. Ջօզօ վրդ. Յակոբեան (1943-1946), Տ. Բարգէն վրդ. վարժապետեան (1947 մինչեւ Յունիս): Աւելի հիներէն կարելի է յիշել Տ. Ագաթիա Քիւնյ. Պօ-

յանեան (1916), Տ. Սերովբէ-
Քինյ. Ներշապուհ (1923), Տ.
Վահրամ Ծ. Վրդ. Նագարեքեան,
Տ. Բնձակ Քինյ. Գազանեան:
Ներկայ հովիւր՝ Տ. Վրքանէս Ա.
Քինյ. Փափագեան կը պաշտօնա-
վարէ 1947 Յուլիսէն ի վեր, երբ
ժամանեց Պուլկարիայէն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղե-
ցին չունի Կիրակնօրեայ Վարժա-
րան, սակայն 1933-էն ի վեր ու-
նեցած է «Լուսաւորչեան Վարժա-
րան» անունով Հայ դպրոց մը, ու-
րուն երկարամեայ ուսուցչուհի ե-
ղած է Տիկին Հայկ Խօնասարեան:
Աշակերտութեան թիւը սկզբնա-

կան շրջաններուն եղած է 65, սա-
կայն այս թիւը սկսած է նուազել,
ուրիշ թաղային վարժարաններու
ևս հաստատման եւ կարգ մը ըն-
տանիքներու այլուր փոխադրու-
թեան պատճառաւ: Ներկայիս ա-
շակերտութեան թիւն է 16: Մի-
ջոց մը օժանդակ ուսուցչուհիի
պաշտօն վարած է Օր. Ասողիկ
Պողոսեան (այժմ Տիկին Գուլեան,
Շիրակո): Այժմու ուսուցչուհին է
Տիկին Արմէն Մելքոնեան: Վար-
ժարանը մինչև այսօր տուած է
63 երկես շրջանաւարտներ: Դա-
սաւանդութիւնները տեղի կ'ունե-
նան 30-րդ փողոցի և Երրորդ Պո-
ղոսայի անկիւնը շէնքի մը մէջ,



ՎԱՐԳԱՆԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ուսուցիչ՝ Տ. Վրքանէս Ա. Քինյ. Փափագեան

Երկու շարժի և. Ուրբաթ օրեր : Ե-
կամուսն է 800 առար, իսկ ծախ-
քը՝ 700 :

Այժմ, Լեկզեյուոյ ամսամեայ
որսնի գրասենեակին մէջ բաց-
ուած է (Փետր. 1948) «Վարդա-
նանց Վարժարանը» որուն հայե-
րէնի գասուանդութիւնը կը կա-
տարէ հովիւ Տ. Վրթանէս Քհնյ.
շարաթը երկու անգամ :

Յիշեալ երկու վարժարաններէն
գաս, Ս. Գր. Լուսաւորիչ Եկեզեյ-
ուոյ հոխանաւորութեան տակ կը
գործեն թագային երեք վարժա-
րաններ. աչաղէս՝ Աընիսայի
(Գուինց) «Հայկազեան»ը (ու-
սուցչուհի Տիկին Արմէն Մելիքոն-
եան), Չարէսթ Հիլլի «Ներսէս-
եան»ը (ուսուցչուհի Տիկին Վ.
Փապուրեան) և կրէյթ Նէքի Հայ

Վարժարանը (ուսուցչուհի Տիկին
Հուլիսիմէ Բարեբոյցեան) :

Ս. Գր. Լուսաւորիչ Եկեզեյին
տակաւին չէ կազմակերպած իր Ե-
րիտասարդաց Միութիւնը : Մա-
սամբ անոր տեղը կը բռնէ Դըպ-
րաց Դասը, որ երեսուն տարուան
պատմութիւն ունի : Ներկայիս ու-
նի 63 անդամներ (28 տրական, 35
լեզական), որոնք փորձառու գրպ-
րացեա Տիար Գաբրիէլ Մաճառ-
եանի գեկաժարութեամբ կ'երզեն
Ս. Պատարագի երզեցողութիւննե-
րը : Աւագ զոլիւրները կը մասնակ-
ցին նաև Մկրտութեան, Պսակի և
Մեսեթաթի արարողութիւննե-
րուն : Տիար Գ. Մաճառեան 16 տա-
րիէ ի վեր կը վարէ իր պաշտօնը
նախանձախնդիր կերպով : Իր ծա-
սայութիւնը տկամայ ընդհատած
է 1946-1947, կարճ շրջան մը :



ԴՊՐԱՅ ԴԱՍ

Տիար Գաբրիէլ Մաճառեան՝ Դպրապետ (նստած՝ իովիւրին բով)

Վերջերս զօրոց զասը հիւրընկալեց թրոյի Ս. Պետրոս Եկեղեցւոյ զպիւրները, որոնց հետ Ս. Պատարազի Երզնցոյութիւնը միասնաբար կատարելէ վերջ, օրը անցուց հաճելի զաշտպանացութեամբ մը

հիւրերուն հետ ընկերակցարար: Եկեղեցւոյ բազմաշխատաւորն է Տիար Մարտիրոս Խաթունակեան որ կը բնակի Նիւ Ճրրզի, և հաւատարմարար ու նուիրումով կ'աշխատի:

Բ.

Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ, ՆԻԽ ԵՈՐՔ

Նիւ Եորքի կեդրոնական մասին, այսինքն Մէնհէթընի գարգացումը եղած է հարուէն զէպի հիւսիս: Այնպէս որ ներկայիս իբր ԸՎԹԹ առն ճանչցուած մասը համեմատարար աւելի նոր է քան Տաուն թաունը: Առաջին համաշխարհային պատերազմէն առաջ Մէնհէթըն հաստատուող Հայերը կը բնակէին ներկայիս Տաուն թաուն համարուող մասին մէջ. անոնք՝ ինչպէս տեսնք, կանուխէն կազմակերպուած էին իբր Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի:

Առաջին պատերազմէն վերջ Նիւ Եորք Եկոյ Հայ գաղթականներ նկատելիօրէն խաչօր թիւերով կը հաստատուին ԸՎԹԹ առնի շրջանին մէջ: 1925-ին այնքան շտապած կ'ըլլան այս շրջանի Հայ ընտա-

նիքները, որ կը սկսին առանձին թաղային Եկեղեցի մը ունենալու մասին մտածել: Այս փափաքը զօրանալով՝ 1926-ի աշնան կը կազմուի Յանձնախումբ մը, վարձու կամ ծախու շէնք մը ձեռք ձգելու համար: Այդ Յանձնախումբը կազմուած կ'ըլլայ հետեւեալներէն.— Տեարք՝ Տօքր. Կարապետ Եղիաեան (տաննապետ), Մկրտիչ Թօփալեան (տաննապետ), Երուանդ Մալեան (փոխ-տաննապետ), Կարապետ Հարեց (գանձապահ), Յովհան Կարապետեան, Գր. Հ. Գալուստեան և Արտաւազդ Գուլումեան (խորհրդականներ):

Այս Յանձնախումբը առաջին անգամ ի տարձէ մը վերջ, կը զբտնէ 187-րդ Փոսթըի վրայ Լուտե-



Ս. ԽԱԶ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐԱՆՔ

րական եկեղեցի մը, ծախու: Գնման որոշում կը արուի եւ Տառն Թառնի (30-րդ Փողոցի) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիի Հոգարարձութեան եւ հովիւ Տ. Յարութիւն Ա. Քինյ. Սարգիսեանի հետ զործակցարար, առաջին ասթիւ 2,000 տուրքի չափ դրամ կը խնայուի այս նպատակով: Կը կազմուի Գնման Յանձնախումբ մը, բաղկացած յիշեալ Հոգարարձութեանէն եւ հովիւէն, ինչպէս նաեւ Յովիսննէս Տօնէլեանէ եւ Ոսկան Յարութիւնեանէ, որոնց անխոնջ ջանքերը մի քանի տարիէն սահմանուած էին յաջողութեամբ պատկուելու: 1928-ի վերջերը կը կազմուի նաեւ Հանրանակիչ Յանձնախումբ մը:

Այդ Կեդրոնական Վարչութիւնը իր հաւանութիւնը կուտայ զընման: Ժողովուրդին կը զրկուի յայտարարութիւն եւ առաջին ասթիւ գնուելիք եկեղեցիին մէջ Ս. Ծննդեան տօնին պատարագ կը մատուցուի 1929 Յունուար 6-ին: Յետ այնու եկեղեցին պիտի կոչուէր Ս. Խաչ Հայաստանեայց Եկեղեցի:

Նոյն տան Կեդրոնական Վարչութեան որոշումով Ս. Խաչ Եկեղեցիին համար կը կազմուի առաջին Հոգարարձութիւնը՝ հաւեալ կազմով.— Տեաք Գալեգին Գալէնտէրեան (ատենապետ), Տոքթ. Ս. Այվազեան (փոխ-ատենապետ), Նշան Մաղաքեան (ա-



ԵՐԵՄՓՈՆԱՆՆԵՐ

Ա. շարք՝ Տեափ Լեօն Արսլանեան. Տաք. երեսնոց Հեքեան: Բ. շարք՝ Տեափ
Գեարց Դանիէլեան, Յարութիւն Թաղոսեան. Տաք. Կիւլեզ Կիւլեզեան:

տեղնադպր), Գալիք Ադամեան (փոխ-ատեղնադպր), Ոսկան Յարուքիւնեան (գանձապահ), Սարգիս Հ. Տէմիրեան, Յարուքիւն Արուքեան, Յարուքիւն Խանփաշեան և Յովհաննէս Տօնէլեան: Հարարածութիւնը իր ստաջին ժողովը կը զուժարէ 1929 Յունուար 11-ին, նախադատութեամբ անգրանիկ հովիւ Տ. Յարուքիւն Ա. Բինյ. Սարգիսեանի:

Ս. Խաչ Եկեղեցոյ շէնքին ընդհանուր արժէքը կը լինի 44,500 տոլար: Այս զուժարը կը վճարուի մաս առ մաս և 1943-ին վերջնականապէս կը փակուի պարտքը: Պարտոյ բարձման դժուարին

դորձը ի զլուխ կը հանուի թանկագին աջակցութեամբը պարտոյ բարձման գանձապետ Տիար Հայկ Գալուզեանի որ նիւթական հասոյթ գոյացնելու միջոցներ կը ստեղծէ տարիներու ընթացքին, անխոնջ ու խմատուն նուիրումով:

Եկեղեցոյ օծումը կը կատարուի 1937 Մայիս 17-ին, ձեռամբ Հայրապետական Նուիրակ Տ. Գալիքի Արք. Յովսէփեանի: Հանգիստուր այս արարողութեան կը մասնակցին Տ. Յովսէփ Եպս. Կարապետեան, Տ. Եղիշէ վրդ. Սիմոնեան ու Տ. Ընձակ Ա. Բինյ. Գալանեան:



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեարժ Սամուէլ Բուտեան՝ գանձապահ, ձորն Պաշեան՝ ատեղնապետ, Տ. Եղիշէ վրդ. Սիմոնեան՝ հովիւ, Տեարժ Սմբատ վարդապետեան՝ փոխ ատեղնապետ, Յարուքիւն Թադոսեան՝ կանգնած՝ Տեարժ Օննիկ Քէշիշեան, Հայկ ձեփակիրեան, ձիարայիլ Յարուքիւնեան՝ Խառնակալ, Խառըրս ձօպուլեան, Բարսեղ Ալլաիվերտեան, Բիւզանջ Պալայեան՝ ատեղնադպր, Հէրի Հանքեան:

Ս. Խաչ Եկեղեցւոյ շէնքը թէև վտօքը, սակայն օժտուած է շատ մը յարմարութիւններով: Եկեղեցին իր վերնատունով միասին կրնայ նստեցնել մօտ երեք հարելը անձ: Ներքեւը ունի սրահ ու խոհանոց. եկեղեցւոյ մուտքի դրան մօտ կայ վտօք խորհրդարան մը: Իսկ շէնքին կից է երկյարկանի Երեցատունը, որու գեանայարկին վրայ է Հայ դպրոցի դասարանը, Դպրատոյ Դասի ղեկատուարման սենեակը, քարտուղարի գրասենեակը և վտօքը զաւելթ մը սրմէ կարելի է մտնել եկեղեցւոյ աւանդատունը: Երկրորդ յարկին վրայ հովիւի բնակութեան յատուկ սենեակներէն զատ կայ ժողովարան մը ուր կը պահուին հայերէն հատարներու գրադարաններ:

Ամբողջ շէնքը ներկայիս կ'արժէ 60,000 տարար:

Ս. Խաչ Եկեղեցին իր աստջին հողարարձութեան կազմութենէն ի վեր ունեցած է երեք հողեր հովիւներ, մօտ քսան տարւան շրջանի մը մէջ անընդհատ:

Անդրանիկ հովիւն է եղած եկեղեցւոյ շիմնադիրներէն Տ. Յարութիւն Ա. Քիւնյ. Սարգիսեան, որ ամենէն անձուկ ժամանակաշրջանի մը կրցած է ի վրուի հանել այս եկեղեցւոյ կազմութեան գործը, և արժանացած է Ըփթառնի Հայութեան սիրոյն: Սակայն հողիւ երկուքուկէս տարի ծառայելէ վերջ, իր յոգնած մարմինը կ'ընկճուի հիւանդութեամբ ու ասանով ամիս աստուայելէ

Ետ յանկողնի, կը վախճանի 1932 Փետրուարին:

Երկրորդ հովիւն է Տ. Յովսէփ Եպիսկոպոս Կարապետեան որ նախորդին երկարատեւ հիւանդութեան շրջանին առժամաբար հովուելէ վերջ, անոր վախճանումին վրայ կ'ընտրուի հովիւ 1932-ին: 1932 Յուլիս 28-ին իրը Ամերիկահայ Թեմի պատգամաւոր կը մեկնի Էջմիածին, ուր նորընտիր Տ. Խորէն Ա. Կաթողիկոսէն կը ստանայ Եպիսկոպոսական օժուժ 1932 Նոյ. 27-ին: Դուրեան Սրբազանի սպանութեան ահուելի ոճիրէն խորապէս աղքատած, Տ. Յովսէփ Սրբազան կը հրաժարի իր պաշտօնէն և ասին մը կը մնայ արտասահման:

1934 Մարտ 3-էն ի վեր Ս. Խաչ Եկեղեցւոյ ընտրեալ հովիւն է Հոգ. Տ. Եղիշէ վրդ. Սիմոնեան, որ իրը ուսանող Ամերիկա դալէ վերջ, ձեռնադրուած է Նիւ Եորքի մէջ և 13 տարիէ ի վեր կը հովուէ այս եկեղեցին:

Ներկայիս Ս. Խաչ Եկեղեցին ունի տւելի քան 900 անդամներ: Ասոցմէ կարելուր մաս մը կը բնակի եկեղեցւոյ անմիջական շրջակայքին մէջ (Ուաշինկթըն Հայթիս). մեծ խումբ մը կը բնակի Պրահքո, ուրիշներ Լծիկ Այլընա և այլուր: Մեծամասնութիւնը Սերաստացի, Էվէրէկցի և Ֆէնէսէցի են:

Եկեղեցւոյ Հողարարձութիւնը ունի 11 անդամներ: Իր հերթական



ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻՎՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Երմոնէ Հալընեան (վախճանած), Կուարդ Մալեան՝ ատենապետ, Հովիւ, Ալաւնի Թադոսեան՝ պատուոյ ատենապետ, Արտւմ Սրապեան: Կանգնած՝ Տիկնայք Երանուհի Պարսամեան՝ ատենադպիր, Ռոզ Զուգարզեան, Աստղիկ Քէշիսեան՝ գանձապահ, Ալաւնի Տէր Գեորգեան, Սարգիսի Հիկերեան:

Ժողովները կը գումարէ երկցտանն գրասենեակին մէջ ամէն Երեքշաբթի զիշէր: Ամասուան երկու ամիսներուն նիստերը կը գումարուին երկու շաբաթն անգամ մը: Յաճախ խստն Ժողովներ կը գումարուին Եկեղեցւոյ միւս մարմիններուն հետ միասնաբար, երկցտանն գրադարանի սրահին մէջ:

Ս. Խաչ Եկեղեցւոյ Տիկնանց Կիւղեցասիրաց Միութիւնը կազմուած է 1931-ին, ատենապետու-

թեամբ Տիկին Զապէլ Երկանեանի: Միութիւնը Եկեղեցւոյ պարտուց բարձման գործին մէջ մեծ աշխատանք կատարած է, առնէ առն հանգանակութեան գործին մղում տալով: Ամէն ամիս կուսնեան զատախօսական և քնկերական ժողովներ և ճաշկերոյթներ Եկեղեցւոյ սրահին մէջ, և զարկ կուտան կրթական գործին: Եկեղեցւոյ ձեռնարկներուն մէջ աշխատանքի մեծ բաժին կը ստանձնեն:

Հովին ու օղնականը փոխն ի փոխ
կը հսկեն դպրոցին :

Ս. Խաչ Հայ վարժարանը կը
գործէ Տիկնանց Միութեան խնամ-
քին ներքև : Տասնմէկ տարիներէ
ի վեր ուսուցչուհին է Տիկին վար-
դանուշ Փապունեան, որ հասցու-
ցած է շատ մը շրջանաւարաներ :
Ծախքերը կը հոգացուին ոչա-
կերաներու ամսավճարներով և
Կիրակի օրեր եկեղեցւոյ դաւիթը
գրուած պնակէն գոյացած հա-
սոյթներով : Նախկին ուսուցչու-
հիներ Էզած Լն յաջորդարար Օր.
Թագուհի Պոյանեան, Տիկին Ա.
Խաչմանեան, Տիար Գ. Գեղորեան

և Տիկին Աղանի Նիկողոսեան :
Վերջնայս ուսուցչութեան օրով
դպրոցը տուած է իր անդրանիկ
շրջանաւարանները, 1935-ին և
1936-ին :

Դաստանդութիւնները տեղի
կ'ունենան Երկուշաբթի, Զորեք-
շաբթի և Ուրբաթ օրեր ժամը
3-էն 6. ներկայիս աշակերտներու
թիւն է 41 : 1948 Յունիսին դպրո-
ցը տուա Տ շրջանաւարաներ (7
աղջիկ և 1 մանչ) :

Ս. Խաչ Եկեղեցւոյ Երիտասար-
դաց Կազմակերպութիւնը հիմնը-
ւած է 1946-ին և կը գործէ իր



ՀՈՒ ԳՐՕՍ ԼԻԿԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Ազգայն վարդապետեան՝ գանձապահ, Ալիս Կիլիզեան՝ ատե-
նապետ, Հովի. Տիկնայք Զապէլ Մեարոպեան՝ ատենադպիր, Մարգրիտ Զարուբեան՝
քորակցուրեան քարտուգար : Կանգնած՝ Տիկնայք Եղա Տէր Գեղորեան, Երեք Թաւ-
հան, Աննէր Թուրուեան : Կը բացակային՝ Տիկնայք Ալիս Պաշեան, Էլիզապէր Պոս-
քանեան՝ փոխ ատենապետ :



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիար Ներսէս Ներսէսեան՝ Գպրապետ (տաւի շարք՝ մէջտեղ): Մեներգիչներ՝ Տիկին Տօրօրի Օջի. Օր. Մէրի Օհանեան (երրորդ շարք, աջէն Գ. և Բ.), Տիար Յովհաննէս Ետրդանեան (տաւի շարք՝ աջ ծայր): Օրկլընիսթ՝ Օր. Արմինէ Պաղտասարեան (նստած երկրորդ շարք՝ ձախէն երկրորդ): Խնկարկուններ՝ Ճորն Մէլէնեան (տաւի շարք՝ ձախ ծայր), Գասպար Գասպարեան (նստած՝ ձախէն երկրորդ): Վարչութեան գանձապահ՝ Օր. Ստաա Գարրիէլեան (երրորդ շարք՝ ձախէն երրորդ): Կը բացակային՝ Տիար Լեւոն Ալեխանեան՝ մեներգիչ, Տիար Գրիգոր Արկ. Գալուստեան՝ տղայնի սպառարկող:

մասնաճիւղ վիճակային (national) նկարագիր ունեցող Ա. Հ. Ե. Ե. Կ. ի (A. C. Y. O. A.): Երիտասարդաց խումբը իր պարբերական հասարակութիւնը կ'ունենայ եկեղեցւոյ սրահին մէջ Ռեքրամթ Երեկոներ. վարչութեան առնչական է Տիար Ճէք Միսնեան: Անդամներէն Տիար Հայկ Սրապեան խորհրդական է Միութեան Կեդրոնական Վարչութեան մէջ:

Այս խումբէն գառ, աւելի զնոսաներէ կազմուած են երկու մարմիններ, Holy Cross Seniors և Holy Cross Juniors անուններով: Առաջինին մէջ կան 35 անդամներ 15-էն 17 տարեկաններէ բաղկացած. երկրորդին տարիքի սահմանն է 12-14 և ունի 40 անդամներ: Երկուքն ալ պատասխանատու վարիչներու հսկողութեան տակ կը զուժարեն իրենց ընկերա-

կան հասարայինները շարժումն ընթացքին, երեկոները: Junior-ներու վարիչն է Յակոբ Գազան-նեան, իսկ Seniorներունը՝ Միլուս Տառըրեան:

Ս. Սաչ Եկեղեցին չորս տարի է ի վեր կը հրատարակէ լրատու շաբաթաթերթիկ մը, ՁՈՒՍՐԹ-ՆՈՅ անունով: Թերթը հիմնուած է 1929 Սեպտեմբերին, իրը կիսամսեայ, եւ այդ իրը ամսաթերթ, խմբագրութեամբ Եկեղեցւոյ այն ատենուան քարտուղար Տիար Սարգիս Մ. Մոցիկեանի: Երկրայիս կը հրատարակուի չորս էջով, եւ ընթերցողներուն կը հազրդէ Ս. Սաչ Եկեղեցւոյ կեան-

քէն լուրեր, կ'ընէ կարեւոր ձեռնարկներու ծանուցումներ, ու երբեմն ալ անհական օրերու մասին կուտայ տեղեկութիւն: Ունի անդլերէնի բաժին մը, որու պատասխանատուն է Տիար Ն. ձօպուլեան: Թերթիկը կը խմբագրուի հովիւին եւ օգնականին աշխատանքով, եւ ունի 1200 բաժանորդ, Նիւ Եորքարեակ կամ գրեցի:

Այս ասիլու կ'արժէ յիշել որ Եկեղեցւոյ հաստատման տասնամեակին ասիլու, 1939-ին հրատարակուած է աւելի քան հարիւր էջնոց զիբք մը որուն առաջին մասին մէջ ընդարձակ տեղեկութիւններ արուած են Եկեղեցւոյ պատ-



ԵԿԵՂ. ԵՐԻՏ. ԿԱՅՄԱԿԵՐՊՈՒԹԻՆ

վարչութեան ատենակախ՝ Տիար ձե՛ք Միլոնան (Ս. արք, ձախէն երրորդ)

մութեան և գանազան մարմիններու կազմութեան ու զործունէութեան մասին. նոյն գիրքը կը պարունակէ նաև այլ տարուան անդամներուն ցանկը: Իսկ 1945-ին, պարտամուրճակի հրկիզման տոնոխմբութեան առթիւ գրքոյի մը ևս հրատարակուած է Յուշագիրք անունով, որ հայերէն ու անգլերէն բաժիններով կը պատկերացնէ Եկեղեցւոյ կայսութիւնը ամէն տասակէտով և կուտայ Եկեղեցւոյ անդամներէն երկրորդ համալիրահային պատերազմին մասնակցողներուն անուանացանկը: Այս յօդուածի պատրաստութեան առթիւ օգտուած ենք Յուշագիրքէն:

Ս. Խաչ Եկեղեցւոյ պատմութեան մէջ ցաւալի էջ մըն է Աւաջ-

նորդ Տ. Ղևոնդ Դուրեան Սըրբազանի սղանութիւնը 1933 Դեկտեմբեր 25-ի առաւուն: Նահատակ Սըրբազանին մարմինը 1937-էն ի վեր կը հանդէլ տւանդատան կից մասնաւոր դամբարանի մը մէջ, փայելուչ շիրմաքարի մը ներքև: Կիրակի օրեր խունկն ու մտք անպակաս են այնտեղ, հաւատարիմ այցելուներու կողմէ իրրև ուխտի նուէր:

Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ՝ հաստատուած են ի վեր մինչև 1948 Նոյ. 15 կատարուած են՝

ՏՅՏ Մկրտութիւններ,

436 Պատկազրութիւններ,

423 Յուզարկաւորութիւններ:



ՆԻԱԿԱՐԱ ՖՈԼԶԻ ՀԱՄԱՅՆՔ

Նիւ Եորք Նահանգի Հիւսիս արեւմտեան ծայրը, Գանատայի սահմանակից քաղաք մըն է Նիւիարա Ֆոլզ, 80,000 բնակչութեամբ եւ Նիւ Եորքէն 390 մղոն հեռու: Իր անուանը կ'ստնէ համաուսուր ջրվէժէն որ քաղաքին մօտն է: Գանատայի հետ կնքուած դաշինքի մը համաձայն, երկու երկիրներն ալ կը հսկեն ջրվէժը յատկացնող գետի ջուրի քանակութեան վրայ, հոգ տանելով որ չպակուի ան, որպէսզի ջրվէժը չի գրկուի իր զեղազտական արժէքէն: Ամերիկացի ամենէն աւելի զրօտաշրջիկ ընդունող տեղն է այս ջրվէժը (տարին 2 միլիոն): Ամերիկացիք ջրվէժը կ'օգտագործեն հիդրակէկտրակայանի մը համար որ կէս միլիոն ձիու ուժ կ'արտադրէ եւ Նիւ Եորք Նահանգի բնակչութեան կէսին կը բաւարարէ: Գաղաքին մէջ կան ելեկտրո-մետաղադորձական եւ ելեկտրո-քիմիական գործարաններ, ուր կը շինուին թուղթ, քիմիական քաղաղութիւններ եւ երկաթախտան մետաղներ: Գաղաքը ունի Հոսմէական կաթնոյիկ համալսարան մը:

Նիւիարա Ֆոլզի մէջ կ'ստրին մի քանի հարիւր Հայեր, որոնք մեծ մասամբ կ'աշխատին գործարաններու մէջ. կան փոքր թուով ճաշարանատէրեր: Այս գաղութը երկար տանն մնացած է անհովիւ ու սուսնց եկեղեցիի, վստահելով պատահական աջակութեանց, Հայ հոգեւորականներու կողմէ:

1945-ի Մարտին Առաջնորդ Տ. Տիրան Եպո. (այն տունն Վարդապետ) կ'աջցելէ Նիւիարա Ֆոլզի Հայութեան եւ քննելէ վերջ տեղւոյն կացութիւնը, կը նշանակէ եկեղեցւոյ Ծինութեան Յանձնարարութիւն մը, որ միեւնոյն տանն պիտի գործէր իրր հոգարարձական

մարմին. հետեւեալները կ'ըլլան անդամները այդ մարմնին.

Տեաքի Պետրոս Ղազարեան, Փոլ Ղուկասեան, Խոսրով Թուրիկեան, Եղուարդ Մուրախեան, Լեւոն Տէրտէրեան, Սահակ Տոստուրեան, Ճան Գոշեան, Միքայէլ Գրիգորեան եւ Գարեգին Սարգիսեան:

Նոյն տարուան Հոկտեմբերին այս մարմինը ժողով կը զուգարէ նախադասութեամբ Առաջնորդարանի ներկայացուցիչ Տ. Զգօն Մ. Վրդ. Յակոբեանի եւ կ'ընտրէ իր գիւտնր ըստ հետեւեալին.

Տիար Պետրոս Ղազարեան (Պատուոյ ատենապետ),



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Ա. շարք՝ Տիար Լեւոն Տէրտէրեան՝ գանձապահ, Գարեգին Սարգիսեան՝ ատենադպիր, Եղուարդ Մուրատեան՝ ատենապետ, Միխայել Գրիգորեան՝ փոխ ատենապետ: Բ. շարք՝ Տիար Զովհաննէս Բաբեան, Փոլ Գուկասեան, Խորսով Թուրքիեան, Սահակ Տոստուեան:

Տիար Եղուարդ Մուրատեան (ատենապետ),

Տիար Միխայել Գրիգորեան (փոխատենապետ),

Տիար Լեւոն Տէրտէրեան (գանձապահ),

Տիար Գարեգին Սարգիսեան (ատենադպիր):

Յանձնախումբը անմիջապէս կը ձեռնարկէ հանդանոցաւթեան, ե-

կեղեցի եւ համալիրի սրահ մը շինելու մտադրութեամբ: Առաջին ասիլու իսկ կը հաւաքուի 16,000 տարբար: Անկէ ասպին Յանձնախումբը պարբերաբար կը զուժարէ իր ժողովները եւ կարեւոր որոշումներ առած է ու միջոցներ ձեռք առած, փութացնելու համար շինութեան գործը: Միեւնոյն ատեն յաճախակի դարձուցած է պատարազի մատուցումը, հրատարակելով զուրաճն եկեղեցական-

ներ․ բան մը որ նախապէս տարին
հազիւ մէկ անգամ կը պատահէր :

Այս տարուան (1948) Ապրիլին
Յանձնախումբը կը դնէ հոլ մը,
որուն յարմարութիւնը քննուած
էր անգամական ժողովի մը մէջ,
անցեալ տարուան Նոյեմբերին
երբ Առաջնորդ Տ․ Տիրան Եպիս-
կոպոս Նիսիարա Պոլլէ կէտս յատ-
կապէս այդ խնդրին համար : Նոյն
առթիւ Առաջնորդը տեսակցեցաւ
տեղւոյն ճարտարապետներէն մէ-
կուն հետ, որ կառուցուելիք եկե-
ղեցւոյն յատկապէսները պատ-
րաստած էր : Պէտք եղած բարե-
փոխումները թելադրեց անոր, ու
այժմ վերջնական ձևը արժանա-
ցած է իր հաւանութեան :

Ներկայիս Նիսիարա Պոլլի Հայ
զաղութը չունի Եկեղեցատէր Ե-
րիտասարդաց Կազմակերպու-
թիւնն . Հոգարարձական մարմինը
կը ջանայ երիտասարդներուն օ-
ժանդակութիւնը ապահովել իր
գործունէութեան մէջ : Եկեղեցա-
տէր Տիկիանց Միութեան տեղ կայ
Մայրերու Ակումբ մը որ օգտա-
կար կը լինի : Կը ծրարուի հաս-
տատել հայերէնի գտարնթացք մը :

Նիսիարա Պոլլի Հայութեան
քոյր համայնք մըն է Պըֆըլսի
Վոքըրթիլի Հայութիւնը որ կը սա-
տարէ եկեղեցաշինութեան այս
գործին . Պըֆըլսի ներկայացու-
ցիչն է Տիար Չարլզ Մարգարեան,
որ կը մասնակցի վերոյիշեալ
յանձնախումբի գործունէութեան :




Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ, ՓԷԹԵՐՍՈՆ

Նիւ ձըրզի նահանգին հիւսիս արեւելեան կողմը քաղաք մըն է Փէթըրսըն, Նիւ Եորքէն 17 մղոն հիւսիս արեւմուտք: Ունի մօտ 150,000 բնակիչ: Նշանաւոր է իրր մե-
տաքսի ճարտարարուեստի կեդրոն: Դուրսէն Ամերիկա ներածուող մետաքսին 75 առ
100-ը այսակզ կը ներկուի: Կ'արտադրէ նաև հիւսուած կղզիի մեքենաներ, ընդծովեայ
թիւեր, օդանաւի շարժիչներ և արանց շտաբիկներ: Ասիէ վար մը առաջ Փէթըրսընի
մէջ կը շինուէին Միացեալ Նահանգաց, Մեքսիկայի և Հարաւային Ամերիկայի շոգե-
կատարուն վայրաշարժները:

Փէթըրսընի Հայ դաղուծը (այ-
ժըմ մօտ 700) Ամերիկահայ ամե-
նահին դաղուծիւնրէն մէկն է:
1898-ին արդէն եկեղեցական ա-
րարողութիւն կը կատարուի եղեր.
1900-ին կը կազմուի առաջին Հո-
գարարձուծիւնը: Այդ շրջանին
հովուական այցելութիւն ըրած է
Յովսէփ Եպս. Սարաւեան, Ամե-
րիկահայոց առաջին Առաջնորդը:
Սպանո-Ամերիկեան պատերազմին
(1898) Փէթըրսընի Հայերէն 7 հո-
գի կը մասնակցին ու պատուով կը
վերադառնան:

Ներկայիս Փէթըրսընի Հայու-
ծիւնը իր մէջ կը հաշուէ Թրքա-
հայաստանի ու Հիւսիսային Միւ-
րիոյ շատ մը շրջաններէն եկած
Հայեր. Տիգրանահեթոցիներ, Սար-
բերբեղցիներ, Մարաշցիներ,
Սուէաիացիներ, Բալուցիներ, Ա-
րարկիրցիներ, Բէնասպցիներ:

Սեփական Եկեղեցի ունենալու
նախաձեռնարկ եղած է 1934 տար-
ուան Հոգարարձուծիւնը, որ կը
բաղկանար հետեւեալներէն.—
Տեարք Սեդրակ Անէմեան, Սիսակ
Նալպանտեան, Ալեք Ֆիլեան, Ա-
լեք Վրքանէսեան, Միհրան Նու-
րիկեան, Թուխման Պագալեան,
Յակոբ Գափափեան, և և Տիկնայք
Մ. Սողոմոնեան ու Խանըմ Շա-
հիմեան: Այս մարմնի կողքին կը
կազմուի Գնման Յանձնախումբ մը
հետեւեալներէն. Տեարք Փոլ Տիշ-
եան, Հայկ Տիշեան, Միհրան Նու-
րիկեան, Սեդրակ Անէմեան և և
Տիկ. Վարդուհի Մարուքեան:
Բարերարները կը լինին Տեարք
Միհրան և Երուանդ Բիւրքեան
Եղբայրներ, Տիգրան Է. Մանուկ
Տիշեան Եղբայրներ, Յարուքիւն
Սողիկեան, Տիգրան Պէշկէօրիւր-
եան և և Միսաք Թիւֆէնգեան:
Նոյնպէս Կանանց Եկեղեցատիրաց



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Միերան ձերահեան, Միերան նուրիկեան՝ առեւտրայիբ, Յովհաննէս Գ. Պժեան՝ առեւտրայիտ, Արմենակ Մարտիրոսեան՝ գանձապահ, Յովսէփ Թաւեան: Բ. շարք՝ Տեաք Թուխմեան Պագալեան, Լեւոն Պագալեան, Զաւէն Մարտիրեան:

Միւթիւնը և Տիկին վարդուհի Պագալեան:

Շէնքը, որ նախապէս եղիսկ. Եկեղեցի մըն է եղած, կը զնուի 1934 Փետրուարին 6,000 տալարի: Նորոգութեան համար կը ծախսուի 7,000 տալարէն աւելի: Շէնքին ներսը աւելի հրապուրիչ է քան արտաքին տեսքը. պատահանները զուտուր սպակիով շինուած են, և Հայ սուրբերու նկարներ կը ձեւացնեն: Կրնայ նստեցնել 350 հոգի: Եկեղեցին ներկայիս կ'արժէ 25,000 տալար:

Եկեղեցւոյ օծումը կատարած է Առաջնորդ Տ. Դարեգլին Արք. Յովսէփեանց 1938 Յունիսին: Կը կուգուի Սրբոց Դեանդեանց Եկեղեցի: Արարողութեան մասնակցած են Տ. Մամբրէ Եպս. Գալփայեան, Տ. Յովսէփ Եպս. Կարապետեան և Տ. Գեբեքիկ վրդ. փոյառեան:

Եկեղեցւոյ հովիտները եղած են Տ. Յովհ. Բիհյ. Գալուզեան (1935-1936), Տ. Մամբրէ Եպս. Գալփայեան (1937-1941) և Տ. վահան Բիհյ. Ճէլալեան (1941-1947): Տարի մը անհովիտ մնալէ



ԵԿԵՂԵՅԱԱՆԻՐ ՏԻՆՆԷՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ փայլածու վահան-
եան, Աննա Տէր Պօղոսեան: Կանգնած՝
Տիկնայ Արեգ ձերպեան, Տիգրանուհի
Նազաւեան, Նազի ժամկոչեան:

Վերջ, այժմ Ս. Ղևոնդեանց Ե-
կեղեցին ունեցած է իր մնայուն

Նախը՝ յունձին Տ. Շնորհի վարդ.
Գալուստեանի որ ժամանկ 1948
Նայեմբերին:

Ներկայիս Ս. Ղևոնդեանց Եկե-
ղեցոյ զարծօն անդամներու թիւը
80 է:

Եկղց. Տիկնանց Միութիւնը
կազմուած է 1928-ին: Կը զուժարէ
անդամական ժողովներ, եկեղեց-
ւոյ նիւթական մատակարարու-
թեան համար կը սարքէ պողպար եւ
ճաշկերպութիւն ու կ'օգնէ եկեղեցւոյ
կարիքներուն:

Եկեղեցւոյ Դպրաց Դասը կազ-
մուած է 1934-ին Սարկուազ Սի-
սակ Նարչանտեանի ղեկավարու-
թեամբ: Ներկայիս ունի 8 իրական
եւ 6 արական անդամներ:



ԴՊՐԱՅ ԴԱՍ Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՅ ԵԿԵՂԵՅՈՒՅ

Կանոնադրարար Հայերէն դաստանդութիւն կատարուած է 1935-էն մինչև 1943. աշակերտութեան պակսելուն հետևանքով առ այժմ փակ կը մնայ զպրօքը:

Ս. Ղևոնդեանց Եկեղեցւոյ Երևանփոսնն է Տիար Սահակ Աւե-

տիսեան, որուն անձնափոխանորդին է Տիար Մովսէս Խաչիկեան:

Նոր հովիւին՝ Տ. Շնորհ վրդ. Գալուստեանի ջանքով վերաբացուած է գրպօքը 1949-ի գարնան, յատկապէս անգլիախօս երիտասարդութեան համար: Կազմուած է նաև կիրակներեայ վարժարան: 1949 Յունիսին սոյն եկեղեցին տօնեց իր գնման 15-ամեակը մեծ հանդէսով: (Ն. Կ.)



Ս. ՂԵՆՈՆԳԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻ



ՖԻԼԱԴԵԼՖԻԱ, ՓԷՆՍԻԼՎԵՆԻԱ

Միացեալ Նահանգաց Էրբոյզ մեծագոյն քաղաքն է աւելի քան 2 միլիոն ընտել-
չութեամբ: Հիմնուած է 1682-ին Ուիլիքմ ֆէյնի եւ իրեն ընկերացոյզ զաղթականներու
կողմէ, իրբ ապաստան խցճի պատմութեան համար հարաւուոյ մարզոց: Անունը բաղ-
կացած է յունարէն երկու բառերէ որոնք կը նշանակեն եղբայրակամ սէր: Այս անունը
ընտրուցին ի մտի ունէլին Յայնուսթեան Գրքին մէջ (Գլ. Գ. 7) յիշուած Ֆիլատէլֆիան,
որ փոքր Ասիոյ եօթ եկեղեցիներէն մէկն էր Բ. դարուն:

Ֆիլատէլֆիա նիւ Եւրօպէն ՅՅ մղոն հեռու է զէպի հարու արեւմուտք. կը զանուի
նիւ ճրբղի եւ ֆէնսիլվէնիա Նահանգներու սահմանին վրայ: Միացեալ Նահանգաց
մայրաքաղաք կ'ըստ է երկրին պատմութեան բախտորոշ շրջանին՝ 1781-1800: Քաղա-
քին ամենէն համբաւուար յիշատակարանը Անկախութեան Արահն է, ուր այժմ կը
պահուի Ապատմութեան խոշոր Չանդակը, որ 1825-ին ճախած է:

Ուիլիքմ ֆէյն Էրբ սկսու շինել այս քաղաքը, մտայրած էր ստեղծել լայն ու ծա-
տուէա պողոտաներով ու հրապարակներով ստան մը, ուր ամէն տուն փոքր մարդա-
զեանի մը կեդրոնը կանդած պիտի ըլլար: Իր յաջորդները չյարգեցին այդ ճրբղիբը.
19-րդ դարուն մանուսնոյ զարկ արքած է շինելու ալիւսէ բաղմաթիւ տուներ, որոնք
իրարու յար եւ նման Պրայէ քով չարուած են իրար փակած, քաղաքին ամէն կողմը:
Ֆիլատէլֆիայի ամենէն ահնարա շէնքը Քաղաքապետարանն է, որ Ֆրանսական Վե-
րածնուոյի սճով կառուցուած է, քաղաքին արձեւով 25 միլիոն տարբ ու ստեղծելով
զայթակցութիւն: Շէնքը Ֆիլատէլֆիայի կեդրոնը կը կանգնէ:

Քաղաքը ունի 2.000 փոքր ու շատ մը կամուրջներ. ստեղծել սմանք իրենց աւ-
տակին մէջ ստաճին անդամն ըլլալով շինուած կամուրջներ են: Ունի 172 հանրային
պարտէզներ ու խաղաղալիք, որոնցմէ ամենէն նշանուարն է ընդարձակ Ֆիլմոնթ
Փարքը. այս փոքրին մէջ, բարձրադիր կը կանգնի Գեղարուեստի Թանգարանը, որ
յունական Պարթենոնի տաճարին եւ Ակրոպոլիսին նմանութեամբ շինուած է 20 մի-
լիոն արարով, ու բացուած 1928-ին:

Արուեստի, զխառթեան ու զրազանութեան մէջ Ֆիլատէլֆիա երկար տանն ունե-
ցած է ստաճնարդոյ զեր Ամերիկայի մէջ: Ներկայիս քաղաքի օրաթերթերէն ամենէն
ազգեցիկներն են Ինքուսայրը (հիմնուած 1829) եւ Խլմիլիկ Պոլլըրիկ (հիմնուած 1847):

Միացեալ Նահանգաց ամենահին թատերասահք Ֆիլատէլֆիայի մէջ շինուած է
1809-ին: Ունի 1,041 եկեղեցիներ, որոնք կը ներկայացնեն մեծ ու պարիկ բաղմաթիւ
զատանութիւններ. ամենամեծ խումբն է Հոսմէական Կաթոլիկներու խումբը իր 146
եկեղեցիներով: Հինոյ տարբեր յարանուանութիւններ ունին այսուկ տատուածաբանա-
կան զոբոցներ: Կան հարբւրէ աւելի հիւանդանոցներ եւ մի քանի համալսարաններ:

Ֆիլատելֆիա մեծ նուաճանդիտ մըն է 200-է աւելի նուաճատայններով, 20 մղոն տարածութեան մը վըայ:

Քաղաքին մէջ փոխադրութիւնը կը կտարտի ստորերկրեայ եւ բարձրադիր զծերու վրայ ընթացող ելեկտրական կառախութրերով, ինչպէս նաեւ զեաներես հանրահատրերով:

Զրադումներու եւ արտադրութեանց տեսակետով, Ֆիլատելֆիայի մէջ կը տիրէ ալլադանութիւն: Քաղաքին խոնար. օդը նպատատար է հիւսուածեղէնի ճարտարարուեստին համար, որ կը գլխանցնի միւս ճիւղերը. կարևոր են ուստեսեղէնի եւ համբուրի արտադրութեան զօրձերը:

ՖԻԼԱՏԵԼՖԻԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Ներկայիս Ֆիլատելֆիա բնակող Հայերու թիւը կ'ենթադրուի Տէն 10 հազար: Առաջին Հայը որ Ֆիլատելֆիա եկած է, հաւանարար Սիմոն Միլասեանն է, որ 1857-ին հասնելով այս երկիրը, կ'ուսանի բժշկութիւն եւ այնքան կը յուսաւանայ որ Քաղաքացիական Պատերազմի շրջանին Ֆիլատելֆիայի հիւանդանոցին բժշկապետ կ'ըլլայ:

1862-ին Ամերիկա եկողներէն Տիգրանտիկրացի Ասլան Սահակեան սորոս է Ֆիլատելֆիա, ուր եղած է վաճառական ու կայրուածատէր: Կ'ըսուի իրեն համար թէ քաղաքապետութեան թեկնածու եղած է: Մեհած է մեծահարուստ:

1870-ին Ֆիլատելֆիա կուզան կարնեցի Յովհաննէս Պետրոսեան ու Պրանք Դար-Մարդ (Եանըղեան): Առաջինը կը գրադի թիթեղագործութեամբ, ապա սպարակապանութեամբ ու սմենէն վերջն ալ հիւսուածեղէնի գործով: Անուներ կը փոխէ ճան Փիթըրցի եւ կ'ամուսնանայ Ամերիկուհիի մը

հետ: Նոյն ձեւով Հայութենէ կը հեռանայ ընկերը՝ Պրանք Նոր-Մարդ:

Մինչև 1890-ական թուականները Ֆիլատելֆիա եկող Հայերը մեծ մասամբ ամուրիներ են, որոնք այս երկիրին մէջ գրամ վաստակելու եւ հայրենիք վերադառնալու դադափարը կը սնուցանեն: 1895-96-ի դանդուածային ջարդերը սակայն պատճառ կ'ըլլան որ հետզհետէ աւելի մեծ թիւով ընտանիքներ գան ու հաստատուին: 1900-ին տասնեակ մը Հայ ընտանիք կը գանենք Ֆիլատելֆիայի մէջ: Առաջին պատերազմէն վերջ եկուոր Հայերու թիւը արագ թափով կ'աւելնայ:

Ներկայիս Ֆիլատելֆիայի Հայութիւնը փեր ի վերոյ կերպով կեդրոնացած է երկու շրջաններու մէջ. մին հիւսիսը, միւսը՝ արևմտեան մասին մէջ:

Հիւսիսային Ֆիլատելֆիայի Հայերը մեծ մասով Արարկիբցիներ են, իսկ արևմտեան մասին մէջ բնակողները Նոպկատցիներ:

Զրոյցմանց տեսակէամբ, Ֆիլա-
տէլֆիլայի Հայերը այլապան պատ-
կեր մը կը ներկայացնեն. կան
զերծակներ, արջուկիչներ, զորդ
մաքրողներ, հազուստ մաքրող-
ներ, հնակարկատներ, նպարավա-
ճատներ, մսագործներ, զործա-

րանի բանուսրներ, բժիշկներ և
այլն, և այլն :

Ֆիլատէլֆիլայի մէջ Առաջնոր-
դաբանի իրաւասութեան տակ կան
երկու Հայկական եկեղեցիներ, ա-
ռաջինը քաղաքին հիւսիսային մա-
սին մէջ, իսկ երկրորդը արեւմըտ-
եան մասին մէջ :

“

Ա.

Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻ

Այս եկեղեցիին շուրջ խմբուած
են Արեւմտեան Ֆիլատէլֆիլայի
Հայերը, որոնք թիւով աւելի են
Հիւսիսային մասի Հայերէն ու ա-
ւելի ամփոփ կը բնակին: Քաղա-
քին այս մասը աւելի հին ըլլալով
քան հիւսիսը, այս տեղի Հայ հա-
մայնքը երկցութեան պատիւը ի-
րասամբ կ'իրաւայնէ: Ինչպէս ը-
սինք պարուս սկիզբը մօտ տաս ըն-
տանիք կ'ապրէր ամբողջ Ֆիլա-
տէլֆիլայի մէջ: 1903-ի Յուլիս
Ա-ի Անկախութեան Տօնին առթիւ
տեղւոյն Հայերը դաշտագնացու-
թիւն մը կը ստրքեն ուր ներկայ
կ'ըլլան ամէնքը, թիւով 132 հօգի-
տանք մեծ մասամբ ամուսի գոր-
ծաւորներ են մօտակայ Քէմալըն
քաղաքի խաղախորդարանին մէջ
աշխատող:

Այլ շրջանին, Հայերը՝ ուղղա-
փառ թէ բողոքական, միասին
խստն պաշտամունք կը կատարեն
եզեր տեղական ժողովարանի մը

մէջ, և Հայ Բողոքական քարոզիչ
մը կը քարոզէ: 1903-ին Ուէսթ Հօ-
պօքընէն (Նիւ Ճըրքի) այցելու հո-
գեւարականներ երբեմն կուզան Ս.
Պատարազ մտասւցանելու: Ուս-
տըրէն ևս Առաջնորդ Յովսէփ
Եպիսկոպոս Սարաճեան կուտայ
հոգևական այցելութիւն:

Գաղութի հոգևոր պէտքերը
մտաակարարելու համար 1902-ին
կը կազմուի առաջին հոգարար-
ձութիւնը, բաղկացած հետեւեալ-
ներէն. Տէարբ Յովհաննէս եւ կա-
րապետ Օզանեան, Մարտիրոս
Կիւլոյեան, Սահակ Տէմիրբեան,
Սողոմոն Չաւուշեան, Յովսէփ Գե-
որգեան և Յակոբ Տիրատուրեան
(վերջին երկուքը Բողոքական):
Ասանցմէ Տիար Մ. Կիւլոյեանի
տիկինը, որ լաւ երաժշտացէա ե-
րած է, կը կազմէ դպրաց դաս ու
զանոնք մարզելու համար Պոլսէն
ձայնադրեալ շարական բերել կու-
տայ 1904-ին: Տիկին Կիւլոյեան

կը լինի նաև հիմնադրը եկեղեցասէր Տիկնանց Միութեան :

Օտար սրահներու մէջ ժամայաշտութիւն կատարելու այս դրութիւնը կը շարունակուի մինչև 1913, երբ Հայութիւնը բաւական շտապած ըլլալով, կը զնուի փոքրիկ եկեղեցի մը Broad և Pine փողոցներուն անկիւնը, 18,000 տարրի : Այս եկեղեցին՝ որուն անուն կը արուի Ս . Սահակ-Ս . Մեսրոպ, կը ծախուի հինց տարի վերջ 30,000 տարրի :

Մինչև 1925 կը շարունակուի նախկին գրութիւնը : Մինչ այդ, նորեկ Հայ դպրոցականներէն շատեր կը հաստատուին քաղաքին արևմտեան մասին մէջ, որ հետը-




ԵՐԵՍՓՈՍԱՆՆԵՐ

Տեաք Տիգրան Վիտայագուն, Անտոն Բէտուէրեան :

հետ կը ծառայի : 1926-ին յայտնի կը լինի որ հիւսիսի և արևմուտքի թոյլամասերու Հայերը իրար մէջ այնքան հետու են որ բոլորի՛ն համար միեւնոյն եկեղեցին յաճախելը անկարելի պիտի ըլլայ : Փոխադարձ համաձայնութեամբ կ'որոշուի երկուքի բաժնել ձիւլասէլֆիոյ Հայ համայնքը, որ պէտքի իւրաքանչիւր մաս կարենայ ունենալ իր ասանձին հոգարարութիւնն ու եկեղեցին : Աս այս, պատրաստ եղող կանխիկ զբաժը կէս առ կէս կը բաժնուի երկու քոյր համայնքներուն միջև : Այս առթիւ զապուծի անգամներէն հանդուցեալ Տիար Յովհաննէս Թեմոյեան 3,000, և Տիար Մարտիրոս Կիւլոյեան 1,400 տարրի նուիրատուութեամբ օգնած են :

Արևմտեան բաժնի Հայոց համար սեփական եկեղեցի մը զննելու գործին կը ստատարեն ձերբախեան և Բագրատունի ընտանիքն-



Ս . ՍԱՀԱԿ - Ս . ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻ ՈՒՎԵՐ ՖԻԼԱՏԵԼՅԻԱ



Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂ ԵՅԻՈՅ ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱՐԱՆԸ

ըը 5,000-ական տուրքի նուիրատուութեամբ: 1926-ին կը զնուի ներկայ շէնքը յարակից հողով, 42,000 տուրքի: Մինչև սյուսը կատարուած նորոգութեանց ծախքերով միասին արժամ է 65,000 տուրք, թէև ներկայիս շէնքն ու հողը միասին հազիւ այդ զուժարին կէտը կ'արժեն: Վերջերս կողմը ամ է Շինութեան Յանձնախումբ մը, որ մտադիր է կամ զընել յարմար եկեղեցի մը, կամ ներկայ շէնքին քովի հողը օդտադործել, եկեղեցին ընդարձակելու համար: Այս նպատակին համար կանխիկ գրամ պարտատ է 23,000 տուրք:

Ներկայ Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցին, որ օծուած է 1932-ին ձեռամբ Գեոր. Տ. Տիրայր

Արժեպիսկոպոսի, սա տաւելն 175 անձի կը բաւէ: Ժամատան աւանդատունը խորանին ետևի նեղլիկ անցքն է ուր միայն մէկ պահարան կայ պատին մէջ բացուած: Եկեղլ լին կը զբաւէ շէնքին երկրորդ յարկը: Առաջին յարկը սրահն է իր խոհանոցով. սրահին ներքեւ կը գտնուի աւելի փոքր ենթասրահ մը: Իսկ շէնքին երրորդ յարկը, ուր բարձրանալու համար անհրաժեշտ է Ժամատունէն անցնիլ, յատկացուած է հովիւի բնակութեան:

Ներկայիս Ս. Սահակ - Ս. Մեսրոպ եկեղեցւոյ տրասու անդամներու թիւն է մօտաւորապէս 200:


Արևմտեան Ֆրիստէլֆրոյ Հայ համայնքը կազմող զանազան գաւառացիներուն մէջ մեծազոյն թի-

ւր կը կազմեն Եոզրատցիները: Ապա կուզան Կեսարացիներ, Նիւթաէցիներ, Տիգրանակերացիներ:

Մինչև 1912 այս եկեղեցին իր կրօնական կեանքը ջանացած է վաստակել աշխուհու հովիտներու կատարած ժամապաշտութիւններով: Տ. Պետրոս Բինյ. վարդապետան Եղած է աստջին հովիւր (1912-1925), Տ. Խորէն վրդ. Լազարեան (1926-1928), Տ. Արսէն Բինյ. Թորոսեան (1928-1930), Տ. Վահրամ վրդ. Նազարէքեան (1931-1937), Տ. Մկրտիչ Բինյ. Մինասեան (1938-1943), Տ. Դերեմիկ վրդ. Փոլատեան (1943-1944), Տ. Ղեւոնդ վրդ. Արապ-

Լան (1944-1946): Ներկայ հովիւր՝ Տ. Մեսրոպ վրդ. Սեմէրեան կը պաշտօնավարէ 1946-էն ի վեր:

Եկեղեցաւեր Տիկմանց Մրուսիւնը կազմուած է 1910-ին, ջանիւք Տիկ. Շնորհիկ կիւրոյեանի սրկ'ատենապետէ աստջին վարչական կազմին: Նոյն կազմին մէջ ըրընկերուհիները կը լինին Տիկմայք Ովասմիա Սեդրոս, Զարուհի Զիչէֆեան, Վիքթորիա Նահիլյան, Մէրի Բարունակեան, Մէրի Թէնիլիան, Թագուհի Թէնիլիան, Ադաւանի Զարդարեան, Մաքրուհի Թփանիֆեան: Այլ աստջին տարին, Միսթիւնը կը փորձէ միտնի անուններ ինչպէս «Հոսի-



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆՆԻ

Նստած՝ Տեաք Լայկ Զիլինկիլիան՝ փոխ ատենապետ, Գրիտասատուր Զախան՝ ատենապետ, Տ. Մեսրոպ վրդ. Սեմէրեան՝ հովիւ, Տեաք Վազարոս Յովսէփեան՝ ատենադպիր, Փոլ Զարդարեան՝ գամձապահ: Կանգնած՝ Տեաք Սարգիս Էօհսիֆեան, Կէորդ Հովսէփեան՝ փոխ ատենադպիր, Վսեան Հովսէփեան, Աւետիս Ալապիլիֆեան, Յարութիւն Առաքիլեան՝ հաւուապահ:



ԵԿԵՂԵՅԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Գերբուհի Կիլիսեյան՝ ատենադպիր. Զապել Ասաբեկյան՝ ատենապետ. Հովի. Տիկնայ Գերբուհի Պառնազյան՝ փոխ ատենապետ. Մարիամ Կորյեան՝ գանձապահ: Կանգնած՝ Տիկնայ Շահանիկ Քեսաբեկյան, Անայիս Ալեանազյան, Էթեբի Խաչատրյան. Մաքրուհի Տրյատան, Ռոզա Թազուբեկյան:

սրմանց», «Գոյեաննանց», բայց ի վերջոյ կը ճանչցուի իբր Եկեղեցասէր Տիկնայ Միւթիւն: Անգամները նպատակ կ'ստեղծեն իրենց գաւակներու իբր Հայ քրիստոնեայ մեծցուիլը, ինչպէս նաև Եկեղեցական զրեւաններու պատրաստութիւնը:

Տիկնաներու զօրմունչութեան մաս կը կարգեն հիւանդաց եւ սրբուորներու ապրելութիւնները, գանազան հաստութարեր ձեռնարկներու սարքում. Եկեղեցւոյ շինութեան ի նպատակ սգնութիւն (վերջին 4 տարւան ընթացքին 8,000 տարար), ինչպէս նաև զնահասական նախարատութիւններ հովի-

ւին, Կիրակիօրեայ զպրոցի վարժաւորներուն եւ Գարաց Գասին: 1947-1948 չրջանի Եկեղեցւոյ կամ է 1,500 տարար:

Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ Կիրակիօրեայ Գարոցը հաստատուած է 1923-ի սչնան: Ատաջին տեսչութիւն կգամ է Տիկ. Ազնիւ. Նէտիւրեան: Մինչև 1934 աշակերաններու տարեկան բարձրագոյն թիւը կգամ է 150: Հետագահակ պակսերով, յանդամ է այժմ 75-ի: Ներկայիս հովիւին վերատեսչութեամբ Երևասարգ սուսցչութիւններու խումբ մը հոպ կը տանի այս զպրոցին:

Երիտասարդաց կազմակերպութիւնը կազմուած է 45 անդամներով. աղջիկները թուով աւելի են քան մանչերը: Գործունէութիւնը կը կայանայ ընկերական հասարակութիւնը սարգելու մէջ: Կ'ընեն եկեղեցոյ նիւթական օգնութիւն եւ երբեմն ունկնդիր կ'ըլլան դաստիարակութեանց:

Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Եկեղեցոյ համայնքին աւագ մտահոգութիւնը իր փոքրիկ եկեղեցին

ընդարձակ այօթատեղիով մը փոխարինելն է այժմ: Այլ ուղղութեամբ գործունէութիւն կը լինի: Վերջերս համայնքը քաջալերուած է լսելով թէ Տիար Տիգրան Թաշնեանի թեկադրութեամբ, իր աւելին՝ ձեռք Պալս Թաշնեան, իր հարստութեան եկամուտին մէկ չորրորդը կտակած է Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Եկեղեցիին. կտակը գործադրելի է իր ամուսնուն մահէն յետոյ:



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ՈՒՍՈՒՅԶԱԿԱՅՄ

'Նստած' Օր. Ազնիւ ձերբակեան՝ տեսուչ, Տ. Մեսրոպ վրդ. Թեմբեկեան՝ հովիւ, Օր. Շնորհիկ Մէլեհեան՝ աւագ ուսուցչուհի: Կանգնած՝ Օր. Նուրիցա Հովիւմազեան, Օր. Կլորիա Կիլիսեան, Տիկ. Մարգրիտ Հէլմեան:



ԴՊՐԱՅ ԴԱՍ (1946)

Տիար Սարգիս Ալեանագեան՝ Գլխավեր (նստած, ձախեն չորրորդ)

Բ.

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ

Ինչպէս յիշուած է Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ սրտամու- թեան մէջ, 1926-ին Ֆիլատել- Փիայի Հայ դպրութիւն եկեղեցա- կան տեսակէտով երկուքի կիսուե- լու հարկին տակ կը գտնուի, երբ քաղաքի արեւմտեան մասին մէջ բնակողները կը գնեն փոքր եկե- ղեցի մը՝ որ կը կոչուի Ս. Սա- հակ - Ս. Մեսրոպ: Քաղաքի հիւ- սիսային թաղամասերու Հայերը

կը հետապնդեն սեփական եկեղե- ցի մը ունենալու գործը եւ աքնա- ջան աշխատանքներէ վերջ, որոնց մէջ մեծ բաժին ունեցած են ախ- կիները, կը յաջողին գնել շէնք մը 16-րդ եւ Oxford փողոցներուն միայ, 50,000 տուար արժէքով: Այս շէնքին նորոգութեան աշխա- տանքներուն շատ մը ակադեմիկներ կը մասնակցին իրենց ձեռքերով. 1928-ին ամէն ինչ պատրաստուած

ըլլալով, չքեղ եկեղեցիին օծումը կը կատարուէ ձեռամբ Առաջնորդ Տ. Տիրայր Արք.ի եւ կը կոչուի Ս. Գր. Լուսաւորիչ: Եկնքի պարամաուրհակներուն վճարումը բաւական մասնագէտ ինդէր մը կը գտնայ տիփրէշլիի շրջանին վրայ հասնելովը, սակայն կը լուծուի դարձեալ անձնուէր տիկիններու (Աղաւնի Յովսէփեան, Մարգրիտ Գազաննեան, Մարգրիտ Եսայեան) զիմումներուն եւ քանքերուն շնորհիւ:


Դժբախտարար Դուբեան Սրբազանի սպաննութեամբ յառաջ եկող պատահաւոր այս թեմին մէջ պատճառ կը լինի որ շէնքը պայքարի տարեկան ըլլայ ու գաախտակ ինչայ: Ամերիկահայոց հայրապետաճանաչ տարրը չի յաջողիր իր իրաւունքը յարգել տալ ու

ձեռք կը հանէ այս եկեղեցին: Բաւական տարիներ Եպիսկոպոսական եկեղեցիներու հիւր ըլլալէ վերջ երկրորդ անգամ, 1940-ին 6,000 տարրի կը զնուի ներկայ Ս. Երրորդութիւն Եկեղեցին, Սրբոց հանա Պոպոսայի եւ Մարշըլ Փոպոցի անկիւնը: Եկնքի արտաքինը անհրապոյր է. շինուած է կղմինարէ եւ կը գտնուի քաղաքի անշուք մէկ թաղամասին մէջ, ուրիչ Հայ բնակիչները հեռոցեան կը փոխադրուին արուարձանները: Ներսէն սակայն, եկեղեցւոյ մասը կոկիկ է. ունի ընդարձակ խորան եւ գաա: Ժողովուրդի նրատարանները շարուած են կիսարուրակի ձեւով: Խորանին աջ կողմըն է աւանդատունը, իսկ ձախ կողմը Դպրոց Դատի սենեակը, որմէ սանդուխ մը կ'իջնէ զէպի ե-



ՆՐԵՍԻՍԻԱՆՆԵՐ

Տեաք կարապետ Ինկեան, Պետրոս Աւետիսեան, Մկրտիչ Ղազիկեան:



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեարք Տոբր. Հրանդ Մարգարեան, Արա Լիւլէնեան, Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան՝ Հովիւ. Տեարք Արամ Արքարեան՝ ատենապետ, Մուսեղ վիճապագուն: Կանգնած՝ Տեարք Տորն Զալբեան, Խաչիկ Մէնտիլեան, Պապի Բարունակեան, Գրիգոր Կարապետեան: Կը բացակայի Արամ Պուռնազեան:

Կեղեցւոյ ընդարձակ սրահ: Սրահը շէնքին տասջին յարկն է, և ունի հոփուի գրասենեակ, հոգաբարձութեան խորճըսրան, գրադարան և Կիրակնօրեայ Գալըսցի դասարան, չմտանալով խոհանոցը, բեմը և Լեթարահը:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ օծումը կատարուած է 1942 Դեկտ. 26-27, ձեռամբ Առաջնորդ Տ. Գաբելին Արքեպիսկոպոսի: Շէնքը քառակուսի է, խրաքանձիւր կողմը 150 սոք բերկար: Եկեղեցին կըրնայ նստեցնել 500 անձ: Ներկայ սրժէքն է 50,000 սուլար:

1945-ի Ազգային Երեսօխոսանական Ժողովը, ինչպէս նաև Ամբիկայի Հայ Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան անդրանիկ Պատգամաւորական Ժողովը 1947-ին՝ դումարուած են այս եկեղեցւոյ սրահին մէջ: Չանց կ'ընենք յիշել բազմաթիւ ճաշկերոյթ-հանդէսներ, որոնք սարքուած են նոյն տեղը պարտամուրհակի կիզման և Գալըսց Գոսի հաստատման և այլ տարեկարձներու աթիւ: Տրկնանց Միութիւնը իր տարեկան պազարները նոյն սրահին մէջ կը սարքէ:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Հովիւներն են եղած հետեւեալ-
ները:—

1. Տ. Արսէն Քիւնյ. Թորոսեան
որ 1934-ի պատահաւորօրէն ետք կը
հաճուէ ասանց եկեղեցւոյ շէնքի
մնացող այս համայնքը մինչև
1937, երբ կը խանդարուի իր ա-
սուցչութիւնը:

2. Տ. Յովհաննէս Քիւնյ. Գա-
վուգնեան (1937-1944), որուն օ-
րով կը զնուի եկեղեցին, եւ որ կա-
րեւոր բաժին ունեցած է սեղանի
բարեկարգման մէջ:

3-4. Տ. Ղեւոնդ վրդ. Արապ-
եան եւ Տ. Մեսրոպ վրդ. Սէմէր-
նեան (1944-1946):

5. Տ. Թորգոմ վրդ. Մանուկ-
եան որ 1946-ի աշունէն ի վեր կը
հաճուէ:

Ներկայիս Ս. Երրորդութիւն Ե-
կեղեցին ունի 129 զործօն անդամ:
Եկեղեցւոյ կնքահայրն է իր նուր-
բասուութիւններով ծանօթ Տիար
Արամ Արքարեան:

Եկեղեցւոյ կեանքին մէջ սկիզ-
բէն ի վեր զործօն եղած է Եկեղե-



ԵԿԵՂԵՑԱՍԻՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Ռոզ Գարեհեան, Անճէյ Մեծիկեան, վարդանոյշ Արքարեան՝
ասեկապետուի, Հովիւ, Տիկնայք Անճէյ Երեցեան, Արվարդ Զաւարեան, Տօրօրի
Կուշեան: Կանգնած՝ Տիկ. վերգին Սէմէրնեան, Օր. Արմենուհի Հայրապետեան, Տիկ-
նայք Փրլանքի ժամկոչեան, Արշալոյս Մէնտիկեան, Շուշան Բարուհայեան:



ԳՊՐԱՅ ԴԱՍ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ

ցաւէր Տիկնաց Միութիւնը: Եկեղեցական պետաներու պատրաստութեան, ճաշկերայթներու, զաշտահանողէաներու եւ պողպորներու սպասարկութեան շորձերէն զատ, Միութիւնը իր հաստատման օրերուն (1910) երկար ժամանակի համար իր վրայ առած է Դպրաց Դասի երգեցողութեանց հոյր. աւելի վերջ՝ Կիրակնօրեայ Դպրոցի զործր: Այս տարի Մայիսին՝ Տիկնաց Միութեան ծախքով կասուցուեցաւ աղբիւր մը սրահին մէջ՝ եւ մասնաւոր հանդիսութեամբ մը աղբիւրը մկրտուեցաւ ու կոչուեցաւ Դուրեան Աղբիւր: Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ զընումէն վերջ, սրահի տախտակամաձին նարդութիւնը, խոհանոցի մոմլաթներու հաստատումը եւ Եկեղեցւոյ նաւարաններուն կերպա-

ստպատումը կատարուած են Տիկնաց ծախքով եւ աշխատանքով: Միութեան ներկայ անդամներու թիւն է 140:

Եկեղեցւոյ երկուսն Դպրաց Դասը ներկայիս ունի երէցներու եւ փոքրերու բաժիններ. առաջինին մէջն են 12 մանչեր եւ 23 աղջիկներ, իսկ երկրորդին մէջ կան 6 մանչեր եւ 14 աղջիկներ: Դպրաց Դասը 1948-ի Յունուարին ածնեց իր հաստատման քսանամեակը. այդ առթիւ Առաջնորդ Տ. Տիրան Արքայան դպրութեան չորս ասպիճաններ տուաւ երէց մանչերուն եւ քոյ կրկու իրաւունք շընորհեց երէց աղջիկներուն: Դպրաց Դասը կը մասնակցի Եկեղեցւոյ բոլոր ձեւնարկներուն եւ իր խմբերգներով փայլ կուտայ ճաշկերայթ-հանդէսներու: Վերջերս

Հովիւ Տ. Թորգոմ՝ Վարդապետի նախաձեռնութեամբ և. Դպրաց Դասի աշխատանքով պատրաստուած են ճանապարհած խմբատնայ երգարաններ, սրանք կը պարունակեն թէ՛ Եկեղեցական և թէ՛ սպորտին-ժողովրդական Երգեր :

Ս. Երբորդութիւն Եկեղեցին տնի իր Հայկական դպրոցը Դուրեան վարժարան անունով, սր զը յաճախեն 35 աշակերտներ : Խուսուցչուհին է Տիկ. Պարիկեան : Այս դպրոցը շարունակութիւնն է 1916-ին սկիզբ տաւ կրթական գործին : Առաջին շրջանին՝ 1916-20, դպրոցի խնամակալութիւնը կր կողմէին Տեաք Կապարէր կի-

միւշկերտանեան, Ֆրէնի Նահիկեան և Արամ Ճէրբահեան : Իսկ ուսուցիչն էր Տիար Կարապետ Շահինեան (Մխոյ) սր հասցուցած է լաւ հայերէն ստիւգներու սերունդ մը : Յաջորդ ուսուցիչն է Լեզոմ Տիար Վաղարշ Պարսիկեան : 1933-1936 պաշտօնավարած է Տիկ. Ազանի Յովսէփեան : Տարի մը պաշտօնավարած է Տիկ. Արուսեակ Գազանեան, նոյնքան մըն ալ Տիկ. Սիրվարդ Ղազիկեան : Նմանապէս ուսուցչութիւն բրած են Տիկնայք Սիրանուշ Միրանշահեան և Սարեհիկ Քիւփէլեան : 1946-1947 դաստանդած է Հովիւ Տ. Թորգոմ վրդ. Մանուկեան :



ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԳՊՐԱՅ ԳԱՍԻ

Նստած՝ Տեաք Ճորն Գարիկեան, Յակոբ Կուշեան՝ տաննապետ, Հովիւ, Օրիորդուհի Ազանի Բարունակեան՝ դպրապետ, Մէրի Օհանեան : Կանգնած՝ Օր. Մարգրիտ Հանէրեան, Տիար Ճան Արսլանեան, Օր. Ակիս Սաւուրեան :



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՈՒՅՁԱԿԱԶՄ

Նստած՝ Տիկ. Տօրօրի Կուշեան՝ առեմաղպիր, Հովիւ, Տիկ. Աբաղյոյս Մալումեան՝ առեմաղպետ: Կանգնած՝ Օր. Սառա Բարունակեան՝ վարժուհի, Տիկ. Վարդանոյշ Ազարեան, խորհրդական, Տիար Սիմօն Թորոյեան՝ ուսուցիչ, Տիկ. Թագուհի Պամանեան՝ խորհրդական: Կը բացակային՝ Տիկ. Ազաւնի Յովսէփեան, Օր. Յամիկ Խամախիւան, Օր. Մարգրիտ Բարունակեան՝ վարժուհիներ, եւ Տիկ. Սարիկ Օխտրեան՝ գանձապահ:

Դուրեան Վարժարանի 1948 չըրջանի Խնամակալութիւնը ունի հետևեալ կազմը.

Տիկնայֆ Զարմինէ Ալեքսանեան, Հայկանուշ Միրիանեան, Լէոնա Կարապետեան, Արուսեակ Գազանեան, Նուարդ Հայկազեան, Վիքորիա Պազիկեան եւ Վարսենիկ Լուսինեան:

Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Լնթաթեմ կը համարուի Գէմտրնի (Նիւ ձըրրի) Հայութիւնը: Այստեղ եւս 1916-ին հաստատուած է

Հայկական գարոց մը, որուն խնամակալութիւնը այդ չըջանին կը բաղկանար երեք անձերէ. Տեարֆ Կարապետ Գաբիկեան, Արամ Յովսէփեան եւ Պօղոս Մերկիկեան: Այս գարոցը տարի մը միայն տեսած է: 1928-ին վերաբացուելով՝ մի քանի ամիսներու կեանք մը ունեցած է: 1931-1934 կըրցած է պահուիլ 46 աշակերտներով՝ ուսուցչուհի ունենալով Տիկին Նոյնվար Էսփինեանը: Ծանօթ պատկառմի օրերուն կրկին դադ-

րած է ու տաս տարի վրակ մնալէ վերջ՝ վերաբացուած է 1944-ին՝ 25 աշակերտով: Երկու տարի ետք զարձեալ զազրելով, վերջնականապէս բացուած է 1947-ին ու այժմ ունի 18 աշակերտներ, որոնցմէ իւրաքանչիւրը ամսական երկու տարար կը վճարէ: Ուսուցչուհի է Օր. Շնորհիկ Մէշէնեան:

Գէմարնի Հայ դպրոցի ներկայ կնամակալութեան կազմն է հետեւեալը.—

Տիկնայք Արշալոյս Իննէեան, Էլսի Բարունակեան, Եւնիկէ Քիւրբնեան և Եղիսաբէր Թէրզեան:


Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ կիրակնօրեայ Դպրոցի աշակերտութեան թիւն է 46:

Եկեղեցւոյ Երիտասարդաց կազմակերպութիւնը, որ իր մէջ կ'առնէ նաև Դպրոց Դասը, ունի 75 անդամներ (երէցները 35, կրթասերները 40): Գործունէութիւնը ալլապան է. պարահանգէս, պլատաներ, խմբական այց Գեղարուստից Թանգարանին և վիճարանական ու լսարանական հասարակութիւնը Հայ ազգային ու Եկեղեցական սրտամուծիւնէն վերջուած նիւթերու շուրջ: Կազմակերպութիւնը ունի իր պատգէթօլի և սաֆթօլի խումբերը: Վերջերս 500 տարար նուիրած է Եկեղեցւոյն՝ շարժանկարի մեքենայ մը զնելու նպատակով: Եկամուտը 1947 Մարտ 31-էն մինչև 1948 Մարտ 31 կղած է 1,260.67 տարար:



ԵԿԷՑ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՆ

Տիար Պերն Երէցեան՝ ասեմապետ (նստած՝ ձախէն երրորդ)



ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵԿԵՂԵՑԻ, ՓՐԱԻԻՏԷՆՍ

Ի՞նչ Սլլընտ վոքերիկ նահանգի մայրաքաղաքն է Փրաւիտէնս, նիւ Եորքէն 185 մղոն հիւսիս արեւելք եւ Պոսթոնէն 45 մղոն հարաւ արեւմուտք: Բնակչութիւնը մօտ 300,000 է:

Փրաւիտէնսի մէջ նշանաւոր է Պրաուն Համալսարանը որ Յեղափոխութեան շրջանին զօրանոցի վերածուած է մասամբ: Գաղաքին մէջ կան բազմաթիւ բարեսիրական հաստատութիւններ, որոնց կարգին ՊԵՐԼԵՐ յիմարանոցը, որ երկրին մէջ ամենէն հիներէն է իր տեսակին մէջ:

Փրաւիտէնս հարաւային նիւ Ինկլընտի դիտար նաւահանդիսոն է: Ասկէ դատ զոհարեղէնի եւ արծաթեղէնի ճարտարարուեստին մէջ առաջնակարգ դիրք ունի: Հիմնրւած է 1636-ին Մէսէչուսէցէն վարտուած մարդու մը կողմէ, որ քաղաքը կ'անուանէ յանուն Ատտուածային նախախնամութեան որ զինք խնամած է իր նեղութեանց մէջ:

Փրաւիտէնսի Հայութիւնը, հաշուելով նաեւ արուարձաններու մէջ բնակողներու թիւը, ներկայիս մօտ 10,000 է: Կ'ենթադրուի թէ առաջին Հայը 1878-ին եկած է այստեղ: 1890-ին Ուստրէն խումբ մը Հայեր կուզան Փրաւիտէնս իրր զործաւոր աշխատելու, եւ Հայերու թիւը կը հասցնեն 35-ի: 1896-ի Զարդերէն վերջ նոր Աշխարհի հիւսիսային ամերոնն վրայ ապաստան սրնոող Թրքահայերէն շատեր կուզան Փրաւիտէնս եւս ու 1897-ին կ'ուենեանք 500-ի չափ Հայեր, ըստ դաղութի անդրանիկ հովիւին՝ Տ. Վաղիմակ Ծ. Վրդ. Սիսակեանի վորձամ մարդահամարին: 1902-ին հովիւ

Տ. Արսէն Վրդ. Վեհունի կ'արձանագրէ տեղւոյն Հայութիւնը եւ կը գտնէ 1,350 անձ, որոնցմէ շատեր ամուրի զործաւորներ են. ընտանիքներու թիւը այդ տարին 127 է: Ասկէ ութ տարի վերջ Փրաւիտէնսի Հայոց թիւը բարձրացած կ'ըլլայ 2,500-ի, ըստ Տիար Ն. Խաչմանեանի 1910-ին պատրաստած տեղեկագրութեան:

Առաջին Համաշխարհային Պատերազմէն վերջ հոծ թիւով դաղթականներու դալուստը կ'աճեցընէ Հայոց թիւը, ու ներկայիս Փրաւիտէնս իր 10,000 Հայերով Ամերիկայի հայաշատ կեդրոններէն մին կը նկատուի: Առաւելագոյն թիւ կը ներկայացնեն Խար-

բերդցիները. ապա կուզան Բալուցիներ, Սերասապցիներ, Վանեցիներ, Բղեցիներ, Մշեցիներ, Պուլսեցիներ :

Փրաւիտէնտի Հայոց կրօնական կեանքը մօտ վաթսուսն տարւումն պատմութիւն ունի: Առաջին անգամ 1891-ին է որ Յովսէփ Ծ. Վրդ. Սարաւեան, իբր միակ աշակերտ հովիւ Ամերիկահայոց, Փրաւիտէնտ գաղով պաշտամունք կը կատարէ: Կիրակի օրեր նախանձախնդիր դպիրներ ժամերգութիւն կը կատարեն տանց հովիւի, քանի որ Սարաւեան Վրդ., որու կեդրոնը Ուսար քաղաքն էր, չէր կրնար ամէն Կիրակի Փրաւիտէնտ աշակերտ: Մի քանի տարիէն մնայուն հովիւի մը պէտքը հրամայական կը դառնայ, եւ տեղւոյն Հայերէն զլխաւորներ հետամուտ կ'ըլլան հայրենիքէն հողեւորական մը հրաւիրելու, երբ 1896-ի ջարդերէն ճողոպրող Վաղիմակ Ծ. Վրդ. Սիսակեանը (Պուսոյ Սամաթիա թաղի քարոզիչ) ուրիշ Հայերու կարգին կ'ապաստանի Ամերիկա: Փրաւիտէնտի Հայութիւնը հովիւ կ'ընտրէ Վաղիմակ Վարդապետը, որ կը ժամանէ Փրաւիտէնտ 1897 Մայիսին եւ կը ձեռնարկէ գործի իբր անդրանիկ հովիւ Փրաւիտէնտի Հայոց: Վաղիմակ Վրդ. կը կազմակերպէ գաղութը, կը կատարէ Հայոց մարդասամարը, ու կրօնական պաշտամունքները կանոնաւոր դարձնելու համար, հոգարարութեան վարձել կուտայ սրահ մը, ուր Կիրակնօրեայ արարողութիւններէն զատ տեղի կ'ունենան

նաեւ ուսումնական ու ժողովական հաւաքոյթները շարժուն ընթացքին: Վաղիմակ Վրդ. հաշտարար սղիով մը կը հարթէ տեղւոյն Հայերէն շատերուն ընտանեկան զժուարութիւնները, առաջըր ասնկով ամուսնալուծումներու: Դժբախտարար կը վախճանի կանուխ, հազիւ երկու տարի պաշտօնավարելէ վերջ, 1899 Յուլիսին: ՅՏ տարի վերջ իր հոգակոյտին վրայ կը դրուի համետ տապանքար մը, Տ. Զգօն Քիւնյ. Չարխուկեանի նախաձեռնութեամբ:

Յաջորդ 14 տարիներու ընթացքին, Փրաւիտէնտի Հայութիւնը մինչ մէկ կազմէն կ'աճի թիւով, միւս կողմէն կը կորսնցնէ իր ներքին հանդարտութիւնը, այլ եւ այլ պայքարներու պատճառու: Ասկէ կ'ազդուի կրօնական կեանքն ալ. հովիւներ կարճատեւ պաշտօնավարութիւն կ'ունենան ու գաղութին կրօնական կեանքը կը կազայ սեփական եկեղեցիի մը չզույսթեան պատճառու: 1905-ին ծախու հանուած եկեղեցի մը 5,500 տուրքով գնելու պատահութիւն կը բացուի, սակայն գործը կը ձախողի քանի որ գաղութին մէջ հանդանակութիւն կազմակերպելու ժամանակ չունենար Առաջնորդ Տ. Յովսէփ Եպս. Սարաւեան:

1913-ի ամառը տեղւոյն Մ'կըրտչական եկեղեցիներէն մին ծախու կը հանուի. հովիւը կը յայտնէ Տիար Ա. Խալիս Եղոյեանի թէ պատրաստ է Հայերուն ծախել գոյն նպատաւոր պայմաններով: Ե-

զոյեան կ'իմացնէ այս երկու երեւելի ազդեցիչներու՝ Տեարբ Պապա Գալքեանի և Զաքար Գալքեանի, ինչպէս նաև հոգարար ճակատան հոգամներէն Տեարբ Պ. Եղնեանի (տառնապետ) ու Յովհ. Ապառեանի: Անմիջապէս կը կազմուի յանձնախումբ մը (Տեարբ Ա. Ետիս Կէօլմիքեան, Պապա Սմբատ Գալքեան և Մանուկ Ղազարեան) որ կը բանակցի Մըկերրաշահաններուն հետ և կը համաձայնի 9,100 տուրքի զնել անոց Եկեղեցին: Կը ստորագրուի պայմանագրութիւն զոր Տիար Յովհաննէս Ապառեան իրը հանրային նոտար կը պատրաստէ ու կը հաստատէ: Յանձնախումբը շրջարեւոտանով ժողովի կը հրատարակէ զպայութիւն զյիսուս ազդեցիչները. 200 հոգիի մասնակցութեամբ զումարուած այդ ժողովին մէջ կ'ընտրուի Գնման Յանձնախումբ մը, երեք անդամներով.— Տեարբ Սեդրակ Սողիկեան (տառնապետ), Նիկողոս Խաչմանեան (քարտուղար), և Պ. Եղնեան (զանձապետ): Բանակցող Յանձնախումբը կը յայտնէ ժողովին կատարուած համաձայնութիւնը, աւելցնելով թէ անդամներէն մին կանխիկ վճարած է 100 տուրք և թէ 60 օրուան մէջ շէնքի փոխանցումը պէտք է սմբողջանայ: Մեծ ետանդով հանդանոտութիւն կը կատարուի ու կը զոյանայ 3,000 տուրք. ասոր վրայ աւելցնելով 2,300 տուրքի ու 3,800 տուրքի երկու տարբեր պարտամուրհակներ, վճարումը կը կատարուի 1913 Դեկտ. 22-ին: Շէնքի ներսի մասը Հայկական ազգայնագիտի վե-

րածելու համար կը կատարուին նորոգութիւններ. Պայմանէն 1,500 տուրքի կը զնուին խորաններ ու Եկեղեցին օծման համար պատրաստ կ'ըլլայ վեց ամիսէն:

1914 Յուլիսին, Տ. Մուշեղ Եպս. Սերոբեան ընկերակցութեամբ Տ. Վաղարշակ Վրդ. Արշակունիի, Տ. Շահէ Վրդ. Գասպարեանի և Տ. Սերովբէ Բենյ. Ներշապուհի, կը կատարէ խորաններուն օծումը, կոչելով Եկեղեցին յանուն Սրբոց Թարգմանչաց:

Պարտամուրհակներուն մէկուն (2,300 տուրք) վճարումը կ'ըլլայ օծումէն ճիշդ տարի մը վերջ: Հետագային Եկեղեցին կ'ունենայ անասական զփուսարութիւններ, այն աստիճան որ 1922-ին հոգա-



Ս. ԹՐԳՄԱՆՁԱՅ ԵԿԵՂԵՑԻ



Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՐԱՅԵՆԸ

բարձութիւնը կը ստիպուի 6,000 տարրի նոր պարամուրճակ մը ասնել: Այդ թուականին Եկեղեցւոյ պարտուց գումարը 11,000 տարրի կը հասնի: Այս գումարը մաս առ մաս կը վճարուի 1926-ին, 1930-ին, 1934-ին ու վերջապէս 1936-ին, երբ կը մաքրուի պարտքը:

Ս. Թարգմանչայ Եկեղեցին պիտաւզէն է, կարմիր գոյնով, ու երկյարկանի: Կը զբաւէ 9,600 քառակուսի սաք տարածութիւն ու շրջապատուած է փոքր պարտէզով մը: Շէնքը կառուցուած է 1868-ին

ու ներկայիս կ'արժէ մօտ 50,000 տարր: Կը գտնուի բարձունքի մը վրայ, Ռոստ Այլրնայի Նահանգատունէն միայն 500 քայլ հեռու: Եկեղեցւոյ աշտարակին վրայ հըսկայ խաչ մը կը կանգնի, որ զիշերը լուսավատուած կրնայ տեսնել շատ հեռուէն: Եկեղեցւոյ նստարանները հաստատուն են ու կը մնան Մկրտչականներու օրերէն: Կրնան նստեցնել 500 հօգի: Բեմն ու խորանները շինուած են Հայոց ձեռքով:

Եկեղեցւոյ սարքաւորումին ու բարեկարգման համար կ'զայտ են

կարևոր նուիրատուութիւններ, որոնց մասին կարգու պիտի զըրենք:

1. Ներկայիս տեսնուող երեք խորանները շինուած են ժողովրդագոյին նուիրատուութիւններով: Իսկ եկեղեցւոյ զնուակն անմիջապէս յետոյ խորան մը զնուած է նուիրատուութեամբ Տեարբ Յակոբ Ճարնորեանի, Զաւար Գանիէի եւ Գեորգ Աւետիսեանի: Ասաջին ալ խորանը փոխարինուած է երեք խորաններով:

2. Մկրտաւրեան աւագանք, որ նախապէս զնուած էր օրուան հո-

գարարձութեան եւ Պարուց Բարձման Յանձնարարի անդամներուն նուիրատուութեամբ, անբասական նկատուելով, 1936-ին կատարուած նորոգութեանց առթիւ, օրուան հովիւը (Տ. Եղիշէ ԲՏՆՅ. Գալչընճեան) կը թելադրէ նոր մը շինել, ու Տիկիմ Արաքսի Զօրապետեան կը նուիրէ ներկայ աւագանի շինութեան ծախքը, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնոյն Պօղոսի:

3. Եկեղեցւոյ փողաւոր երգեհոնը, որ կ'արժէ մօտ 8,000 տարար, զնուած է հետեւեալ պարագաներու տակ: Գաղութի եկեղե-



ԵՐԵՍՓՈՆԱՆՆԵՐ

'Նստած' Տեարբ Հայկազ Նանարեան, Տոբ. Խաչատուր Իմիրզեան, 'Նստն Գզիրեան: Կանգնած' Տեարբ Ճարնեկեան, 'Նստն Ասատուրեան:



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեաբք Հէրի Գանիլիան՝ գամնագահ, Սեդրակ Աւետիսեան՝ ատենադպիր, Տ. Վահան Փինյ, Ճէլալեան՝ հովիւ, Տեաբք Հէրի Անժուրեան՝ ատենագետ, Մովսէս Ճանիկեան: Կանգնած՝ Տեաբք Միհրան Թորգոմեան, Վահրամ Արգուեան, Վահէ Կիւրնեան, Հայկազ Ռոտիկեան՝ հաշուակալ, Ալպրքք Հէախըն, Փիրքըր Նորիկեան, Եգիա Մեյիլեան:

ցատէր ազգայիններէն Տիար Յարութիւն Կարապետեանի զեկամբարութեամբ կը կազմուի թատերական յանձնախումբ մը, որուն մէջ յիշեալ ազգայինին զլիաւոր աջակիցները կը լինին Տեաբք Արքըր Իյնեան և Սեդրակ Աւետիսեան: Յանձնախումբը աքնաջան աշխատութեամբ կը կազմակերպէ Վարդանանց Պատերազմի թատերախաղի բեմադրութիւնը, մասնակցութեամբ «Նոր Այգ» Երզնախումբին: Նոյն առթիւ կը հրատարակուի մեծածաւալ յայտատ-

զիր-ճանուցում մը, ու այս ձեւանորիկն հասոյթը բարգուշելով Ժողովուրդին նախաառաջեան վերայ, կարելի կ'ըլլայ զնեւ երգեհանը:

4. Եկեղեցւոյ կեդրոնի երեք մեծ ջահերէն առաջինն ու երրորդը նուէրներն են Տեաբք Պապա Ալեքսան Գալընեանի ու Նանարեան Մկրտիչ եւ Յովիաննէս Եղբայրներու: Իսկ մէջ տեղինը նախուսած է Տիար Պետրոս Գալուստեանի կողմէ:

5. Աւագ խորանին տալեւի կանքեղը նուիրած է Տիկ. Մարքա Վէնտրիեան ի յիշատակ իր հանդուցեալ ամուսնոյն: Իսկ երկու կողմնակի փոքր խորաններու կանքեղները նուէր են Ճորճոբեան Յակոբ եւ Պօղոս Եղբայրներու կողմէ:

6. Փրաւտէնսի տալին Հայ Թիշկներէն Տոքթ. Յակոբ Պառնեան նուիրած է հնազարեան ու մեծածաւալ Յայսմաուրի մը:

7. Եկեղեցւոյ 9 նկարագարդ պատուհանները մեծածախ կերպով պատկերազարդուած են քը-

րիտտոնէական եւ ազգային պատմական նկարներով: Ասոնց նուիրատուներու իւրաքանչիւրին առնուր արձանագրուած է մէկ մի պատուհանի ներքեւ:

9. Եկեղեցւոյ աշտարակի վըրայ կանգնող խաչը, որու մասին անդրադարձանք, նուիրուած է Խանոյեան Եղբայրներու կողմէ, ի յիշատակ իրենց ծնողաց Գրիգորի եւ Մարիամի:

10. Ասկէ չորս տարի առաջ, պապութի հանրածանօթ սպորտիններէն Տեարք Գրիգոր, Եղուարդ ու Զարեհ Եկաւեաններ 30,000 տո-



ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏՈՒՆԱՆՑ ՄԻՈՒԹԱՆՆ ՎԱՐՉՈՒԹԻՆՆ

Նստած՝ Տիկնայք Ալիս Պէգիկեան, Ազնիւ Նանարեան, ՄԷրի Դանիէլիամ՝ ատտեալիտ, Արմենուի Մելիեան: Կանգնած՝ Տիկնայք Մարիցա Պօղոսեան, Աննա Կրլեզեան, Զարուի Կեօրիկեան, Մարիցա Պերպէրեան, Նուարդ Սէրճանեան:



ԵՐԻՏ. ԵԿԴՅ. ՏԻԿՆԱՆՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Չապէլ Տատէճեան, Լիւսի Նաճարեան, Մէրի Վայզըր: Կանգնած՝ Տիկնայք Արտեմիս Աւագեան, Աննա Եսիեան, Գուրիկ Արապեան. Հիլտա Եղանեան, Մարգրիտ Ճիգմէնեան:

լարի հուերատուութեամբ մը բազմանք յայտնած են որ ի յիշատակ իրենց ծնողաց օտիքորիւմ մը կատուցուի եկեղեցւոյ կից, այս նպատակաւ գնուած հողին վրայ: Ներկայ աննպատակ պայմանները երբ մեզմանան, պիտի ձեռնարկուի այս շէնքի կառուցման, որու շնորհիւ Փրաւիտէնս պիտի ունենայ մեծ սրահ, խորհրդարան ու երկրատուն, յարակից մասերով:

Հոս աւելորդ չըլլայ յայտնել թէ եկեղեցին հին կտակի մը դործադրութեան հետեւանքով օժտուած է զրադարանով մը որ կը պարունակէ 2,000 կտոր գիրք: Գծարատարար ներկայիս լքուած վիճակ մ'ունի այս հաւաքածոն, որ տե-

ղաւորուած է եկեղեցւոյ ներքնասրահին մէջ անկիւնը:

1939-ին Ս. Թարգմանչաց Եկեղեցւոյ համայնքը շէնքի գնման ու օժտման Արժաթեայ Ցորելեանը կը տօնէ հովիւ Հոգ. Տ. Սիւնի վրդ. Մանուկեանի գլխաւորութեամբ: Այդ առթիւ հրատարակուած զբքայիին ստաշին մասը երկու լիզուով կը պատմէ զազութիւն եկեղեցական կեանքը սկիզբէն մինչև 1939: Որոշ չափով օգտուած ենք այդ զբքայիէն, այս սուղերը զբելու առթիւ: Հոս կը մէջբերենք նոյնութեամբ, զբքայիին 13-րդ էջին վրայ գրուած հովիւներու ցանկը:

- | | |
|---|---|
| 1. Վաղինակ Ն. Վրդ. Սիսակ-
եան, 1897 Մայիս 30 - 1899
Յուլիս 14 | 7. Դաւիթ Բինյ. Պիծակեան,
1907 |
| 2. Խաղ Վրդ. Մարգարեան, 1899
(Տ ամիս) | 8. Ղեւոնդ Բինյ. Պահլաւունի,
1909 |
| 3. Արսէն Վրդ. Վեհունի, 1901-
1904 | 9. Սերովբէ Բինյ. Ներշապուհ,
1910 (քահի մ'ամիս) |
| 4. Սահակ Բինյ. Մինասեան,
1904 (Տ-9 ամիս) | 10. Վաղարշակ Վրդ. Արշակունի,
1913-1916 |
| 5. Ագարիա Բինյ. Պոյանեան,
1906 | 11. Տիրայր Վրդ. Մարգարեան,
1916 |
| 6. Տրիփուն Վրդ. Պիծակեան,
1907 | 12. Ղ. Վրդ. Մարդուկէսեան,
1917-1929 |



ԴՊՐԱՅ ԴԱՍ

Տիրա ճորն փառչեան՝ փոխ ղպրապետ (երկրորդ շարի՝ մէջտեղը) : Կը բացա-
կայի Տիրա Յովհաննէս Սարգիսեան՝ ղպրապետ :



ԿՐԱԿԵՕՐԵԱՅ ԳՊՐՈՑ

13. Եղիշէ Քինյ . Գալչընեան ,
1929-1931
14. Արսէն Քինյ . Թորոսեան , 1931
15. Եղիազար Քինյ . Աշեան , 1931
16. Եղիշէ Քինյ . Գալչընեան
(կրկին) 1932-1936
17. Զգօն Քինյ . Զարխուկեան ,
1936-1938

1938-ի Օգոստոսին Երուսաղէ-
մէն կը ժամանէ նորընտիր հովի-
ւը՝ Տ. Սիոն վրդ. Մանուկեան որ
Եօթ տարի շարունակ կը պաշտօ-
նավարէ, առաջին օրէն իսկ զարկ
տալով Եկեղեցւոյ առակոյ պայ-
ծառացման գործին: Իր ջանքերով
է որ նոյն տարուան Սեպտեմբը-

րին կը բացուի Եկեղեցւոյ Կիրակ-
նօրեայ դպրոցը, ու ջիջ առեն
վերջ կը կազմակերպուի Երիտա-
սարգաց Միութիւնը, պատանիե-
րու և երիտասարդներու ճիւղե-
րով: Փրաւիտէնի Ս. Թարգման-
չաց Եկեղեցւոյ համայնքը, զնա-
հասելով Տ. Սիոն վրդ. ի օգտա-
շատ հովուութիւնը, 1945-ի ձմե-
րան զուժարուած բացասիկ Երես-
փոխանական Ժողովին մէջ կ'ա-
ստջարիկ որ նոյն ամբան էջմիած-
նի մէջ կատարուելիք Կաթողիկո-
սական ընտրութեան առթիւ և-
պիսկոպոսական օժման արժանա-
նայ իրենց հովիւը: Տ. Գեորգ Զ.
Կաթողիկոսի օժամ առաջին 10 և-
պիսկոպոսաներէն կը լինի Տ. Սիոն
Սրբազան, որ Ամերիկա վերա-
դարձին պաշտօնի բարձրացումով
կը զաղրի հովուելէ Փրաւիտէնոր:

1946-էն 1947 հովիւ եղած է Տ. Իսահակ վրդ. Ղազարեան: Իսկ 1947 Դեկտեմբերէն ի վեր Տ. վահան Քինյ. ձելլալեան:

Ներկայիս Ս. Թարգմանչաց Եկեղեցին ունի մօտ 450 անդամ: Երևախորանական Ժողովին կը մասնակցի հինգ երևախորաններով:

Հոգարարձութեան օժանդակ կողմակերպութիւն մըն է Եկեղեցաւէր Տիկնաց Միւլքիւնը, որ մօտ երկու հարիւր անդամներ ունի: Անցեալին մէջ, ինչպէս այժմ, այս Միւլքիւնը եղած է հովանաւոր ազգային դպրոցին. 1939-ին Դպրաց Դասին համար շինել արւած է ճաշակաւոր ու միաձեւ շապիկներու խումբ մը: Ներկայիս կը զարծէ երկու ճիւղերով, երկչ և երկտասարգ:

Եկեղեցւոյ Դպրաց Դասը շարունակութիւնն է «Նոր Այլ» Երգչախումբին, որուն անունը ևս ժառանգած է: Ներկայիս անդամները աւելի շատ են քան խմբաներին մէջ երեւցածները: Դպրապետը՝ Տիար Յովհ. Սարգիսեան, բացակայ է լուսանկարէն: Տիար Սարգիսեան կարգած է երկու փոխանորդներ, որոնք իր բացակայութեան կրնան վարել խումբին երգեցողութիւնը. փոխ դպրապետներն են Տիար Ճորճ Փալոյեան և ուրարակիր Չարլի Թէքէեան:

Եկեղեցւոյ կիրակնօրեայ Դպրոցը բացուած է 1938 Սեպտեմբերին, տասջին տօթիւ ունենալով 90 աշակերտներ: Ներկայիս տասը ուսուցչուհիներ, իրենց զուգին ունենալով երկտասարգ Տիար Ար-




ՀԱՅՑ. ԵԿԵՑ. ԵՐԻՑ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

աաչէս Խանոյեանը, կը զործեն
աչս հաստատութեան մէջ:

Եկեղեցւոյ Երիտասարդաց Մի-
ւթիւնը, որ կազմուած էր Սրտն
Վրդ. Մանուկեանի ջանքերով,
այժմ երկու տարիէ ի վեր կը զոր-
ծէ իբր մասնաճիւղ Ա. Հ. Ե. Ե. Կ. ի:
Կրնան անդամակցել 18 տարեկա-
նէն վեր եղողներ: Ներկայիս ունի
ժօտ 65 անդամներ: Ա. Հ. Ե. Ե. Կ. ը
(Ամերիկայի Հայ Եկեղեցւոյ Երի-
տասարդաց Կազմակերպութիւն)
հիմնելու համար Առաջնորդ Տ.
Տիրան Եպո. Ներսոյեան 1946
Յունուարին աստջին խորհրդակ-
ցական ժողով մը կը գումարէ

Փրաւիտէնսի մէջ. այդ առթիւ է
որ թեմական միւս համայնքներէն
ներկայացուցիչներ կը միանան
Փրաւիտէնսի երիտասարդներուն
հետ, ու Տիրան Եպո. ի թելադրու-
թեանց ու ցուցմունքներուն հեռե-
ւելով, կը սրտորոտակեն Նախապի-
ծը կազմուելիք Միութեան Սահ-
մանադրութեան:

Փրաւիտէնսի Ս. Թարգմանչաց
Եկեղեցին ունի նաև Հայկական
զպրոց, շատոնց հաստատուած:
1939-ին ունէր 130 աշակերտ, իսկ
ներկայ կացութեան մասին դրժ-
րախտարար ունէ տեղեկութիւն չէ
հազորդուած մեղի:



Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻ, ՐԷՅՍԻՆ

Միջիկըն Լիճին արևմտեան եզերքը քաղաք մըն է Րէյսին, Շիքահոյէն 60 մղոն հիսիս, մօտ 75,000 բնակչութեամբ: Ուխտանիցն Նահանգին կարեւորագոյն ճարտարաբուհատեան կեդրոններէն մէկն է, անուանի իր արտադրած թրաքորներով: Քաղաքը լճին եզերքը ունի զեղեցիկ յայտարաններ եւ հանրային պարտէզներ: Հիմնուած է Պրանսացի վաճառականի մը կողմէ ժԹ. դարուն սկիզբը, եւ անունը կ'առնէ իր մէջէն անցնող Արմատ գետի Պրանսերէն կոչումէն: 1848-ին վաւերացուած է իր քաղաք:

Րէյսինի տասնչին Հայ դպրոցաւանները եղած են Սարրերբըլի Սուլթանեղի Յակոբ Մարգարեան, Աւետիս Տէր Մարկոսեան եւ Խաչիկ Թարոսեան, որոնք 1892-ին կուսան իրր դործաւոր, ու ժամը 12 սէնթ վճարուժով կ'աշխատին: Այս երեքը կը պատկանին Սուլթանեղիներու տակի մեծ խումբի մը, որոնք նախ Թոյ Հաստատուել վերջ, կ'անցնին Սուրբկըն իրր դործարանի բանուոր: 1893-ին յիշեալ տեղերէն ուրիշ Սուլթանեղիներ եւս կը դադրեն Րէյսին, ու բարբը միասին կը բնակին վարձու տան մը մէջ:

Հետզհետէ ուրիշ դաւառացիներ եւս կը փութան Րէյսին, այն ստորձան որ 1903-ին Հայ քաղաքական կուսակցութիւն մը մասնաճիւղ կը կազմէ Րէյսինցի Հայերէն: 1909-ին Րէյսինի շրջակայ քաղաքներէն Թոմարպցիներ կը

հաւաքուին Րէյսին Հայ դործաւորներու բնակած տունը եւ կը հիմնեն Թոմարպցիներու Ուսումնասիրաց Ընկերութիւնը: Այդ թրականներէն սկսեալ կեսարիոյ դաւառներէն եկողներ ու հաստատուողներ կը կազմեն Րէյսինի Հայ դպրոցին 80 առ 100-ը: Հայոց թիւը այժմ հասած է մօտ 1,200-ի:

Մինչեւ 1918, Րէյսինի Հայերը եկեղեցական տեսակէտէն կապուած են Շիքահոյի համայնքին. միւսնոյն հողարարձութիւնը պատասխանատու եղած է երկու համայնքներու կրօնական պէտքերուն:

1918-ին կը կազմուի Րէյսինի տասնչին հողարարձութիւնը, որուն ղեկանը կը ներկայացնեն Տեարք Յ. Փոլատեան (ատենապետ), Խ. Տէտեան (ատենադպիր) եւ Ա. Գալփա Աղիլիւեան (զանձապահ):


1922-ի հողարարձութիւնը նկա-

աի ունենալով Բէյսինի մէջ Հայ ընտանիքներու բազմանալը, պաշտօնապէս կը բաժնուի Շիրքակոյի թեմէն, և կը կազմէ ուրոյն թեմ, իր հետ ունենալով Սասիթ Միլուուքի, Բէյրութի և Քնոզայի հոգարարձաթիւնները: Կ'ունենայ աստջին ժամանակաւոր սեփական հովիւ յանձին Տ. Դաւիթ Քիւնյ Աւետիսեանի: Յաջորդ տարին, և կեղեցին ընտրութիւն կատարելով կ'ունենայ իր աստջին մնայուն հովիւը յանձին Տ. Վարդան Քիւնյ Դաւիթեանի: Միւսնոյն տուէն հինգ սպոյզայիններ զբաւոր խոստում կը ներկայացնեն հոգարարձաթեան, իւրաքանչիւրը յիսուն տարբեր վճարելու, որպէսզի ձեռնարկուի սեփական եկեղեցի մը ունենալու գործին: Նորընտիր հովիւին ջանքերով, հոգարարձաթիւնը կը դումարէ երկու մեծ հրապարակային ժողովներ նոյն նպատակով. կ'արձանագրուին եօթանասուն նախատու հիմնադիրներ. աստջին հինգը այս ասթիւ կը կրկնապատկեն իրենց խոստումները:

1924-ին Ամերիկահայոց Առաջնորդ Գեորգ Տ. Տիրայր Արքեպիսկոպոս կ'այցելէ Բէյսին: Այս ասթիւ հոգարարձաթիւնը Սրբազան Հօր նախազահութեամբ կը սարքէ հրապարակային աննախընթաց ժողով մը Հոկտ. 12-ին՝ քաղաքի անուանի սրահներէն մէկուն մէջ, նպատակ ունենալով վաթսայնէ սեփական եկեղեցիի մը գնման կամ կատուցման գործը: Կ'արձանագրուին այս ասթիւ 150-է աւելի նախրատուներ, որոնց խոստումները (նախկինները ներասեալ) կը

զբաւին ժապաւինեալ ամսարի մէջ, ձեռամբ Առաջնորդ Հօր: Կ'որոշուի մինչև 25,000 տարբեր վճարել ներկայ եկեղեցին գնելու համար, եկեղեցւոյ հիմնադրութեան տարբ սահմանելով նուազագոյն 20 տարբ: Գործը հետապնդելու համար կ'ընտրուի 19 անդամներէ (14 տար և 5 տիկին) բաղկացեալ յանձնաժողով մը, որ յաջորդ օրը խոսն նիստ մը կ'ունենայ հոգարարձաթեան հետ, նախազահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, Ա. Գալիա Ագլիլիեանի ընտրանին մէջ: Կը կազմուի զիսանք հետեւեալ կերպով. վաստարան Տիար Կիւլպէնկ Կիւլպէնկեան՝ ատենապետ, Տիար Ճիվան Կէչիմեան՝ ատենադպիր, և Տիար Գրիգոր Գամազեան՝ գանձապահ:

Յաջորդ տարին (1925), յանձնաժողովին կ'ատենապետէ Տիար Հայրապետ Միքայէլեան, իսկ տի-



Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՏԻ



Ս. ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՅՈՅ ԽՈՐԱՆԵՐ

կիւնները սասանձին կը հիմնեն Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը : Գործօն երեք մարմիններուն համախորհուրդ. և ժրջան աշխատութեամբ կը զնուի Եկեղեցւոյ շէնք մը Սթէյթ, և Ուիլսըն փողոցներուն անկիւնը : Անհրաժեշտ փոխառութիւններն ու նորոգութիւնները կը կատարուին փութով և նոյն տարւածն Գեկա . 25-ին Ատաշնորդ Տ . Տիւրայր Արք . կը կատարէ օժման փառաւոր արարողութիւնը , մասնակցութեամբ զազութի հայիւ Տ . Վարդան Քահանայի և Տիթրոյթի հայիւ Տ . Խաչիկ Քիւնյ . Գուրգեանի : Եկեղեցին կը կոչուի յանուն Ս . Մեսրոպի , կնքահայրութեամբ Տէր Եւ Տիկ . Գրիգոր Պ . Քէյիշեանի : Աւագանը կ'օժուի կնքահայրութեամբ Արմազանեան Եղբայրներու :

1927-ին կը զազրի Գնման Յանձնախումբը , իր պաշտօնը կատարած լինելով : Հոգարարձութիւնը և Եկեղեցասէր Տիկնանց Միու-

թիւնը 2,000 տուրք կը վճարեն Եկեղեցւոյ պարտքին ի հաշիւ , նւազազոյն 12 տուրք անդամատուրք զանձելով : Ոյժ կուտան Հայ դպրոցին : Նոյն տարին կը հիմնուի սղղային զբաղարան , և Հայց . Եկեղեցւոյ Եղբայրակցական Միութիւնը :

1928-էն մինչև 1940 յաջորդական հոգարարձութիւններ մաս առ մաս կը վճարեն շէնքին պարտքը , որուն վերջին 1,000 տուրքը արբուելով 1940 Սեպտ . 28-ին , Եկեղեցին կը սեփականացուի և պահեստի գումար մըն ալ կը խնայուի : Եկեղեցւոյ շէնքը հիմն մինչև տանիքը նորոգուած է և արգիականացած :

Եկեղեցին զնուած է 18,000 տուրքի . նորոգութեանց և փոխառութեանց ծախքն է եղած 7,000 տուրք , որով 25 հազար տուրք : Ոյժմ կը զնահատուի 75,000 տուրքի արժէքով : Շէնքը երկյարկանի է , 80 սոք երկայնութեամբ ու 42 սոք լայնութեամբ : Եկեղեցին կրնայ նստեցնել 500 հոգի , լակ սրահ , բացի խորհրդարանէն , 350 : Խորանը շինած է Աւագ Գալփա Ազիլիյեան :

Եկեղեցւոյ անդամ են 140 ընտանիք և տասնեակ մը ամուսիններ :

Եկեղեցւոյ բարերարներն եղած են հետեւեալները . 1 . Տ . Վարդան Քիւնյ . Դաւիթեան , անդրանիկ հովիւր , որ Տիթրոյթ և Գալիֆորնիա երթալով կատարած է արգիւնաւոր հանգանակութիւն ի նպատակ Եկեղեցւոյ . մկրտութեան աւագանն ալ ինք նուիրած է :

2. Տէր Է. Տիկ. Գրիգոր Պ. Քէ-
յիշեան, որոնք Եկեղեցւոյ օժման
կնքահայր Էղած են:

3. Արմաղանեան Եղբայրներ,
որոնք աւագանի օժման կնքահայ-
րութիւնը ստանձնած են:

4. Տիար Տատուր Աղապալ-
եան, որ նուիրած է 1,000 տարբ:

5. Տիար Թորոս Թէլլիեան, որ
Եկեղեցւոյ հովիւ Տ. Սուքիաս Ա-
բեղայ Գալփայեանի ձեռնադրու-
թեան կնքահայր Էղած է 1934-ին:

6. Տէր Է. Տիկ. Օսկիան Պալ-
եան, որոնք Եկեղեցւոյ 1,000 տո-
ւար կտակած են:

7. Աւագ Գալփա Ազկիւլեան,
որ շինած է խաչկալը և կտտարած
Եկեղեցւոյ մէջ նորոգութիւններ
զբեթէ առանց վարձքի:

8. Տիար Սահակ շանըզեան,
որ շինած է Եկեղեցւոյ մայր դու-
ար և Աւագ Ուրբաթ օր դորձածե-
լի Քրիստոսի Գերեզմանը, առանց
վճարումի:

Առաջին Համաշխարհային Պա-
տերազմի ընթացքին Լիպրոբի



ԵՐԵՍՓՈՍԱՆՆԵՐ

Տեաքք Տիգրան ձիկեօզեան, Թորոս
Մատաղեան:

Պանտերու հանդանակութեան առ-
թիւ Բէյսինի Հայերը 80,000 տո-
ւարի նուէրով շահած են առաջ-
նութեան մրցանակը, և անկէ ի
վեր Բէյսինի Հայութեան վարը
միշտ բարձր մնացած է շրջանիս
մէջ: Իսկ Երկրորդ Մեծ Պատե-
րազմի ընթացքին Չորրորդ Ուոր
Պանտերու մրցանքին, կառավա-
րական բարձր ներկայացուցիչնե-
րու ներկայութեան Հայեր մէկ
անդամէն 50,000 տուարի պանո
զներով, կրկին անմրցելի հանդի-
սացած են: Համեմատական հաշ-
ուով, Բէյսին միեւնոյն չափանի-
շը ունի Հայ կամաւորական շարժ-
ման և համազգային մեծ հանդա-
նակութեանց բերած իր մասնակ-
ցութեամբը:

Գաղութին հովիւները Էղած են.

1. Տ. վահրամ Ծ. վրդ. Նազա-
րէքեան (այցելու) 1915-1921
2. Տ. Դաւիթ Քինյ. Աւետիսեան
(այցելու, 1915-1921)
3. Տ. Եղիշէ Քինյ. Գալչընեան
(այցելու, 1915-1921)
4. Տ. Դաւիթ Քինյ. Աւետիսեան
(ժամանակաւոր, 1922)
5. Տ. վարդան Քինյ. Դաւիթեան
(1923-1929)
6. Տ. Եղիշէ Քինյ. Գաղարեան
(1930)
7. Տ. Գարեգին Քինյ. Յովակիմ-
եան (1931-1939)
8. Տ. Արսէն Քինյ. Թորոսեան
(1940)



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տիար Յ. Մսրըլեան՝ ատենադպիր, Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նազարեքեան, Տիար Մ. Վեպիան՝ ատենապետ: Կանգնած՝ Տիարք Մ. Զեօրտիւֆեան, Յ. Մառտաղենան, Ս. Զիրքինեան, Բ. Զեօրտիւֆեան, Ս. Ազիլիւլեան:

- 9. Տ. Ղեւոնդ Աբեղայ Արապեան (1940)
- 10. Տ. Խորէն Քինյ. Մամիկոնեան (1941 և 1943)
- 11. Տ. Սուքիաս Աբեղայ Գալփայեան (1943-1945)

1945-էն ի վեր, Ս. Մեարոզ Եկեղեցւոյ կրօնական կեանքը կ'ընթանայ Շիրակոյի հովիւ Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նազարեքեանի տըւած ալցելութիւններով: Հոգարարձաթիւնը նախանձաթիւղիր կերպով կը հետապնդէ մեռյալին հովիւ մը սնննալու հարցը, և յոյս սննի սր կարճ ատենէն Ամբրիկահայոց Առաջնորդարանը տըրամադրէ հոգեւորական մը:

Կ'արժէ աւելցնել Րէյսին ալցելած բարձրաստիճան հայ եկեղեցականներու ցանկը, որ ահաասիկ.

- Գեղշ. Տ. Բարգէն Եպիսկոպոս Կիւլէսէրեան
- Գեղշ. Տ. Տիրայր Արք. Յովհաննէսեան (Առաջնորդ)
- Գեղշ. Տ. Ղեւոնդ Եպս. Դուրեան (Առաջնորդ)
- Գեղշ. Տ. Մամբրէ Եպս. Գալփայեան
- Գեղշ. Տ. Գարեգին Արք. Յովսէփեան (Առաջնորդ)
- Գեղշ. Տ. Տիրան Եպս. Ներսայեան (Առաջնորդ)

Գերշ. Տ. Սիոն Եպս. Մանուկեան
Գաղութին մէջ զօյութիւն ունին
չառ մը Հայ կաղմակերպութեանց
մասնաճիւղեր եւ հայրենակցական
միութիւններ :

Ներկայ տարուան հոգարարձա-
թիւնը գրեթէ ամբողջութեամբ
կազմուած է երիտասարդներէ,
սրանցմէ՛ սմանք Ամերիկա ծնած
են :

Մինչև 1931, Ս. Մերսոյ Եկե-
ղեցոյ մէջ երգեցողութիւն կա-
տարող զպիւրներէն բոլորն ալ շա-
փահաս ու հմուտ երաժիշտներ ե-
ղած են : Եկեղեցական արարողու-
թեանց պահանջն մի առ մի հրա-
ւիրուելով, հաւատարակչս կը կա-
տարէին ժամերկութիւնը, կարս-
ղազսյններէն մին տասջնորդ ու-

նենարով : 1931-ին նոր սերունդէն
կը կազմուի Գորաց Դասը, եւ
զպրտակա կը նշանակուի Տիար
Բեկիամին Թարոսեան որ նոյն
տարուան Գեկամբերին Առաջ-
նորդ Տ. Դեանց Արքայան Դուր-
եանէն Սարկաւայ կը ձեռնադր-
ուի, եւ ցարդ կը ծառայէ Եկեղեց-
ոյս : Ներկայիս Գորաց Դասը կը
կազմեն 2 սարկաւայներ, 4 շա-
փահաս զպիւրներ, 18 օրիորդներ
եւ 4 մամակայ փոքրիկներ :

Եկեղեցասէր Տիկնանց Միու-
թիւնը, ինչպէս ըսինք, կը կազ-
մուի 1925-ին, երբ վարչութիւնը
աշխատանքի բաժանումով կը
զատուի Եկեղեցոյ Գնման Յանձ-
նախումբէն : Այդ շրջանին իսկ
կ'ունենայ մօտ 100 անդամ : Առա-



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիար Պօղոս Զօպանեան՝ զպրտակա (Եօսէի շարժ, աջէն երկրորդ), Օր. Արքաճ
Լեւոնեան՝ փոխ զպրտակա (ճառած, աջէն երկրորդ), Օր. Սիրվարդ Գաբրիէլեան՝ օր-
կրմիսք (ճառած, ձախէն երկրորդ) :



ԵՅԵՂԵՅԱՍԷՐ ՏԻԿԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

'Նստած' Տիկին Հայկանյու Արմաղանեան. Օր. Մարեթիկ Զայրգեան՝ ատենապետ. Տիկնայք Լուսի Փալեան, Աննիցա 'Նայրսնտեան: Կանգնած՝ Օր. Խարուն Մատաղ-նեան, Օր. Մարգրիտ Արմաղանեան, Տիկ. Մէրի Գամպեան:

ջին վարչութիւնը բաղկացած է հետեւեալներէն. Տիկնայք Մայրեթի Միքայէլեան, ձուկար Տէտէեան, Մարգրիտ Հանինեան, Հոխիսիմէ Քէմպեան, Հայկանյու Գրիգորեան, Պէաքրիս Պանաքէլէյիշեան, և Մարի Տէտէեան: Առաջին շրջանին, արկիւնները կը վճարեն 1,500 տարր խաչկալի շինութեան համար, ինչպէս նաև 400 տարր եկեղեցւոյ պարտուց բարձման համար: Յաջորդական վարչութիւններ միութեան անդամուէրներու բաղմակագմա-

նի օժանդակութեամբ ոչ միայն եկեղեցին պայծառ պահած են, այլ և եկեղեցւոյ ծախքերուն ու պահեստի զբամին քասորդէն աւելին ապահովուցն հայթայթած են:

1944-ին, հովիւին նախաձեռնութեամբ կազմուած է Երիտասարդաց Տիկնանց Միութիւնը, ընկերական հասարակիւնը սարքելու և ի հարկին եկեղեցւոյ տնտեսապէս օժանդակելու համար: Այս միութիւնը ունի 35 անդամուէրներ:

Բէյալնի Հայաստանեայց Եկե-

դեցույ եղբայրակցու քիւնը 1927-էն մինչև 1934-ի վերջը լսարանական ժողովներ սարքելով ու գրադարանը գործածութեան դրնելով գաղութին ուշադրութիւնը կը գրաւէ որոշ ժամանակ մը: Նախ քան իր գաղարուժը, այս եղբայրակցութիւնը կը նուիրուի Կիրակնօրեայ դպրոցի բացման աշխատանքին: Դպրոցը կը բացուի 1935 Հոկտեմբերին, լիացօր տնօրինութեամբ Տիար Թորոս Մատաղճեանի, ու կը շարունակուի գալսօր: Յաջորդաբար օգնականներ եղած են Տիար Մ. Տանանեան, Տիկ. Էլիզ Գէլիշեան, Տիար Գաբրիէլ Գիւլափեան, Օր. Աղաւնի Հանինեան: Դպրոցի ունի Armenian Apostolic S. S. վերստուութեամբ սեփական զարդասեղ: Դասադրքերը անդլերէն են, իսկ ու-

սուցումն ու երգեցողութիւնները կ'ըլլան թէ հայերէն եւ թէ անգլերէն: Դասուանողութիւնը կը տեւէ մէկ ժամ, 9:30-10:30: Դպրոցին ծախքերը կը հայթայթուին Հոգարարձութեան ամսական յատկացումով, Տիկնանց Միութեան տարեկան կամուօր տուրքով, եւ աշակերաններու սնակի լիստատ նուիրատուութեամբ: Անդլերէն ուսուցման բաժնի գեկալորն է Տիար Յակոբ Մատաղճեան, որ իր օգնականներով միասին դպրոցի նախկին սաներէն է: Ներկայիս Կիրակնօրեայ դպրոց յաճախօղ սաներու միջին թիւն է 80: Ներկայ խմբանկարը կը ներկայացնէ զատուաններն ու օգնականները. ասաջին շարքին կեդրոնը նստողն է հիմնադիր տնօրէնը՝ Տիար Թորոս Մատաղճեան:

Հայկական դպրոցը վերակազմըւած է 1923-ին, Էկեղեցւոյ Հո-



ԱՌԱՋՆ. ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԵԱՆ
,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օրիորդներ Շաբէ Ճինկէօզեան՝ ատենապետ, Գ. Արմաղանեան: Կանգնած՝ Օրիորդներ Սանգուլտ Տ. Յովսէփեան, Մանամ Կրմաղանեան, Խարուն Մատաղճեան:



ԵՐԻՏ. ՏԻԿՆԱՆԵՅ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օր. Հէլըն Թօփալեան՝ գանձապահ, Տիկ. Վըրնիկա Մսըրբեան՝ ատենապետ: Կանգնած՝ Տիկնայ Բէրի Զիրֆինեան՝ Խաչուպահ, Էլսի Գիւլափեան՝ փոխ ատենապետ, Օրիորդներ Սաբենիկ Զալզեան՝ ատենադպիր, Ռոզ Մանուկեան՝ քրքակցուքեան ֆարտուղար:



ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Տիար Թորոս Մատաղեան՝ երկնադիր և վերատեսուչ (նստած, առաջին շար-
վի մէջսեղը) :

գարարձութեան կողմէ : Առաջին
գասառանները եղած են Տեարք Մ.
Կարապետեան և Է. Միքայէլեան :
Դպրոցը մինչև 1944 ղեկավար-
ուած է Հոգարարձութեան և 5-7
հոգինոց Կրթական Մարմինի մը
կողմէ : Պիւտճէն հայթայթուած է
Հոգարարձութեան և Կրթական
Մարմնի միացեալ ջանքերով կա-
տարուած ձեռնարկներու շնորհիւ :
1943 Դեկտեմբերին զուժարուած
անդամական ժողովին մէջ, Հո-
գարարձութեան և նորընծայ հո-
վիւ Տ. Սուքիաս Արեղայ Դալ-
Փայեանի թեղադրութեամբ, փո-
խանակ Կրթական Մարմնի, հիմ-
նրած է Րէյսիմի Հայց. Եկեղեց-

ւոյ կրթական Միութիւն մը, ու-
րոյն ծրագրով, զոյգ զպըտցները
միասնորար ու հաւատարոյէս
ղեկավարելու համար : Սոյն Միու-
թեան ծրագիր-կանոնադիրը վա-
ւերացուած է իր 40 երկուս հիմ-
նադիր անդամներու ստորադրու-
թեամբ և հովիւի ու Հոգարար-
ձութեան կողմէ հաստատուելով
արտօնուած է ի գործադրութիւն
տաժամեայ կերպով, մինչև Ա-
ռաջնորդարանի կողմէ վաւերաց-
ուելը : Միջին Արեւմտեան շրջանի
թեմերու Առաջնորդական Փոխա-
նորդ Գեր. Տ. Սիոն Եպիսկոպոս
Մանուկեան կարգ մը սրբադրու-
թիւններով վաւերացուցած է զայն



ՀԱՅՑ. ԵՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Տխար Սահակ վարդաբեան՝ առեհատկա (նստած), Օր. Ալբուն Լեոնեան՝ առեհատկա (նստած՝ աջէն առաջին) :

Գաղութիւն անդամներէն Օր. Աղանի Հանինեանի նախաձեռնութեամբ և գեկաժարութեամբ, 1935-էն սկսեալ, նախապէս առնելու մէջ ու 1942-էն ի վեր եկեղեցւոյ սրահին մէջ ամէն Չորեքշաբթի օրեր սպօթածողովներ տե-

ղի կ'ունենան ժողովարարէն 30 րարեպաշտ ախկիներու մասնակցութեամբ : Յաճախ եկեղեցւոյ հովիւն ալ ներկայ եղած ու նախագահած է այս ժողովներուն : Անունն է Հոգեւոր Տիկնաց Միւրթիւն :



ՐԻՉՄԸՆՏԻ ՀԱՄԱՅՆՔ

Րիչմընտ մայրաքաղաքն ու մեծագոյն քաղաքն է Վըրճինիա նահանգին, ն.ի. Եւր-
բէն 336 մղոն հարաւ արեւմուտք: 200,000 բնակիչ ունի, մէկ երրորդը սեւամորթ:

Ամերիկայի պատմական նշանակութիւն ունեցող քաղաքներէն մէկն է Րիչմընտ: Այստեղ է Եղիսիւպոսականաց Սէնթ Ճան եկեղեցին (չինուած 1741) ուր 1775-ին դու-
մարուած համաժողովի մը մէջ փէթրիք Հէնրի Կ'ընէ իր նշանաւոր ճառը, որ կը վեր-
ջանայ «Ազատութիւն կամ մահ՝ տուէ՛ք ինձ» յայտարարութեամբ: Քաղաքացիական
Պատերազմին, Րիչմընտ 1861-էն մինչև 1865 կը լինի հարաւի նահանգներու զանաւ-
րային մայրաքաղաքը:

Կարևոր կրթական կեդրոն մըն է, ունենալով սղիտակ ու սեւ ուսանողներու յա-
տուկ Երկու մեծ համալսարաններ, և աստուածարանական ճեմարաններ:

Գեղեցիկ յիշատակարաններ և արձաններ կը կանդնին քաղաքին հանրային պար-
տէզներուն և հրապարակներուն մէջ:

Րիչմընտ ծխախոտի ամենահին շուկաներէն մէկն ըլլալով սիկատի և սիկրէթի
ճարտարաբուեստի կեդրոն է:

Իբրև քաղաք, Րիչմընտ երկու հարիւր տարուան պատմութիւն ունի, թէև երկ-
րաւորներ տեղը գտած էին 1607-ին իսկ և խաչ մը կանդնած տշնակ: Անուր կ'աւ-
նէ Անգլիոյ թէյմզ Վեաին վրայ գտնուող Րիչմընտ քաղաքէն, որուն կը նմանի զիբբի
սեռակէտով:

1781-ին քաղաքը մասամբ կը հրկիզուի Բրիտանացի զինուորներէն: Քաղաքացիա-
կան Պատերազմին, Երբ հարաւի մայրաքաղաքն էր, շատ մը ճակատամարտներու ա-
տարկայ կը գտնուայ ու կը պաշարուի քանիցս: Կը սրբոյտի 1865-ին երբ հիւսիսի բա-
նակները կը մօտենան: հետապոյններ նախ կրակի կտաւան գէնքի և ծխախոտի մթն-
րանոցներն և կամուրջները ու քաղաքին մէկ երրորդը կը փճանայ այս ձևով: 25 տա-
րէն սակայն բնակչութեան թիւը կը կրկնապատկուի, 81 հազարի հասնելով 1890-ին:

...

Րիչմընտի Հայոց թիւը ներկա-
յիս մօտ 500 է: Մեծ մասամբ դուր-
ձաւոր են, առ հասարակ բարե-
կեցիկ: Մօտ 30 տարիէ ի վեր ի-
րենց կրօնական սէտքերը կը հո-
գան զլիմելով տեղւոյն Եղիսիւ-
պոսական եկեղեցիին: Ամենամօ-
տիկ Հայկական եկեղեցին Ֆիլա-
տէլֆիլա կը գտնուի, մօտ 250 մղոն
հեռու: Պատահարաբ Հայ հողե-

ւորականներ ալլելրած են: Ամերիկացի հասարակ Ասաջնորդը իր տարեկան հովտական ալլելրութիւնը կուտայ ձմրան սկիզբները:

Րիչմընտի Հայերը ունին եկեղեցական կազմակերպութիւն 1912-էն ի վեր և կը փոփաքին սեփական եկեղեցի մը ունենալ: Ունին պատրաստ գետին մը, և անձեռնմխելի գումար մը՝ մօտ 43,000 տուար: Եկեղեցական կազմակերպութեան կ'անդամակցին 46 անդամներ: Ասոնց զաւակներէն մօտ 20 երկսեռ երիտասարդներ ու պատանիներ կը կազմեն Դպրաց Դասը:

Րիչմընտի Երեսօխտանն է Նիւ Եորքարնակ Տխար Տատուր Տատուրեան:

Ներկայ Հոգաբարձութիւնը կը բաղկացնեն հետեւեալ անդամները սրտնք ընտրուեցան 1947 Դեկտ. 28-ին Ասաջնորդ Տ. Տիրան Սրբազան Հօր նախագահութեամբ գումարուած անդամական ժողովին մէջ:

Տեարք Յարութիւն Տիրատուրեան (ատենապետ), Գրիգոր Գրիգորեան (ատենադպիր), Համբարձում Հայրաճեան (գանձապահ), Ալեախ Տէտէեան և Մանուէլ Տէրաչեան (խորհրդականներ):

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ԵԿԵՂԵՑԻ, ՍԷՆԹ ԳԷԹՐԻՆԶ

Օնթարիո նահանգին մէջ փոքր քաղաք մըն է Սէնթ Գէթրինը, Թորոնթոյէն 35 մղոն հարաւ, ու Նիոսկարայի ջրովձէն ոչ շատ հեռու. ունի 30 հազար բնակիչ:

Այս քաղաքին մէջ առաջին անգամ հաստատուող Հայկերը եկած են 1901-ին: 1907-ին Հայ քաղաքական կուսակցութեանց մէկ երկու մասնաճիւղ կը կազմուի փոքր այս համայնքին մէջ, որ գրեթէ ամբողջութեամբ կը բաղկանար ամուրիներէ: Առաջին Մեծ Պատերազմէն առաջ միայն հինգ Հայ ընտանիքներ կը գտնուին. առոնց մեծաւորներն են եղած Տեաք Մաքոս Գորգիկեան, Յովհաննէս Թորոսեան, Գէորգ Պոյանեան, Սեդրակ Մուրատեան և Յովնան Մաքոսեան:

1916-ի և 1919-ի կոմկոստեան և կիլիկեան կամաւորական շարժումներուն Սէնթ Գէթրինցի Հայութիւնը կուսայ տաս կամաւորներ, որոնցմէ երկուքը՝ Արզար Սարկաւազեան և Խորէն Գրիգորեան կը գոհուին սոցիալ-դեմոկրատի վրայ: Զինադադարէն վերջ է որ կը բաղմանայ Հայութիւնը այստեղ, տարազրութենէն վերապրած Հայ մայրերու և որբե-

րու զաւթով: Ներկայիս Սէնթ Գէթրինց կ'ապրին մօտ 500 Հայեր, ընտանիքներու թիւն ըլլալով 95. կը բաղկանան Քրիստոնէի և Տարնցիներէ, և մեծ մասամբ գործաւոր են:

1918-ին կազմուած է առաջին սոցիալիստ հոգաբարձութիւնը, իսկ 1919-ին սկսած է Հայկական զբոսայի զատասանցութիւնը Հնչակեան սկումբին մէջ:

1925-ին կը կազմուի Գանատահայ Միութիւնը, առաջնորդութեամբ Տիար Լեւոն Պապայեանի (Թորոնթօ) և Փրոֆէսոր Պաղտասարեանի: Այս Միութեան նպատակներն եղած են սլաշտպանել Գանատահայոց քաղաքացիական իրաւունքները, օգնել Հայ գաղութներու չքաւոր ընտանիքներուն, զօրացնել և լաւ հիմերու վրայ գնել Հայ զարթոյններու զրութիւնը:

Այս Միութեան անունով և Տիար Լեւոն Պապայեանի օգնութեամբ Սէնթ Գէթրինցի Գարլթրին



Ս. Գ. ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ

փոստային վրայ երկու հոգ կը գընաի, ազգային տուն մը շինելու մտադրութեամբ. շէնքը պիտի գործածուէր իրբէս գարոց, գրատարան, բեմ եւ ժողովատեղի :

Նոյն օրերուն Գանատայի շրջուն հովիւն է Արժ. Տ. Մովսէս Բահանայ Տէր Ստեփանեան. աչք հայրը տեղեկանալով ազգային տան մը շինութեան խնդրին, կը գրէ Տիար Լեւոն Պապայեանին թերագրելով որ շինուելիք հաստատութիւնը տնտեսայ եկեղեցւոյ բաժին եւս : Բարեբարը կը հաւանի եւ Սէնթ Գէորգի շայ համայնքի համամտութեան վրայ, սրտը կը արտի շինելու երկյարկա-

նի շէնք մը, վերի յարկը եկեղեցի ընելու պայմանաւ :

Շէնքին շինութիւնը կ'աւարտի 1930-ին քսան հազար տոլար ծախքով : Օծումը կը կատարուի նախկին Աստճարգ Գեր. Տ. Տիրայր Արք.ի ձեռամբ, նոյն տարուան Նոյեմբեր 30-ին : Կը մասնակցին երեք քահանաներ՝ Տ. Մովսէս Բինյ. Տէր Ստեփանեան, Տ. Աթիկ Բինյ. Մոցիկեան եւ Տ. Զգօն Բինյ. Զարխուկեան : Այս առթիւ երկուցուցուցութիւնները կը վարէ Տիթրոյթի գարտակա Տիար Յարութիւն Էֆիզեան : Երբողներ կուզան թւրանթոյէն եւս : Օծման պահուն կնքահայրութեան պատիւը կը

արուի բարերար Տիար Լեւոն Պապայեանին, որ Սէնթ Գէթրինյի Հայ համայնքէն իրրեւ երախտագիտութեան նշան արձանակեալ ծեփիչ մը ստացած էր հիմնարկէքի արարողութենէն վերջ: Երեսուցիական կ'օժանդակեն տեղացի Անգլիացիներ եւ Գանատացիներ եւս: Նիակարա Ֆորջէն Տիար Պետրոս Ղազարեան եւս առաւելագոյն չափով կը բերէ իր նիւթական օժանդակութիւնը: Բոլոր նուիրատուներու անունները արձանագրուած են մասնաւոր աստարի մը մէջ:

Եէնքը, որ ունի 60 սաք երկայնք եւ 35 սաք լայնք, կը նստեցնէ եւրեք հարիւր հոգի, ու ներկայիս


կ'արժէ մօտ 45,000 տուրք:

Եկեղեցւոյ կալուածք կ'ընդարձակուի 1938-ի Մայիսին, երբ կը գնուին յարակից չորս հոգեր, որոնք երկաթէ ցանկապատով շրջապատուած են:

Ներկայիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին ունի այր եւ կին 60 գործօն անդամներ: 1934-էն առաջ երբ համերաշխութիւն կը տիրէր գաղութին մէջ, Սէնթ Գէթրինյի Հայութեան մեծամասնութիւնը անգամ էր եկեղեցւոյ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին չունի Տրիկանց Միութիւն, ոչ ալ Երիտասարդաց Կազմակերպութիւն:





ՀՈԳԱՐԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Տեաք Ծ․ Թորոսեան՝ ատենագետ, Մ․ Գրիգորեան՝ ատենադպիր, Յ․ Թորոսեան, Յ․ Մակարեան, Հ․ Խաչատրեան, Ա․ Գրիգորեան :

Կիրակնօրեայ դպրոցի փոխարէն զօրաւոր եղած է Հայկական դըպրոցը որ բացուած է 1919-ին : Գաղութին ամենէն սիրուած դէմքերէն Տիար Սեմեքերիմ Չիչէֆեան հայերէնի ուսուցման ունիւնը եղած է, ու մաքուր հայերէնով եւ Հայկական սէրով օժտած է իր երկսեռ աշակերտները : Ներկայիս Ալէնթ Գէթրինդ այցելող մը պիտի դարձանայ լսելով նոր սերունդին դիրտաստ հայերէնը : Եկեղեցւոյ օծումէն վերջ, երբ դպրոցը կը փոխադրուի շէնքին վարի սրահը, աշակերտութեան թիւին յաւելումով, օգնական ուսուցիչ կը լինի Տիար Գրիգոր Տէր Գրիգորեան : Յիշեալ երկու ազգայինները երկար տարիներ անձնուիրարար վտարած են ոչ միայն ուսուցչութեան, այլ նաեւ դպրատեղի ու սարկա-

ւաղի պաշտօններ, զորս կը պահեն յայսօր :

Ներկայիս Հայ դպրոցի աշակերտութեան թիւն է 20 : Դասաւանդութիւնները կ'ըլլան շարքով երեք անգամ, երեկոյեան ժամը վեցէն ութ :

Եկեղեցւոյ Դպրաց Դասը կազմուած է 1945-ին : Մեծ մասամբ այլ ջիւղներ են անդամները, բոլորն ալ հոս ծնած : Դպրատեղն է Տիար Գրիգոր Տէր Գրիգորեան, որ 1932-ին ուրար կրելու իրաւունք ստացած է Առաջնորդ Տ․ Ղեւոնդ Դուբեան Սրբազանէն, երբ վերջինս Ալէնթ Գէթրինդ այցելութեան առթիւ պատարագած է : Իսկ 1937-ին Հայրապետական Պատուիրակ Գեր․ Տ․ Գարեգին Աբբ․ Յովսէփեանց իր այցելութեան առթիւ ուրար կրելու իրաւունք կը

չնորհէ Տիար Սենեֆերիմ Զիչեֆեանին որ ցարդ կը ծառայէ իր սարկուսոյ: Դպրաց Դասի նորագոյն յաւելումներն են Տիար Յովհաննէս Մակարեան եւ Կարապետ Յարութիւնեան որոնք Սէնթ Գէթրիսիոյ ծնած ըլլալով հոնդերձ, ոչ միայն կը խօսին ու կը կարգան արդի աշխարհարար հայերէնը, այլ նաեւ կրնան երգել մեր եկեղեցւոյ զբարար փոխերն ու քարոզները: Յիշեալ երիտասարդներէն — որոնք ուրար կրկու իրաւունք ստացան 1947-ի աշնան Տ.

Տիրան Սրբադանէն — Տիար Յովհաննէս Մակարեան հայերէնի օգնական ուսուցիչ ալ է: Դպրաց Դասի վարչութեան ատենապետն է Տիկին Է. Պետրոսեան:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մշտյուն հովիւ եղած են ցարդ միայն երեք հոգեւորականներ, Տ. Մովսէս Քինյ. Տէր Ստեփանեան, Տ. Զգոն Քինյ. Չարխուկեան եւ Տ. Հմայեակ վրդ. Ինքոյեան. վերջինս 1946-ի աշունէն մինչեւ 1947-ի վերջը պաշտօնավարելէ ետք կը հրաժարի:



ԳՊՐԱՅ ԳԱՍ


Ա. շարք՝ Տիկ. Է. Պետրոսեան՝ ատենապետ (աջ ձայր): Տիար Ս. Զիչեֆեան՝ ղարապետ (ձաւուի շարք, մէջտեղ): Սեղանի կը սպասարկին Տեարժ Յովհաննէս Մակարեան եւ Կարապետ Արքիմեան (ղարապետին աջ ու ձախ կողմերը կեցած):

Այդպիսին տեսակէտով այս փոքր
 զագուծը ունեցած է խանդավառ
 զործունէութիւն: 1925-ին կազ-
 մըւած է Հայաստանի Օգնութեան
 Կոմիտէի մասնաճիւղ, և յաջորդ
 տարին ալ Պետական Հայ Կարմիր
 Խաչի մասնաճիւղ. երկուքն ալ
 տասնմէկ տարի տևած են և այլ
 միջոցին ամէն կարգի օգնութիւն
 փութացուցած են մեր Մայր Հայ-
 բնիքին: Բ. Համաշխարհային
 Պատերազմի սկիզբը, 1939-ին,
 տեղւոյս Հայ զագուծը կառավա-
 րութեան կազմէ իրեն զօթա նշա-
 նակուած 10,000 տուփ պահածոյ
 անուշեղէնի շաքարը կը հայթայ-
 թէ 24 Ժամուան մէջ հանդանակե-
 լով 650 տոբար: Զօրակոչին կը
 պատասխանեն շատ մը երիտա-
 սարդ Հայեր, որոնք պատուով
 ծառայելէ վերջ ըստր ճակատնե-
 րուն վրայ, կը վերագառնան
 տուն: Կամաւոր արձանագրուած

19 տարեկան որբ մը՝ Սողումն
 Գըլոյեան, կը լինի միակ Հայ դո-
 ճը՝ սպաննուելով Խաչիոյ ճա-
 կատին վրայ:

Գագուծը իր մասնակցութիւնը
 բերած է նաև Սասունցի Գաւիթ-
 Նրատայերու հանդանակութեան
 և Հայաստան զբկուելիք պահա-
 ծոյ ուտելիքներու արշաւին: Հ.
 Բ. Ը. Միութեան նախաձեռնած
 հայրենադարձի գրամական օգնու-
 թեան զործին բերած է լիառատ
 մասնակցութիւն, մէկէ աւելի ան-
 գամներ:

Ներկայիս Անթրոպիկի Հայ
 զագուծին մէջ զօյութիւն ունին
 Հայ քաղաքական կուսակցու-
 թիւններէն երեքին մասնաճիւղե-
 րը, ինչպէս նաև Համաքղեցիա-
 կան Միութեան և Հայ Աշխատա-
 ւորական Միութեան մասնաճիւ-
 ղեր:



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻ, ՍԱՌԻԹ ՄԻԼՈՒՈՔԻ

Միջին լին արեւմտեան եզրքը, Միլուքի քաղաքէն 10 մղոն հարաւ, փոքր քաղաք մըն է Սաութ Միլուքի: Հիմնուած է 1892-ին եւ ներկայիս ունի 15 հազար բնակիչ: Բուն Միլուքի քաղաքը նահանգին մեծագոյն քաղաքն է, իսկ Միացեալ Նահանգաց 13-րդը: Միլուքի նշանաւոր է իր գարեջուրով, հացահատիկով, եւ ծանր մեքենաներու (բևա վերցնող, գետին փորող, քար ճղմող, եւն.) արտադրութեամբ:


Միլուքի անունը Հեղինեարու լեզուէն կուգայ եւ կը նշանակէ «լաւ հողեր»: Բազմին բնակչութեան կարեւոր մէկ մասը Գերմանական ծագում ունի:

Սաութ Միլուքիի Հայ դպրութիւնը սկսած է 1910-ին, 4 անձով: 1914-ին արդէն մի քանի հարիւրի կը բարձրանայ Հայոց թիւը: Ներկայիս մօտ 450 Հայեր կան այստեղ, որ եկած են ընդհանրապէս Կեսարիոյ Թոմարզայէն, Չոմախլուէն, Էլէքէկէն. կան նաեւ Սերաստացիներ ու Խարրերզցիներ:

Ա. ա ջ ի ն հոգարարձութիւնը կազմուած է 1912-ին: Այդ շրջանի գիւանի անդամներն են եղած Տեաբք Յակոբ Երլանգեան (տակնապետ), Մկրտիչ վախրատեան (տակնադպիր) եւ Գալուստ Տէտեան (դանձապահ): Այցելու հովիւներու միջոցաւ սրահուած է եկեղեցական կեանքը մինչեւ 1924,

պարբերաբար ունենալով Ս. Պատարազի մատուցում Եպիսկոպոսականաց St. Mark's Եկեղեցւոյ մէջ: Հայ ննջեցեալներուն համար Եպիսկոպոսականներ տրամադրած են իրենց գերեզմանատունը:

Առաջին Համաշխարհային Պատերազմի Ժամանակ Սաութ Միլուքիի Հայերը շահած են տեղական կառավարութեան եւ Նախագահ Ուիլսոնի զնահատութիւնը, Լիպըրթի Ուոք Պանտերու զնման մէջ իրենց ցոյց տուած խանդավառութեամբ: Հայ կամաւորներ 1914-ի Նոյեմբերին կը մեկնին Սաութ Միլուքիէն, Դաշնակիցներու բանակներուն մէջ կուուրու համար: Սաութ Միլուքիի պետական Հայ Սֆուլին մէջ հայերէ-



ՍԱՌԻԹ ՄԻԼՈՒՌԻԻ ՀԱՅԵՐԸ Կ'ԱՇՆԱՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՇԵՆՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱՐ (1924)

նի դասընթացը հաստատուած է սրտչ տունն մը: 1934-ին, քաղաքի յարելինական հանդիսութեանց ասթիւ, Հայերը կը շահին սասջնութեան մրցանակը, իրենց կազմակերպած «չքերթ»ով:

1924-ին Ստուի Միլուոյի Հայերը կը նախաձեռնեն սեփական եկեղեցի մը սննհալու զործին: Այս նպատակով կը կազմուի Յանձնախումբ մը, բաղկացած հետեւեալներէն. Տեաքի Յակոբ Երլաննեան (ատեհապետ), Հայրապետ Դալայնեան (ատեհապետ), Յարութիւն Տէկիբմէննեան (փոխ-

ատեհապետ), Վահան Ճանտիկեան (զանձապետ), Միհրան Խալայեան (հաշուակալ), Արգար Սալպաշեան (450 սուրբ նուիրելով կը լինի եկեղեցւոյ կնքահայր), Ղեւոնդ Գամագեան, Պօզոս Բէշիմեան, Յակոբ Սամուէլեան, Շնորհի Մուրատեան (տճմ ուրարակեր-դպիր), Գրիգոր Զէքիեան, և Հայրապետ Վահրատեան:

Այս Յանձնախումբին 12 անդամները, սրտնք կը նկատուին հիմնադիրները եկեղեցւոյն, կը գնեն Zion Evangelist Church տ-



Ս. ՅԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Նույն Եկեղեցիի մը շէնքը 1924-ին, քովի հողերով միասին, վճարելով 3,200 տարար: Շէնքին ներքնա-սրահ, գուրիթ, խորանի պահարան և խոց տեղեցնելու համար կը կատարուին ընդարձակ նորոգութիւններ, սրոնց կը մասնակցին Հայերէն շատեր, ձրխարար աշխատելով: Երկու տարուան ընթացքին կ'աւարտին նորոգութիւնները, արժէքով 11,000 տարար: Այժմ երկու գեղաներով միասին Եկեղեցւոյ շէնքը կ'արժէ 30,000 տարար:

Եկեղեցւոյ օժտմը կատարած է Ասաջնորդ Տ. Տիրայր Արք. Յովհաննիսեան 1924 Հոկտ. 3-4, մեծ

հանդիսութեամբ: Կը մասնակցին Տ. Վարդան Քիւնյ. Դաւիթեան (անդրանիկ հովիւր) և շրջակայ թեմերէն Տ. Դաւիթ Քիւնյ. Աւետիսեան, Տ. Խաչիկ Քիւնյ. Գռուգեան, Տ. Գարեգին Ա. Քիւնյ. Յովակիմեան, Տ. Եղիշէ Քիւնյ. Աշնեան և հլւր սորկաւազներ ու գործընկեր: Եկեղեցին կ'անուանուի Ս. Յարութիւն:

Եկեղեցւոյ շէնքի երկայնութիւնն է 60 սաք և լայնութիւնը 26 սաք: Վերնատանով միասին կրնայ նստեցնել 350 հոգի: Շէնքին կից է 120x60 սաք մեծութեամբ հող մը, սրուն վրայ դադուի մասողը է շինել Ազգային Տուն մը:

1947-ին, Տիկնանց Միութեան նախաձեռնութեամբ, դադուի վրայ կը տանէ Եկեղեցւոյ 20-ամեակը և



ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐԱՆԸ

այլ ասիլի կը պատուաւին 12 հիմնադիրները, այջ թէ ննջեցեալ:

Ս. Յարութիւն Եկեղեցին ներկայիս ունի 60 անդամներ:

1924-էն ի վեր Հոգարարձութիւնը իր արձանագրութիւնները կանոնաւորաբար պահած է ամբարներու մէջ:

Գաղութիւն աստջին Երևոյթիտներ Եղած է Տ. Դաւիթ Քիւնյ. Աւետիսեան 1912-ին: Ներկայիս Ս. Յարութիւն Եկեղեցին ունի Երկու

Երևոյթիտ, յանձինս Տիար Համբարձում Պօղոսեանի (Հոգարարձու) և Նի. Երբարձուի Տիար Յարութիւն Հագարեանի:

Վերջերս Հոգարարձութիւնը իր անդամներէն Տիար Միխայիլ Խաչիւանի ատենադատութեամբ կողմուած Յանձնարարութի մը ջանքերով, կը յաջողի գնել 3 էջերը տարածութեամբ ղեակին մը, քաղաքի ղեկեցիկ վարքերէն մէկուն քով և Եղիտիպոսեանայ St. Mark's Եկեղեցոյ ղերեզմանատան կից: Այս ղեակներ սլտի գործածուի իրը Հայ ննջեցեալներ



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՈՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

'Նստած' Տեարք Խաչատուր Քէլիշեան' ատենադպիր, Խաչատուր Գարբիլեան' ատենապետ, Տ. Սուքիաս Արեղայ Գալփայեան' հովիւ, Տիար Տաքէս Պարսամեան' գանձապահ: Կանգնած՝ Տեարք Միխայիլ Խաչիւան (Գերեզմանատան Յանձնարարութի ատենապետ), Բարսեղ Գառնեան' Խուռակալ, Խաչեր Մէնէշեան, Կարապետ Պօղոսեան' փոխ ատենապետ, Պարսամ Պարսամեան' փոխ ատենադպիր, Համբարձում Պօղոսեան:



ՏԻԿԱՆՅ ԵՒ ԱՌԱՋՆ. ՕԺԱՆԴԱԿ
ՄԻՌՈՒՅԱՆ ԱՐԶՈՒԹԻՆՆ

Նտած՝ Տիկ. Զարուհի Թորոսեան՝ աւսեմագետ, Հովիւ: Կանգնած՝ Տիկնայ Ծնորիկ Լանինեան՝ ատենադպիր, Անժէլ Պարսամեան՝ վոյս ատենագետ, Արմենուհի Սվանեան՝ գանձապահ: Կը բացակային՝ Տիկնայ Արմեն Սահակեան, Սոնա Եսայեան, Մարիամ Սահակեան:

բու. զերեզմանատուն. սկզբը երկու տարուան ընթացքում էր քաղաքագիտութեանը եւ պատմութեանը հետազոտութիւնը: Այդպէս Վարչութիւնը գոհունակութեամբ վաւերացուցած է այս գովելի ձեռնարկը:

Նախ քան Եկեղեցւոյ շինութիւնը, Սասնի Միլլոսքիի այցելութիւնը հոգեւոր հովիւներ եղած են Տ. Դաւիթ Բիւնյ. Աւետիսեան, Տ. Վահրամ Ծ. Վրդ. Նազարեթեան, Տ. Նիկիտ Բիւնյ. Գալչընեան, Տ. Վարդան Բիւնյ. Դաւիթեան: Իսկ 1924-էն սկսեալ հովուած են Տ. Վարդան Բիւնյ. Դաւիթեան (1924 եւ 1926), Տ. Նիկիտ Բիւնյ. Աշնեան, Տ. Խորէն Ծ. Վրդ. Լազարեան (1927-1930), Տ. Նիկիտ Բիւնյ. Գալչարեան (1930-1933), Տ. Վարդան Բիւնյ. Դաւիթեան (գարձեալ, 1934-1938), Տ. Ղե-

ւոնդ Արեղայ Արապեան (1939), Տ. Գարեգին Աւագ Բիւնյ. Յովակիմեան (1940-1941), Տ. Խորէն Բիւնյ. Մամիկոնեան (1941-1943):

1943 Հոկտեմբերին Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Յովակիմեան Բէյրութի Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ մէջ կը ձեռնադրէ ներկայ հովիւ, Տ. Սուքիաս Արեղայ Գալփայեան, որ մինչեւ վերջերս կը հովուէր Ուխտաւորն ինքնակազմ երեք փոքր Հայ Եկեղեցիները (Բէյրութ, Սասնի Միլլոսքի, Ռէսթ Ալի): Բէյրութի սրբաշիրտ ունեւոր իր սանձին հովիւ, Տ. Սուքիաս Արեղայ կը պաշտօնավարէ մնացեալ երկու համայնքներուն մէջ:

Սասնի Միլլոսքիի եւ շրջակայ Հայ համայնքներու մէջ կանուխէն պահուած է մատաղի սովորութիւնը: Վերջին հինգ տարիներուն թաղային այս սովորութիւնը կը պատճառէ կանոնաւոր, եւ կանոնաւորացուցութեան ձեւ, ի յիշատակ Թումարդայի Ս. Աստուածածին, Կեսարիայ Ս. Կարապետ եւ Ծամնդարի վանքերուն արուած վաղեմի ուխտապատկանաց: Վարդապետին Բէյրութի մէջ, Վերականգնման Սասնի Միլլոսքիի մէջ, իսկ Յուլիսի վերջին Կիրակին ալ Ռէսթ Ալիսի մէջ կը կատարուի մատաղ օրհնութիւն ամէն տարի: Յիշեալ երեք Կիրակիները առիթ են այս շրջանի Հայոց համար հարիւրներով մէկտեղուելու եւ հայրենի յուշերով վերարծարծելու իրենց հաւատքը: Վերջին պատերազմի շրջանին, երբ մտեղէն

ճարել կարելի չէր, այս մտապահները անխափան կատարում են, Հայոց հայթայթած սղջ մտայտ արջաններով:

Եկեղեցին 1924-էն ի վեր ունեցած է կանոնաւոր Գայրաց Գաս: Սկիզբները տարեց զպիւրներ եղած են անգամները, սրտեք զպրատկա Տիար Մամուկ Տէրտէրեանի ջանքերով վարժուած են երգելու եկ մարկան պատարազը: 1944-ին զպրատկաի պաշտօն ստանձնած է Տիկ. Մարի Սամուկեան, որ կազմած է 30 հոգիանոց երկեսու երգչախումբ, երիտասարդներէ ու պատանիներէ բաղկացած: Վերջերս Տիկինը փոխադրուած ըլլալով Սասի Միլիտերէէն, խումբը

կը վարէ օգնական զպրատկաուհի Օր. Նէմզար Գաբրիէլեան: Երգչահանահարն է Օր. Ռոզի Թորոսեան, իսկ ուրարակիր զպիրը Տիար Շընրիք Մուրատեան:

Եկեղեցաւէր Տիկնաց Միւրիւնը կազմուած է 1924-ին: Տիկնները սատարած են եկեղեցուին, զպրաց շապիկներու շինութեամբ եւ զանազան նորոգութիւններով: Ներկայ վարչութիւնը, նախորդներէն փոխանցուած պատմարին վրայ յաւելումներ ընելով ունի մօտ 2,000 տալար: Մտազիր են այս զբամբ յատկացնել ապագային եկեղեցույ կից շինուելիք Ազգային Տան ծախքերուն: Եկեղեցույ վարի սրահի կահկարա-



ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԵՒ ՀԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՈՒՄԲ



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Օր. Նեմգար Գաբրիելյան՝ օգնական դպրատետուխի (նստած, ձախեն երրորդ) :
Տիար Ենոբիք Մուրատեան՝ սեղանի սպասարկող (նստած, հովիւին իջ) :

սինըրու հայթայթման մեծապէս ստատարած է Տիկնանց Միութիւնը, ինչպէս նաև Հայ դպրոցի յասանջութեան :

Տիկնանց Միութեան վարչութիւնը կը գործէ նաև իբր վարչութիւն Աստճնորդարանի Օժանդակ Միութեան :

Եկեղեցւոյ կիրակնօրեայ դըպրոցը հաստատուած է 1943 Հոկտեմբերին, ղեկավարութեամբ Օր. Մարի Ճանտիկեանի (այժմ Տիկ. Զիրքինեան) և աջակցութեամբ Բէյսինի կիրակնօրեայ դպրոցի ուսուցիչներէն Օր. Աղաւնի Հանինեանի և Տիար Յակոբ


Մատաղնեանի : Յարզ կը շարունակուի դպրոցը, 40-50 երկուս աշակերտներով : Յաճախ խտան հանդէսներ սարքած են Բէյսինի կիրակնօրեայ աշակերտներուն հետ : Ամէն տարի Ամերիկեան Քրիստոսի զիշերը կ'ունենան իրենց երեկոյթը : Աշակերտները և դասարաններու բաժնուած, դասաւանդութեանց կը հետևին ժամը 9:30-11:00 : Կը գործածեն անդրերէն դասադրքեր կը ստանան Հայ եկեղեցական և պատմական ծանօթութիւններ և Ս. Պատարակի երգեցողութեան վարչութիւն : Ծախքերը կը մատակարարուին Հոգարարձութեան և կրթական Միութեան կողմէ :



ՀԱՅՅ. ԵԿԵՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Վարչության անդամներն են Օրիորդներ Դեմզար Գարբիլեյան (քղրակցության Բարաուլար, նստած՝ աջէն երկրորդ), Ճիւլի Թորոսեան (ժանուցման վարիչ, միջին բարձր՝ աջէն առաջին), Շարլոթ Պարսամեան (ատենադպիր, միջին բարձր՝ աջէն երկրորդ), Ռոզ Թորոսեան (խառնակատ, միջին բարձր՝ ձախէն երկրորդ): Տեղաբնակ Պոլոսեան (հտեի բարձր, ձախէն երկրորդ), Պետրոս Պոյանեան (ատենակատ, հտեի բարձր՝ աջէն չորրորդ). Գարբիլեյ Գարբիլեյան (վոյս ատենակատ, հտեի բարձր՝ աջէն երկրորդ), Սեմ Քէչեան (զանձակատ, հտեի բարձր՝ աջէն առաջին), և Մարտէոս Գամաղեան (հտեի բարձր՝ ձախէն երրորդ):

Նոյնպէս հաստատուած է Հայ Գլխուց 1924-ին: Ատեն մը պետական Հայ Սքուլ յաճախող Հայ պատանիներուն համար կառավարական վճարումով վարձուած է հայերէնի դասատու: Եկեղեցւոյ Հայկական դպրոցի յառաջիմութեան ստատրամ և նախկին հովիւներէն Տ. Խորէն Մ. Վրդ. Լազարեան և Տ. Եղիշէ Քինյ. Գասպարեան: Ուսուցիչներն եղած են



ԵԿԵՂՅԵՅԻՈՅ ՆԵՐՔԵԱՍՐԱԸԸ

Տեարբ վարդան Պարսամեան, Մանուկ Տերտերեան, Լեւոն Պոյանեան եւ Տիկնայք Սրբուհի Գարայեան, Անժէլ Պարսումեան, Արփիմէ Պարսումեան եւ Զալըմեաց: 1943 Հոկտեմբերէն ի վեր նորընծայ հովիւը ստանձնած է ուսուցչութիւնը, դասաւանդութիւնները կատարելով Շարաթ առաւօտները՝ ժամը 10-12: Վերջերս աշակերտներու թիւը 30-էն իջած է 20-ի:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմէն առաջ եկեղեցին ունեցած է զանազան օտար անուաններով երիտասարդական կազմակերպութիւններ, որոնք լուծուած են պատերազմի պատճառաւ: 1946-էն ի վեր կազմուած է նորագոյն սահմանադրութեամբ Ա. Հ. Ե. Ե. Կ. ի մասնաճիւղ մը: Այս տարի կազմակերպութեան տարեկան համաժողովին (չուամարուած Տիթրոյթ, Մայիսին) Սաութ Միլլուո-

քիի մասնաճիւղէն մասնակցեցան 2 պատգամաւոր եւ 20 այցելու անդամներ:

Վերջերս Հոգարարձութիւնը ընդառաջելով երիտասարդներու փափաքին, մօտ 2,000 տարրի ծախքով նորաձեւած է եկեղեցւոյ հին ներքնատրածը, օժտելով զայն արդիական յարմարութիւններով: Սրահը վերածուած է գեղեցիկ հաւաքալոյսի մը, ուր երիտասարդներ կը հաւաքուին ամէն շաբաթ, եւ կ'ունենան երկկոյթներ, հրաւիրելով երբեմն շրջակայ համայնքներու երիտասարդական կազմակերպութիւնները: Մերթ կ'ունենան դասախօսական ժողովներ եւ յաճախ կ'օգնեն հոգարարձութեան ձեռնարկներուն: Սրահի նորոգութեան ծախքերուն մասնակցած են որոշ չափով: Իրենց նախաձեռնութեամբ վերակազմուած է Դպրաց Դասը:



ՍԻՐԱՔԻԻՉԻ ՀԱՄԱՅՆՔ

Նիւ Եորք նահանգին մէջ, Պըֆլըւոյէն Ալպընի տանող ճամբուն կեդրոնը քաղաք մըն է Սիրաքիւզ, Օհոնտալիօ լճին եզրերը: Ունի մօտ քառօրդ միլիոն բնակիչ: Բարձր գերքի վրայ շինուած՝ օժտուած է զեղեցիկ սրղոտաներով եւ ջրվէժներով: Ելեկտրահան ուժը կը ստանայ Նիւհարա ջրվէժէն:

Երբ առաջին անգամ Եւրոպացիներ եկան այս կողմերը 1615-ին, Հնդիկ ցեղախումբերու մայրաքաղաքն էր ներկայիս Սիրաքիւզ կոչուող տեղը: Ժ.Է. դարուն Յիսուսեան կրօնաւորներ կռուան ու հոս կը հաստատուին Պրանսական զինու. զօրութեամբ: Գրեթէ զար մը՝ Պրանսացիք ու Անգլիացիք մրցումի մէջ ելած են այստեղ, Հնդիկ ցեղերու բարեկամութիւնը չահելու տեսակէտէն: Յեղափոխութեան կռիւներուն Հնդիկները Բրիտանացիներու կողմը կը բռնեն: Ժ.Բ. դարու վերջերը սպիտակամորթները կը սկսին համաձայնութիւն կնքել հնդիկներուն հետ, տեղւոյն ազահանքերը օգտագործելու համար: Այս ձեւով մի քանի զիւղեր կը հաստատուին լճին հարաւային ծայրը: Ասոնցմէ մին մի քանի անգամ անուն փոխելէ վերջ 1820-ին կը մկրտուի Սիրաքիւզ, Սիւկիլիոյ համանուն Յունական քաղաքին ի յիշատակ: 1847-ին Սիրաքիւզ կը վաւերացուի իր քաղաք:

Մինչև 1870 ադի արտադրութեան զօրձը, որ քաղաքի հիմնուելուն պատճառ եղած էր, կը մնայ մեծադոյն զբաղումը: Վերջերս քաղաքը սկսած է ճարտարարուեստի ուրիշ ճիւղերու մէջ եւս յատանանայ, ինչպէս հեծանիւներու եւ զբամեքեաններու արտադրութեան մէջ:

Հայեր Սիրաքիւզի մէջ սկսած են հաստատուիլ մօտ քառասուն տարի առաջ: 1911-ին կազմակերպւում է իրրեւ թեմ, եւ ցարդ այցելու հովիւներէ կախեալ է իր կրօնական կեանքը: Մի քանի հարիւր Հայերէ բազկացած այս թեմը կը փոխաբի աւելի ամուր հիմերու վրայ կազմակերպուելու ու այլ մասին յաջողութիւնը հաւանական է եթէ Առաջնորդարանը կարենայ ճարտար զօրձիչ մը զըրկել աշտեղ:

Այս տարուան հոգաբարձութիւնը կը ներկայացնէ հետեւեալ կազմը.

Տեսրք Խոսրով Խուպէսերեան (ատենապետ), Վահրամ Աղապապեան (ատենադպիր), Խաչիկ Մինասեան (փոխ-ատենադպիր), Պետրոս Բումեան (գանձապահ), Սարգիս Իէշիշեան, Ստեփան Նալպանտեան եւ Նիլա Տէր Պօղոսեան (խորհրդականներ):

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՀԱՄԱՅՆՔ

Օնթարիօ նահանգի մայրաքաղաքն ու Գանատայի երկրորդ մեծագոյն քաղաքն է Թորոնթօ, Օնթարիօ Լիճին Տիւսիտային արեւմտեան եզերքը: Արտարձաններով միասին ունի 900,000 բնակիչ: Օժտուած է գեղեցիկ շէնքերով, որոնցմէ մէկն է խորհրդարանը: Համալսարանը նշանուար է իր ասպջարանութեան մասնաճիւղով: Արհեստագիտական եւ ասեարական գոյէճներ եւս ունի:

Թորոնթօ կապէս բնակութեան յատուկ քաղաք մըն է, լայն տարածութեան մը վրայ շինուած: Տուներուն 60 առ 100-ը իրր բնակիչ ունին սեփականատէրերը: Ունի հսկայ վարք մը ուր ամէն ամառ երկու չարաթ տեսող ցուցահանդէս կը սարքուի: Գործարաններուն թիւը կը հասնի 2,800-ի. այլապէս արտադրութիւններ ունի:

Թորոնթօ անունը հնդկական ծագում ունի եւ կը նշանակէ «Հանդիպման վայր»․ սպիտակ մարդոց զայնէն շատ աստջ այստեղ ժամագրովայն էր շրջակայքի հնդիկ ցեղերուն: 1749-ին Ֆրանսացիներ աստջին անգամն ըլլալով այստեղ կը հասնին ու ամբոյց մը կը շինեն եւ տուտուրի կայան մը կը հաստատեն: Կարճ ատենէն հարաւէն կուզան Բրիտանացիք ու մրցակցութիւնը կը սկսի. 1793-ին Ֆրանսացիք կ'այրեն ամբոյցը զայն իրենց հակառակորդներուն ձեռք չյանձնելու համար: Յաջորդ տարին Բրիտանացիք Գանատայի վարչութեան աթոռը հոս կը փոխադրեն: 1812-ի կռիւներուն քաղաքը կ'այրի ու կը թաղանուի: 1834-ին՝ երբ ունէր 10 հազար բնակիչ, կը վաւերացուի իրր քաղաք:

Թորոնթօյի Հայ գաղութը սկըւած է կազմուել 1900-ական թըւաւաններուն: Առաջին Հայերն են Տէր Է. Տիկիմ Գուրեան: Ներկայիս կան մօտ 150 Հայեր, որոնց մէջ Համեմատարար մեծ թիւ կը ներկայացնեն Պաւլեցիներ եւ Կեսարացիներ: Բաւական թիւով ամուրիներ կան:

գումներու աէր. կան մի քանի յայտնի գորղաւաճատներ: Գաղութին տարէց անդամներէն Տիար Լեւոն Պապայեան յայտնի է իր աստտաձեռնութեամբ եւ Հ. Բ. Ը. Միննթեան պատուոյ անդամներէն մէկն է: Եղած է երկտիտան եւ անդամ Ազգային Կեղրոնական Վարչութեան:

Թորոնթօյի Հայերը կէս առ կէս գործուար են եւ անձնական գրա-

թորոնթօյի Հայութեան կեղեղացական կեանքը սկսած է կազմա-

կերպուելի այս տարի, երբ Առաջնորդարանը վաւերացուց նորընտիր Հոգարարձութիւնը, որ կը բաղկանայ հետեւեալներէն.

Տեաբ Զակոբ Սուին (ատենապետ), Մամբրէ Շիրինեան (ատենադպիր), Գրիգոր Գասպարեան (գանձապահ), Զարեհ Զարխուկեան (գոյքապահ), Տիգրան Ունեան (խորհրդական) :

Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Տիրան Եպս. այցելած է զազութին 1947 Նոյ. 30-ին եւ մատուցած պատարագ, Եպիսկոպոսական եկեղեցիի մը մատուռին մէջ :

Թորոնթոյի Հայ զազութը առաջին անգամ ըլլալով մասնակցեցաւ 1948-ի Ազգային Երեսօխոսանական Ժողովին (Նիւ Եորք), զրկելով իրր Երեսօխոսան Տիար Զակոբ Սուինը :



Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, ԹՐՈՅ

Նիւ Եորք Նահանգի արևելեան մասին մէջ քաղաք մըն է Թրոյ, Հըասըն Գետին կղերքը: Նիւ Եորք քաղաքէն 155 մղոն հիւսիս կը գտնուի, եւ ունի 70,000 բնակիչ: Երկար ժամանակ եղած է շաղկիկի եւ օձիքի ճարտարարուեստի կեդրոն:

Քաղաքին տեղը 1659-ին գնուած է Հնդկիներէն, Հոլանտացիներու նախաձեռնութեամբ: Յեղափոխութենէն վերջ Նիւ Ինկլէնտի շրջաններէն զազթականներու բազմութիւն մը կը խուժէ աշտուղ եւ 1789-ին աւանը պաշտօնապէս կը մկրտուի Թրոյ (Տրոյ-վադա): 1816-ին կը վաւերացուի իր քաղաք: Քաղաքացիական Պատերազմին Թրոյ հիւսիսի բանակներուն կը հայթայթէ թնդանօթ եւ սուսք: 1896-ին սակայն կը վակուին սոցիալատի զործարանները:


Օձիքի ճարտարարուեստին ծաղուժը աշտուղ կ'երթայ մինչեւ 1819, երբ Թրոյցի արկիկն մը իր ամուսնոյն շաղկիկին համար անճատ օձիք շինելու զազախարը կը յղանայ: Թեղանիք շինելու գործը կը սկսի 1845-ին եւ մեծ թափ կ'ստնէ կարի մեքենաներու ներմուծումով 1852-ին:

Քաղաքին բնակչութիւնը մօտ 40 տարիէ ի վեր չածեր:

Թրոյի Հայ գաղութը Ամերիկամայ ամենահին գաղութներէն մէկն է: Առաջին անգամ 1885-ին խումբ մը Խարթերդցի պանդուխտներ կուղան հաստատուելու Թրոյ, ու յաջորդաբար անոնց թիւը կ'աւելնայ: 1908-ի Թրքական Սահմանադրութեան հւշակումէն վերջ մեծ թիւով Կիլիկիացիներ կը գաղութեն Թրոյ: Ներկայիս Թրոյի եւ շրջականերու (Վոթրոյիթ-Ալպընի) Հայոց թիւը մօտ 1,600 է, մեծ մասամբ Այնթապցիներէ եւ Մարաշցիներէ բաղկացած:

Այս քաղաքի Հայոց եկեղեցական կեանքը սկիզբ առած է 1899-ին, նախաձեռնութեամբ մի քանի սոցալայիներու, սրտնք կազմած են առաջին հոգարարութիւնը: Այդ սոցալայիներն են Տեարք Մինաս Հայրապետեան, Յարութիւն շափէրեան, վարդան Գալայեան, Առաքել Թորոսեան, կարապետ Օվոյեան, Սահակ Լաչաեան:

Առաջին եկեղեցական պաշտամունքը կատարուած է Սթէյթ Փո-



Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԽՈՐԱՆԵՐ

յոցի վրայ Եպիսկոպոսական Ալյնթ Փոլ Եկեղեցւոյ մատուօին մէջ: Մօտ 12 տարի շարունակ յիշեալ Եկեղեցւոյ հովիւն ու հոգարարձութիւնը բարեացակամօրէն արամադրած են իրենց շէնքը Հայոց:

1911-ին Թրոյի Հայ համայնքը կ'ունենայ իր սեփական Եկեղեցին կրին Ալլէնթի մէջ, 2,500 տուարի գնելով շէնքը: Եկեղեցւոյ մէջ առաջին պատարագը կը մատուցանէ Տ. Ղեւոնդ Բեկյ. Պաիլաուունի, Հոկա. Տ-ին: 1916 Յուլիսին կը կատարուի Եկեղեցւոյ օծումը, ձևաամբ Տ. Տիրայր Վրդ. Մարգարեանի ու Տրիփուն Վրդ. Պիծակեանի:

1927-ին Թրոյի Հայութիւնը աւելի լաւ Եկեղեցական շէնք մը ունենալու բաղձանքով ծախու առած է ներկայիս գործածուող Եկեղեցին (Ֆրիթթ: Էվլընիւ և ճէյքըզ Սթրիթ), 30,000 տուարի: Գնուելէն ի վեր շէնքը երեք անգամ նորոգութեան ենթարկուած է, և այս արժած է մօտ 18,000 տուար: Ներկայիս շէնքին արժէքը 75,000 տուար է:

Եկեղեցին լաւ դիրք մը ունի, պողոտայի մէկ լայն մասին վրայ գտնուելով: Բարձրութիւնն է 120 սաք, լայնութիւնը 90 սաք, և երկայնքը 228 սաք: Ունի 47 նստարաններ 500 անձի բաւող և վերնատուն մը 125 աթոռներով: Մեր թեմի ամենախոշոր Եկեղեցիներէն մէկն է, եթէ ոչ առաջինը:

Նոր Եկեղեցւոյ գնման նախաձեռնողներ եղած են Տեաքք Գասպար Տէր Մետրոպեան, Յակոբ Աղազարմ, և Թորոս Տէր Պետրոսեան: Շէնքը գնուած է ունեւոր և ոչ ունեւոր Հայ հաւատացեալներու սրտարուխ նուէրներով. խոշոր գումարներով իրենց մասնակցութիւնը բերած են Տեաքք Թորոս Տէր Պետրոսեան (հայր և որդի), Մալքրէ Մկրտիչեան, Յակոբ Աղազարմ, Գարեգին Տօլպպեան: 1941-ին Եկեղեցւոյ վերջին պարտամուրհակը կը վճարուի, երբ արմ մը ժողովուրդը ի դին զոհութեանց կը գոյացնէ պահանջուած 15,000 տուարը:

- Ս. Պետրոս Եկեղեցւոյ օծումը* Ս. Ղեւոնդ Վրդ. Մարդուկէսեան
կը կատարուի 1927-ին, ձիւսմը (1916-1917)
Ասաջնորդ Տ. Տիրայր Արքեպիս- Ս. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
կոպուսի և մասնակցութեամբ Տ. (1919-1920)
Եղիշէ Բինյ. Գալչընեանի և Տ. Ս. Պետրոս Բինյ. Վարդանեան
Պետրոս Բինյ. Յակոբեանի: (1921)
- Ս. Պետրոս Եկեղեցւոյ կազմը-* Ս. Սահակ Բինյ. Տէր Պետրոսեան
ւելէն ի վեր պաշտօնավարող հո- (1922-1927)
ղեւոր հովիւներ եղած են հետե- Ս. Ստեփան Վրդ. Վարդանեան
ւաղները. (1927-1928)
- Տ. Վարդան Բինյ. Մխիթրեան Ս. Եղիշէ Բինյ. Գալչընեան
 (1911) (1928-1930)
- Տ. Տրիփուն Ծ. Վրդ. Պիծակեան Ս. Նշան Բինյ. Փափագեան (1930-
 (1913-1916) 1931)



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեարք Ն. Նշարեան՝ փոխ առեւնապետ, Լ. Գալայեան՝ առեւնապետ,
 Տ. Բարգէն Վրդ. Վարժապետեան՝ հովիւ, Տեարք Մ. Սաարեան, Կ. Տէր Պետրոսեան:
 Կանգնած՝ Տեարք Ղ. Զորպանեան, Յ. Պարսամեան՝ զանձապահ, Կ. Ունեան, Յ.
 Թամամեան, Յ. Մովսէսեան՝ առեւնադպիր:

Տ. Եղիշէ Քինյ. Գաապարեան
(1931-1933)

Տ. Վեռնդ Քինյ. Բարունակեան
(1935-1938)

Տ. Վահան Աւագ Քինյ. Կիւտալ-
եան (1938-1945)



ԵԿԵՂԵՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

*Ներկայիս Եկեղեցւոյ հոգևոր
հովիտն է Տ. Բարգէն Վրդ. Վար-
ժապետեան որ կը պաշտօնավարէ
1946-ի աշունէն ի վեր :*

*Ս. Պետրոս Եկեղեցւոյ Երևոյթ-
խաններն են Տեաք Զակար Կիւ-
տալեան և Աարգիս Վարդիկեան :*

*Ս. Պետրոս Եկեղեցին ներկայիս
ունի 125 անդամներ :*

Եկեղեցասէր Տիկնանց Միու-
րիւնը կազմուած է 1914 Մայիս

'Նաաժ' Տիկ. Նուարդ Տ. Պետրոսեան'
ասեմնապետ, Հովիւ, Տիկ. Նուրիցա Թապ-
լայեան: Կանգնած՝ Տիկնայք Տիրուհի
Թամամեան՝ փոխ ատենապետ, Տիգրա-
նուհի Տ. Պետրոսեան՝ գանձապահ, Ատ-
ղիկ Թաշեան՝ ատենադպիր :

*Ճ-ին : Եկեղեցական, կրթական և
ընկերային ծառայութեան բոլոր
մարդերուն մէջ բերած է իր լիա-*



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիր. Զակար Սրկ. Կիւտալեան՝ ղարապետ (կեդրոնը) : Օր. Լուսի Սաննեան՝ օր-
կընիսք (Ա. շարք, աջէն չորրորդ) :



ԵԿՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օր. Լուսի Սաննեան՝ հաշուապահ, Տիար Գոգոս Մեծօթուհեան՝ ատենապետ, Թարոս Տ. Պետրոսեան՝ փոխ ատենապետ, Թր. Լուսի Տէրտէրեան՝ ատենադպիր: Կանգնած՝ Տիար Երուանդ Գազանեան, Օր. Ջոզէֆին Գազանեան՝ փոխ ատենադպիր, Տիար Յովհաննէս Աւագեան՝ գանձապահ:

սառ մասնակցութիւնը: Ներկայիս 80 անդամ ունեցող այս Միութիւնը իր տարեկան հասոյթին մէկ մասը յատկացուցած է Եկեղեցւոյ պէտքերուն, և մէկ մասն ալ Հայկական դպրոցին: Տիկնանց Միութիւնը տարեկան 400 տարար Եկամտն ունի:

Ս. Պետրոս Եկեղեցւոյ Դպրաց Դասը քանիցս վերակազմուելէ վերջ, 1935-էն ասոյին անխափան կը շարունակէ իր ծառայութիւնը: Ներկայիս ունի 28 անդամներ, երկու սեռէն: Բարեհնորհ Յակոբ Աւագ Սրկ. Կիւլտայեան (գլուխ և

Կեղեցւոյ նախորդ հովիւ Տ. Վահան Բահանայի) 1936-էն ի վեր կը վարէ զպրտակտուութեան պաշտօնը: Դպրաց Դասը ոչ միայն կը կատարէ Ս. Պատարազի երգեցողութիւնը, այլ նաև իր ստացած նուէրներով կ'օգնէ դպրեւու նորոգութեան: Վերջերս, Եկեղեցւոյ փողաւոր օրկընի զնման ի նպաստ 300 տարար յատկացուցած է: Օրկընիսթը և վարչութեան քարտուղարն է Օր. Լուսի Սաննեան:

Եկեղեցին ունի իր կիրակօթեայ դպրոցը, հիմնուած 1917-ին Տիկին Ազնիւ Մովսէսեանի կողմէ,

որ երկար տարիներ վարած է գպրոցին տեսչութիւնը: Յաճախող աշակերտներու միջին թիւը 40 է տարեկան: Դասաւանդութիւնը տեղի կ'ունենայ ժամը 11-12: Գպրոցին ծախքերը գրեթէ ամբողջութեամբ կը հայթայթուին աշակերտներու նուէրներով:

Հայկական գպրոցը կազմուած է 1914-ին: Մինչև 1922, միջին հաշուով 60 աշակերտ ունեցած է տարեկան: 1924-էն 1926 Ուսումնական Խորհուրդի հսկողութեան տակ Թրոյի եւ Վոթրվիթի գոյզ գպրոցներու աշակերտութեան թիւը կը բարձրանայ 90-ի: Նախորդ շրջանին, դասաւանդութիւնը կը սկսէր Յունիսի վերջերը եւ կը շարունակուէր մինչև Սեպտեմբերի կէսը. շարաթը հինգ օր հայերէն կ'աւանդուէր, կէսօրէն

առաջ Թրոյի մէջ 2 ժամ, եւ կէսօրէն վերջ Ուոթրվիթի մէջ 2 ժամ: Ներկայիս աշակերտութեան թիւը իջած է 20-ի: Դասաւանդութիւնը կ'ըլլայ շարաթը երկու օր կէսօրէ վերջ ժամը 4.00-6.00: Տարեկան ծախքը միջին հաշուով 300 տօրար եղած է: Այս դամբարը այլազան ձեռնարկներով կը դոյացնեն Խնամակալութիւնն ու Տիկնանց Միութիւնը:

Ս. Պետրոս Եկեղեցւոյ նորագոյն կազմակերպութիւնն է Երիտասարդացը որ երկու տարուան մէջ յաջողած է իր անդամներու թիւը հասցնել 45-ի (24 արական, 21 իգական): Կը ջանան եկեղեցասիրութեան ոգին մշակել, կը սարքեն դասախօսական ժողովներ եւ ընկերային հասարակութիւնը: 1946-1947 տարեշրջանին ունեցած են



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆԵՐՔՆԱՍՐԱՀԻ ԲԵՄԸ

800 տուրք եկամուտ, որուն 500-ը յատկացուցած են եկեղեցւոյ վաւար օրկրնի նորոգութեան: Ներկայիս իրենց գանձին մէջ ունին 307.62 տուրք:

Եկեղեցւոյ պատմութենէն յիշատակելի թուական մըն է 1911-ը երբ կատարուեցաւ պարտամուրհակի կիզման հանդէսը, ինչպէս նաև Տրեկնոնց Միութեան 25-ամեակը, երբ 42 անդամուհիներ ստացան սակի խաչեր: Մեծի Տանն Կիլիկիոյ ներկայ Կաթողիկոս Տ. Տ. Գաբրիէլի վեհափառ, Ամերիկայէն մեկնելէ առաջ Թրոյի մէջ կը պատուուէ յորելինական հանդէսով մը, եւ Թրոյի Հայութիւնը

իր որդիական յարգանքի տուրքը կը մատուցանէ նաւիրելով յորել-կարին 1,300 տուրք: 1917-ի Հոկտեմբերին, Ազգային Երեսփոխանական Ժողովը կը զումարուի Թրոյի Ս. Պետրոս Եկեղեցւոյ վարի սրահին մէջ, որ այս ասթիւրնդարձակ նորոգութիւններով բարեփոխուած էր: Իսկ այս տարի Աեպտեմբերի առաջին շաբաթը, Թրոյի եկեղեցին կը հիւրընկալէ մեր թեմի եկեղեցեաց զպրայց դասերու վարիչներն ու ներկայացուցիչները, իրենց Բ. Տարեկան Ժողովին ասթիւ: Աեպտ. 5-ին, հանդիսաւոր պատարագի մը երկցուցութեան կը մասնակցին մօտ 20 թեմերէ եկած երգիչներ:



Ս. ԻԱԶ ԵՎԵՂԵՑԻ, ԵՈՒՆԻԸՆ ՍԻԹԻ


Նրա ձրբբի նահանգի քաղաքներէն մէկն է Եունիթըն Սիթի, Նրա Եորք քաղաքի հանդիպակաց կողմը, բարձր գիբբի վրայ ևւ Հրտարն Գեաւն քաաաղ մզոն հեաաւ: Կր գանաուի Հաղաքըն ևւ Ուէաթ Նրա Եորք աաաննեբաան միջև: Ունի մաա 60.000 բնակիչ ևւ մեաաբաի ճարաարարաուեաաի կարեաար կեղբան մըն է:

Եունիթըն Սիթի կաղմաաւ է 1925-ին, միաչաամաղր Եունիթըն աաանին ևւ Ուէար Հաղաքըն աաանին: 1920-ին յիւեաղ եբկա աաաննեբէն աաաջինբ աանըբ 20.000 բնակիչ, իսկ եբկբորղը՝ 40.000:

Այս քաղաքի Հաչաթիխընը վաթաաուն աարաաան պաաամաւթիխըն մաաանի: Ներկաղիս կը հաչաւէ աւեղի քան հինղ հաղար Հաչեր, որանղ աաաուար մեւամաաանաւթիխըն Տիղբանակերպցի ևւ:

1899-ի գարնան օաար Եկեղեցիի մէջ Կիրակիի կէաորէ վերջ պաաաաբաղ մաաաուցանելաղ կը սկսի գաղաղթին Եկեղեցական կեանքը: Նոչն աարաաան Սեղաեմբերին, երբ նոչն ձեւաղ կը մաաաուցաղի պաաաարաղըբ միեւնոչն օաար Եկեղեցիին մէջ, Բողաքական հաղիւը կը թեղաղբէ որ Հաչերը աճաղաբեն, քանի որ ինը կաաարեղիք արարաղաղթիւն ունի եղեր: Ասկէ կը խրաչին Հաչերը ևւ կը գիմեն Ամբերիկահաչաղց անղբանիկ Աաաջնորղին՝ Տ. Յաղաէփ Եղիսկաղաղս

Սարաեհանիին, որղկաղի ձեանարկէ խրենղ սեղաղան Եկեղեցի մը աղահաղիբաւ գործին: Նոչն աարին արղէն իսկ Ուէաթ Հաղաքընի մէջ 7 Հաչերէ բաղկաղաւ հաղաբարձաղթիւն մը գոչաղթիւն ունի. աաեհաղեաղը՝ Արմեհակ Շիշմանեհան, իսկ գանձաղաղը՝ Կարաղեհա Չանղաղեհան: Եկեղեցաղ մը շինաղթեան հաղար արաւաւ խնձաղքահանղանեբէ գոչաղաղաւ ըղղաղղ 300 աղրար, կը ձեանարկեն նաղի հաղր գնել, ինչ որ կը յաջղղին ընել 1902-ին, 800 աղրար վճարելաղ: Շինաղթեան ճարղը աղահաղիբաւ հաղար Աաաջնորղ ևւ Հաղարարձաղթիւն կը գիմեն Նրա Եորք բնակղղ երեբ անաանի աղղաղիննեբաւ — Կիղղկեհեհան, Գաղղակեղղեհան ևւ Թաղղաղնեհան — ո-



Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑՈՅ ԿՈՐԱՆԸ

րոնցմէ իւրարանջիւրը հազար տարար կը նստիւրէ :

1906-ի Սեպտեմբերին կը կատարուի Եկեղեցւոյ հիմերուն օրհնութիւնը : Տանովեց անկիւնաքարերէն մէկուն կնքահայրութիւնը կը ստանձնէ Ամերիկացի օտար մը : Բարեպաշտ Գերմանուհի մը չորս հազար տարարի փոխառութիւն մը կ'ընէ, և չէնքին կատուցումը փութով կ'օտարաւ երկու ամիսէն :

Օծումը կը կատարուի ձեռամբ Առաջնորդ Տ. Յովսէփ Սրբազան Սարախեանի, որ 1907 Յունուար 27-ին կը կատարէ այդ փառաշուք արարողութիւնը, և զայն կը կո-

չէ Ս. Խաչ Եկեղեցի : Արարողութեան կը մասնակցի Մատթէոս Վրդ. Անէմեան : Եկեղեցին կը լինի Ամերիկահայոց Երրորդ Եկեղեցին, Ուսարի Ս. Փրկիչէն (օծ. 1889) և Ֆրէյմոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցիէն (օծ. 1900) վերջ :

Ս. Խաչ Եկեղեցւոյ օծման շնորհանքին հազարարձութիւնը կը կազմեն հետեւեալ անդամները. Տեարք Մկրտիչ Շիշմանեան (ստեղծող), Մկրտիչ Գալայնեան (ստեղծող), Մարգիս Մահմարեան (զտեմտող), Մկրտիչ Գարանիկեան, Յովհ. Հէֆիմեան, Ստեփան Սմարեան, Կարապետ Չանգալեան, Մարտիրոս Ֆէնէրեան և Յակոբ Միսաքեան :

Եկեղեցւոյ շինութեան ծախքը կը լինի 9,961 տալար: Շէնքի կառուցման աւարտումէն վերջ, ծխական անհրաժեշտ իրեղէնները հայթայթելու համար դարձեալ գիմում կը կատարուի նիւ Եւրօքսինակ վերոյիջեալ երեք ազգայիններուն, որոնցմէ կիւլպէնիեան Երուսաղէմէն բերել կուտայ շարակնոց, ճաշոց Գիրք, Ժամագիրք, Աւետարան եւ մնացեալ բո-

լոր պէտք եղած գրքերը: Թաւշանճեան առնը բերել կուտայ պատարազիչի գղեստներ, իսկ Գարակիօզեան Տունը սեղանի եւ խորանի վարագոյրներ:

Եկեղեցւոյ կալուածը, որ 100×50 սոք մեծութիւն ունի, ներկայիս կ'արժէ 40,000 տալար: Կը նըստեցնէ մօտաւորապէս 300 հոգի: Չունի ներքնասրահ, թէեւ խորա-



ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐ

Նստած՝ Տ. Խորէն Բիւնյ. Մամիկոնեան՝ Հովիւ: Կանգնած՝ Տեառք Տիգրան Սմաթեան, Նսան Եանիմեան, Հայկ Սմաթեան:



ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹՅՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեախ Եսան Ստամբոլեան, Արմենակ Ոսկեան՝ փոխ ատենապետ, Հովիւր, Տեախ Խարէն Շահապեան՝ ատենապետ, Յարութիւն Գարակէօզեան՝ ատենապետ, Կանգնած՝ Տեախ Գրիգոր Պէնտիեան՝ փոխ ատենապետ, Լեւոն Վարդանեան, Երուանդ Թոնամեան, Հայկ Շքիլեան՝ զանձապետ, Լեւոն Վարժապետեան:

*նին կոնակի մտար կայ փոքր սրահ՝
մը ուր հայերէնի դաստանդու-
թիւններ և ժողովներ կ'ըլլան:*

1937-ի Յունուար 31-ին կը
ստնուի Ս. Խաչ Եկեղեցոյ օժ-
ման Լրեսնամեակը, նախաձեռ-
նութեամբ նոյն տարուան հոգա-
րար ձեռնարկէ, որուն անդամներն
են եղած Տեախ Հայկ Սմաարեան
(ատենապետ), Պաղտասար Գա-
զազեան (փոխ-ատենապետ), Յա-
րութիւն Գարակէօզեան (ատենա-
պետ), Տիրան Վարժապետեան
(փոխ ատենապետ), Միհրան
Շարբեան (զանձապետ), Խորէն
Պարմազեան, Միհրան Թոնամե-
ան:

*Եկեղեցոյ հոգեւոր հովիւներն
եղած են հետեւեալները.*

Տ. Յովսէփ Եսա. Սարանեան
(1899 և 1907)

Տ. Պողոս Վրդ. Գափրանեան
(1908)

Տ. Դաւիթ Քինյ. Տէր Դաւիթեան

Տ. Պողոս Վրդ. Շահնագարեան
(1911-1913)

Տ. Ագարիա Քինյ. Պոյանեան

Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
(1915-1917)

Տ. Սերովբէ Քինյ. Ներշապուհ

Տ. Եղիշէ Քինյ. Գալչլնեան

Տ. Մամբրե՛ Ծ. վրդ. Գալփայեան
(1927-1934)

Տ. Վահրամ Ծ. վրդ. Նազարէր-
եան (1935-1943)

Տ. Մեսրոպ Վրդ. Սեմէրեան
(1943-1945)

Իսկ 1945 Դեկտ. 31-էն ի վեր կը
պաշտօնավարէ Տ. Խորէն Քինյ. Մամիկոնեան:

Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ առաջին
մկրտութիւնը կատարած է Տ.
Յովսէփ Եպս. Սարաբեան 1907
փետր. 3-ին. մկրտուողը կրած է
Վահրամ Սարգիս Քացայեան: Ա-
ռաջին պսակը կատարած է Տ.
Սարգիս Քինյ. Թաշնեան 1907
Յունուար 27-ին. պսակուող զոյ-
ղը կրած է Տրչրանակերացի Յա-
կոբ Սարգիս Աղամեան եւ Լուսիս

Գեորգ Գրիգորեան: Նոյն օրը կա-
տարուած է առաջին թաղումը Սա-
րաբեան Սրբազանի կողմէ. ննջեց-
եալն է Եղեր Տրչրան Նախարեան
Երիտասարդը:

Ներկայիս Ս. Խաչ Եկեղեցին ու-
նի 284 արատու անդամներ:

Ս. Խաչ Եկեղեցւոյ Տիկնաց
Սխուքեան կողմութեան նախա-
ձեռնողներն կրած են Տիկիններ
Մարբուհի Գաղաղեան եւ Հայկա-
նուշ Աթէշեան: Առաջին ժողովը
տեղի ունեցած է 1934 Հոկտ.
11-ին, 20 անդամով:

Եկեղեցւոյ Գարաց Դասը կող-
մըւած է 1910-ին եւ մինչեւ հիմա
պաշտօնավարած են Տեաեւեայնե-
րը որպէս զպրապետ. Տեաք
Մարտիրոս Գալփա Ֆէնէրեան,



ԵԿԵՂԵՅԱՍԵՐ ՏԻԿՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Ազնիւ Տաղեան, Ծովինոբ Մամիկոնեան, Հովիւ. Տիկնայ
Մաքրուի Գազազեան, Ալիս Քիւրճեան՝ փոխ առեմապետ: Կանգնած՝ Տիկնայ Ազնիւ
Հէֆիմեան՝ առեմաղպիր, Ազնիւ Աբեան, Երանիկ Շարբեան՝ գամձապահ, Զուարթ
Պաղտասարեան՝ փոխ առեմաղպիր, Ազնիւ Պառմանեան, Աստղիկ Գարակէօզեան՝ ա-
ռեմապետ: Կը բացակայի Տիկ. Սիրանուշ Նանարեան:



ԴՈՒՐԵԱՆ ԵՒ ՄԵՍՐՈՊԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Աբալոյս Արփարեան՝ ատենադպիր, Ծովինար Մամիկոնեան, Հովիւ, Տիկնայք Մէրի Գալփայեան՝ ատենապետ, Ազնիւ Շէֆերնեան՝ գանձապահ: Կանգնած՝ Տիկնայք Սարենիկ Շահինեան, փարիս Թոմասեան, Երանիկ Նալպանտեան, Զապէլ Պէրպէրեան՝ փոխ ատենապետ, Ազնիւ Շահմարեան: Կը բացակայի Տիկ. Զոհրա Փարիսեան՝ փոխ ատենադպիր:



ԽՐԻՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկ. Արտեմիս Գարբիլեւեան՝ ատենապետ, Հովիւ, Տիկ. Աղանի Շալաբեան: Կանգնած՝ Տիկնայք Թագուհի Նուրիկեան՝ ատենադպիր, Մէրի Զեհեան, Սէզար Պոյանեան, Նուարդ Զօլաբեան՝ փոխ ատենապետ, Հայկանոյ թանէեան: Կը բացակային Տիկնայք Վիքթորիա Զազմազեան՝ գանձապահ, Աստղիկ Գարբիլեան:

Անտոն Զերեգեան, Ռուբէն Տիգրանեան, Եղիազար Աղգարեանց, Յարութիւն Մեհրապ, Յարութիւն Շալեան: 1947 Սեպտ. 1-էն ի վեր կը պաշտօնավարէ Տիար Խոսրով Համամեան:

Ս. Խաչ Եկեղեցոյ Կիրակոսեայ դպրոցը սկսած է Տիկին Սարեմիկ Սմաթեան 1921 Նոյեմբերին, զեկավարութեամբ իր ամուսնոյն Պ. Տիգրան Սմաթեանի: Ներկայիս, 3 տարիէ ի վեր ուսուցչուհիներն են Օրբորդներ Հէլէն և Տօրոքի Գրիգորեան քոյրերը: Դպրոցը աստջին տարեչրջանին սկիզբը ունեցած է 12 աշակերտ. այս թիւը մի քանի ամիսէն բարձրացած է վաթսուհի: Աշակերտներու նախարատութեանց զու-

մարը այլ տարի եղած է 17-75 տարւոր:

Հայերէնի ուսուցումը շատ կանուխէն հաստատուած է այս համայնքին մէջ: Ս. Խաչ Եկեղեցին ունեցած է Մեսրոպեան վարժարանը, որ իր անդրանիկ շրջանաւարանները սուսած է 1916-ին: Ներկայիս Մեսրոպեան վարժարանէն դաս կայ Գուրեան վարժարանը նորթ Պըրկընի մէջ, ինչպէս նաև Խրիմեան վարժարանը Ուէսթ Նիւ Եորքի մէջ: 1947-1948 շրջանին Մեսրոպեան և Գուրեան վարժարաններու ուսուցչուհիներն էր Տիկ. Ս. Զեմեան իսկ այս շրջանին՝ Տ. Անուակ Գիւնյ. Գասպարեան: Երկու դպրոցները միասին ունին 23 աշակերտ: Խնամակալութիւնը



ԵՎԳ. ԵՐԻՏ. ԿԱՐՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիար Լեւորիւ Թաւեան՝ գանձապահ, Օր. Մարգրիտ Գեօրջեան՝ փոխ առևնապետ, Հովիւ, Տիար Ֆիլիփ Արփիարեան՝ ատենապետ, Օր. Տիգրանուհի Մկռնց՝ ատենադպիր: Կանգնած՝ Օր. Գոհար Տէպաղեան, Օր. Մարիլա Գեօրջեան, Տիար Հայկ Նանարեան, Օր. Մէրի Գրիգորեան, Օր. Տօրօքի Գրիգորեան (չգրական):



ԳՊՐԱՅ ԳԱՍ. ՏԻԳՐԻՍ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ

Տիար Խոսրով Համամեան՝ Գլխավոր (Մտած)

նոյնն է Երկուքին համար: Ուէսթ
Նիւ Եորքի Խրիմեան Վարժարա-
նը 1947-1948 տարեշրջանին ու-
նէր 10 աշակերտ: Դասուանդու-
թիւնները տեղի կ'ունենան շաբա-
թը 2 անգամ, կէսօրէն վերջ ժամը
3-5, հանրային վարժարանի մը

մէկ դաստարաշին մէջ: Ուսուցիչն
է Տիկ. Մ. Սահակեան:

Ս. Սաչ Եկեղեցոյ Երիտասար-
դաց Միութիւնը, որ կազմուած է
Երկու տարիէ ի վեր, ունի 25 ան-
գամ (8 մանչ, 17 աղջիկ):



ՌԻԱՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Ուաշինկթըն Միացեալ Նահանգաց մայրաքաղաքն է, Նիւ. Եորքէն 226 մղոն հարաւ արեւմուտք, Փօթօմաք գետին եզերքը: Մեծութեան տեսակէտով երկրին 11-րդ քաղաքն է, մօտ \$50.000 բնակչութեամբ, սրուն քաղաքը սեւամորթ: Կլիման յաճախ խոնար է. ամառը երբեմն չափազանց տաք, խոկ ձմեռները մեղմ:

Քաղաքը բացի իր պետական դանդաղ սրճատնտեսներէն ունուանի է նաև բազմաթիւ կրթական հաստատութիւններով, սրանց մէջ ստալին դժի վրայ կուզան Ձինուարական Գոլէճը, ճորճ Ուաշինկթըն Համալսարանը, և. Կաթոլիկ Համալսարանը որ ունի վանք, աղջկանց դոլէճ, աստուածաբանական և. իրաւաբանական ճեմարաններ ի միջի սյուց: Հասարակ Համալսարանը յատկապէս սեւամորթներու. բարձրագոյն կրթութեան համար է բացուած 1867-ին: Գարնկի Հիմնադրութիւնը (1902-ին հաստատուած) նշանուոր է իբր գիտական ու. պատմական հետազոտութեանց կեդրոն: Ամբողջ Միացեալ Նահանգները ներկայացնող շատ մը գիտական ընկերակցութիւններ Ուաշինկթընի մէջ ունին իրենց կեդրոնը: Գոնկրէսի Մատենադարանը կը պարունակէ աւելի քան վեց միլիոն գիրք, մէկ ու. կէս միլիոն քարտէջ և. նոյնքան թիւով երաժշտական հաստրներ: Աշխարհի մեծագոյն բժշկական մատենադարանը կը դանուի հօս \$50.000 հաստր բովանդակութեամբ:

Ուաշինկթըն աշխարհի ստալին քաղաքն է որ կառավարութեան մը կողմէ յատկապէս ծրագրուած ու. շինուած բլլայ իբր մայրաքաղաք: Ամերիկեան անկախութեան հռչակումէն քիչ վերջ, մօտ տաս քաղաքներ իրարու. հետ կը մըցին երկրի մայրաքաղաք գտնալու համար: Սակայն Գոնկրէսը կը սրուէ Փօթօմաք Գետին վրայ շինել մայրաքաղաք մը, սրուն շրջապիծը շրլլայ տաս մղոնէն աւելի: Նախագահ ճորճ Ուաշինկթըն քաղաքին յատակապիծը պատրաստելու գործը կը վստահի Ֆրանսացի ճարտարապետի մը:

Քաղաքին շինութիւնը բոլորովին շրջանար նախապիծի հետևողութեամբ: 1812-ին Բրիտանացիք կ'ալրեն նախագահին բնակարանը, որ հետագային կը ներկուի ճերմակ ու. առկէ ի վեր ծածօթի է Սպիրտակ Տուն անուամբ: 1912-ին է որ սկզբնական ծրագրին հաստորիմ մնալու. սղիով կարց մը խոչար բարեփոխումներ կը կատարուին. նոր յաւելումներէն մէկն է ներկայ երկաթուղիի գեղեցիկ կայարանը: Կ'աւելան հանրային պարակցներ և. փողոցները բացուելով կը դարդարուին ամենապեղեցիկ ծառերով:

Քաղաքը լի է նշանուոր յուշարձաններով: Աշրտու. շինարէն և. Կաղիտուր (շինուած 1793-1827), Սպիրտակ Տունը (շինուած 1792-1799), Պետական Գանձատունը, Գոնկրէսի Մատենադարանը, և. Թանգարանը: Ասանցմէ սմանք Կորնթական, ուսմանք ալ Իտալական վերանորոնչի սճով շինուած և. եկեղեցիներէն նշանուոր է Աղ-գային Եպիսկոպոսական մայր տաճարը:

Ուաշինկթրնի Հայ դադութը մօտ 800 անձեր կը հաշուէ իր մէջ: Տակաւին կարգակերպուած չէ իրր թիւմ, թէև ունի հոգարարձական մարմին մը եւ կ'ունենայ սարքերական հոգևոր պաշտամունք, այցելու հոգևորականներու շնորհիւ:

1948-ի Մայիսի վերջը Ուաշինկթրնի մէջ տեղի ունեցաւ Հ. Բ. Ը. Միութեան Տարեկան Համաժողովը: Իսկ 1947-ի Մայիսին, Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոսի զլխաւորութեամբ Հայ պատգամաւորութիւն մը այստեղ ներկայացաւ Պետական Պաշտօնատան տւող քար-

ուղարին, յանուն Համահայկական Գանկրէտին խնդրանք մատուցանելով Հայկական Գառի լուծման համար:

Ուաշինկթրնի Հայոց Հոգարարձական մարմինը, որ վաւերացուած է 1945-ին, կը բաղկանայ հետեւեալներէն.

Տեաբք Տօնապետ Պարույրեան (տուննապետ), Տիգրան Ճանիկեան (գործատուննապետ), Խոսրով Խոսրովեան (տուննապետ), Վարդան Մանուէլեան (գործատուննապետ), Ղազար Պօղոսեան (գանձապահ):

..



...


WATERTOWN, MASS.

Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՈԹԸՐԹԱՈՒՆ

Ուսթըրթաուն 40.000 բնակչւոյ աւան մըն է Պոսթոնի մօտ, 1630-ին հիմնուած : Ժ.Է. դարուն Պոսթոնէն վերջ ամենէն բազմամարդ քաղաքն էր Ամերիկայի: Բազմաթիւ և ալլազան արտադրութիւններով, ճարտարարուեստական քաղաք մըն է այժմ :

Ուսթըրթաունի մէջ Հայեր ըսկըսած են հաստատուիլ ասկէ 55 տարի առաջ: Ներկայիս Հայոց թիւը չուրջ 3,000 է. այս թիւին

մէջ կան Թրքահայաստանի բոլոր գաւառներէն եկածներ, մեծամասնութիւնը ըլլալով Խորհրդոցի ներքը:



Ս. ՅԱԿՈՒԲ ԵԿԵՂԵՑԻ



Ս. ՅԱԿՈԲ ԵԿԵՂԵՅՈՅ ԽՈՐԱՆԸ

Ուսիրբթաւնի մէջ ունինք մասնաւորաբար կատարուած Հայկական շքեղ եկեղեցի մը որուն կարածը կ'որժէ ներկայիս 120,000 տարար: Շինուած է 1931-ին, 60,000 տարար ծախքով: Նախաձեռնողներն են եղած Հեռու-հալ արդայինները: Տեսաք Լեւոն Գրիգորեան, Հայկազ Ազըլեան, Բենիամին Թորոսեան, Կարապետ Կարապետեան, Գեորգ Տէր Պօղոսեան, Տօնապետ Պօղոսեան, Միւրան Ուննեան, Միսաք Բարսեղեան, Միսաք Մատոյեան, Արմենակ Տէրոյեան, Մարտիրոս Ակօ-

նեան, Կարապետ Զաքարեան, Կարապետ Գարակիլեան:

Եկեղեցւոյ երկայնքը 90 սոք է եւ լայնքը 45 սոք: Կրնայ նստեցրնել 400 հոգի: Խորանը ունի երեք զեղակերտ սեղաններ:

Եկեղեցին օծուած է Տ. Մամբրէ եպօ. Գալֆայեանէ 1936-ին եւ կոչուած Ս. Յակոբ: Ներկայիս ունի 200 դարձան սնդամներ, որոնք երեք երեսօխրաններով կը մասնակցին սարեկան Երեսօխրանական ժողովին:



ԵՐԵՎԱՆԻՆԵՐ

Տեաք Ովսիս Երաման, Տոբր - Յովհաննէս Մովսիկան, Տիգրան Պոյանեան



ՀՈԳԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեաք Շահէն Պարսաւեան, Յարութիւն Սողիկեան՝ առեմապետ, Գեր. Տ. Յովսէփ Եսթ. Կարապետեան՝ հովիւ, Տեաք Նշան Պարսաւեան՝ առեմադպիր, Լեւոն Բարունակեան՝ գանձապահ: Կանգնած՝ Տեաք Ալասի Պէ՛հարեան, Հայկ Թէ՛լէ՛կեան, Գալուստ Սա՛ւրսեան, Յակոբ Նալպանեան:

Եկեղեցին ցարզ ունեցած է չորս հոգևոր հովիւներ. Տ. Մատրէոս Քինյ. Մանիկեան (1931-1933), Տ. Պետրոս Քինյ. Վարդանեան (1934-1936), Տ. Եղիշէ Քինյ. Գալչընեան (1937-1942) և Տ. Յովսէփ Եպիսկոպոս Կարապետեան որ 1943-էն ի վեր կը պաշտօնավարէ :

Ս. Յակօր Եկեղեցւոյ Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը կազմուած է 1928 Յունիս 28-ին, իրր հիմնադիր ունեւարժ հեռեւեարները. Տիկնայք Ա. Նազար, Մանուշակ Պրազիլեան, Արուսեակ Էսէրեան, Ռոզ Արրիկեան և Ազնիւ Մատենեան : Հիմնադիրներու այս

խումբին նախագահած է Տ. Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան, այն առեւն հովիւ Պոսթանի Ս. Երբորդութիւն Եկեղեցւոյ :

Տիկնանց Միութիւնը ներկայիս ունի 130 արատու անդամներ : Իր հասոյթի ազրիւրներն ևն անդամատուրքերը, նուէրներն ու ձեռնարկները : Ապահովուած զուժարէն մաս մը կը արամազրուի հոգարարձութեան, Եկեղեցւոյ հոգածութեան համար, տարեկան 100 տարր Ս. Մահակ Մեարոզ Դպրոցին կը յատկացուի և մաս մըն ալ Եկեղեցւոյ սրահի պիտոյքներուն կը զորձածուի :



ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայք Նուարդ Միսիրեան. Սիրանուէ փափագեան, Հովիւ, Տիկնայք Իսկուի ձըռըռեան. Թագուի Կարապետեան : Կանգնած՝ Տիկնայք Վիքթորիա Պօղոսեան, Աղանի Յովնանեան, Զարուի Քիւրքեան :



ՍԵՂԱՆԻ ՍՊԱՍԱՐԿՈՂՆԵՐ

Ուրարակիրք՝ Յակոբ Յովհաննէսեան, Դերսէս Աւագ Սրկ. Փափազեան, Գեղամ Պազարեան, Մահտուտ Անանիկեան:

1946-ին Մխութեան դուռ հասցիին է կցած 1,246.00 տարար, իսկ 1947-ին 1,360.68 տարար:

Այս տարուան (1948) Ապրիլին կազմուած է Երիտասարդ Տիկնաց Միութիւնը, որուն հիմնադիրներն են. Տիկնայք Տիգրանուհի Քիւփէլեան, Սարեհիկ Մուլտեան և Օր. Զապէլ Թահմիզեան: Այս Միութիւնը ունի 80-ի մօտ անդամներ:

Եկեղեցին ունի նաև 125 անդամներէ բաղկացած Առաջնորդարանի Օժանդակ Միութիւն մը:



ԵՎՅ. ՏԻՆ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԻՏ. ՏԻՆԱՆՅ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ

Նաոած՝ Տիկնայք եղիաբէք Առաքիլեան, Արփինէ Լազարեան, Վլքրնիկա Երկանեան, Պ. Եղաւպեան: Կանգնած՝ Տիկ. Տիգրանուհի Քիւփէլեան, Օր. Զապէլ Թահմիզեան, Տիկ. Սարեհիկ Մարբեան:



ԳՊՐԱՅ ԳԱՍ

Տիար Տիրան Տիմեանի՝ դպրապետ (նստած, Բ- շարք՝ ձախնի կից) և Տիար Ալան Յովհաննիսյանի՝ օրիւնիստ (նստած, Բ- շարք՝ աջնի չորրորդ) :

Ս. Յակոբ Եկեղեցին ունի զօրաւոր և լաւ մտրցուած Դպրապետ Տիար Տիրան Տիմեան 15 տարիէ ի վեր : Երգեհոնահարն է յայտնի Երասխան Տիար Ալան Յովհաննիսյան : Դպրապետի անդամներուն ընդհանուր թիւն է 58 :

Ս. Յակոբ Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցը հաստատուած է 1935-ին, և կը շարունակուի զարդ աւելի քան 200 աշակերտով : Ուսուցիչները 23 անձ են, որոնցմէ չորսը երիտասարդ աչքեր. դասաւանդութիւնը կը սկսի ժամը 10:30-ին և կը տեւէ մինչև 11:45 : Տարեկան եկամուտը 1947-ին եղած է 186.25 տարր :

Եկեղեցին ունի նաև Հայկական Վարժարան մը Ս. Սահակ-Մեսրոպ անունով, որ կը շարունակ-



ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԳՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՏԻՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օր. Զարուի Լսեբեան, Տիար Ալպեր Յովսէփեան, Օր. Այրին Գալուստեան : Կանգնած՝ Տիար Սարգիս Խորբեան, Յովսէփ Յակոբեան :



ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԳՊՐՈՅԻ ԽՆԱՄԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

Նստած՝ Տիար Յարութիւն Գափազեան, Տիկնայք Աբաբոյս Ռուսեան, Մարի Նա-
 իպետեան, Տիար Յակոբ Պարսամեան: Կանգնած՝ Տիկնայք Հայկուհի Ազաւեան,
 Եսրէր Տ. Կարապետեան, Սիլվիա Սոզիկեան:

ուր 14 տարեկ ի վեր: Վերջին տա-
 սր տարուան միջոցին տարեկան
 միջին հաշուով 65 աշակերաներ
 ունեցած է. ներկայ շրջանին
 (1947-1948) ունեցած է 59 աշա-
 կերա (31 աղջիկ, 28 մանչ): Ու-
 սուցիչները երկու են, Տիկնայք
 Կիւլէնիա Նազար եւ Մարի Նահա-
 պետեան: Դասուանդութիւնները
 կ'ըլլան Երկուշաբթի, Երեքշաբ-
 թի, Հինգշաբթի եւ Ուրբաթ օրե-
 րը, կէսօրէ վերջ ժամը 2-էն 5:


Ս. Սահակ-Մեսրոպ գալրուցին
 տարեկան ծախքը հազար տուրքէն
 աւելի է: Այս գումարը կը հայ-

թայթուր հետեւեալ միջոցներով:
 Ա. Իւրաքանչիւր աշակերտ տա-
 րեկան հինգ տուրք թոշակ կը վը-
 ճարէ: Բ. Տարին անդամ մը ճաշ-
 կերոյթ կը սարքուր Խնամակա-
 լութեան կողմէ, եւ այլ ասթիւ
 գալրուցաւք սպասարաններէ նուէր-
 ներ կը ստացուին: Գ. Վարժարա-
 նէն շրջանաւարտ երկու պատանի-
 ներ ու երիտասարդներ կազմած են
 միութիւն մը, որ իր սարքած ձեռ-
 նարկներէն գոյացուց գումար հաշին
 կէսը կը տրամադրէ գալրուցին:
 Այս միութիւնը եթէ չենք սխալիր,
 իր առտակին մէջ միակն է մեր թե-
 մին մէջ:



ՀԱՅՑԻ ԵԿԳՅՑ ԵՐԻՏՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օր. Տաշտեա Մարտիրոսեան, Ալիս Տէրտէրեան, Տիար Ալպէրք Գամիւ-
լեան, Հովիւ, Տիար Լուիս Պարսամեան, Օր. Ալիս Գարիպեան, Օր. Ռոզ Գարիպեան:
Կանգնած՝ Օր. Կրէյս Երամեան, Տիար Գասպար Կոչկարեան, վարդաժան Սամուէլ-
եան, վահան Պարմազեան, Զարյոյց Նիկողոսեան, Օր. Մարգրիտ Նիկողոսեան:



ՈՒՈՔԷԿՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Ուոքէկըն, Շիրակոյէն 40 մյսն հիւսիս արեւմուտք, Միչիկըն ԼիՏի եղերքը ծառաւէտ քաղաք մըն է, մտա 40 հազար բնակչութեամբ, 1795-ին ծանօթ էր Պզտիկ Ամբոց անունով: Անունը փոխուած է 1849-ին:

Ուոքէկընի մէջ ունինք փոքրամթիւ Հայ համայնք մը, որ իր կրօնական պէտքերուն համար կախում ունի Շիրակոյէի եւ Էվընսթընի եկեղեցիներէն: Հետեւեալը ներկայ հոգարարձական կազմի անդամներուն ցանկն է.

Տեարբ կարապետ Փիլիպոսեան (տակնապետ), Աւետիս Գզիրեան (տակնապետ), Մկրտիչ Գրիգորեան (գանձապահ), Խորէն

Պէֆլեան (հաշուակալ), Բարգէն Թորոսեան, Վահան Սիւնեան եւ Նորն Գագեան (խորհրդականներ):

Հոգարարձութիւնը ջանք կը թափէ սեփական եկեղեցիի մը շինութեան համար հանդանակութիւն կաարելու: Այս գործին մէջ օժանդակութիւն կը բերէ Երիտասարդաց Կազմակերպութեան մասնաճիւղը, որ կազմակերպած է նաեւ տեղւոյն Դպրաց Դասը:

Ս. ՅՈՎԸ. ՄԿՐՏԻԶ ԵԿԵՂԵՑԻ, ՌԻԷՍԹ ԱԼԻՍ

Ռեկտր Ալիս 40,000 բնակչութեամբ ասան մըն է Միլուսքի շրջաքին արևմտաքը, անկէ ոչ չառ հետու:

Այս ասանին մէջ աւելի քան 25 տարիէ ի վեր Հայկական փոքր զաղութ մը գոյութիւն ունի, որ ներկայիս 150-ի չափ անձ կը հաշուէ: Մեծամասնութիւնը Կեսարիոյ շրջաններէն են (Յամնդաւ, Ալլըըն, Թոմարգա) իսկ մնացեալները Սերաստիայէն եւ Խարրերդէն:

Առաջին հոգարարձական մարմինը կազմուած է 1923-ին Երեք անդամներով, որոնք են Տեարք Մամբրէ Օհանեան, Գաբրիէլ Մուրատեան եւ Միհրան Առաքելեան:

Սեփական Եկեղեցւոյ մը շինութեան նախաձեռնող, ծրագրող կամ բարերար եղած են հետեւեալները. Տեարք Սահակ Մուրատեան (որ 600 տղար նուիրած է ու Եկեղեցւոյ կնքահայրն է), Մամբրէ Օհանեան, Գրիգոր Արաւսեան, Աւետիս Հայրապետեան, Խաչատուր Արզարեան, Յովհ. Տէտեան,

Յովակիմ Մուրատեան, Մարկոս եւ Գեղամ Գըլլընեան Եղրարք, Յակոբ Կէօնիլեան, Սարգիս Թէֆիլեան, Գրիգոր Քիւչիւքեան, Շընորիք եւ Յարութիւն Զօլանեան Եղրարք, Մանուկ Պանագեան, Գաբրիէլ Մուրատեան:

Եկեղեցին շինուած է 1942-ին, 6,000 տղար ծախքով: Շէնքին կից կայ նաեւ պարտոյ զեալին մը, որուն վրայ Եկեղեցւոյ անդամները մտադիր են սրահ մը շինել պայտային: Կալուածը ներկայիս կ'արժէ 10,000 տղար: Եկեղեցւոյ Երկայնքը 100 սաք է, իսկ լայնքը 25: Կրծայ նստեցնել 200 հոգի:

Օծումը կատարուած է 1942 Մայիս 11-ին, ձեռամբ Ամերիկահասոյց Առաջնորդ Գեորգի Տ. Գարեգին Արք. Յովակիմեանի եւ մասնակցութեամբ Եկեղեցւոյ հովիւ Տ. Խորէն Քիւնյ. Մամիկոնեանի, ինչպէս նաեւ Շիքակոյի հովիւ Տ.



Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՅԻ

Զգօն վրդ. Յակոբեանի: Կոչուած է յանուն Ս. Յովհաննէս Մկրտ-տիչի:

Ս. Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցին ներկայիս ունի 60 այր և 30 կին անդամներ, ընդամէնը 90 անդամ, ինչ որ այս փոքրիկ դադութին համար նկատելի թիւ մըն է:

Այս տարուան հոգարարձութիւնը կը բաղկանայ հետեւեալներէն. Տեսաբն Յովհաննէս Պանիրեան (ատենապետ), Փանոս Պոյանեան (ատենադպիր), Գեորգ Մարոսեան (փոխ-ատենապետ), Սարգիս Թէֆիրեան (գանձապահ), Գրիգոր Աբրահամեան (հաշուակալ), Յա-

կոր կէօնիւլեան (լուսարար) և Արթին Զօպանեան:

Եկեղեցւոյ երեսփոխանն է Տիար Հայրապետ Գալայեան. անձնափոխանօրդն է Տիրացու Գրիգոր Արկ. Գալուստեան (Նիւ Եօքս):

Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցին մասնակցած է մօտակայ մեծ ստանին, Միլլուքի մէջ սարքաւոր տարեկան ցուցահանդէսներուն, Հայոց կողմէ ցուցադրելով լաւագոյն հնութիւններ և սպասարկելով Հայկական կերակուրներ: 1932-ին երբ Առաջնորդ Տ. Ղեւոնդ Եպիսկ. Գուրեան իր անդրանիկ այցելութիւնը կուտար այս

նահանգի Հայութեան, մեծաշուք ընդունելութեան արժանացած է Միլուսքիի քաղաքապետին կողմէ : Ուխտընտանի նահանգի միւս Հայ դպրութեանը կարգին, Ուէսթ Ալիսի ափ մը Հայերն ալ պետական գնահատանքի առարկայ եղած են, Ուոք Պալատը զնման մէջ իրենց ցուցարկը լիառատ մասնակցութեամբ :

Կախ քան Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ օծումը, դպրութիւն ալ ցերեւ հովիւներն են եղած Տ. Վարդան Բիւնյ. Դաւիթեան, Տ. Խորէն Վրդ. Լազարեան, Տ. Եղիշէ Բիւնյ. Գալչընեան, Տ. Եղիշէ Բիւնյ. Գասպարեան, Տ. Ղեռնդ Աբեղայ Արապեան, Տ. Գարեգին Բիւնյ. Յովակիմեան : Առաջին մը-



ԳՊՐԱՍ ԳԱՍ

Տեարժ Պարգիւ Պալեան՝ օրկընխք, Ժանու Պոյանեան՝ դպրապետ (ձախէն ա. եւ ք.) :



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Տեարժ Սարգիս Թէրիբեան՝ գանձապահ. Ժանու Պոյանեան՝ ատենադպր. Տ. Սուքիաս Արեղայ Գալփայեան՝ Հովիւ : Տեարժ Յակոբ Կէօնիպեան՝ հաշուակալ, Գրիգոր Աբրահամեան : Կը բացակային՝ Տեարժ Յովհ. Պանիրեան՝ ատենապետ, Գեորգ Մարտեան՝ փոխ ատենադպր, Յարութիւն Զօպանեան :

նայուն հովիւն է եղած Տ. Խորէն Բիւնյ. Մամիկոնեան 1942-1943 : 1943 Աւստրալիոյ սկսեալ կը պաշտօնավարէ Տ. Սուքիաս Արեղայ Գալփայեան, որ միասնաբար կը հովուէ Մառթ Միլուսքիի եւ Ուէսթ Ալիսի գոյք եկեղեցիները :

Եկեղեցաւէր Տիկնանց Միւսթիւնը կազմուած է 1934-ին : Մինչեւ եկեղեցւոյ օծումը, այս մարմինը կը քարական Միւսթիւն անունով գործած է թէ այսակող թէ Միլուսքիի մէջ, սարքելով գասարստութիւններ եւ հոգ տանելով Հայ դպրոցին : 1942-էն ի վեր ու-

նեցած է կանոնաւոր վարչութիւններ : Այս տարւան վարչութեան անգամներն են Տիկնայք երջանիկ Հայքայեան (տաննապետ), Նուարդ Միրզոյեան (տաննապետ), Եպրաֆէ Աբրահամեան (գանձապահ), Մարի Թէֆիրեան (փոխ-տաննապետ) եւ Ն. Աշնեան : Միութիւնը մօտ 200 սուրբ եկամտաւուն տարին . հայթայթած է նուէրներ նորաջն եկեղեցիին :

Եկեղեցին վերջերս ունեցած է օրերն . ներկայ հովիւին աջակցութեամբ կազմուած է փոքր զպրաց խումբ մը, որուն պետն է Տիար Փանոս Պոյանեան, իսկ սարկաւազի պաշտօն կը կատարէ Տիար Սեդրակ Կիւրիանեան :

Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցին ունեցած է 20 հոգինոց փոքրիկ Կիրակնօրեայ զպրաց մը, զեկամտութեամբ Տիար Արտաշ Պալեանի եւ իր օգնականներուն :

1943-էն ի վեր հովիւը Շարաթ օրերը սրջ ժամեր յատկացուցած

է հայերէն սորվեցնելու երկու աշակերտութեան մը, որուն թիւը միջին հաշուով 15 եղած է : Օղնական ուսուցչուհի եղած է Տիկ Արմենուհի Վէյլիշեան :

Եկեղեցւոյ անմիջական կարիքներէն զխաւորն է յարմար սրահ մը, ուր կարենան երիտասարդները հաւաքուիլ, կըթուիլ եւ ընկերային ժամանց ունենալ Հայ Եկեղեցւոյ հովանաւորութեամբ : Այս սրահին չլրջութիւնը պատճառ եղած է որ Ռէէսթ Ալիսի մէջ տակաւն չէ կազմուած Ա. Հ. Ե. Ե. Կ. ի մասնաճիւղ, թէեւ երիտասարդները Միլուոքի մէջ ուրիշ Հայկական երիտասարդական կազմակերպութեան մը անդամակցած են : Հոգարարձութիւնը մտադիր է շէնքին վրայ կառուցանել երկրորդ յարկ մը եւ զայն ընել եկեղեցի, զեանայարկը վերածելով սրահի : Սակայն ասոր համար հարկ է սպասել շինանիւթերու գիներու բարելաւման :



ՈՒԷՍԹ ՓՈՒԼՄԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Ուէսթ Փուլմըն Շիրակոյլի արտարձաններէն մէկն է : Ունի փոքրաթիւ Հայութիւն, եկեղեցիի շէնքի զուրկ :

Եկեղեցական Յանձնախումբի կազմն է հետեւեալը .

<i>Տեարֆ Յովակիմ Գլընտրգեան (ատենապետ), Արտաշէս Նիկո-</i>	<i>դոսեան (ատենադպիր), Սուրէն Տէրտէրեան (գանձապահ), Արտաւազ Սէմէրնեան և Ենուփ Խաչատուրեան (խորհրդականք) :</i>
---	---

..

..

Ս. ՓՐԿԻԶ ԵԿԵՂԵՑԻ, ՈՒՍՏՐ

Պոսթմենն 40 մյոն արևմուտք, 200,000 բնակչութեամբ քաղաք մըն է Ուստր: Կարևոր կրթական կեդրան՝ իր Փոլիթէքնիք Հաստատութիւնը Ամերիկայի ամենահին եւ յաւ սարգաստուած զգրոցն է ճարտարագիտութեան: Շատ մը ճեմարաններու եւ հանրային զգրոցներու կարգին ունի 17 ծխական զգրոցներ: Նշանաւոր են իր հանրային գրադարանը, գեղարուեստական եւ գիտական թանգարանները: Ունի չորս օրաթերթեր, սրտնցմէ մին ֆրանսերէն եւ ուրիշ մը ֆիններէն: Աւելի քան հարիւր եկեղեցիներ կան այս քաղաքին մէջ:

Ճարտարարուեստական կարևորութիւն եւս ունի Ուստր, իր երկաթաթելի գործարաններով, ինչպէս նաև մեքենական գործիքներու արտադրութեամբ: Դրամատուներու գրութիւնը շատ զօրաւոր է:

ժե. զարու երկրորդ կէսին խումբ մը Անգլիացի բնասնիքներ ստաջին անգամն ըլլալով կը հաստատուին այստեղ. քանիցս կը լքեն տեղը, Հնդիկներու յարձակմանց պատճառաւ: 1713-ին գինեատուն մը եւ Գաղացք մը կը շինուի եւ ճամբայ մը կը հաստատուի գէղի Պոսթմեն: Տեղը 1722-ին կը լինի ա:ան, իսկ 1848-ին կը վաւերացուի իր քաղաք: Երկար ժամանակ կողիտցած սահմանամերձ քաղաք մը եղած է. 1783-ին 2,000 բնակիչ ունէր միայն:

Ջուրի ուժի շահագործումն ու ճարտարարուեստի հաստատում կը սկսի 1800-ի տանները: 1825-ին քաղաքը սկսած է արտադրել պլաթի, աթոս, կապեղա, թուղթ, ժամացոյց, հիստամեղէնի մեքենայ, եւն.: Հեղահեղ երկաթուղայի ծերով կը միանայ Պոսթմենին, Փրատիանին, Սփրինգֆիլտին: 1860-ին բնակչութեան թիւը կը հասնի 25 հազարի, եւ սակէ վերջ աճումը կը լինի կանոնաւոր:

Ուստրի Հայ գաղութը Ամերիկահայաց ամենահին գաղութնեւրէն է, մրցակից Նիւ Եորքի եւ Պոսթմենի, այդ տեսակէտով: 1880-ին Մէլիթիցի Ախարոն Ենովքեան անուն Հայ մը կուղայ Ուստր իրը աշխատաւոր երկաթաթելի գործարանին մէջ, ու կը լինի հիմնադիրը քաղաքի Հայ գաղութակա-

նութեան: Նոյն տարին Ուստրի Հայաց թիւր կը հասնի 15-ի, իսկ 1884-ին՝ կը բարձրանայ 70-ի: Բոյսրն ալ թարրերդի գիւղերէն եկած ամուրիներ են, անուս պանդուխտներ, սրտնք գործարանի բանուոր գտնաւորով կը յասան քիչ մը գրամ խնայել եւ մի քանի տարիէն վերադառնալ հայրենիք:

1888-ին Ուստրի Հայոց թիւը հասած կը յինի մի քանի հարիւրի: Մեծամասնութիւնը Հայաստան-եայց Եկեղեցւոյ գաւակ՝ սակայն գուրկ Հայ Եկեղեցւոյ խնամքէն, քանի որ ոչ Հայ հոգևորական կար, ոչ ալ Հայ ժամատեղի: Մէկ երկու Հայ Բողոքական քարտղիչներ կ'ըլլան այս ամի մը Հայութեան հոգևոր սնունդի ազդիւրները: Ասոնցմէ մին Եպիսկոպոսական Եկեղեցւոյ մը մէջ օրին մէկը քարտղելու առթիւ անարդական ակնարկութիւններ կ'ընէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ծխական իրերուն, զանոնք յայտարարելով «կուտարչտական տարիկաներ» ու այս յախուան ելոյթով կը խրաչեցընէ իր Հայ ունեկցիները, սորոնք դայրոյթով կը հետանան, անգամ մըն ալ զինք չլսելու մըտազրութեամբ:

Նոյն օրերուն Ուստր կը ժամանէ Մկրտիչ Փօրքուզպիան, յայտնի աղային գործիչը, որ Սեպտ. 15-ին մօտ 250 Հայերու խօսելով վարձուած վոքք սրահի մը մէջ, կը խանդավառէ զանոնք սեփական Հայկական եկեղեցի եւ զպրոց մը ունենալու զազափաթով:

Պանդուխտները նոյն իրիկունն իսկ կը ձեռնարկեն կազմակերպելու գործին: Կ'ընարեն իրենց մէջէն մասնաժողով մը, Հայկական ընկերութիւն մը կազմելու պաշտօնով: Առաջին առթիւ 70 անդամներ կ'ունենայ այդ ընկերութիւնը, որ ծանօթ է «Կաճառ Հայկական» անունով: Գործուն-

եայ անդամներէն կը յիշուին Մ. Թովհանէլեան, Յովի. Եագրնեան, Օհան Թաշնեան, Յակոբ Ռատիկեան, Մ. Արոյեան, ևւն.: «Կաճառը» իր Կիրակնօրեայ ժողովները կը սկսի «Հայր Մեր»ով եւ «Հաւատամք»ով: Անդամներու թիւը շուտով կը բարձրանայ 250-ի: Կրօնական նկզմատութեան հետեւանքով, Բողոքական Հայեր գուրս կը մնան այս ընկերութեանէն, կարճ տակն մը անգամակցելի վերջ:

Հոգևոր հովիւի մը պէտքը սակաւակն զանելով Ուստրի Հայերը կը հանդանակեն 500 տուարի մօտ զուժար մը եւ խնդրազիւր մը կ'ուզուի Պոլսոյ Հայոց Պատրիարքարանին 1889 Յունուար 27-ին: Այդ նամակով կը խնդրուի որ Ուստր զրկուի անգլիագէտ կամ գոնէ զաղիագէտ կուսակրօն վարդապետ մը, որ թէ ապրուտի զիւրութիւն կրնայ ունենալ, եւ թէ իր սուսմով կրնայ տեղւոյն Ամերիկացիներուն մէջ Հայոց մասին ատարածուած ծուռ զազափարները վարատել: Նոյն նամակին մէջ Ուստրի Հայոց մէջէն «Կաթողիկէ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյս հաւատարիմ Հայոցս թիւը անելի քան 300» կը յիշուի: Ակնարկութիւն կ'ըլլայ Նիւ Եորքի, Ճըրզի Սիթիի, Պոսթոնի եւ Չիլատէլֆիոյ մէջ զանուոյ Հայոց եւս հոգևոր մխիթարութեան պէտքէն, ու յիշեալ քաղաքներու մէջ ապրող Հայոց թիւը 400-ի չափ կ'ենթադրուի:

Վ. Պոլտոյ Հայ Պատրիարքարանը ընթացք կուտայ այս պիմամի՞ն եւ կուտայտիկ ցանկէ մը կ'ընարուի Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարանեան ծնունդով Պոլսեցի 40 տարեկան առողջ հոգեւորական մը, որ իր կրթութիւնը Երուսաղէմի Ժասանդաւորաց Վարժարանին մէջ առած, ու հոն ձեռնադրուած, Մուշի Ս. Առաքելաց Վանքի վանահայր եղած էր մինչեւ Համխոխ սահպումով Պոլիս կանչուիլը :

Սարաճեանն Ուսար կը հասնի 1889 Յուլիս 25-ին, ու Յուլիս 28-ին կը պատարագէ Ամերիկեան սրահի մը մէջ, անասման միւլթարութիւն պարզեւելով տարիներէ ի վեր Մայր Եկեղեցւոյ խորհուրդներէն ու օրհնութիւնէն զըրկըւած հարիւրաւոր Խարրերդցի պանդուխաներուն :

Սարաճեան Ծ. Վրդ. անմիջապէս կը ձեռնարկէ եկեղեցական կազմակերպութեան գործին եւ Օգոստ. 20-ին կը կազմուի Ուսարըրի, ինչպէս նաև Ամերիկահայաց անդրանիկ հոգարարձութիւնը, բազկացած հետեւեալներէն .


Տեարբ Գէորգ ճախալեան, Գէորգ Թաշնեան, Գէորգ Աւետիսեան, Եաղուպ Թարոսեան, Կարապետ Թաշնեան, Միլևա Արայեան (կ'ապրի), Մարտիրոս Պաղտիկեան, Մարտիրոս Կնիկեան, Յովհ. Մ. Գրիգորեան, Յովհ. Եաղնեան (կ'ապրի), Նազար Նարսիկեան, Պաղտասար Եաղնեան :

Այս հոգարարձութեան առաջին գործը կ'ըլլայ նշանակել յանձնու-

խամբ մը որ պիտի հանդանակըր Ամերիկահայ հոգեւոր հովիտին տարեթուակը, 500 տուրք :

Սարաճեան Վարդապետ իր պաշտօնին բերումով հոգեւորական այցելութիւն կուտայ յաջորդաբար Պոսթօն, Փրաւիտէնս, Նիւ Եորք, պատարագելով, քարոզելով եւ մկրտութիւն կատարելով : Մինչ այդ, Ուսարի հոգարարձութիւնը, քաջաբերուելով նորեկ հովիտին յառաջ բերած խանդավառութիւնէն, կը զբաղի սեփական եկեղեցի մը ունենալու խնդրով : Այդ մասին սրտում կը տրուի 1890 Փետր. 2-ի նիստին մէջ, ուր կ'ընդունուի սա բանաձեւը . «Նկատելով որ Հայ Ժողովուրդը յերեսաց հարստահարութեան, ու դարին չբարոյութեան դէպի Ամերիկա կը գաղթէ, այս գաղթականութիւնը օտարացումէ փրկելու համար (հոգարարձութիւնը) կ'որոշէ եկեղեցի մը շինել, եւ այդ մասին բանակցութեանց հոգը կը յանձնէ Յովսէփ Վրդ. Սարանեանի :» Այս սրտումը կը հոգորդուի թէ՛ Կ. Պոլտոյ Պատրիարքին (Տ. Խորէն Աշրգեան) եւ թէ՛ Էջմիածնի Հայրապետին (Տ. Մակար Կարողիկոս), խնդրելով երկուքէն ալ նիւթական օժանդակութիւն : Երկու աթոռներու զահակալներն ալ անկարող ըլլալով նիւթական օգնութիւն հասցնել, օրհնութեան կանդակներով կը քաջաբերեն ձեռնարկը :

Հոգարարձութիւնը, իր զանձին մէջ պատրաստ դումար ունենալով միայն 300 տուրք, կը դնէ 5,200



Ս. Փրկիչ Եկեղեցի

քառ. սուք տարածութեամբ զեափն մը, Լուրէլ Փողոցին վրայ, որ քաղաքի հայաբնակ շրջանին մօտ էր այդ ժամանակ: Հողին գինն է 1,275 տարար, որուն քառորդն իսկ կանխիկ չկրնալով վճարել, հարկ կ'ըլլայ մնացեալը հայթայթել փոխառութեամբ: Իսկ շինութեան ծախքերուն հասնիլ կարենալու համար, կը ձեռնարկուի հանդանակութեան, Ամերիկայի ալլ շըրջանին քիչ թէ շատ հայաշատ կոչուելու. արժանի քաղաքներուն մէջ, ինչպէս նաև Եւրոպայի հայաբնակ քաղաքներուն մէջ: Եւրոպա կը մեկնի ալլ նպատակով «Հայկական Կաճառ»ի առեւտար Մ. Թովհանէլեան, որ Մանչէսթըր, Լոնտոն ու Փարիզ այցելե-

լով կը հանդանակէ 830 տարար, որմէ 370 տարար կը յատկացուի Եկեղեցոյ շինութեան: Նիւ Եորքաբնակ Հայերէն Թալշամբեան և Կիւլպէնկեան, ուրիշներու հետ միասին կարեւոր գրամական օժանդակութիւն կ'ընեն:

1890 Յուլիս 30-ին կը կնքուի պայմանագրութիւն Ամերիկացի ճարտարապետի մը հետ, որ յանձրն կ'առնէ 6,270 տարարով կառուցանել փայտաշէն Եկեղեցի մը: Այս գրամը կը գոյանայ 4,000 տարարի փոխառութեամբ մը և ժողովրդական նուիրատուութեամբ: Շինութիւնը կ'աւարտի վեց ամիսէն, ու 1891 Յունուար 18-ին Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարաբեան հան-

գիտությունը կ'օժտվի Ամերիկացի-
այս անդամների կեկեղեցին, կոչե-
լով գոյն Ս. Փրկիչ: Եկեղեցույ
գեանի, կասուցման և սարքուսար-
ման ընդհանուր ծախքը կը լինի
9,460-60 տարբար:

Հոգարարձույթներ, կեկեղեցույ
օժման առթիւ Պոլսոյ Պատրիար-
քարան ուղղած իր գեկուցադիրին
մէջ գովեստով կը յիշէ իր անդամ-
ներէն Պաղտասար Թաշեհանը,
Յովհաննէս Եղեղեհանը և Մար-
տիրոս Պաղաթիկեանը, չէնքի կա-
սուցման գործին մէջ իրենց կա-
տարած անձնուէր աշխատանքին
համար: Հոգարարձույթեան գան-
ձապահ Տիար Մինաս Արոյեան ևս

կարեւոր դեր կ'ունենայ շինու-
թեան գործին մէջ, նախընթաց 100
տարբար ու փոխ տալով 800:

Հետեւեալ ցանկը, որ կը ներկա-
յացնէ Ռուսրի Ս. Փրկիչ Եկեղեց-
ույ շինութեան ծախուց մասակ-
ցող համայնքները, լուս դադարի
մը կուտայ այն շրջանի Ամերիկա-
նայ կեկրաններու մասին, թէ աշ-
խարհական և թէ նրաթական կա-
րողութեան տեսակէաներով:

Ռուսրը, Մէս.	\$1,600-80
Նիւ Եսրք, Ն. Ե.	694-25
Պոսթան, Մէս.	265-90
Փրախակէն, Բ. Ա.	184-05
Լին, Մէս.	93-75



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՊՐՈՂ ՀԻՄՆԱԳԻՐ
Մ. ԱՐՈՅԵԱՆ

Ճիւղատէլֆիւս, Փա.	92.00
Ուսյթնովիլ, Մէս.	81.65
Ճրէնքլին, Նիւ Հէմփշիր	75.65
Լօրէնս, Մէս.	74.70
Մանչէսթըր, Նիւ Հէմփշիր	71.00
Լովէլ, Մէս.	61.25
Ճիւլպըրկ, Մէս.	56.50
Մէլբիլ, Մէս.	56.50
Թրոյ, Ն. Ե.	53.05
Վանսաքէթ, Բ. Ա.	46.35
Սէյլթ, Մէս.	43.70
Ըրսպըրիճ, Մէս.	34.00
Մոլտըն, Մէս.	32.90
Մէլզըրի	25.00
Ուսթըրթաուն, Մէս.	18.00
Փաթաքէթ, Բ. Ա.	7.00
Տըկլըս	5.00
Սիթըն	4.00
Սիթէյթըն	2.00



ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՊՐՈՂ ՀԻՄՆԱԿԻՐ
Յ. ԵԱՂՃԵԱՆ

Եկեղեցին ունի 65 սաք Երկայնք
և 40 սաք լայնք, կրնայ նստեցնել
240 անձ:

Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարախեան
էր ալցելու հովիւի պաշտօնը կը
չարունակէ չորս տարի, խիստ
զժուար պայմաններու տակ, ու
կը հրաժարի 1893-ին, կուսակցա-
կան հակառակութեանց ու սին
վէճերու Երկարածդուսէն ճանձ-
րացած: Կը մեկնի Ամերիկայէն,
ստանձնելու տեղապահի պաշտօն
Ատրպատականի թեմին մէջ:

Ուստրի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
յաջորդ հովիւը կը լինի՝ Պոլիս
կաթարուած զիմուսի մը վրայ,
Տիգրանակերտցի Տ. Մաղաթիս
Վարդապետ Տէրուհեան որ կը
պաշտօնավարէ 1894 Մարտէն մին-

չև 1897: Այս Եւս հրաժարելով կը
մեկնի Էջմիածին:


Յաջորդ հովիւը կը լինի Մաշ-
րոց Վրդ. Փապիագեան, զոր հե-
տապրով Ուստրի Հայոց կը յանձ-
նարարէ Էջմիածնի Մայր Աթոսը:
Կը պաշտօնավարէ 1897 Մայիսէն
մինչև 1898 Յուլիս: Նոյն շրջա-
նին Ամերիկահայոց հայաչափ
կեդրոններուն մէջ արդէն իսկ կը
զարմեն հինգ վեց տրիչ հողեւո-
րականներ:

Էջմիածնի Մայր Աթոսը Կ. Պուլ-
սոյ Օրմանեան Պատրիարքի խնդ-
րանքին վրայ 1896-ին ստանձնե-
լով Երոտպական և Ամերիկեան
Հայ գաղութներու հողը, մասնա-
ւոր կոնդակու առաջնորդական

թևերի կը վերածէ Ամերիկահայու-
թիւնը, և անոնց անդրանիկ հո-
վիւ Տ. Յովսէփ Ծ. Վրդ. Սարա-
ճեանը Եղեկոպոստացնելով, կը
զրկէ Ամերիկա իրը աստջին Ա-
ստջնորդ Ամերիկահայոց :

Տ. Յովսէփ Եպս. Սարանեան
իրը աստջնորդ կը ժամանէ Ուտար
1898 Հոկտեմբերին : Այդ թուական-
նէն մինչև 1923, այսինքն ըման
25 տարի, Ուտար քաղաքը կը լի-
նի Ամերիկահայոց Աստջնորդա-
րանի ակտանիստ կեդրոնը :

Գնասորդ գորու այս շրջանին
Ուտարի մէջ կը գումարուին մօտ
տասը երեսփոխանական և կրօ-
նական ժողովներ, ու Յովսէփ Ե-
պիսկոպոսի հրաժարումէն վերջ



ԵՐԵՍՓՈՍԱՆՆԵՐ

Տեաբք Սեղրակ Պաղտասարեան, Զա-
ւէն Պայհար, ճորն Գեղեկեան :

(1906), կարճ կամ երկար ժամա-
նակամիջոցներով կը պաշտօնա-
վարեն երեք այլ աստջնորդներ
ևս, յաջորդաբար Տ. Եգնիկ Եպս.
Ապահունի, Տ. Արսէն Ծ. Վրդ.



ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ 1948 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Նստած՝ Տեաբք Բարգև Անայիկեան, Ասատուր Պիլեգլերեան, Տ. Յակոբ Փինյ.
Մխիկեան՝ Խովիւ, Մանասէ Հարտարեան, Սարգիս Անէլեան : Կանգնած՝ Տեաբք Թով-
մաս Թուաճանեան, Ասուր Կուլիկեան, Պետրոս Զաբարեան, Լեւոն Անարոնեան, Եղուարդ
Քէչեկեան, Բաճիփի Եպոնեան, Տոբք ճորն Օկարն :



ԵՆԵՂԵՑԱՍԷՐ ՏԻՆԱՆՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկնայ Գիգրոյ Մանուկեան, Հայկուի Արզուեան, Արմենուի Հարտարեան, Մէրի Մարգարեան, Ելիսաբէր Մուրատեան: Կանգնած՝ Տիկնայ Գարրա Գեարգեան, Զապէլ Աղամեան, Ստա Մանուշեան, Ժընէլ Տէրսէրեան, Սիրանոյշ Մարգարեան, Ազնի. Զաւարեան:



ԱՌԱՋԻՆ. ՕԺԱՆԳՈՍԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկ. Ազանի Սողիկեան, Հովի. Տիկ. Հայկուի Արզուեան: Կանգնած՝ Տիկ. Մէրի Մարգարեան, Անդրանիկ Եարբմեան, Արիին: Յարաբիրեան:

վեհուճի և Տ. Տիրայր Արք. Յով-
հաննէսեան :

Ուսարի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ
մէջ է որ կառարուած է Ամերի-
կահայոց առաջին ձեռնադրութիւ-
նը 1899 Հոկտ. 14, յանձին Գեորգի
Վրդ. Մարդուկէսեանի :

1941-ին Ուսարի Ս. Փրկիչ Եկե-
ղեցւոյ օծման յիսուսամեայ Յո-
րեղանը կը տօնուի և այդ առթիւ
կը հրատարակուի յուշամատեն
մը, որմէ կարեւոր շարժով օգտը-
ւած ենք :

Այժմ Ուսարի Հայոց թիւն է
2,500 :

Ներկայիս Ուսարի Ս. Փրկիչ Ե-
կեղեցւոյ շէնքը կ'արժէ 25,000
տուրք : Եկեղեցին ունի 480 ծխա-
կան բնտանիք, և 300 անձ արա-
տու անդամ :

Եկեղեցւոյ շէնքը ներկայիս չի
բաւարարեր անդամները, որոնք
մտադիր են նոր և աւելի փաստ-
ւոր եկեղեցի մը կառուցանել վեր-
ջերս զնուած հողի մը վրայ : Ա-
յապայ եկեղեցիի յատակապիծը
պատրաստած է Ս. Փրկիչ Եկեղեց-
ւոյ Երևոփոխաններէն ճարտարա-
պետ Տիրար Զաւէն Պայքար :

Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Եկեղեցա-
սէր Տիկնանց Միութիւնը երկար
տարիներ առաջ կազմուած է :
Նախքան անոր կազմութիւնը,
Ուսարի մէջ գոյութիւն ունեցած
է Որբախնամ Տիկնանց Միութիւն
մը. ասկէ 14 տարիներ առաջ Որ-
բախնամի գործի զազարելուն առ-
թիւ անոր անդամահիները իրենց
մի քանի հարիւր տուրք պահեստի
զուամարով կը միանան Եկեղեցա-
սէր Տիկնանց Միութեան և հաւա-
քարար կը լծուին շինարար աշխա-
տանքի : Միշտ ստատար կը հանդի-





Ազգ. ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ԽՆՈՄԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Նստած՝ Տիկ. Մանիկ Յակոբեան. Հովիւ, Տիկ. Զապէլ Ռստիկեան: Կանգնած՝ Տիկնայ Բալլուն Եղեան, Մաքրուի Անէլիեան՝ ուսուցչուհի, ՄԷՐԻ Մարգարեան, Աղաւնի Սողկեան:

սանան Եկեղեցւոյ բարեկարգութեան, չափիկներու, վարագոյրներու, պատարազիչի զգեստներու շինութեան եւ յարակից գործերով: Ամէն տարի զանազան ձևանարկներով, ներկայացումներով եւ գաշտահանդէսներով, Միութիւնը կը հետամտի նրբախիտ գոհացուցիչ արգելանքներ գոյացրնել, սրբէկոյի ի ժօտոյ երբ նոր Եկեղեցի կառուցուի, իր ամբողջ նրբախիտ կարգութիւնը ի սպաս զնէ Եկեղեցաշինութեան: Արդէն ցարկ իր ունեցած ժօտ 5,000 տարի հասնող հիմնադրամը վերածած է պանտերու եւ զանոնք Հարարածութեան արամազրու-

թեան տակ զրած է: Կը հալանուորէ նաև Հայկական գործոցին:

Եկեղեցւոյ Դպրատ Դասը կը կրէ Եկմայեան անունը եւ ունի ժօտ 40 սնկամ, Երև չարբոյր իգական սեռէ: Դպրատեան է Բարեշոր՝ Հայկազ Սրկ. Սանրոյեան, որ 30 տարիէ ի վեր կը ծառայէ այս Եկեղեցիին: Փոխ-դպրատեան է Ճորն ժամկոչեան:

Ս. Փրկիչ Եկեղեցին երկար տակնէ ի վեր ունեցած է Հայկական դպրոց: Ծառ տարիներ տաջ մինչև 250 երկուս ոչակերաներ ունեցած է, սակայն տարուէ տարի



ԿՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆՆԻ ՈՒՍՈՒՅՉԱԿԱԶՄ

Նստած՝ Ռոզ Սողիկեան, Պապարա Գալֆայեան, Շուշանիկ Յարուբյան, Էլսի Քելեշեան: Կանգնած՝ Ալիս Ժամկոչեան, Ռոզլի Կեղիսեան, Բարգէն Անայիկեան՝ տեսչ, Եղիաբէր Փիլիպոսեան, Շուշանիկ Գասպեան, Ալիս Թարսեան:

Նուազելով այժմ յանդամ է 35-ի: Այս խումբը կը ներկայացնէ կանոնադրարար յաճախողներու թիւը:



ՀԱՅՅ. ԵԿՂՅ. ԵՐԻՏ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նստած՝ Օրիորդներ Եղիաբէր Ղազարեան, Նուարդ Ալեքսանեան, Մէրի Նորտիկեան: Կանգնած՝ Տեառն Յակոբ Միրաբեան, Նեան Ալեքսանեան:

Եւր: Դասաւանդութեան պահն է Շարաթ օր ժամը 10-12: Վարժարանը իր կրթական ծախքերուն կէտը կը ստանայ Եկեղեցուէր Տիկնանց Միութեան գանձէն: Մնացեալ կէտը, որ սրահի վարձքին ծախքն է, կը վճարուի Հողարարձութեան միջոցաւ Եկեղեցույ գանձէն:

Վարդաց Հաստատուած է նաև Եկեղեցույ Կիրակօրեայ դպրոցը, որ տանն մը մինչև 100 աշակերտ ունէ՛լած է: Ուսուցիչները Ամերիկա ծնած մեր նոր սերունդին կը պատկանին: Մինչև վերջերս տնօրէնն էր Տիար Յարուբյան Սողիկեան:

Երկաստարդայ Կազմակերպութիւնը կը զօրծէ Երեք ճիւղերով:

պարբերաբար կը սարքեն պարահանդէս, ներկայացում եւ զառտահանդէս: Վերջերս 2,000 տարրի չէք ժը յանձնած են եկեղեցական Յանձնախումբին:

Ուսարի Ս. Փրկիչ եկեղեցոյ հովիւները եղած են հետեւեալները:

1. Տ. Յովսէփ Ծ. վրդ. Սարահան (1889 Յուլիս - 1893 Օգոստոս)
2. Տ. Մաղափա Ծ. վրդ. Տերունեան (1894 Մարտ - 1897)
3. Տ. Մաշքոց վրդ. փափագեան (1897 Մայիս - 1898 Յուլիս)
4. Տ. Յովսէփ Եպս. Սարահան (1898 Հոկտ. - 1899 Հոկտ.)
5. Տ. Ղեւոնդ վրդ. Մարդուկէսեան (1899 Հոկտ. - 1901)
6. Տ. Մաշքոց վրդ. փափագեան (1901-1904)
7. Տ. Պօղոս վրդ. Գափքանեան (1904-1908 Օգոստոս)
8. Տ. Եզնիկ Եպս. Ապահունի (1908 Սեպտ. - Հոկտ.)
9. Տ. Ղեւոնդ վրդ. Մարդուկէսեան (1909)
10. Տ. Դաւիթ Քինյ. Տէր Աւետիսեան (1910)
11. Տ. Մատթէոս Քինյ. Մանիկեան (1911)
12. Տ. Տրիփոն վրդ. Պիծակեան (1912)
13. Տ. Արսէն Ծ. վրդ. Վեհունի եւ Տ. Սեբոստիան Քինյ. Ներշապուհ (1914-1917)
14. Տ. Եղիշէ Քինյ. Գալչընեան (1917-1919)
15. Տ. Արիկ Քինյ. Ծոցիկեան (1919-1930)
16. Տ. Յարութիւն Քինյ. Թումայեան (1930-1931)
17. Տ. Յակոբ Քինյ. Մխնեան 1932 Օգոստոսէն ի վեր:



//
//

2. =
1
1
11

A II
54346

956' 83-50

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



220054346